

Գրիգոր Նարեկացի

Մատենան Ողբերգութեան



ԲԱՆ ԴԱ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Տէ՛ր, Տէ՛ր գթութեանց եւ Աստուած
ողորմութեանց,

Անուն մեծատառ, ձայն ահեղալուր, կոչումն
ահաւոր,

Համբաւ անպարփակ, բարբառ սոսկալի, հնչումն
հիասքանչ,

Յուսադրութիւն բարերար, ամէնողորմ
քաղցրութիւն.

Որից վախեցած սասանւում են ողջ արարածները:

Ահիդ պակուցիչ սպառնալիքից՝

Սաւառնում են սերովբեները ու քերովբեները
թեւամփոփւում,

Պարուրում են պարերը լուսակերպների,

Երկնային բոլոր պետութիւնները երկնչում
հիագարիւր,

Ու ցնծում են ողջ երկիւղած դողով՝ նաւակատիքի
բերկրութեամբ:

Չարհուրում դէւերն ու ընկրկում են գնդերը չարի,

Չքւում ոգիները խաւարասէր,

Անդունդ գլորում հրեշտակներն օտարի,

Իսաչի նշանով խարխափում են յարձակումները
ընդդիմամարտի,

Փակւում են քինօտ ամաղեկացիք բանտի
խորքերում,

Անլուծանելի հանգուցումներով պաշարւում
խմբերն հակառակորդի,

Մահազենների գումարտակները արգելափակւում
գնդանում անգերծ,

Դէւերը պրկւում ահեղ հրամանիդ մետաղների
մէջ՝

Ընդդիմախօսներն ամենայն լռում, պապանձւում

անձայն,

Աներեւոյթների բազմութիւնները պարաւանդում են կորստեան հիւծմամբ,

Ու նեղում անլոյծ շղթաների մէջ առաքելութիւնը սուտ-քրիստոսների:

Բ

Մթին գիշերուայ այս ժամին ահա ձեռքիս մատներով

Նշանիդ տեսնագրութիւնը քեզ եմ կարկառում.

Քեզ, որ ոչ միայն չես մթնում անգիտութեան խաւարով, ո՛վ ամենատես,

Այլեւ անմատոյց լոյսի մէջ ես բնակւում ու հանգստանում:

Աղաչում եմ քեզ գոհաբանութեամբ, ընդունի՛ր դու ինձ,

Ա՛ռ վշտահարիս հօր թելերիդ պաշտպանութեան տակ,

Փրկի՛ր դրսից եկող պղտոր ցնորքներից,

Մաքրի՛ր սրտիս աչքերի տեսողութեան զգայարանքը դու,

Կենաց փայտովդ ինձ ամրապնդիր տխուր անուրջների դէմ,

Արիւնովդ սրսկիր բնակարանիս շուրջ-բոլորը,

Կողքիդ կենարար արեան կաթիլով զծագրիդ ճամփան իմ ելումուտի,

Քառաթելիդ ձեւակերպումը թող պահպանարան լինի երդիկիս,

Ու խորհրդանիշն ամենափրկիչ քո տանջանքների,

Թող որ դէպի վեր նայող աչքերիս հանդէպ լինի միշտ,

Չարչարանքներիդ գործիքը թող իմ տան դռան ճակատին դրոշմուի,

Հաւատքն իմ յոյսի թող որ օրհնութեան ծառից

կախուի քո:

Կաշկանդի՛ր դու, Տէ՛ր, այդ նշանովդ հոգիների
սատակչին,

Եւ թող ներս մտնի առանց արգելքի պաշտպանը
լոյսի,

Յաւերիս սաստիկ ծանրութեան հետ մեղքերիս
բեռն էլ թեթեւացրու.

Մահճում, մտամփոփ լռարանիս մէջ,

Մտաբերելով յուսահատութեան պտուղները
դառնահամ,

Խոստովանում եմ ամենագէտիդ բոլոր անօրէն
գործերը իմ չար:

Գ

Հանգստացրո՛ւ վաստակեալիս իմ բազմածուփ
աշխատանքից,

Կործանուած ոգուս տարակոյսների տագնապը
ցրի՛ր,

Դառնութիւնը վշտերի հետ եւ հեծութիւնը ցաւերի
հետ,

Անձկութիւնը թշուառութիւնների հետ,

Հառաչանքները խորտակումների հետ,

Սրտաբեկութիւնը ապշութիւնների հետ,

Թմրութիւնը շուարման հետ,

Արբեցութիւնը յիմարութիւնների հետ,

Սառելը սիրոյ եւ հրաբորբոք ջերմութիւնը

ցոփ-ցանկական ախտի հետ,

Օժանդակ եղիր՝ ամենատխուր տարտամութեամբ
տկարացածիս.

Բարեգործ աջով քո շնորհատու, ձեռքովդ
նորոգող, մատովդ կենսաբաշխ,

Մշտափայլ փառքովդ, անեղծ մշտակայութեամբդ,
երեսովդ զուարթ,

Պաշտելի Էիդ իսկութեամբ եւ բարձրութեամբ
երկրպագելի

Կտրի՛ր խեղդուողիս վշտալից հեծեճանքները,
Չարի հնարքը նոր եւ բանասրկուի խարդաւանքը
հին,

Օտար դրդումներն ի մահ մղողի,
Անպատշաճ դէպքերն ամէնօրեայ եղեռնագործի,
Աչքակապ ճարպկութիւնները դաժան դելի,
Փաղաքշական բոցաշնչութիւնը գրաւող
կախարդի:

Պահպանի՛ր դու ինձ այս մահահանգոյն
հանգստեան վայրում`

Թաքուն մտքերից, մասնաւոր սխալանքներից,
Մեծագոյն մոլորանքներից, փոքրագոյն
սայթաքումներից

Եւ չար խաբուսիկ ձանձրութիւններից:
Հեռացրո՛ւ յանցաւոր ծառայիս զգայութիւններից
Խորհուրդներ անդէպ, կրքեր բասրելի, վարք
անարգելի,

Դէպքեր անպատկառ, վրիպելի հետքեր,
պատրանքներ ծաղրելի,

Խոհեր անգոսնելի եւ աւելորդաբանութիւններ
արհամարհելի:

Դ

Քեզ ապաւինածիս զինի՛ր անսխալ հոգով եւ
մաքուր մարմնով`

Հողների շնչից, բուռն հարուածներից,
Փոթորիկների բախումից, մրրիկների պոռթկումից
Եւ գազանների հարուածներից զերձ մնալու
համար:

Երբ փակեմ աչքերս` սրտիս նայուածքը թող
չստուերանայ,

Այլ զուարթանայ, պայծառանայ ու վայելչանայ,

Փայլի թող քեզ հետ, Տէր Յիսուս Քրիստոս,
լուսաւոր վառմամբ անշիջանելի:
Խօսքովդ մաքրիր իմ ննջատեղին՝
Խորամանկութիւններից, երկիւղներից,
Քեզ ատելի յիշողութիւններից,
Աստուածամարտ մտածումներից,
Յանցաւոր խենթութիւններից,
Տիրանենգ անշնորհքութիւններից
Եւ աստուածընդդէմ պառակտումներից:
Խնամակալ լինես ինձ երկնային քո գնդերով,
պետութիւններով
Եւ իշխանութիւններով զօրաւոր ու անյաղթելի,
Որոնք մաքրուր մատակարարներ են սուրբ
Աստուածութեանդ.
Առաքեալներն՝ աւետեաց աւետարանով,
Մարգարէներն իրենց կտակարաններով,
Եւ վերջին օրը երջանիկների քեզ ընծայուող
մաղթանքներով:
Այնժամ երկիւղով եւ քեզ հաճելի տրամութեամբ
ես պիտի նիրհեմ
Եւ քո շնորհիւ բուռն ուրախութեամբ արթնանամ
կրկին:
Եթէ վիատութեամբ ննջեմ նոյնիսկ,
Հոգեւոր բերկրութեամբ պիտի յարութիւն առնեմ
դարձեալ,
Եթէ մինչեւ իսկ մեղքով ընկողմանեմ,
Պիտի կանգնեմ կրկին՝ մաքրուր խղճով եւ անաղտ
անբծութեամբ:

Ե

Լսի՛ր խնդրանքներն իմ հառաչալից եւ հեծե՛ծագին,
միա՛կ բարեգուրթ,
Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ
Եւ արդարների բոլոր ու ընտրեալ նահատակների:

Բոլոր կողմերից, քո բարձունքն ի վեր, իմ ձայնով
փառք եմ առաքում ես քեզ,

Միշտ սուրբ եւ անմահ զուարթունների միջոցով
Ի գովեստ քո Հօր եւ մեր Աստծոյ,
Եւ ամէն ինչի ստեղծիչ եւ նորոգող սուրբ Հոգուդ,
Յախտեանս յախտենից. ամէն:

ԲԱՆ ՂԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅՀԵՑ

Ա

**ԺԱՄԱՀԱՐ ԿԱՄԿՈՉՆԱԿ Ի ՓԱՅՏՆ
ԵՐՉԱՆԻԿ ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՀԱՐԻՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ, ԱՂԱՉԱՆՍ ԵՂԵԱԼ ԸՆԴ
ԿԵՐՊԱՐԱՆՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՆ
Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽԱԲՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ**

Գոհունակութիւնս եմ յայտնում քեզ, բարեգութ,
Միակ մարդասէր, երկնքի ու երկրի արարող,
Կենդանի Աստծոյ Որդի,
Չարթնած քո յիշատակի սիրոյ անձկութեամբ
Փայտիդ հրաւերով,
Որ հնչեցրիր մեր ականջներին.
Եւ սթափուեցինք, ելանք մահակերպ թմրութեան
միջից,

Կարծես սփոփիչ խօսքի կոչումով
Պաշտամունքի եւ օրհնութեան ժամին
Հանդիպելու քեզ ցնծութեամբ
Այս հատուցման բեմի առջեւ:

Բ

Փանք քեզ, ահա, անուն անսահման
Եւ զօրութիւնդ անընդգրկելի,
Որ փրկութիւնն իմ հոգացիր

Հնարներով բազմաքանակ.
Գոհաբանուած անեղծ իսկութիւն,
Որ այստեղ հրաշքով կերպարանեցիր
Նմանութիւնը գալոց օրերի,
Որ վայելչական խաղաղ գործիքով այս փայտե
Որոտացիր սաստիկ, երբ քնած էի անկանգնելի,
Կարծես ծուլութեան դանդաղութեանը
Խտնեցիր խրատիդ յանդիմանանքը,
Հայրական սիրուդ հեզութեանը
Ճայթման ուժգնութիւն միացրիր.
Երկու միջնորդի ընդոստ հարուածին
Քաղցր անձրեւեցիր մարդասիրաբար,
Փափուկ վանկերի մեղմ նիրհի մէջ չընկղմեցիր,
Եւ կամ անխնայ ահաւորութեամբ
Տառապած հոգիս չզարհուրեցրիր:
Երկրպագութիւն ծնրադրական
Բոլորի ստեղծչիդ,
Որ յստակօրէն՝ ցուցադրեցիր արդէն իսկ հիմա
Յայտնութեան մեծ օրուայ ահեղ գոչումը,
Կենդանացրիր դժոխային անբանութիւնից,
Որոնելով կանչեցիր պակասամիտներին
Ուրախութեան գինուդ.
Սրան դարձրիր անարատ հարսին
հանդերձաւորող
Փեսայիդ սիրոյն.
Վախ ներշնչեցիր այս փոքր խթանով
Վիթխարահսկայ ապերասանին,
Կրթիչ ստուար լուծ դարձրիր այս իրը
Ստամբակի ուսին.
Չարախօսի կզակին զապող սանձ դրեցիր:
Մեծդ Աստծոյ անբաւ բարձրութիւնը
Փառաբանեալ է յաւէտ,
Որ փայտի պարտքերը փոխարկեցիր
Կեանքի շնորհիդ ազատութեան,
Դարձեալ, վերստին իմաստնացրիր
Տնդած յիմարիս՝

Հոգեւոր քո հանճարով,
Կարկառ կրճտումով
Օձի հարուածի անբուժելիութիւնը
Առանց մոռացման բացատրեցիր,
Երրորդութեանդ կերպարանքի հետ
Ինձ վնասողի կապը դարձնում ես եռակի ամուր
Աշխարհի վերջին:

Գ

Ամենախնամ, խունկերի բուրմամբ
Ներբողեան գովք եմ վերառաքում քեզ,
Որ բազմաստուածեան ստապատիր կուռքերից
առաւելօրէն
Մեղսական հոգիս՝ դարձրիր քո
երկրպագութեանը:
Խրոխտ, ահարկու, նուիրական այս փայտով
Քարոզեցիր ճշմարտութիւնը,
Այս պատշաճութեամբ մեծացրիր նոր աւետմանդ
պատիւը:
Հէնց սա զինավառութեանդ բարձրագոյ աղաղակն
է,
Կայսրերի երկրի արքայ, Տէր Քրիստոս:
Քո մարտի աւարտի ուրախ հանդէսի նշանը,
Յիսուս,
Երբ կապկպուեց փարաւոնը իմանալի.
Տաշած այս շերտը գոռոզացած չարագործի գլխի
կատարի
Մշտական նեղիչն է:
Սրանով են Սիոնի որդիները խմբւում
պատերազմում
Ընդդէմ խաւարի աշխարհակալին:
Այս հինօրեայ օծուած արձանը աստուածային
հրահանգների մի տուն է,
Որ չի հնանում եւ անխափան է,

Որ հեռուից եկող նշանն է գալիք հատուցման
ժամանակի -

Ազգակից ու համանման կենաց փայտին,

Որ Աստուծոյ դրախտում է.

Կոչման վայր է շտապ ու բարուօք հաւարումի,

Օրհնութեան վայր է.

Գիտութեան տունկի պատկերակիցը՝

Չարի ու բարու ընտրութեան ունակ,

Եւ մեծ յիշեցում խաչիդ նշանով տեսնազրուելու

Սուրբ Հոգու շնորհով,

Աւետող նախասացութիւն

Սուրբ թագաւորիդ գալստեան յուսով սպասող
դշխոյին.

Մաքուրների խմբի խրախնանութեան
գոտեպնդող յորդոր.

Անապական սիրարկու անձնահամբոյր միացման

Շքեղաշուք քողազարդ ամենածին կոյս

թագուհուն.

Յարդարիչը ծածուկ պննանքի,

Որ հոգու վայելչութիւնն է.

Եւ նման է Սինայի պատգամին,

Որ դուրս էր յորդում Տիրոջից.

Անարատ որդիների մայր,

Պանծալի ու անշաղախ օրհորդը փառազարդւում
էր սրանով:

Դ

Երիբովի եղջերափողից առաւել այս [գործիքով]

Գետնամած տապալեցիր Բելիարի բռնութիւնը.

Փայտէ այս պարսով քար արձակեցիր

Գողիաթի վրայ,

Նորոգ գայիսոն կառուցեցիր

Իբրեւ վկայ սատանայի ահեղ կործանման

Մեղքի խոր անձամ արմատները այս գործիքով

Խլեցիր,

Իմ մոռացուած յանցապարտ գործերը սրա
երախտիքով ինձ վերադարձրիր:

Թէ այն Բան Աստծուդ գալուստը յայտնող այլ
ձայն անուանեմ՝

Չեմ սխալուի, այլ իրաւ կլինեմ

Հոգեկիր նիւթի տկար ամանըս,

Իսկ Յիսուսիդ մեծագործութիւնները

պատմուելով՝

Կհռչակուեն առաւելապէս:

Վերուստ պարգեւուած բիւր օգնութիւններ,

Որ դու ես տալիս,

Այս անպատսպար սպաւինութիւնից

Ի զարմացումն՝ երկրայիններին տրամադրեցիր:

Ե

Հանրաճանաչ է բարեխնամ մարդասիրութեանդ
Անունն անքննելի,

Սրբամասն խորհրդով խնկարկուած,

Լոյսի կերպարանք անգծագրելի,

Որ այս կրկնաձիր նշանով

Արձակեցիր հեռաձիգ նետեր՝

Ձայնատրական եւ օղագնայ եւ յարմարընթաց,

Կենդանի հոգի իրենց մէջ կրող,

Որոնցով անսխալ դիպուկութեամբ

Խաւարի աղեղնաւորի գաղտնի նպատակը

Յաւետ կործանմամբ մերժեցիր:

Իբրեւ բարձրամուր պատնէշ բերդամարտութեան,

Կանգուն ու անխորտակելի,

Այստեղից այնտեղ, ուղարկեցիր թշնամու դէմ

Այս փայտի զարկի հունչերը

Իբրեւ կամարար սուրհանդակներ:

Մեծ ակնարկութեամբ քո հրամանի,

Արեանդ խառնուած օծութեան շնորհով,

Հեսանելով սրեցիր մոլի գոռոզի խեթիչ եղջիւրն
այս,

Ինչպէս խաչդ փրկական:

Եւ մեծ ազդումից այս աղաղակի,

Երկնայինների ճայնից աւելի

Քանդուեց, վերացաւ ամուր դրանդին

Կարճամիտների անվայելուչ, երկչոտ

վատասրտութիւնը,

Հրէական պատկերացումների

Եւ ստուերական տան կործանման հետ:

2

Վերընծայում եմ փառաբանութիւն,

Քեզ՝ անմահ թագաւոր,

Որ ստեղծեցիր, հաստատեցիր

Աջով քո հզօր,

Աղաչում եմ քեզ, կրկին կատարիր:

Սրանով անցկացրիր

Մեզնից հերքելով

Բանասրկուի խորամանկութեան դժնի վտանգը,

Մեղքի տապը տաժանական,

Եւ դառն հողմը խաբողի շնչման,

Մահուան երկիւղի տարրն արկածների:

Օղի ցնդման վնասակար տխրեցուցիչ

հետեւանքները,

Թալկացնող դիւական հեծութիւնները:

Այս հեծանով, որ քո զէնքն է,

Նշանիդ թելերի օժանդակութեամբ

Տրիր վերստին հրաժին ամպերը,

Եւ կարկտաբեր որոտները,

Բազմոտանի վիշապի փչումի

Հրախաւար կեղծաւորութեան ցաւազին

ցոլմունքը,

Սատակիչ սուրը, յարձակողական մարտը,

Վայրենի մտքերով գրոհող դեւերի պարերը:
Այս փոքրիկ իրից զարհուրում են [դրանք]
Ու մեծ դողումով տեղի են տալիս,
Հին ծանօթութեամբ յայտնապէս գիտնալով,
Որ այսպիսի ձայնից է Տէրն ելնում դատելու
Եւ հոգեպէս խրախուսւում են արիութեամբ
Ամրապէս կզինուեն Հոգու տուներով՝
Մարտիկները բոլոր աստուածարեալ.
Այս յիշատակի կանոնով,
Որ անպատմելի գոչմամբ
Բոլոր ազգերին կազդարարի
Երջանկաբար նահատակուելու օրինաւոր
ասպարեզում
Ամէն ինչ փորձող հրի դատաստանը:

Է

Ահա հնչեց աւագ փողը,
Որով համբարձաւ Աստուած օրհնութեամբ,
Պատմուեց սրանով ամէն մի երկրի,
Հնչեց ասկանջին աշխարհասփիւռ հեթանոսների,
Մեծ [Սիոնի] պահապանների ձայնը բարձրացաւ՝
Եսայիի խօսքի համաձայն,
Եւ նոյն բարբառով կցնծանք բոլորս:
Սրանով խաչի թշնամիները ցնդեցին ջրի առակի
նման
Անպատուուեց առաջին փայտի պտղի ճաշակումը,
Խորհրդաւոր նիւթն այս տօնուեց՝ կոշուելով
կեանքի [փայտ],
Անարգուեց երկաթը պատերազմական,
Ինչպէս Տիրոջ սրբութիւն
Ձիու սանձի վրայ
Մեծ նշանի կենսաձայն փայտն այս
յարմարեցուեց.
Երկնային հովուի այս օծուած ցուպով

Պատեան դրուեց մարդկային ձեռքի
իշխանութեան սուրբ:
Տանարի վեմին քարտաշի մուրճ չգործեց
Իսկ աստուածակերտ խորանների մէջ
Փայտն այս նուիրական
Սլանալով խաչի թելերով՝ գորաւոր է:
Ոչ թէ ամսագլխին,
Կամ եօթն անգամ եօթ յոբելեաններին
Մի անկիւնում խափանուելով է փողհարում,
Այլ տիեզերքի չորս ծագերում
Եւ ծիրերում եզերքների,
Ծովերի անտակ ջրերի ծոցում ու կղզիներում,
Մեծ սաստկութեամբ,
Ինչ-որ աստուածային անարգել ճայթումով
Աւետելով հնչում է:
Այս փայտի յայտնութեամբ
Կոտրուեցին սատակողի սուսերները,
Մեզ համար անօգտակարութիւնից
Ձեւափոխուելով խոփերի ու մանգաղների:

Ը

Չհնչեց արձագանք խոր անձաններից
Եւ ոչ օդը վիրաւորելով դժնդակապէս՝
Ըստ օտար մի իմաստակի,
Ոչ անախորժ սրութեամբ ականջ մտնելով
Եւ ոչ ուղեղի ամանը չար տհաճութեամբ
թնդացնելով,
Ոչ մարմնին ոսկոր խրտնեցնող փուշ բուսցնելով,
Եւ ոչ միտք այլայլող ապշութիւն առաջացնելով,
Ոչ պղնձանիւթ զանգ հնչեցնելով,
Եւ ոչ քարը սալարկի հետ տհաճ գարկուելով:
Նոր այս Միոնի անխորտակ պարիսպ՝

Սա արարչաւանդ գլխաւոր սպասքներից է,
Որ քրիստոնէայ եկեղեցականները
Ղեւտացիների հետ խնամում են զգուշօրէն
կրելով,
Հրեշտակի ձայնի օրինակով,
Որ առակողի խօսքը այսպէս տպաւորեց
Հաւքի կանչի նմանութեամբ:
Աւետման նոր շնորհալի նուագարան՝
Աստծոյ հոգին առ մեզ արթնացնող,
Քան թէ Սաղմոսարանի օրհնութիւնը Եղիսէի
վրայ.

Նախընթաց սկզբնապարող է նա
Բարետաւիդ ողբերգութեանց յարմարալար
ջութակների,
Բամբռի բառացի բարառնութեանց բարքը
պատկերող.

Մի այլ տեսակի նոր սրինգ տրուած մեզ
Հնի փոխարէն,
Ոչ թէ հեթանոս ուրվաձայն հնչման,
Կամ հրէական խականտութեամբ,
Որ Տիրոջ ազդմամբ մերժեց մարգարէն՝
"Հեռացրո՛ւ ինձնից",
Այլ սիրեց սա ու կրկին պատուեց մարութ հոգալով
Իբրեւ ահարկու դէւերին ու չար պատահարներին:

Թ

Եւ արդ, ստացայ օրհնաբանութեամբ,
Յարգանքով զովեցի սրբութեան այս տուրքը՝
Ինձ պահպանութիւն, փառատրութիւն քեզ,
Քեզ պաշտամունք եւ ինձ գոհութիւն,
Անթերի կերտուածք արարչական բարձր փառքիդ:
Աստուածարեալ այդ ձայնը թող մտնի
Յօդերս շաղկապող պատուաստի մէջ,
Հանելու հոգուցս դէւերի խաբէութիւնը,

Ստացած անէծքներն ու գազիր մեղքերը:
Այս իմաստաւոր առարկան դարձրու
Ջահավառ ջնար, անջրելի նամակ,
Անխափան ջատագով քո տէրունի
տնօրինութիւնների:
Ահա սրանով պարգեւիր, բարեգութ,
Աղաչում եմ, հօօր,
Մեզ կրկին շնորհիր պահպանութիւն
Աներեւոյթ ու երեւելի թշնամիներից:
Ամենայի ձեռք, տուր մեզ,
Որ բաց ես անում եւ մատուցում ես սիրով
բաշխելով
Այլեւայլ բաներ,
Օղի քաղցրութիւն եւ անձրեւների
օգտակարութիւն:
Ըստ Քո հրամանի սրա բարբառով թող
պակասեն՝
Տապախառն հողմ, ցաւաբեր փշում,
Գրոհները չար, խարդախ հէների,
Խափանուեն սրանով բոլոր
հակամարտութիւնները
Դժնի մատնիչի զօրքերի,
Հալչեն, վերջանան, մեռնեն
Երջանիկ օծեալ այս փայտից որդ եւ ուտին
Եւ բոլոր նմանները,
Որ զօրանալով մեր մեղքերից՝
Կռուում են մեր դէմ:
Սրանով յոյսիդ երանութեան տունկն
արմատացրու
Մեզ պաշտպանելու, ստեղծիչ բոլորի,
Արարածոց Տէր, Սաբեկի ծառն այս,
Որի ոստերից կախուած է, Քրիստոս, քեզանով
ծաղկած
Նոր սուրբ աւանդը արդի փրկութեան,
Պտուղը կեանքի անվախճանական:
Այս փառատրելի փայտի բարեհունչ

ձայնարձակումով

Խորին խաւարի անհուն հեռուները փախչեն
Խարդաւանող բազմաձեռք ստապատիր
ստորնականների

Ներհակ չարքերը:

Հերքուն արանով մեր սահմանների

Ստորադրուած, ընտիր-պտղաւետ

անդաստաններից

Եւ քո մշակուած կենդանի երկրից՝

Վատնիչ վերքերն ու մորմոքեցնող

[միջատի] հոյլերը,

Սրանով հատուն յաւելուած պատահարները՝

Կրկնատգեղ կամ վայելուչ,

Որ գալիս են մեզ չարի հնարներից.

Իսկապէս վտարուն արանով,

Այն ինքնաստեղծ բաները, որ երկակ մեր

բնութեան մէջ

Վերերեւում են իբրեւ մերձաւոր դաւաճան,

Մէկին վրիպակ, օտարոտի մտածումներ,

Միւսի մէջ՝ ապականող կեղտոտ զեռունների

Գարշ գոյացումներ.

Փրկիր, Տէր Յիսուս, աղաչում եմ քեզ,

Փրկիր, բարերար, ինձ մեկնիր աշդ ամէնքից

գովուած,

Օգնելով արանով՝

Ազատիր բոլոր թշնամիներից:

Ժ

Հրամանդ թող խառնուի, միանայ արան,

Հիմարացած ադամանդէ սիրտս փոխարկելու

Դէպի քո խօսքի արդիւնատրութիւն:

Քո քրանչելիքի հրաշքի նեցուկն այս

Խփես, մխրճես ծորած արտերն ու լքուած

հոգիները,

Ամրապէս կազմելով հաստատես
Ուղիղ, անսասանելի լինելութեան,
Իսկ անշարժին կակղեցնես, որ զարթնի
Եւ զգաստ լինի հեզ հոգով
Քո աստուածութեան պատուիրանի հանդէպ,
Պօղոսի ու Մատթէոսի նման:
Մարդասէր, յիշեցրու այս պատուեալ փայտով
Երախտիքները քո խաչի,
Որով անճառ գործեր կատարեցիր,
Իմ միջից հանիր, ապրեցնող, մեղապարտութեան
վտանգը

Նոր տապանակիդ պանծալի լծակներով:
Հօր, քո կամքով բացուի կեանքի այս ճայնին
Սրտի ականջը յամառողների,
Խուլ ականջները լսեն ակնարկութիւնդ մեծ այս
բարութեամբ,

Սրա միջոցով պարգուի լեզուն համրացածների,
Լուսաւորուի տեսողութիւնը աչքերի՝
Մաքրապէս նայելու քեզ անայլայլ պշտութեամբ,
Կազդուրուի, գոջայ, դարձի գայ կամքը
ձանձրացածների:

Տէր, տագնապածիս ընձեռելով տուր
Արցունքի անձրեւ:
Սա քեզնով լինի մեզ ցնծութեան լուր,
Ուրախութեան ձայն, բերկրանքի բարբառ,
Հանգստեան նուագ, երանութեան նիւթ,
Փրկութեան պատճառ, քառութեան առիթ,
Վշտերի հերքում, խեղդումի խզում,
Եւ արձակութիւն նեղութիւնների,
Կրճատում խեղձան, հերքում հեծութեան,
Թառանջումի թերթեւացում, կարիքից
ապահովութիւն,

Կրքի կարգաւորում, վիատումի սփոփութիւն,
Բժշկութիւն ցաւերի, հեղգութեան մէջ
համբերութիւն

Եւ ուշադրութիւն անտես բաներին:

ԺԱ

Անխոտոր ու անխոտորնակ այս ցանկալի
կամրջով

Եւ վերնաշաւիղ բարձր սրբագնա երկնայնու
սանդուղքով

Քո օրհնաբանուած, ահեղ անունով

Հօր մօտը տանես

Բարերար, Հոգուդ առաջնորդութեամբ

Միանալու քեզ անբաժանելի,

Որով եւ սուրբ մէկ ու միակ,

Միասնական տէրութեանդ

Եւ անեղծ արարչութեանդ ստեղծած

Կենդանիներից ու անշունչներից, վայելուչ
գոհութեամբ՝

Փառք եւ իշխանութիւն

Յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԲԱՆ ՂԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՂՕԹՔ ՄԵՌՈՆԻ ՍՐԲԱԼՈՅՍ ԻԻՂԻ ՄԱՍԻՆ

Սուրբ եւ ահաւոր անուն անպատում, բարձրեալ,

Միշտ ախորժելի, անձկալի փափագ,

Սրբերգու փառատրոդներից միշտ սրբաբանուած,

Որ բնակուում եւ սուրբ վայրում,

Լի ամենազեղ բարութեամբ,

Առատաձեռն աննուազելի,

Լոյս բարի եւ ծագումն գովելի,

Երկրպագուած փառաւորութիւն,

Ահեղ եւ անզննելի, ամէն եւ ամէն ինչի մէջ:

Դաշն յոյսի այս խօսքով
Քեզ միանալու ուխտ եմ անում,
Հգօր, այո, ամէն, պելուխա,
Հանուրի գովեալ թագաւոր,
Բոլորի Աստուած, գոյերի ստեղծիչ եւ կամարար
տէր,
Միակ առիթոյ պատճառուածների,
Փրկիչ եւ օծեալ մշտապաշտելի:

Բ

Ուստի մեկնութեամբ պարգաբանելով մեզ համար
Անվախճան այս գանձը ու անփոխադրելի
հարստութիւնը,
Յիսուս Քրիստոս, երկնային արքա, որին մեծ
ողոյով սպասարկում են
Ահեղ անմահների լուսաբերան
բոցաշնչութիւնները,
Խոնարհուելով կամայօժար, անխտոր մտքով,
Գոհութեամբ ծունր եմ դնում, ստեղծող
էութիւնների,
Որ կան տեսանելի եւ ծածուկ:
Որ ես եւ էիր միակ բովանդակը՝ անպակասելի
ամենեւին,
Մեր [պատկերն] առատ, իսկապէս համայն,
Որպէսզի քո լրութիւնից լրացնես,
Օրինեալ եւ բարեբանեալ, յաւէտ ճանաչուած,
Միշտ անքննելի ողորմութեամբ՝ մեր փրկութեան
համար,
Ի փառս եւ գովեստ անճառ բարձրութեանը
Ահաւոր բարերարիդ:
Սկզբնաձիրոյ մեր օծման շնորհի
Մեծախորհուրդ հրաշագարդութեան,
Քանզի քո լոյսը ճանաչեցինք,
Անհաս ճառագայթ, անսահման ծագում,

Հաւասարասփիւռ արեգակ,
Երկակշիռ տարրերի սահմանագատ աստղ,
Ոտքի ճրագ եւ ընթացքի լոյս,
Որով այս խօսքիս յարմարութեան տեսութեամբ
Տօնում ենք հրեշտակական պարերգութեամբ,
Յստակ մտքով, փրկչավայելուչ կնդրուկով
խնկելով

Ամենիմաստիդ առատ պարգեւաբաշխումը,
Անբիծ դաւանման զուարթ իւղով:
Քանզի հէնց սկզբից կողոպտուեց իբրեւ
շնորհուած

Բարձրագոյն շնորհից,
Ողորմելի տխրութեամբ,
Սկզբնաստեղծ հայրն իմ,
Գերի մեղքերի՝ մահուան մատնուեց,
Անզերծ հանգոյցով կապուեց մերժելի
սպականութեան,

Ծառի պատճառով՝ անկումն անդարձ
ամենակործան գլորման,

Լոյսից մերժուելով՝ մատնուեց այս իաւար
վայրին:

Իսկ դու, գթած տէր ողորմութեան,
Աւելի քան նա ճանաչեցիր նրան, որ ստեղծեցիր,
Չեղածի ակնկալութեամբ չմնաց այնտեղ,
Ուր էր նախապէս,
Դառնալով անկարող տեսնելու լոյսը
Անսահմանելիիդ վերին անմատչելի
գերակայութեան,

Ոչ թէ մշտափայլ յարատեւ վառմամբ
Տարածեցիր [լոյսն] անադօտ,

Այլ գիշերի մթութեան մէջ, որ սայթաքում են
ոտքերը,

Ձեռք բերիր ձէթն ու պատրոյգի նիւթին հիւսելով՝
Օրինակ տուիր անախտ միութեամբ մեզ
միանալուդ,

Մարդասիրաբար հիւսելով կազմեցիր.

Որպէսզի կանխակորուստ ծառի պատճառով
Մահու ստուերով տարագրուածներս,
Նրա ազգակից պտղի պատճառով
Չահաւորուելով հաւատի վառմամբ
Վերատին դառնանք նոյն խնկարկութեան,
Ինչպէս որ մահուան փայտին կապուեցիր,
Մեզ նոյնպէս նրա մօտ տարար կապեցիր,
Մեծ խորհրդի օրինակով միաւորուելով կենաց
փայտի հետ:

Գ

Արդ, ինչպէս օրը թերի է առանց գիշերի,
Նոյնպէս է տնտեսութիւնն առանց հարկ եղած
ձէթի,
Քանզի ինչպէս սովորական, ոչ նուիրական
Իւղն է լուսաւորում մարմնական աչքի
տեսողութիւնը,
Նոյնպէս անհմանալի կերպով
Քոյինաշունչ շնորհի ընտրութեամբ մաքրուածը
Աներեւոյթ հոգիները միաւորում է մեզ
Հրաշափառապէս պայծառացնելով:
Եւ ինչպէս իջնելով սուրբ աւագանի լուսարանը,
Մարմինը լուսնալով՝ հաւատում ենք, թէ
սրբութիւն ենք ստանում,
Այդպէս իւրի օծումով լուսավառում ենք,
Սրանով կարծում ենք անտարակուսելիօրէն
Հոգու զօրութիւն ստացած:
Եւ ինչպէս օրհնաբանելի տէրունական հրամանդ
Նախավճռում էր մեղքերի քաւումն
ախտացեալների,
Իսկ դրան չհաւատացողների հանդէպ
Հրաշալի բժշկութիւն անելով՝
Մարմնական աչքով տեսանելի,
Հաստատում էիր վստահելի վկա,

Այսպէսեւ այս իւրը՝ կատարեալ փրկութեան
լոյսով,

Լցուելով մեզ վրայ՝ օծում է մեր խորանն
արտաքին,

Իսկ ներքին մարդու մէջ մտնելով ոչ ակնյայտ, այլ
ծածկապէս՝

Նոր կենդանութիւն է հաղորդում:

Դ

Նիւթի զանգուածն այս երկնի արարչիդ
Պատկերն է պանծալի.

Քանի որ ովքեր իւրի օգուտն ստացան,
Ստացան եւ ողորմութիւն,

Եւ ի գովեստ քեզ դու սահմանեցիր սա՝
"Ողորմած եմ ես, Տէր",

Որովհետեւ ինչպէս սիրոյ հետ նոյնացնում ես
Աստուած անունդ

Նոյնպէսեւ մասամբ կոչւում ես սրանով,
Մեզ պարգեւուածով

Ճարպն այս վեհագոյն մեծութեան խորհուրդն է
կերպաւորում

Թանձր երկրային հողանիւթ գոյացութեամբ:

Որովհետեւ կենդանու այս մասը ուտել չէր
թոյլատրում,

Ըստ հին Օրէնքի,

Այլ արարչութեանդ [արժանի] պտուղ էր
համարում,

Նոյնպէս եւ այստեղ,

Որպէս Տիրոջը մատչելի գորութիւն,

Վայելչապէս նուիրում է Աստուած Էիդ,

Հանութեան աւանդն այս՝

Հոգուս հարագատ գուգաշաւիդ,

Ուխտով պահուած է Արարողիդ:

Քանզի իմ հոգու օրինակն ու կարողութիւնը՝

Անշունչ արիւնը եւ զուարթութեան ճենճերը
[Մատաղի] մսի հատուածների հետ չեն ոչնչանա,
Այլ վերին արքայութեանդ են ձօնուում ճաշակման,
Այդպէս՝ այս նիւթը ջահաւորական
Մշտարորբոբ ու անաղարտելի:

Ե

Անդրանիկն արու չէր կարող լինել
Դատաքննութեանը՝ նախագահող՝
Առանց օծումով դրոշմուած լինելու,
Եւ չէր կարող անկոխելի տեղը մտնել
քահանայութեան,
Եթէ սրանով կատարեալ չլիներ:
Օծումով կնքելով քարը,
Որ խորհրդանիշն էր ընտրութեան խորանի
Յակոբը երագում տեսաւ յարմար սանդուղքը,
Որով իջնելը անճառ բարձրեալիդ
Եւ իմ էլնելը խորհրդանշուեց.
Նա վէմ կանգնեցրեց եւ օծեց իւղով
Ի ցոյց, յիշատակ գալոց օրերի:
Ահարոնի քահանայութեան պայծառութիւնը
Մեծդ Աստուծոյ հրամանով օծմամբ էր ճոխանում,
Որով գլխից դէպ մորուքն իջնող գերափառ իւղը,
Ըստ Սաղմոսողի զարմանազան
նկարագրութեան,
Նախահօր փառքի վերադարձն էր
Եւ կեանք բաժանող քո սուրբ շնորհի
Գիրկընդխառնումը մեր բնութեան հետ:
Թագաւորութիւնը պանծալի չէր քո ստեղծած
պատկերով,
Թէ իւրի եղջիրով չձեռնադրվեր
Պննութեան թագ ու պսակով,
Յանուն քո, Զրիստոս,
Վեր չբարձրանար:

Եւ ինչպէս մոռացա վեհերից առաջինին,
Մեծութեանդ ծառային եւ անպարագրելիիդ
պատկերին,
Մելքիսեդեկը չէ՛ր՝ ահաւոր ճշմարտութեանդ
օրինակ,
Զիթենեաց լեռան վրայ,
Ուր յետոյ կանգնեցին
Մարմնացած Աստծուդ ոտքերը,
Այն վերին հրեշտակների ձեռքով
Այստեղի պտուղներից օծուեց,
Ուստիեւ նախահօր շիրմի պաշտպան նստեց՝
Քեզնից եպիսկոպոսական արքայապատիւ
ճոխութիւն ստանալով,
Մինչեւ յայտնուեցիր իբրեւ կատարեալ իսկութիւն՝
Ունակ Ադամին կենագործելու:

2

Արդ, որովհետեւ քոնն է շնորհը
Եւ քեզ է վայել գոհաբանութիւն,
Ո՛վ օրհնաբանուած Որդի Աստծու,
Դու յարմարեցրու իմ բարենշմար աղաչանքները՝
Իւղաւոր, խնկապատար ու գմոսալիք
Քեզ պատճառ փառքի,
Ինձ՝ մեղապարտիս, բուժուելու առիթ:
Տէր Յիսուս, աներեւոյթ վերքիս մօտեցրու
Ձէթն այս լուսանիւթ
Եւ մահացու խոցի այս խարանին դիր
Իւղիդ օրհնեալ կաթիլներ,
Քո սիրոյ անապակ փրկարար գինով,
Արարչական միութեամբդ
Խնամքի պատանքով պատսպարելով,
Որ մաղթական խօսքի մեկնողական շարադրանքս
Մի վայելուչ յարմարութեամբ քո Հոգու թելերով
Իր կարգը գտնի:

Բարձրեալ, քո հոգին Դաւիթի վրայ իջաւ այն օրը,
 Երբ որ օծումով նուիրագործուեց.
 Սաւուղն այլ մարդ դարձաւ
 Եւ մարգարէների շարքը դասուեց,
 Երբ իր գագաթին օծում ստացաւ.
 Ասորեստանցոց արքայութիւնը
 Օծմամբ գրաւուած՝ կցորդուեց տանն Իսրայէլի.
 Կայսրեր մի քանի՝
 Նշանաւոր, վեհ ու երեւելի,
 Խուժիկ, բարբարոս ազգուցեղերից,
 Կենսացնցուղ ցողով անձրեւած այս իւղը
 Որսաց, ինչպէս կարթով, ընտանի դարձրեց
 Մեծիդ Աստծոյ հպատակութեան:
 Երկնային պատուասիրութեան՝
 Կիրոսին ուղղուած խօսքից
 Օծեալ հորջորջումը մեծ համարուեց
 Եւ Սաղմոսողը մարգարէութիւնից նախընտրեց
 Օծեալ կոչումը՝ տարբերակեց ու
 սահմանագատեց,
 "Մի՛ դիպչէք նրանց եւ մի՛ մեղանչէք":
 Քորերում Եղիային Աստծուց առաքելութիւն
 շնորհուեց՝
 Օծելու Հեռիւն ու Ազայելին,
 Որ նշանակում էր հրաժարեցնել
 Բահաղի պաշտամունքից:
 "Փեսայիդ անունը թափուած իւղ է" հոգելից
 խօսքով
 Վերավկայել է իմաստունը,
 Նախապէս գրուեց
 Հոգին, որ Աստծոյ ճիշտ պատկերն ու նմանակն է,
 Քեզնով փոքրի մէջ մեծոյ է պատկերուած,
 Շնորհոյ ստանալով միանանք քեզ հետ:

Է

Այլեւս ինչու յոյժ երկար ու մանուածապատ,
Հեռու, գծագրական եւ այլաբան շարադրեմ
Վերինիդ ու ահաւորիդ առջեւ
Աղոթական բանաստեղծութիւն:
Տէրդ եւ կենդանարարդ,
Աբարիչդ երկնի եւ երկրի,
Օծումից յետոյ սկսեցիր քարոզել արքայութեան
Աւետարանը,
Այն օրերից վկայուելով Յովհաննէսի միջոցով
Իբրեւ օծեալ գառն Աստծու
Եւ վերացնող աշխարհի մեղքերի:
Թէպէտ քո օծմանը Հոգին էր բովանդակ
Էութեամբ,
Խառնուած աստուածութեանը ամբողջապէս,
Այդ [օծեալ] անունը պաշտում է իբրեւ
խորհրդանիշ
Սրբերի մէջ հրաշափառօրէն ազդող շնորհի,
Որպէսզի ադամական մարմինը ստրկացած
Պատրաստ դարձնես այս հորջորջումով
Միանգամայն բարձրանալու:
Բանալով Եսայիի մարգարէութեան
այլաբանութիւնը
Դու ինքդ՝ մարդացած աստուածութիւնդ
կարդացիր
Հաւաստելու քո ծառաների խօսքը, Տէր,
Եւ երբ օծութեամբ նանաչեցիր խօսքը, թէ
"Տիրոջ Հոգին ինձ վրայ է, որով հէնց ինձ օծեց",
Յետոյ փակեցիր
Որոշեցիր երկու հաւասարափառ օծեալների
որբանութիւնը,
Խտրոցով նշեցիր սահմանի ընդարձակ
հեռաւորութիւնը
Եւ կնքեցիր,
Մերը միայն մի կաթիլով շնորհագարդելով,

Իսկ քունը բացատրեցիր Հօր եւ Հոգու հետ
Կատարեալ հաւասարութեամբ:
Մեր կերպարանքով երբ յայտնուեցիր՝
Օծեալ կոչումով, գովեստով իբրեւ,
Փառաբանիչ հրեշտակները
Երկրային արարածներին ծանուցեցին,
Որ մարգարէն նախապէս գուշակեց
Յորդանանում եւ ընտրեալ լեռ Թաբորում
Հօր ձայնի զայլուստը, թէ
"Մարդկանց շրջանում պատմում է իր օծեալի
մասին":
Որ եւ Սաղմոսի ձայնն է պատմում կանխաւ.
Հօրիդ այս փառքն ու պատիւը՝
Տրուած ձեռնադրութեամբ ստացածդ մարմնի.
"Օծեց քեզ, Աստուած, քո Աստուածը
Իւղով ուրախութեան":

Բ

Մարգարէի "Մեր հոգու շունչը" խօսքը,
Տէր Զրիստոս,
Որ իսկական օծեալ կոչումդ է,
Որով կենդանութեան շունչ ներարկեցիր
Լոյս բարերարութեամբդ՝ ի դէմս մեր.
Մի երջանիկ իմաստուն խոստովանելի
մարդասիրութեամբ
Մէկին ասել է, թէ Տիրոջ օծեալի առջեւ վկայեց.
Նորից աւետեց "Անգամ կոշիկ չվերցրի բոլոր
մարմնեղէններից":
Երգերի երգը սուրբ եկեղեցի հարսին գովելու
համար
Աստծոյ ցոյց տուած խորհուրդը լուսաբանում է
Համեմատելով իւղեփողական գինու հետ՝
Չմուռն առաքինութեան, առաջին իւղով
հանդերձ,

Եւ գնուուս ու կնդրուկ մաքուր վարքի՝
Ամէն տեսակ անուշաքոյր փոշիներով ու
Իւղով շաղախամ,

Առաջ բերեց այնժամ ու աժմ եւս:

Քրիստոս, երկնքի թագաւոր,

Դանիելը կենսատու մահոյ յստակ գուշակեց,

Քեզ անուանադրեց գերագանց բառով,

Եւ յորջորջեց քեզ օծեալ առաջնորդ.

"Օծեալը կապանուի վաթսուներեւ եօթներեակ
յետոյ":

Բարեքի որդի Ադովեան Չաքարիայի ճրագակիր
աշտանակին

Իւղի բարեբաշխութեամբ վառուող եօթնամանեայ
գնդերից

Քո լրութեան մասին՝ յանուն մեր փրկութեան եւ
օծութեան

Նախապատմեցիր գերբնականօրէն:

Ըստ հին օրէնքի գուշակելիս,

Տաճարի մէջ, խորանի առջեւ

Ամէնընտելութեամբ սովորոյթ էր մատուցելու

Բաղարջարիթներ, իւղով խառնած շարմաղալիւր,

Իւղով օծած մատաղ եզներ,

Որ կոչուում են տիրոջական,

Եւ որոշ հաւքեր՝ թաթախած Ճարպին ազգակից
արեան մէջ:

[Այդ ամէնը] սրա խորհրդի յայտնի նշան են,

Որ յարմար են քեզ,

Մեծ Աստծոյ Միածին ծնունդոյ օրհնաբանեալ,

Միայն դու ես օծուած նոր ու զարմանալի՝

Ինքնութեամբ, ամբողջ էութեամբ,

Իսկապէս լրմամբ

Եւ ամէն ինչով անպակասելի:

Թ

Եւ ի՞նչ կարիք կայ բազմապատկելու
Անհասանելի այս մեծ խորհրդի զուգակշիռներ
Եւ չնաշակել քեզ, ո՛վ քաղցրութիւն,
Քեզնով իմանալ, թէ ինչ է իւրն այս,
Որ մեղքի փայտից եկած տխրութիւնը
Նրանով ես բուժում, զուարթացնում, ըստ
Սաղմոսողին
Կամ պարարումը, որով մոռանում ենք մահացու
կերը,
Կամ օծութիւնը, որով մոխիրի թշուառ տեսքը
Սրա միջով պիտի փոխարկենք
Յաւերժ խնդութեան պայծառութեանը:
Եւ փրկուելով քո անուամբ, զօրութեան Հոգով
Պիտի որդեգրուենք Հօրը:
Եւ մարգարէի հոգեւոր ըղձականութիւնը,
Եւ բաղձանքը ամենատենչ
Իր ծերութիւնը պարուրուի ձէթով,
Կամ գլխի կատարը օժանել իւղով:
Հին խարդախութիւնը սաստիկ սուգի,
Մահի ու կործանման,
Կեանքի այս դեղով չկենագործուի՝
Պատասպարելով պիտ օժանդակես.
Եւ ո՞րն է ճրագի լուսաւորելուն շնորհակալիքը,
Եթէ ոչ մեղքի անհասութեան մեզի եւ
կռապաշտութեան խաւարի մէջ
Կերպակցելով միաւորեցիր ինձ հետ իբրեւ
Էմմանուել:
Եւ կամ ինչո՞ւ մարգարէն, որ աստուածաբանում է
Սփոփիչ ու զուարթարար օրհներգութեամբ,
Յստակ ու վայելուչ աւետում է ոմանց,
Թէ "Կօծուեն իւղով՝ մրուրից մաքրած":
Կամ իմաստունը հարսի անունից ասում է
օրիորդներին.
"Ինձ իւղով զօրացրէք եւ ծածկեցէք

Գեղեցկագարդ խնձորով",
Եւ "Ձիթենեաց պարտեզ տանելով գրկեցէք",
Թէ ահաւասիկ այս ընտիր նիւթով, քո Հոգով
լցուած չլինէր,
Այս լոյսով կտեսնէինք, գովեալ, անիմանալի քո
բարձրութիւնը,
Եւ այժմ քեզ, միակ խնամակալ,
Բոլոր ստեղծուածների բարի պատճառդ,
Ձեռք եմ կարկառում եւ բազկատարած,
Գործակցութեամբ երիկամներիս, սրտիս
հեծութեամբ,
Լեզուիս ու շրթունքներիս ձայնարկումով.
Լսի՛ր ողորմութեամբ, տէր,
Քեզ ուղղուած խնդրանքս պաղատական:
Պարգեւներով այս շնորհուած
Իմ գոհութիւնն եմ քեզ վերառաքում,
Հօր, ահաւոր, բարձրեալ, անքնին,
Եւ միշտ համբուրուած անտակ փափագով,
Սուրբ, սուրբ եւ միակդ միշտ սուրբ,
Մշտապէս օրհնեալ՝ յաւերժ, անդադար
երգեցողութեամբ:
Իսպառ վրիպածիս ընձեռիր առաւել
բարերարութիւն,
Քաղցրութեան յոյս տուր, որ քո լոյսից մի մասին
Անարժան եմ եղել,
Քեզնով ընդլայնուել, բարի,
Ծածուկ խորհրդի նրբութիւնը,
Աղերսանքիս գոհութիւն խառնել,
Դաւթի հետ ասել՝ Աստուած,
Ստացանք ողորմութիւնդ
Եւ գաղտնիքների ծածուկ մասերը
Քո իմաստութեամբ յայտնի դարձրիր:

Ժ

Արդ, մեծութիւն քեզ, [ով] ամենակալ,
Աննուագելի առատաձեռն,
Գթութեան գործում [միշտ] ամենափոյոթ,
Մշտայօժար բժշկութեանը,
Որ միացրիր, մերձաւորին խառնեցիր,
Դիւրագիւտ, ընտանի նիւթիս անճառ հրաշքը
Քո սքանչելիքի ահաւորութեան:
Որովհետեւ ամէն բարձրութեան երկինքը
Երկրի լայնութեամբ եւ ներքին անդունդների
խորութեամբ
Ծովերի բազմութեամբ չի կարող տանել,
Այլ իբրեւ չնչինը բարի մեծից
Փոքր գոյիս մէջ տեսակաւորեցիր զօրութեամբ
Սահմանելով ճշմարտօրէն անհրապուրելի,
Որ ինչ-որ նոր երեւալով այլ էութիւնից
Հարեւանցի կասկած յարուցի
Վիրաւորելու, քան բժշկելու,
Առանց խտրութեան մտքի, կարծիքի:
Օրհներգուած Որդի Աստծու,
Ինչպէս մարմինդ ցորենի հացից եւ հանդերձում`
Ուղիղ իմաստով եւ ոչ այլաբան,
Եւ խաղողի արիւնը` կայլակ քո կողից,
Իսկ ջրերի առատութիւնը`
Հոգեւոր ծննդի ու կեանքի արգանդ,
Նոյնպէսեւ անմահիդ փշմամբ մեզ տրուած հոգին
Սրանով, սրա մէջ արդիւնատրեցիր կեանքի
երկունք,
Որից առաջացած կերպարանքը չի ձեւափոխուի
Անգամ հեթանոսութեամբ,
Ինչպէս չի երկրորդուի տեսաճապրութիւնը
Խաչափայտի:
Տէր, խաւար երկրում նստածներիս
Քոյանման լոյս ծագեցրիր:
Որովհետեւ շնորհի այս կերպաւորումով

Աշխարհին ցոյց տուիր
Անհասիդ անպակասելի լրիւութիւնը
Եւ լուսաւորեցիր, որպէսզի տնանկը կարօտ չմնա
Եւ ոչ հարուստը մեծամտանայ,
Ինչպէս որ օդն է հաւասար բաշխւում,
Կամ արեգակի լոյսն է տարածւում,
Եւ կամ հոսում են վտակներ ջրի,
Որ երկրածիններին տալիս ես հաւասարաբար
Մանանայի զուգամասնութեամբ՝
Փոքրերին աւելի, քան մեծամեծին:

ԺԱ

Իսկ այս նիւթի խորին խորհրդի տեսանկրութիւնը
Բնականօրէն եւ հրաշապէս է բացատրւում,
Որ ոչ թէ երկմիտ հապշտապութեամբ
Անհաստատապէս իր տեղն է փոխում
Եւ ոչ նենգելով լքում է իր պահարանը,
Քանի որ ոչ օճառով է իսպառ հերքւում,
Եւ ոչ ինչ-որ ընդդիմակցից ողողուելով դուրս է
ելնում:

Որովհետեւ ինչպէս պատահած գոյնը
Անհրաժեշտ բան է մարմնի էութեան համար,
Որ լինելով գոյացնում է, չլինելով սպականում,
Այդպիսի մի յարմարութեամբ այս իւրի
գօրութիւնը,
Որը իր յատկութեան բերումով
Չբաղեցրած տեղից անբաժան է,
Դու կցորդեցիր մեզ հետ միասնաբար,
Տէր Յիսուս Զրիստոս,
Եղած իրի հետ միաւորեցիր եւ օրինակը՝
Որովհետեւ աչքի տեսութեան եւ մտքին, ըղձին
անիմանալին

Առաջ բերելով կերպաւորեցիր,
Երկրի պտուղներից ճգմելով ու քամելով,

Չարմանալի հրաշագործութեամբ
Պատրաստեցիր մեզ մատակարարելու:
Մանաւանդ որ ոչ թէ բազում եւ զանազան
ծաղկանց
Խառնումով ու խմբակցութիւնով
Եւ բազմաբոյր այլայլումով՝
Օձման այս իւրը հրահանգեցիր՝
Ըստ հին ու ստուերական օրէնքի,
Այլ դա օրինակ համարելով
Եւ ինքդ խառնուեցիր
Վերնալոյս ձեթի այս մաքրութեանը:
Ու թեպէտ անճառելի են քո անուշ
համեղութիւնները,
Եւ համեմատելի չեն այլ օրինակների հետ,
Այլ դաշտի ծաղիկը, հովտի շուշանը,
Ընտիր նարդոսը, եղեգնախունկը՝
Հալվելով խառնած,
Քրքումի հանելի բոյրով,
Փթթած ողկոյզի եւ ազնիւ գինու,
Ոչ սոսկ իւրի միութեամբ,
Պատշաճօրէն պատկերացար,
Փառաւորեալ եւ անքնին անուն,
Որ ամէն ինչ լիացնում ես
Եւ որեւէ բանի բնաւ չես կարօտում:
Ուստի ոչ թէ հակառակ առարկաների
Բռնօրէն խառնում,
Որ օրինակն է բաժան կամքերի,
Այլ յօժար սիրով մեր կողմից պարարում ես
Դու աստուածապէս.
Մեզ համար ըստ մեզ պատկերանում ես
Կատարեալ վայելչութեամբ,
Եւ բարի լոյս, ջերմացնող հուր
Եւ սիրոյ տապ,
Առանց անգութ ցրտի շնչման,
Տեսնում են մարուր մտքերը եւ ճանաչում
Ձեթի նիւթեղէն կաթիլների մէջ,

Որով հնարաւոր է իրօք Աստծուն միանալ:
Օծուած եւ Աստծուն որդեգրուած Մողոմոնի հետ
Հարսի բերանով երգում եմ երկնային փեսայիդ
Բարերան գոհութիւն,
Մտքի ըղձանքով համբուրելով քո իւղերի հոտը,
Աւելի քան բոլոր խունկերը,
Եւ որպէս յաւիտենական կեանքի խօսք ունեցողի
Իմաստուն եւ աստուածաբան Աւետարանչի
Հոգելից խօսքի համաձայն,
Իւղերիդ բոյրով քո հետքով պիտի ընթանանք
Երեսներս լուանալով կեանքի ջրերով,
Որ վեր է քան այս օդի երկինքը,
Եւ գլուխս օձելով երկնային անապական իւղով՝
Ուրախութեամբ քեզ ընդառաջ կգամ,
Չուարթօրէն եւ ոչ տխրութեամբ:

ԺԲ

Ինկելի իւղն այս,
Պաշտելի ու երանելի,
Սոսկ ուղեղի պահանգը
Կամ գագաթի վարսերը օձելով օգուտ չի տայ,
Եթէ տէրունի կենսատու խաչովդ չտեսառնագրուի
Չարմանահրաշ օրհնալոյս իւղն այս
Հրեային ու խուժին, հնդիկին ու բարբարոսին,
Սկիւթացուն ու հելլենին,
Դժնի դուժին ու արհավրատեսիլ
Սոսկավիթիսար շնագլխին,
Ազատ տիրոջն ու ծառայածին ստրուկին
Քրիստոսեան դարձնելով՝
Քո անուամբ է կնքում, ընծայում Սուրբ Հոգուդ
Եւ երկնային Հօրդ հարազատ որդի հաստատում:
Բազմատեսակ են սրա հրաշալիքները
Նախ՝ յարմարուած նիւթին, սպա՝ զօրութեանը:

Որովհետեւ ինչպէս փայտեղէն անօթը
Քանի չի օծուել,
Հեշտութեամբ ջարդուում է ու դառնում անպէտք,
Արժէգրկուում է,
Նոյնպէսեւ մարդը՝ չօծուած սրանով,
Հեշտութեամբ խորտակուում է
Եւ քեզնից հեռու լինելով՝ չի լուսաւորուում:
Յիսուս, սա քո մատն է, որով
Չարմանագործուում ես հրաշայիքներ,
Որովհետեւ նրա անգծելի կազմութեամբ
Ու կարծր պահպանութեամբ պաշտպանելով
Ամենապատրաստ շրջաբերութեամբ
Ծածկուում է այլեւայլ եկամուտ բաներից,
Այնպէս որ սրա մաքրութեամբ օծուածը
Արեամբ չի ներկուի
Եւ չի այլայլուի տխուր գոյներով:
Եւ մանաւանդ իր թափանցել-խառնուելու
յատկութեամբ
Հոգեպէս մտնում է մեր թանձր մարմինը,
Ու եթէ Սաղմոսողի անէծքը ձեռքի պէս
Չարի բոլոր ոսկորներին է հասնում,
Որչափ առաւել Հոգիդ
Լոյսի սոյն ճարպով կեանք տալով ողջացնում է
Ներքին վերքերը անտեսանելի,
Եւ այն խորքերից ազդումն է տալիս
Հագագի շունչին,
Ներգործելով ծայրանդամների վերջը,
Մոռացնել տալիս մարմնի մահուան արկածները,
Որովհետեւ, միշտ ահաւոր, տեր Յիսուս
Քրիստոս,
Քո կենսարար գորութիւնը խառնուած է սրան,
Եւ բնակուում է նրա հետ:

ԺԳ

Այս օծումը բարետեսիլ
Բռնամարտիկ, մերկամրցման ըմբիշները եւս
ունեն:

Իբրեւ ճգնական հնարանքների զօրաւոր խթան,
Անբռնելի՝ հակառակորդի համար
Պաշտում է օրէնքով,
Հօր եւ ահարկու է դեւերի եւ հիւանդութեան դէմ:
Չի Եզեկիէլի բազմապաճոյն պճնած խօսքով,
Որ հեզնում էր իմանալի փարաւոնին

այլաբանօրէն,

Ողբական երանգներով.

"Երբ ստեղծուեցիր, ասում է,

Օծեալ քերովբէի դէմ կռուելու պատրաստուեցիր,
Ուր հրեղէն քարեր էին հաստատուած":

Օրհնաբանուած ահաւորութիւն,

Որ ձեռքդ հասնում է ամէն տեղ,

Խօսքով անճառելի եւ քննութիւնից վեր,

Մշտապէս խնկւում ես աւետարանով,

Իբրեւ օծեալ նորածին՝ Դաւթի քաղաքի մէջ,

Եւ քահանայապետի հարցին՝ թէ

"Դո՞ւ ես Օծեալը՝ օրհնեալի Որդին"

Պետրոսի երանելի դաւանութիւնն էր՝

"Միակ օծեալը՝ կենդանի Աստծոյ որդին"

Իսկ թերահաւատ քննողները հարցնում են՝

"Դո՞ւ ես օծեալը, ասա համարձակ"

Նաեւ քո կանոններից հաւատում ենք

Օծեալ ուսուցչիդ եւ բոլորի Տիրոջդ:

Սրանից առաջ Հերովդեսը օծեալ անունով

Քեզ էր փնտրում յայտնապէս

"Ի՞նչպէս ես գրում, – ասացիր ինքդ, –

Աստծոյ օծեալը եւ տէրը Դաւիթի, որդին անսկիզբ,

Որդի՝ ժամանակով":

Այսպէս ըմբռնեցինք վայելչաբար

Այս բացատրութիւնը, որ մեզ տալիս է

Խորհրդաւոր կոչման լրումը,
Որ նախապատիւ է [դարձնում] քրիստոնէաների
վիճակը:

ԺԴ

Այնքան ահաւոր, միաժամանակ այնքան սուրբ է
Իւղի սոսկալի, խնկաւոր "օծութիւն" անունը,
Այնպէս որ, ոչ ոք երկրայիններիցս չի
համարձակուի

Աստուած կոչուել, այլ՝ լոկ աստուածային,
Նոյնպէս չի կարող մարմնաւոր մէկը
Իրեն Քրիստոս համարել, այլ՝ լոկ քրիստոնէայ,
Դա անհնար էր եւ առաջին մեծ մկրտչին՝
Ջրերով Հոգուն հրաւիրողին,
Որովհետեւ, ասում է, ես օծեալը չեմ,
Այլ ուղարկուած եմ նրա առջեւից:
Ինչպէս Մարկոս Աւետարանչի խօսքն է՝
Սրանով էին շրջում առաքելական լծակիցները,
Իբրեւ Աստուծոյ ձեռք, օգտուելով սրանից,
Քո անուամբ բուժում էին, առանց մարդկային
դեղամիջոցի:

Քանի որ ինչպէս խաւարը լոյսից,
Հիւանդութիւնը առողջութիւնից,
Գիշերն օրուանից ու մահը կեանքից,
Այդպէս եւ այս տիրապարգեւ նիւթից
Մերժում են չարի բոլոր հանգամանքները,
Խափանւում են եւ իսպառ վերանում:
Քանզի ինչպէս որ գազիր ճանճերը,
Սարդեր, գեռունները ականջամուտ,
Իբրեւ թոյնից՝ սպառւում, պակասում են այս
նիւթից,

Այդպէս այս իւրը երբ գորանում է
Օրհնութեան շնորհիւ՝ ե՛ւ դեւերին է հալածում,
Ե՛ւ չարքի մուրհակներն է ոչնչացնում,

Եւ մահավճիռն է պատռում:
 Աւազանը կատարեալ է լոկ օժման օգնութեամբ:
 Թէ՛ աւազակներից մահացու խոցուած
 Առաջին մարդուն տրուեց փրկութեան այս դեղը,
 Թէ՛ Յակոբոսի եւ Իսրայէլի անբոյժ վերքերին
 [Իբրեւ դեղ] այս պատուական իրը յիշուեց:
 Այս իւրն էր փափագում Դաւիթը յարակայ յոյսով
 Իբրեւ պտղաւետ ձիթենի Աստծոյ տան մէջ,
 Այնժամ մերժելով թփատութիւնը՝
 Գուշակեց շնորհը մկրտութեան:
 Եւ ինչո՞ւ եմ ես ճառում սրանից,
 Կարծելով՝ կարող եմ սպառել նիւթը,
 Մինչդեռ վերիններն իսկ ի գօրու չեն
 Մասնակիօրէն բացայայտել այս խորհուրդը,
 Եւ կամ՝ էապէս:

ԺԵ

Փառք քեզ միշտ եւ ամէն ինչում, անմահ
 թագաւոր,
 Այժմ իմ երգած օրհնաբանութեամբ,
 Որ արեցիր, կատարեցիր ինձ համար,
 Բարեխնամ, զթած եւ ներողամիտ,
 Հարուստ եւ առատ, ամենայաղթող,
 Հայրերից սկսած՝ օրինակ տուիր,
 Լրման հասցրիր իսկութիւնը ճշմարտապէս:
 Դու՝ բնութեամբ՝ լոյս ես եւ արեգակ
 մշտապայծառ,
 Եւ աշակերտներիդ դասը լոյս անուանեցիր,
 Որով երկրի բոլոր արարածներին
 Նրանց երջանիկ շնորհի շողերով լցրիր:
 Մէկից անուշ իւղ ստացար ոտքերիդ՝
 Նշան, որ ընդունելի են քեզ ուղղուած
 խնդրանքները,
 Եւ մի այլ պոռնկից՝ զլիսիդ,

Նշանակ մեր հանդէպ գթառատ սիրոյդ:
Անսահմանելիդ մշտափափագ բաղձանքով
հոտոտեց իւղն այս,

Հաստատուն ուխտով սահմանածդ մշտակայ
օրէնք օրինաբանելի՝

Կեանքի պատգամներ քոյսհրաման

Քարոզելու աշխարհով մէկ

Արժանաւորութիւնը համեստ իւղի՝

Ի գարմանս հրաշքը յտղների,

Ի յուսադրութիւն գալիք սերնդի:

Դուք սրբից ունէք օծութիւնը՝

Ասաց երջանիկն առաքեալներից,

Մեկնաբանելով օծման խորհուրդը,

Որ տալիս ես մեզ կենդանաբարիդ

Անպակաս էութեան առաւելութիւնից:

Ուստի գերազանցօրէն քեզ նմանատիպ եւ

յարմարաւոր

Լոյսիդ եւ Սուրբ Հոգուդ,

Օրհնութեան կաթեցումն այս, որ սրսկւում է մեզ
վրայ անսպառ,

Նաեւ Լոյս է կոչւում,

Իբրեւ ստեղծուածներից առաջինը

Եւ արաչութեանդ պատկերակից,

Որով հալածում ես մեղքի խաւարը:

Իսկ Հուր է կոչւում, որովհետեւ

Ամէն տեսակ տարրերի հետ

Հաւասարապէս զուգաւորում է՝

Բաշխուած յայտնապէս, թէ ծածուկ,

Լուռ, թէ հռչակուած,

Ու թէ չբախուի հակառակորդի՝

Չի բաղձա բորբոքուել ինքնասաստ կամքով:

Նաեւ՝ Օծումն, որ արքայաբար

Որդեգրելով, քեզ հետ միասին՝

Մատուցես Հօրդ ի ժառանգութիւն,

Ողորմութեանդ [այս] ազգակիցը

Մեր մէջ նկատուի անեղծանելի,

Որպէսզի փայլենք գալիք փառքի մէջ:
Կոչուում է Հոգի,
Որպէսզի խաբէութեան հետքը մաքրելով,
Որ բանսարկուի ներգործութեամբ էր,
Նոր փոփոխուելով
Երկնային Հօրդ երկրպագենք
Հոգով եւ ճշմարտութեամբ
Յոյսի հաւատքով քեզ հետ բեւեռուած,
Ամենապարգել:

ԺԶ

Ահա արդարեւ ճշմարտագունեղ
Այս լուսապատար, խնկալից իւղը
Վերնայնիդ սիրոյ արտացոլումն է,
Որի համար եւ Պօղոսը պատշաճ դասեց
Գոհաբանական ճառի մէջ ասել յայտնապէս.
Ով մեզ օժեց ձեզ հետ միասին ի Քրիստոս Յիսուս՝
Աստուած է, որ եւ կնքեց մեզ եւ մեր սրտերին
Հոգու առհաւատչեան տուեց
Ու նաեւ ասաց. Մի՛ տրտմեցնէք
Աստծոյ սուրբ Հոգին,
Որով կնքուելու էք փրկութեան օրը
Պատկառելի եւ անուանելի է
Այս օծութիւն հորջորջումը
Ինչպէս հին օրէնքում,
Առաւել եւ նորում:
Տիրական տնօրինութիւններիդ ու չարչարանքիդ
Անցած խորհուրդն է ակնյայտ դարձնում
Դաւթեան սաղմոսի այն ասոյթը, թէ՛
Տիրոջ եւ իր Օծեալին դէմ
Հաւաքուեցին, կուտակուեցին
Իշխանները ժողովուրդների:
Մեծ մարգարէութիւնն էր ակնարկում
Մոլեգնաչար հրեաների խմբի՝
Անջնջելի արեանդ մեղքի տակ մտնելը,

Երբ հանդգնեցին տերութանդ դէմ,
Ո՞վ է, որ ձեռք պիտի մէկնէ Տիրոջ օծեալին
Եւ քաւութիւն գտնի:
Որովհետեւ թէպէտ Սաւուղը
Իր ազգակցի ձեռքով սպանուեց,
Օտար ազգերի ամօթն ու նախաստինքը
Իսպառ չմերժեց [նրանց],
Մինչեւ որ Աստոծոյ արեանդ հաղորդուեցին:
Ապագայի մեծ յիշողութեան գրաւական են
Աղօթանուէր աղերսանքներն այն,
Որ ասում էր իր սաղմոսով.
Յանուն քո սիրելի Դաւթի
Երես մի՛ դարձրու քո օծեալից:
Ու դարձեալ. նայիր եւ տես քո օծեալի երեսը,
Եւ Ողորմութիւն արա օծեալիդ:

ԺԷ

Քրիստոս, երկրպագելի պարգեւն է ձեռքիդ
Լուսակիր հիւթն այս,
Եւ արքայական իր նոխութեան մէջ
Չի տեսնում ուրիշ բարձրութիւն մի մեծ,
Քան քո անունից ասուած քո խօսքը.
Գտայ իմ ծառա Դաւթին
Եւ իմ սուրբ իւղով օծեցի նրան:
Ըստ սովորութեան յիշելով եւ համբուրելով
Քո լուսեղէն օծութիւնը,
Տէր Յիսուս Քրիստոս,
Քեզ ճանաչում ենք՝
Անփոփոխելի մշտնջենութիւն,
Դու ես ամէնը, ամէն ինչի մէջ,
Միակ թագաւոր թագաւորութեանց,
Եւ իւղուածների նշմարիտ օծեալ,
Երեկ եւ այսօր
Փառաբանուածդ երկրպագութեամբ:

Ինչպէս պատրոյգը ճարպի մէջ թրջուած
Նշողում չունի՝ մինչեւ չվառուի,
Այդպէս եւ լոյսի այս օծութիւնը՝ թափուած մեզ
վրայ,
Ապագայում է լուսավառուելու:
Սա [օծման] մէկին բացատրութիւնն է՝
Նախնիներից մինչեւ օրս,
Բարենշան օրինակով մի յարմարած,
Հրաշապայծառ գոյնով ներկած:

ԺԸ

Արդ, պատճառը սպրեցուցիչ վեհագոյն մասանց,
Աստուածային արարչութեանդ հարազատների,
Առանց որի հնարաւոր չէ քրիստոնէայ լինել,
Եւ կամ անուանուել Նագովրեցի,
Կամ յիշատակուել Յուդայի որդի,
Խրախոյս կարդալ յանուն Յակոբի Աստծու,
Այս ձեռքի հիւթը, որի մէջ
Միաւորուում է սուրբ Երրորդութիւնդ,
Շնորհքի ճառագայթ, շուքը մեր դէմքի,
Նկարագիրը մեր երեսների, բարեձեւութիւնը
պատահմունքի,
Աչքերի լոյսը, բիբերի տեսոնագրութիւնը,
Այտերի վայելչութիւնը, կերպարանքի զարդը,
Ծրթունքների պահպանարանը,
Հանդերձիչը կրօնների,
Վարքի յարմարիչ, հաւաքման շողկապ,
Անձանց զօրութիւն, ընդդիմացող ուժ,
Հուռութ խափանող, հմայանք քակտող,
Ձեռնածուների հալածիչ, կախարդների
խայտառակիչ,
Աղանդները բացայայտող, դէւերին յաղթող,
Ցաւեր փարատող, կնքուածներին սրբագործող,
Նորադարձների տենչանք, անիմանալի՝

Խմաստուններին

Ապշուրթիւնը հեթանոսների, անհաւատների
նախանձը շարժող,

Գաղտնիքները բացայայտող,

Յարգանք՝ նուաստներին, փառք՝ ստրուկներին,

Պճնումն կանանց, աճումն մանկանց,

Ծերերի հրճուանք, նուիրուածների

ձեռնադրութիւն,

Զգուշացում մաքուրներին, պսակ թագաւորներին,

Ճոխութիւնն արքաների եւ կայսրերի

մտադրութիւն,

Քանի որ կնքուած ամանը ցոյց է տալիս

Պարունակութեան մեծագնութիւնը,

Նաեւ մեզ տրուած շնորհի բարձրութիւնը՝

Սրանով ծածկուած քո անուամբ,

Աստուած տէր Յիսուս Քրիստոս,

Վայելուչ ինչ-որ համեմատութեամբ

Դառնում է ճանաչ:

Իսկ նրա անունը նոյն հորջորջումով,

Ըստ հոգեկից իմաստունների,

Դեռ եգիպտացիներից սկսած

Բացայայտում է իրի պատկերը՝

Ահեղ խորհրդի կերպարանքը:

ԺԹ

Զէ՞ որ միւռոնը այս օրհնաբանուած,

Որ մարգարէն նախապէս աղերսելով

Աչքի լոյս էր խնդրում,

Քերթողական խօսքով բացատրած՝

Հոմերոնը թարգմանուում է "իմ մայր",

Այսինքն, որ մեր բնութիւնը ուժգնօրէն ձգող,

Եւ կայունացնող չքնաղ փոփոխմամբ

Հոսուն ջրերը լուսաւոր աւազանի,

Եւ կարթ մածուցող մակարդի նման

Իր մէջ է հաստատել վայրենութիւնս
 Եւ հեղեղը աղբիւրների մշտահոս:
 Իսկ մառնամուտը նոյնպէս միւռոն է նշանակում,
 Մի այլ բառով արտայայտուած,
 Այսինքն՝ մթին, որ խաւարչուտ է
 Եւ ծածկուած է, անտեսանելի:
 Օտարացեղ չէ այս դիմառնական կոչումը բառիս,
 Քանի որ իրօք անուն է դրում իրին համաձայն
 Եւ անքննելի է խորութիւնը այս,
 Քան թէ ամէն մի սրբութիւն սրբոց:
 Քանի որ ոչ թէ ջրի նման է աղտը լուանում,
 Կամ սիրտն ամրացնում հացի բնութեամբ,
 Այլ նորոգ ինչ-որ մի յարմարութեամբ
 Տնօրինապէս տեսնագրում է զգայարաններին,
 Սակայն վերնական անհասութեամբ
 Ունի անուն անքննելի:
 Եւ ինչպէս ասում է՝ Աստուած անմատոյց
 Լոյսերի մէջ է, իսկ անսահման փառաւորութեամբ
 Անբաւ խաւարում ծածկուած է անտես:
 Արտաքուստ փակուած՝ հասու չենք նրան:
 Նոյն կերպ է եւ այս ծորումը լոյսի
 Որոշ ճարտար լեզուներից
 Պատշաճ ասութեամբ անուանագրուած՝
 Մռայլ է կոչում,
 Քանի որ անհնար է
 Երկրածին բնութեամբ իսկութիւնն զգալ:
 Իսկ իր մէջ հարստաբար ու տիրականապէս
 Երկու աստծոյ անուն է կրում:
 Եւ բարձրեալի անուանը նմանուելով
 Կրկնակի է մեծանում այս իւղը՝
 Նուիրագործուած ամենարուրեան ազնիւ
 կնդրուկով,
 Չի Աստուածը մեր սպառիչ կրակ է ըստ Մովսէսի,
 Ու նաեւ լոյս է, ըստ Յովհաննէսի,
 Ուստի Եսային ճշմարտօրէն է սրան ակնարկում՝
 Լոյսն Իսրայէլի հուր պիտի դառնա:

Ի

Դարձեալ նոր ձեռով ներկայացնեմ՝
Իրը յայտնելու նոր մի պատկերով,
Զմոռանալով իմ նողկութիւնը,
Որը քաղցրացաւ գթութեամբ մեծիդ՝
Նորից ու նորից գովեստով օրինել:
Մեռայ՝ դառնութիւն է նշանակում,
Տաժանելի կիրք եւ չարչարանքներ:
Միւռոն՝ մեր լեզվով թէ ստուգաբանենք,
Պիտի թարգմանենք մահ-մեռելութիւն:
Որովհետեւ այս հոգեւոր օծմամբ
Մենք կտրուում ենք սնոտիասէր,
Մահակերպարան, տաղտուկ ու զազիր
Հեշտութիւններից հակառակուողի,
Որ օդախոնաւ մեղկութիւններով,
Ինչ-որ ջրացիր մի խոնաւութեամբ
Աղաւաղում են հունչը քնարի իմ լսողութեան,
Թմբուկ-թաղանթի ներդաշնութիւնը
Ուժգին հնչումով մի անվայելուչ
Ներքեւ է ձգում, մատնում կորստեան
Հեռանկարը մարդու գոյութեան:
Դարձեալ, վերստին յուսով ենք կապում
Քո խաչի անճառ խորհրդին, Քրիստոս,
Դու, որ միշտ ողջ ես՝ մահով մկրտուած,
Աստուած, եւ հաղորդ քո խրախոյսով՝
Սրանով ենք մենք հաղորդուում կեանքիդ,
Եւ՝ բոլորովին անբաժանելի:

ԻԱ

Յիսուս, չորս կողմից դրոշմած այս իւրը
Բարձրեալիդ խաչի պէս հաստատում է
Կեցուցչիդ գուգափառ եւ նմանատիպ արեան

շնորհը,

Եւ մեծարում է՝

Նոյն անմերժելի փառքով պսակուած:

Ծառն այդ կոչւում է օրհնեալ իւրի փայտ,

Ըստ մարգարէի կանխասացութեան,

Դա սովորական անտառի տունկից կազմուածը

Հօր մի ուժով փրկում է չարի նենգ արկածներից

Եւ օտարոտի մտածումներից,

Վերադարձնում է քեզ՝ ստեղծողիդ,

Հասցնում նրան կեանքի նոյն նիւթին:

Եւ մեր մտքի պատուհանը մշտաբաց ու

դիւրաթափանց

Տեսնազգրում ենք յանուն ահաւոր մեծիդ

գօրութեան,

Որ զգայարանքս խոհականօրէն զգաստանան

քեզնով,

Իբրեւ ըղձական օթեւան Հոգուդ,

Եւ խաւարահողմ խարդախող չարի

Խաբելութեան դէմ անհաղորդ մնան:

Զսպուած այս լոյսով՝ կենտրոնանում ենք,

Երեկոյան պաշտամունքի

Գոհաբանական նուագերգութեան,

Աստղերի հետ, որ նշանն են

Մեր մէջ վառուող քո շնորհի:

Սրանով են եւ փրկութեան բարի յուշարկումները

Տնկւում մեր սրտում ու պտղաբերում,

Քո մեծ գալստեան վերջին գիշերի

Ընթրիքի համար

Այս լոյս ճրագն ենք, ահա՝ կիրառում:

ԻՔ

Իսկ այժմ տառաթուերի գումարով դիտենք.

Թէ քսանը չորսով մենք բազմապատկենք,

Եւ գտնենք տառը քսաներկուերորդ՝

Կբացատրենք խորին իմաստը [սրբալոյս] իւղի,
Որ թարգմանուում է ճաշակ հեշտալի,
Եւ պատրաստում ենք այն ընկալելումենք
ամբողջապէս:

Երբ ութսուն նշող գրի փոխարէն դնենք չորս
հարիւրը,

Ստուգարանենք՝

Ձէթի անուան հետ նիւթ է ստացում,

Որ կերպարանքն է թթու խմորի:

Սա զանգուածն իրեն ենթարկել գիտէ,

Որ ոչ թէ քիչն է շատի ընդերքում,

Այն ամէն ինչը իր կողմն է ձգում՝ անեցնելով,

Ինչպէս ասում է անտարանը:

ԻԳ

Այս համեստ իւղը միշտօրինակն ու նմանութիւնն
է

Համբարձման եւ խոնարհութեան:

Երբեմն իբրեւ կակուղ պատառ է տրուում,
ընկալում,

Համակշիռ ու յարմար խօսքի պէս,

Երբեմն, սակայն, գերափառ է նա,

Բոլոր լուծական, հոսանուտ, ծորող նիւթերի վրայ
Շրջում է իբրեւ

Այն հրաշափառ խորհրդի պատկեր:

Երբ որ լցւում է կաշուէ պարկի մէջ՝

Ոչ թէ գինու կամ ջրի պէս թրջում,

Այլ պահպանում է հին պատշաճ ձեւը:

Այսպէս ստանալով առաւելական

Այս բարիքը քո,

Որդիդ կենդանի Աստծու,

Սրբանուէր այս օժելութիւնը

Մեր ճակատին ենք գրում քո արեամբ,

Ու քո Հոգով տպաւորում ենք մեր սրտում,

Եւ հաւատում ենք խորապէս,
Որ նա մի օր թէ յայտնուի
Բազմանճանհ շառայներով՝
Տարածուելու բազմատեսիլ,
Չարմանահրաշ ընդլայնումով,
Լոյս կընծայէ գալիք օր ու սերունդներին:
Երջանիկ ու վերնանշոյլ ճարպն հոգեւոր
Թող իմ դէմքին քո նշանով լուսավառուի:

ԻՂ

Եւ կարծես անհաս, անըմբռնելի
Մեծ զօրութիւնն այս
Մտքի սլացքի թեթեւ թեւերով,
Որ շա՛տ, շատ վեր է մեր ըմբռնումից,
Անկանգ շարժումով, անհետ փախստեամբ
Ու լայն տարածքով տարաբաժանուած,
Թաքնուեց ինձնից եւ չօրինակուեց,
Կամ զուգորդաբար չնմանակուեց,
Կամ սահմանումով չձեւակերպուեց,
Եւ չկշռուեց զուգակցի չափով,
Այլ աստուածային իսաչի նշանիդ
հաւասարութեամբ
Եւ, կեցուցիչ, քո արեան հետ միայն
Հոգեւորապէս գերազանց եղաւ:
Եւ հիմա օրհնիր մեզ, տէր, սրանով:
Նաեւ սհաւոր, լուսեղ, երկնային եւ զարմանալի
Քո անունը, Տէր, թող փառաբանուի,
Մաքրակրօնների բուրվատով խնկուած,
Սուրբ, սուրբ անքնին, անպատում, բարձրեալ,
Ողորմած, երգուած, ճշմարիտ,
Բարերար եւ սուրբ,
Սրանով փրկագործիր, եւ քաւութիւն տուր,
Բժշկութիւն պարգեւիր, շնորհով օժտիր,
Առատաձեռնիր, ով երանութիւն:

Օծուելով երկնանձրեւ լոյսի այս ձէթով՝
 Անարատ լինեմ,
 Իւղուած բանաւոր այս յենքի մէջ թող
 Մեղքի բիծն անգամ չտխրեցնէ,
 Որ հոգուս կերպը մնայ անարատ:
 Եւ թող բոլորը, որ կմօտենան օծուելու սրանով՝
 Հարսնապանոյն վեհութիւնով գեղազարդ,
 Սուրբ վայելչութեամբ ու երջանկօրէն
 Հոգով զարդարուեն:
 Թող այս լուսափառ եւ աստուածատուր
 Կրակը իրեն մօտեցողներին լինի կրկնեռաց
 Եւ բարեկափազ ջերմութեանու յօրինուածքի
 երկաթ,
 Որով ամբողջովին, ամենապատրաստ
 պնդութեամբ
 Քո կարծր վէմի վրայ յարակայ
 Միշտ արձանանում,
 Աներկբայօրէն քեզ որդեգրուած:
 Ով Սրանով զինուի՝
 Նշանակ լինի երկնամրցանակ այս մեծ պարգեւին.
 Ո՛չ ջրով թրջուի, ոչ այրուի հրով, ոչ ցրտահարուի,
 Ո՛չ վնասաբեր հողմն իրեն մարէ,
 Ո՛չ աղտեղանայ ինչ-որ ուրուական
 պղծութիւններից,
 Եւ պահուածները չարին չմատնէ,
 Ո՛չ աշխարհից հեռանալիս անմտաբար
 Դուրս նետել կեանքի գանձերն ամբարուած,
 Եւ քո թելերի օգնութիւնից զուրկ չմնալ
 [հանկարծ],
 Մեր մէջ էացած [սուրբ] օծութիւնից
 Անմաքրութեամբ չմերկանալ:
 Այլ քո հաճութեամբ կիզուենք նրանով,
 Պարարուենք իրմով եւ լուսաւորուենք,
 Նրանով ազատուած եւ արդարացուած,
 Պսակուած ու թագաւորած:
 Եւ քեզ, միակիղ, միակ օձեայիղ

Բոլորի երգը օրհնաբանական,
Եւ լեզուների փառաստրութիւնը,
Հնչնունք ձայների, հանդիսաւոր գովք,
Եւ շրթունքների բարեբանութիւն,
Սրբաբանութիւնը սաղմոսների
Հօր եւ սուրբ Հոգու հետ
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԴԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Աստուած յաւիտենական, բարերար եւ
ամենակալ,

Ստեղծող լոյսի եւ յօրինող գիշերի,
Դու կեանք՝ մահուան մէջ եւ լոյս՝ խաւարում,
Յոյս՝ սպասողների եւ համբերութիւն

տարակուսեալների.

Որ ամենարուեստ քո իմաստութեամբ ստուերը
մահուան փոխում եւ այգի,

Աննուազ ծագում եւ անմայրամուտ արեգակ,

Չի գիշերուայ մուլթն անգօր է իսպառ քողարկել
փառքը քո տէրունական,

Որին ծնրադրում են արարածներն ու
երկրպագում՝

Երկնաւորներն ու երկրաւորներն եւ
սանդարամետականները բոլոր:

Դու լսում եւ հեծեծանքները կապեալների,
ունկնդրում խոնարհների աղօթքին

Եւ ընդունում եւ նրանց խնդրանքները,

Աստուած իմ եւ թագաւոր իմ, կեանք իմ եւ
սպաւէն իմ,

Յոյս իմ եւ վստահութիւն իմ,
Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուած բոլորի,
Սրբերի սրտում հանգչող սո՛ւրբդ դու,
Մխիթարութիւն վշտերի եւ քաւարան
մեղաւորների,
Որ գիտես ամէն ինչ՝ նրանց լինելուց առաջ:
Ուղարկի՛ր պաշտպան զօրութիւնն աջիդ
Եւ գիշերային երկիւղից ու չար դելից ինձ փրկիր,
Որպէսզի յիշատակը սոսկալի եւ սուրբ քո անուան
Միշտ համբուրելով հոգուս շուրթերով՝
Ըղձական շնչով ապրեմ պահպանուած բոլոր
նրանց հետ,
Որոնք անդադար ի բոլոր սրտէ քեզ են կանչում,
Տէ՛ր:

Բ

Եւ դրոշմից խաչի քո նշանի,
Որ աստուածային արեամբդ ներկելով դու
նորոգեցիր,
Եւ մկրտելով մեզ որդեգրեցիր,
Եւ նկարեցիր ու յօրինեցիր պատկերիդ փառքով, -
Պարգէւներով այդ աստուածային թող
ամօթահար լինի սատանան,
Մեքենայութիւնները քանդուեն թող ու
որոգայթները վերացուեն,
Մարտնչողները պարտուեն թող որ, եւ թող չլինեն
զէնքեր սայրասուր,
Մշուշը ցնդի, մութը փարատուի, մառախուղն
անցնի:
Բազուկդ հովանի լինի թող եւ աջդ կնքի.
Քանզի գթած ես դու եւ ողորմած,
Եւ քո անունով են կոչուում ծառաներդ
Եւ քեզ՝ Հօր ու սուրբ Հոգուդ հետ յաւերժ փառք,
իշխանութիւն:

ԲԱՆ ՂԵ

Ա

ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Արեգա՛կ արդար, օրհնեալ ճառագայթ, պատկեր
յուսեղէն,

Փափագ անձկալի, անքնին բարձրեալ, անպատում
գօրեղ,

Բարու բերկրութիւն, յուսատու տեսիլ, գովեալ
երկնաւոր,

Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ,
խոստովանեալ կեանք,

Եղկելոս բազմավրէյ եւ սիաւներով լի այս
շարադրանքի

Պակասները դո՛ւ լրացրու խօսքով քո ամենագօր

Եւ այն մատուցիր որպէս հաճելի աղերս բարձրեալ
Հօրդ:

Դու ինձ համար անէծքների փորձութեան
ենթարկուեցիր՝

Կերպարանքովդ նմանուելով ինձ, կենա՛ց
օրհնութիւն,

Բարեխնամ տեսուչ երկնայինների եւ ողջ
երկրայնոց:

Ձի թէ յանձն առար մեռնել ինձ համար,

Աստուած բոլորի,

Ո՛րքան աւելի պիտի ուզենաս կարեկցել եւ այժմ
ինձ, տառապալից տագնապահարիս,

Ազգակցիդ մեզ՝ մեզնից մարմնացեալ,

Մեղապարտիս հետ միշտ աղօթելով

Հօրդ համապատիւ:

Բ

Եւ պատուական արեանդ միջնորդութեամբ,
Որ մատուցւում է միշտ առաքչիդ կամքին ի
հանութիւն՝

Թող վերացունեն վտանգները մեղաւոր
դատապարտեալիս,

Պարտքերը զիջունեն, ամօթը փարատուի,
Մոռացունեն խայտառակութիւններն ու
դատավճիռն ի բարին փոխուի,

Սատակեն որդերն, ու լացը վերանայ,
Դադարի կրճտումն ատամների թող,
Ողբերն սպառունեն,

Արտասուքները ցամաքեն թող որ, սուգը
հեռանայ,

Իտաւարն հալածուի, ու հուրը սաստիկ մարի,
մոխրանայ,

Եւ բազմապիսի տանջարաններն ի բաց մերժունն:

Գ

Եւ թող բոլորին կեանք կամեցողիդ ու
պարգեւողիդ գթութիւնը գայ,

Թող լոյսդ ծագի, փրկութիւնդ փութայ,
օգնութիւնդ հասնի,

Այցելութիւնդ ժամանի, եւ ողորմութեանդ ցողը
կանխահաս

Թող որ շտապի՝ յոյժ թշուառութեամբ մահուան
վիհն ընկած

Իմ ոսկորների պապակ անդաստանը ոռոգելու:
Կենարար արեանդ բաժակն երկնաւոր, որ
պատարագւում է միշտ, անսպառ

Յանունն ննջեցեալների հոգու փրկութեան եւ
կենաց,

Թող ծաղկեցնի եւ պտղաբերի լուսաւոր օրուանդ

համար մշակուած դաշտն իմ մարմնեղէն,
Որպէսզի նրա մեղքով իսպառ մահացած հոգիս,
Քո շնորհիւ, գթած, քո մէջ զօրացած,
Եւ մեղքերից ազատ, անմահ կենդանութեամբ
Նորոգուեմ արդարների յարութեան օրը՝
Հօրիցդ օրհնուած,
Որի հետ փառք քեզ եւ քո սուրբ Հոգուն
Եւ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ,
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԺԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, քանզի զղջման նախընթաց գլուխներում
Յուսահատութեան իսօսքերով լքուեցի սաստիկ,
Եւ տարակուսանքի հեծանով մահու չափ ձաղկեցի
ինքս ինձ,
Ուստի եւ այստեղ վերադառնալով յոյսին
վերստին՝
Համարձակուեմ պիտի գո՛ւթ շարժել ես,
Սուրբ Երրորդութեանը մեղաւորիս օգնութեան
կանչելով:
Գիտեմ, որ եթէ օրհնաբանեմ ես եւ դաւանեմ
Արարածներին բոլոր կեանք տուող Աստծուն,
Եւ ընտանի ձայնով կանչեմ անունն ահաւոր
շնորհապարգեւ Բարերարի,
Նա կենդանութիւն պիտի տայ, անշուշտ ինձ՝
մեղաւորիս,
Ըստ մարգարէի կանխասացութեան,
Թէ՛ "Ով որ կանչի Տիրոջ անունը, նա պիտի
սպրի":

Բ

Իսկ ես ոչ միայն կանչում եմ նրան,
Այլ հաւատում եմ նրա մեծութեանն ամէնից առաջ.
Ոչ թէ գալիս եմ խնդրելու նրա պարգեւները ես,
Այլ նոյնիսկ իրեն, որ կենդանութիւնն է
ճշմարտապէս,
Շնչառութիւնն իսկ, առանց որի չի՞ք շարժում եւ
ընթացք:
Ո՛չ այնքան յոյսի հանգոյցով, որքան սիրոյ կապով
եմ ես կապում նրան.
Ու ոչ թէ տուրքի, այլ այն տուողի կարօտով եմ ես
վառւում շարունակ:
Ոչ թէ փառքն է ինձ համար անձկալի,
Այլ փառաւորեալն է համբուրելի,
Ոչ թէ ապրելու կեանքի փափագով,
Այլ կենարարի յիշատակով եմ տոչորւում ես միշտ:
Ոչ թէ վայելքի տարփանքով եմ ես հեծում
ողբաձայն,
Այլ այն կազմողի տենչանքովն եմ խոր հառաչում
սրտանց:
Չեմ փնտրում հանգիստ, այլ աղաչում եմ երեսը
տեսնել Հանգստարարի:
Ոչ թէ հարսանքատան խնջոյքի, այլ փեսայի
անձկութեամբ եմ մաշւում,
Որի գօրութեան շնորհիւ՝ վստահ
ակնկալութեամբ,
Հաւատում եմ ես աներկմիտ յոյսով,
Որ վերոգրեալ մեղքերի բեռներն ունենալով
հանդերձ՝
Ապաստանելով ամենակարողի ձեռքին,
Ոչ միայն պիտի հասնեմ քաւութեան, այլեւ պիտի
տեսնեմ իրեն,
Ընդունելու գութն ու ողորմութիւնը եւ
Ժառանգելու երկինքը նրա,
Թէեւ յոյժ մերժելի եմ:

Գ

Եւ արդ, ամօթահար սաստիկ ու կորագլուխ,
Գրչովս, որ խօսքի միջնորդ է դառնում
Ամուր կողպէքով փակուած, պապանձուած իմ
շրթունքներին,

Չկարողանալով շարժել լեզուս անհամարձակ,
Պաղատանքների նոր երգեր ահա պիտի ոգեմ ես՝
Ի վեր ուղերձուած իմ աղիողորմ հառաչանքների
աղաղակներով:

Ընդունի՛ր սիրով, Տէր Աստուած հօր,
աղաչանքներն իմ դառնացած սրտի.

Քաղցր գթութեամբ մօտեցիր դու ինձ՝
ամօթահարիս.

Փարատի՛ր, ամենապարզե՛ւ, ամօթալի
տխրութիւններս,

Վերցրո՛ւ ինձնից, ողորմա՛ծ, անտանելի
ծանրութիւններս,

Հեռացրո՛ւ, հնարագէտ, սովորութիւններս
մահացու.

Իտափանի՛ր, մի՛շտ յաղթող, հրապոյրները խաբողի.

Վանի՛ր, վերնային, մառախուղը մոլորեցնողի.

Կասեցրո՛ւ, կեցուցիչ, ընթացքը կորուսչի.

Յրի՛ր, ծածկատե՛ս, չար հնարքները կապկապողի.

Խորտակիր, անքնի՛ն, յարձակումները
մարտնչողի.

Տյառնագրի՛ր անունովդ լուսացոյց երդն իմ յարկի.

Պարփակիր քո ձեռքով առաստաղը տանարիս.

Գծագրիր քո արիւնով սեմը սենեակիս մուտքի.

Դրոշմի՛ր քո նշանը աղօթեալիս ճանապարհին,

Ամրացրու քո աջով խշտեակն իմ հանգստի.

Չերձ պահիր թակարդներից ծածկարանն իմ
անկողնի.

Պահպանիր քո կամքով տառապած հոգիս.

Անխարդախ արա՛ քո շնորհած շունչը մարմնիս.

Կանգնեցրո՛ւ շուրջն իմ՝ պարը երկնային քո

գօրքերի,

Որպէս դիմամարտ՝ դեւերի գնդին:

Գ

Տո՛ւր հանգիստ բերկրալի մահահանգոյն նիրհիս
խորին գիշերում՝

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ
բոլոր ընտրեալների:

Տեսութեանս պատուհանները, որոնք մտքի
զգայարաններ են,

Ամփոփիր այնպէս ու պարուրիր,

Որ պաշտպանուեն միշտ անասանելի

Կենցաղական հոգսերից բոլոր, անրջական
երագներից,

Խռովայոյզ ծփանքներից ու ցնորքներից խենթ ու
խոլական

Ու յիշատակով աներկբայ յոյսիդ մնան անվնաս:

Որպէսզի երբ սթափուեն իմ ծանր քնից,

Ամենազգաստ արթնութեամբ եւ հոգնորոզ
զուարթութեամբ քո դէմ արձանացած,

Աղաչանքն այս իմ՝ հաւատքի բուրմամբ,

Ո՛վ ամէնօրինեալ թագաւոր անճառ փառքերի,

Երգակցելով երկնագումար փառաբանող խմբին՝

Քո բարձունքն ի վեր՝ առաքեմ առ քեզ:

Զի փառաւորեալ ես դու արարածներից բոլոր

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԺԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Աստուած բարերար, հօր, ահաւոր,
Շնորհատո՛ւ, բարի, դու Հայր ողորմած.
Անունըդ անգամ քո մեծութիւնն ու գթութիւնը եւ
քո մտերմութիւնն է աւետարանում,
Քաղցր եւ դժնիների եւ անգոհների համար.
Քեզ հետ Որդիդ էլ նման է միշտ քեզ, ձեռքիդ պէս
նրա ձեռքն էլ զօրեղ,
Անժամանակ տէրութեամբ ահեղ՝ քո
արարչութեամբ ինքն էլ բարձրացած:
Նաեւ սուրբ Հոգին քո ճշմարտութեան՝ բխելով
քեզնից անսպառօրէն,
Իբր աստուածային կատարեալ իսկութիւն եւ
էութիւն մշտնջենական,
Ըստ ամենայնի հաւասար է քեզ եւ
իշխանութեամբ՝ փառակից Որդուդ:
Երբեակ անձնաւորութիւն՝ համակ անքնին,
Յատուկ առանձնացումով տրոհուած անձեր,
Բայց միաւորուած համագուգութեամբ,
Նոյնագոյ բնութեամբ տիրապէս, անշփոթ եւ
անանջրպետ
Միեւնոյն կամքով եւ գործակցութեամբ,
Ոչ մէկը միւսից աւագագոյն չէ,
Եւ ոչ էլ մի ակնթարթ նոյնիսկ մէկ-միւսից նուազ
երբեւիցէ,
Այլ իբրեւ պատճառ երկնային սիրոյ անստուեր
լոյսի, յայտնուած մեր մէջ,
Սրբասացութեան միակ պսակով՝ անսկզբնաբար
աստուածաբանուած:

Բ

Քանզի արդարեւ բարձրաձայն այս
խոստովանութիւնը երեք փառատրեան այդ
դաւանութեան՝

Պետրոսին հաւատքի վէմ կոչուելու երանութեան
արժանացրեց -

Գատապարտեալիս մեղաւոր հոգին բարեհրաման
քո ակնարկութեամբ,

Ո՛վ դու, որ փնտրում ես գերեալիս, հրաշանորոգ
թո՛ղ արդարացնէ:

Ձի քոնն են թէ՛ւ պարգեւներն ու
նողորմութիւնները,

Բայց դու ո՛չ այնքան քո պարգեւներով, որքան
նողորմութեամբ եւ հոչակուած.

Քանզի երկրորդը քո փառքն է աւելացնում,

Իսկ առաջինն առաքինական գործի է յայտարար.

Ձի պարգեւները փոխարինութիւն են
ծառայութեան դիմաց,

Իսկ նողորմութիւնը՝ բարերարութիւն մեղաւորիս:

Գ

Եւ արդ, մարդկային գործերը թող որ
չգերազանցե՛ն իրենց գօրութեամբ քո շնորհներին,
գթառա՛տ Աստուած,

Եթէ մինչեւ իսկ անցաւոր բնութեան օրէնքներից էլ
վեր լինեն նրանք.

Այլ յաղթող հանդիսանալով քո
երկայնամտութիւնը,

Երկրածինների ընթացքը երբէք չհաւասարուի՛
թող քո գործերին:

Քանզի եւ նրանք, որ օրէնքների մաքրութեամբ
իրենց պարծենում էին,

Քո արդարութեան լոյսը երբ ծագեց, -

Որ նոր օրէնքի ճշմարտութիւնն էր ծանուցանում, -
Հրեաներն հետին անձկութեամբ լքուած ու
նուաստացած,

Աւելի քան տարագիրներն ողորմելի՝
մարդասիրութեանդ կարօտ եղան:

Եւ քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ,
բարերար՛ր,

Լսի՛ր ողբաձայն պաղատանքներս, որ ուղղում եմ
քեզ.

Ողորմի՛ր, փրկի՛ր եւ մարդասիրի՛ր, զի երկայնամիտ
ես դու,

Եւ քոնն են քաղցրութիւն, փրկութիւն եւ
քաւութիւն եւ փառք

Բոլոր հաւիտեան ապրող ազգերից. ամէն:

ԲԱՆ ԺԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Պաղատում եմ քեզ, լոյսի՛ ճառագայթ, արքա՛
երկնաւոր,

Գովեալ անապատում, եւ անճառ որդիդ դու մեծ
Աստծոյ.

Ականջ դիր դարձեալ եւ այժըմ ահա,

Բարձրեալ, բարեգութ, կեանքի ապաւեն,

Վիրաւորեալիս նուագաձայն հառաչանքներին:

Բ

Չի խօսուած երբէք, թէ քեզ աղաչեց աւազակներից
խողխողուածը,

Քանզի կարկամած էր.

Ոչ էլ պաղատանքի ձայն արձակեց քո ետեւից,
Քանզի անկռինչ էր.

Կամ մատների շարժումով աղետն ու վտանգը
յայտնեց տեսողիդ,

Քանզի խորտակուած էր.

Ոչ էլ ողբագին արցունքներով լի աչքերը տնկեց
բարերարիդ,

Քանզի վնասապարտ էր.

Եւ կամ միջնորդի բարեխօսութեամբ ողորմածիդ
կամքը սիրաշահեց,

Քանզի լքուած էր.

Ոչ էլ ջախջախուած մարմնի արիւնով ներկուած
հագուստները ցոյց տալով քեզ`

Գթածիդ սիրտը ճմլեց, քանզի յուսահատ էր.

Ոչ էլ հաստատուն ծնկներով` իբրեւ ոտքի
գարշապարով` չընթացաւ,

Քանզի անկանգնելի էր.

Չի կիսամեռ ասել կենդանուն` հեռու չէ այնքան
մեռելութիւնից:

Մանաւանդ որ խօսքով քո խրատուելուց,

Ողորմութեամբդ բարերարուելուց

Եւ քո փառքով լուսաւորուելուց յետոյ էլ դեռ,

Ոչ միայն չդադարեց քեզ հակառակ ընթացք
բռնելուց,

Այլեւ չենթարկուելով, գլուխ բարձրացրած` իր
թշնամեաց կողմն անցաւ

Եւ նրանց հետ մէկտեղ դաշն կնքած միաբանեց
քեզ ստողների հետ:

Գ

Իսկ դու, բազմապարգեւ բարերար, անոխակալ եւ
ամենափրկիչ,

Ոչ միայն չիշեցիր մեղքերն այդ չարագործի,

Այլեւ ոչ իսկ խօսքով յանդիմանեցիր.

Չոտնահարեցիր ընկածին, այլ կարեկցաբար
մօտենալով նրան,
Ծայրագոյն խնամք ցուցաբերեցիր:
Քահանայապէս, ըստ ահարոնեան տկար օրէնքի,

-
Որ զօրաւոր է մահ գործելու մէջ,
Դատապարտիչ անէծքներով եւ բռնալիք
քարաձգութեամբ, -

Դու չփութացիր վիրաւորուածին խորտակելու.
Եւ ոչ էլ, ինչպէս դէտական առաջնորդն այն
թերապաշտօն,

Որը երկուսի միջեւ իբրեւ բաժանող անջրպետ՝
Հնի լրումն էր եւ սկիզբը նորի,
Եւ որ հոգեզուրկ ապաշխարութեան հրաւիրակ
հանդիսացաւ, -

Վիրաւորեալի տագնապը տեսար.
Որ չլինի թէ արմատակտուր տապարի օրինակով
Քո մէջ չարատանջ մահուան պաշտօնը
նկատելով՝

Սատակի գալիք փորձութիւններին դեռեւս
չենթարկուած.

Այլ պահպանանուն ստորեստանցի
հեթանոսներին,

Որոնք ստացան իրենց օրէնքը հրեաներից
Ու պահեցին միշտ, մինչդեռ նրանք մոռացան, -
Կցորդուելով՝ մեր բնութեամբ խառնուած
մարմնիդ վերարկուով,

Օտար ազգերին էլ ազատութեան աւետիս
համբաւեցիր

Եւ աստուածային քո ներգործութեամբ
անապական՝ ձեռք երկարելով՝

Մահացու կերպով մեղանչած մարդուն
կանգնեցրիր դարձեալ իր սերունդներով:

Տիրաբեկ սիրտն ուրախացրիր եւ վիատեալին
յուսադրեցիր,

Եւ թշուառին զուարթացրիր դարձեալ.

Աւագանի կենարար օժանմբ եւ բաժակով լոյսի՝
լցրիր.

Նորոգեցիր հացով քո երկնային՝ արարչական
մարմնով.

Երջանիկների եւ ընտիրների վերակացութեամբ
Խնամարկեցիր ու փայփայեցիր ու դարմանեցիր,
Եւ հանդարտընթաց գրաստի խնամքին յանձնելով
նրան՝

Անփորձ պահեցիր, մինչեւ հանեցիր յարկը
լուսեղէն:

Առաջին եւ երկրորդ կենդանատու
կտակարանների միջնորդութեամբ դարման տարար
դու մարդասիրաբար:

Եւ, ինչպէս երբեմն Մովսէսին թեւատարած
արծուի պէս ընդունեցիր

Եւ բարի երկրի խաղաղ հանգստին
առաջնորդեցիր,

Հրամայելով վարդապետներին՝ խօսքի կերակրով
անել նրան:

Դ

Եւ արդ, դու, որ ողջ առաւելագոյն լոյսդ
բարութեան

Ամէն բանի մէջ բովանդակապէս հրաշագործեցիր,
Յրուողի գանձը սեփականելով՝ քո ստացուածքը
վերադարձրիր քեզ, -

Ինձ էլ ապրեցրու, մեղքերի պարտքերն իմ
մաքրելով,

Ո՛վ դու, որ պարգեւում ես ձրի եւ
հանպատրաստից,

Շնորհիւր եւ ի՛նձ քաւութիւն ու բժշկութիւն,
Բարեգո՛ւթ, զօրեղ, անքնին, անեղծ, սհաւոր,
Օրհնեալ միշտ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԺԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, նոյն ցաւագին հեծեճանքներով վշտահար
սրտիս

Եւ բոլորովին տագնապած հոգուս
տառապանքներով,

Այս անգամ դարձեա՛լ միեւնոյն ոճով դիմելով ես
քեզ,

Ամենապարզեւ քո բարերարի գո՛ւթն եմ խնդրելու:

Պաղատում եմ իբրեւ մեռեալ՝ կենդանի անմահ

Աստծուդ,

Փառքիդ հանդէպ իմ անարգութիւնը
խոստովանելով,

Ինչպէս եւ քո բարութիւնն իմ չարութեան դիմաց.

Որոնցով յաղթուեցի ինքս, քան թէ բուժուեցի,

Ամաչեցի, քան թէ համարձակուեցի,

Ուխտակորոյսս ես եւ աւանդամոռաց:

Այն ոչխարի պէս, որին օրինակ է բերում առակն
երկրորդ,

Ես էլ ծայրայեղ չափով մատնուած անզգայութեան

Ու մոլորուելով անմարդաբնակ լեռներում՝ երկար,

Եւ դեւերի հետ զազանաբարոյ վայրի կուռքերի

մէջ թափառելով,

Առանց թեկուզ փոքր-ինչ հօտին մօտենալու, -

Չունէի լեզու, որով պատմէի ցաւերն իմ տանջող,

Ոչ էլ ձեռք, որի շարժումներով համբերն եմ իրենց
մտքերը յայտնում:

Իսկ դու, միայն գովեալդ, սկսած նախնի
սերունդներից մինչեւ այսօր,

Գտնելով եւ ինձ՝ մեղաւորիս էլ մոլորութեան մէջ
անլոյս ու անել,

Ըստ գոչման առ քեզ մաղթանք երգողի,

Քո ինսամարկու կամքի տեսչութեամբ

Հովիւ կոչուեցիր.
Ոչ միայն հոգ տարար, այլեւ փնտրեցիր,
Եւ, ո՛վ հրաշագործ, ոչ միայն գտար, այլեւ
անճառելի բարերարութեամբ
Վերցրիր սիրով դու կենդանարար քո ուսի վրայ,
Եւ քո երկնային գորաց հետ մէկտեղ՝
Քո հայրենական ժառանգութեան մէջ դասեցիր
ինձ:

Բ

Եւ արդ, դու հզօր, կենարար, օրհնեալ, այցելու
գթած եւ մի՛շտ ողորմած,
Դու, որ ընդունեցիր նրանց՝ անաղերսներին այն
անկեզու,
Որոնցից մէկը մահացու խոցուած՝ չարչարուում էր
խիստ,
Միւսն անբանների անզգայութեամբ
Փախել էր դէպի հեռու ամայի վայրեր անբնակ,
Եւ վտարանդի, շուար ու վհատ՝ բառաչում էր
խեղճ, անիմաստօրէն, -
Քո աստուածային բարեխնամութեամբ
տիեզերահրաշ
Յոյց տուեցիր դու հոգածութիւնդ թշուառութեան
մէջ կորածի հանդէպ, -
Յայտնիր արդ եւ ի՛նձ գթութիւնդ խոր եւ
բարիքներիդ յորդումներն առատ,
Ինձ, որ վեր բերուած օրինակներից շատ աւելի եմ
եղել անօրէն.
Ինձ, որ մահապարտ եմ բազմօրինակ.
Ինձ, որ բարութեան քաղցր խառնուրդում՝
յատուկ համ եմ չար.
Ինձ, որ արժանի եմ անդամներիս հատմանն
արդարեւ,
Ինձ, համաճարակ, ախտով վարակուած վիրաւոր

հոգու.

Ինձ, որ անզգայ անասուններին եմ հաւասարուել
Եւ օտարացել իմաստունների ընտանութիւնից.

Ինձ, որ նման չեմ բնութեամբ ինձ պէս

բանականներին:

Եթէ մի օրինակ ունենայի, ես կասէի.

Թէ նմանակից ունենայի՝ կպատմէի.

Թէ հանգունակից ունենայի՝ կխօսէի.

Թէ ինձ հաւասարն ունենայի՝ կգրէի.

Թէ նոյն բանը անողն ունենայի՝ ցոյց կտայի.

Թէ ինձ համեմատն ունենայի՝ կիմացնէի.

Թէ անցեալում լինէր՝ կսփոփուէի,

Թէ ներկայումս՝ կյուսայի:

Սակայն, քանի որ ոչ նմանս ունեմ, ոչ էլ օրինակ,

Ուստի դո՛ւ միայն կարող ես քաւել ու բժշկել ինձ եւ

կենսագործել,

Կենդանաբարդ բոլոր մեռելների եւ նորոգո՛ղդ
տիեզերաց:

Գ

Չի եթէ երջանիկ, սուրբ ու սրատես

Դաւթի գործած չարիքներն ու

Անօրէնութիւնները գլխից աւելի վեր բարձրացած
էին,

Եւ մեղքերն ու յանցանքները դժուարակիր
բեռների նման ծանրացած սաստիկ,

Յապա ուրեմն իմ սխալմունքներն աւելի են, քան

Տիեզերասոյգ, ամենասպառ ծովի ջրակուտակ
հեղեղի յորդութիւնը

Ու անցնում են բոլոր լեռների կատարներից:

Բայց թող որ փչէ քաղցրաշունչ քամիդ, -

Ինչպէս այդ եղաւ Նոյի ժամանակ, -

Որ լեռներն անգամ կարող է հալել,

Յամաքեցնելու բազմակոհակ ջրակոյտն իմ

երկրակործան յանցանքների

Ու լեռնակարկառ բարձրութեամբ դիզուած
մեղքերն իմ բոլոր:

Դ

Եւ արդ, համառօտ քո խօսքով հզօր,
Եւ ամենակարող հնարաւորութեամբ կարճ
դատաստանիդ,

Ըստ մարգարէի, քաւութեան մի ելք ցոյց տուր
ինձ՝

Անօրէնութեան մէջ ընդերկար մոլորեալիս:

Եւ դու, ներելով յամառութիւնն իմ,

Ո՛վ երկայնամիտ, ողորմած, օրհնեալ,

Շնորհի՛ր ինձ կատարեալ թողութիւն եւ

բարեգործիւր ճշմարտապէս,

Ջնջի՛ր բոլորովին՝ անվճարելի պարտքերիս
արժանահատոյց տոկոսների տոյժը տաժանակիր:

Չէ՞ որ դու չունես ցատումնայից սիրտ ու
բարկութիւն բորբոք,

Ինչպէս նաեւ չկան քո մէջ նենգութիւններ եւ
նշաններ մթութեան,

Քանզի դու կեանք ես կամենում եւ լոյս,

Դու մահ չստեղծեցիր եւ, ըստ Դաւթի ու
Սողոմոնի,

Մարդու կորուստը քեզ ուրախութիւն չի
պատճառում:

Ե

Քո բարեվիճակ կանոնների մէջ դու մեծագոյն
պայման սահմանեցիր մարդկանց համար՝

Չարութիւնը չարութեամբ չփոխարինել,

Այլ մի օրուայ մէջ եօթանասունեօթ անգամ

գործած մեղքերը նոյնիսկ ներել պատգամեցիր մեզ,
 Մեզ, որ ի բնէ հակամեա ենք միշտ ի յայտ բերելու
 բիր ու անհամար չարութեան բծեր,
 Որոնք աճում են ու միշտ նորոգւում
 Մեր ամէն տեսակ փշեր բուսցնող բնութեան
 դաշտում՝
 Համաձայն անսուտ քո վկայութեան,
 Թէ՛ "Մարդու միտքը իր մանկութիւնից
 տրամադիր է չարիք գործելու":
 Քո Կենաց բանի աւետարանիչ
 Յովհաննէսն անգամ,
 Որը մաքուր էր կատարելապէս,
 Նա ինքը՝ որպէս հասարակութեան բնութեան
 լծակից,
 Ամբողջովին արդարացած՝ քո ճշմարտութիւնը
 հաստատեց իմ ստութեան հանդէպ:
 "Եթէ ասենք, որ ոչ մի մեղք չունենք, – ասում է նա,
 -
 Սուտ դուրս բերած կլինենք նրան":
 Արդ, կատարուած է խօսքդ ինկելի
 Եւ լիովին ստոյգ արդարացուած՝
 Իմ մոլորութեան խիստ դժնդակ անիրաւութեան
 հանդէպ:
 Ուստի խնայի՛ր ինձ ողորմութեամբ, քաղցրահամ
 աղբիւր,
 Դո՛ւ միայն օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԺՉ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, դո՛ւ միայն Աստուած երկնաւոր,
 բարձրեալ, բարեգործ.
 Քոնն են զօրութիւնն ու ներողութիւնը,

Քոնն են բժշկութիւնն ու առատութիւնը,
 Քոնն են պարգեւներն ու շնորհները ձրի,
 Քոնն են քաւութիւնն ու պաշտպանութիւնը,
 Քոնն են հնարքներն անհմանալի,
 Քոնն են հրաշքներն անգտնելի,
 Քոնն են չափերն անչափելի,
 Դո՛ւ ես սկիզբն ու վերջը:
 Սրտմտութեան խաւարը երբէք չի ստուերում լոյսը
 քո ողորմութեան,
 Քանզի լինելով ինքդ մտքից վեր՝ գերծ ես դու նաեւ
 որեւէ ախտից:
 Պատկեր ես դու անպարագիր՝ անկշռելի
 որքանութեամբ,
 Ո՛վ անչափութիւն փառաց լայնութեան,
 Անսահմանափակ ընդարձակութիւն հատու
 զօրութեան,
 Անամփոփելի առաւելութիւն,
 Անտկարանալի բարերարութիւն գթութեան:
 Դու մահուան ստուերն, ըստ մարգարէի,
 այգաբացի ես փոխում,
 Ինքնակամ իջար տարտարոսը դու՝
 արգելուածների բանտն ստորերկրեայ,
 Ուր աղօթքների դուռն անգամ փակ էր ամուր
 կողակեքով,
 Խլելով նրանից այնտեղ վտարուած հոգիների
 կողոպուտը ողջ,
 Յաղթական խօսքիդ հրամայող սրով
 Սատակիչ մահուան կապը կտրեցիր
 Եւ փարատեցիր երկիւղը մեղքի:
 Դարձի՛ր այժրմ ինձ, որ տագնապում եմ տղմոտ իմ
 գութի զնդանում խորունկ,
 Մեղքի շղթայով ամուր կապկապուած
 Եւ բանսարկուի նետի սլաքով խոցուած կարեւեր:

Բ

Դու Տէ՛ր բարերար, բացարձակ բարի, լո՛յս
խաւարի մէջ,

Օրհնութեան դու գանձ, ողորմած, գթած,
մարդասէր, կարող,

Զօրեղ, անպատում, անքնին, անճառ,

Դու՝ յո՛յժ ձեռնհաս, ըստ սուրբ Յակոբի.

Հնարաւորութիւն միշտ դիւրապատրաստ՝ ամէն
անհնար բաների դէպքում,

Մեղքի խռիւներն սպառող կրա՛կ,

Կիզանուտ ճանանչ դու ընդհանրական եւ
մեծախորհուրդ թափանցողութեամբ:

Յիշի՛ր ինձ, օրհնեալ, քո ողորմութեամբ եւ ո՛չ ըստ
իրաւունքի,

Ներողութեամբ քո եւ ո՛չ պատժելով,

Երկայնամտութեամբ եւ ոչ թէ հաւաստի
համոզուածութեամբ:

Եթէ կամենաս կշռել ծանրութիւնն իմ մեղքերի,

Արա՛ք քաղցրութեամբ քո մարդասէրի եւ ո՛չ
արդարութեամբ.

Քանզի ըստ առաջին պայմանի՝ շա՛տ են թելթել
նրանք,

Իսկ ըստ վերջինի՝ սաստիկ ծանրակիր:

Գ

Արդ, մօտեցիր ինձ, ո՛վ դու բարութիւն,

Ինչպէս բուժելու համար մօտեցար քո դէմ ելնողի
սկանջին,

Մահուան խռովիչ հողմը հեռացրու մեղաւորիցս,

Որ հանգչի իմ մէջ խաղաղութեան մեծագօր

Հոգիդ:

Փա՛նք քեզ ամէնուր, ամէն բանի մէջ յաւիտեանս.
ամէն:

ԲԱՆ ԺԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Աղաչում եմ քեզ՝ վտանգուած, վշտոտ ու
տխրաթախիժ տառապանքներով լի հոգիների
խնամակալիդ,

Մի՛ անելացնիր ցաւն իմ հեծուրեան եւ մի՛ խոցիր
ինձ՝ վիրաւորուածիս,

Մի՛ դատապարտիր պատժուածիս եւ մի՛ տանջիր
չարչարուածիս,

Մի՛ գանակոծիր հարուածեալիս, մի՛ գլորիր
ընկածիս,

Մի՛ կործանիր սայթաքեալիս, մի՛ հեռացնիր
հեռացուածիս,

Մի՛ ամաչեցնի պատկառեալիս, մի՛ տարագրիր
հալածուածիս,

Մի՛ կշտամբիր խրտնածիս, մի՛ խորտակիր
ջախջախուածիս,

Մի՛ խռովիր վրդովեալիս, մի՛ արեկոծիր
փոթորկուածիս,

Մի՛ սասանիր դողողուածիս, մի՛ շփոթիր
մրրկեալիս,

Մի՛ կեղեքիր գիշատուածիս, մի՛ ջախջախիր
փշրուածիս,

Մի՛ հոշոտիր մորմոքեալիս, մի՛ կուրացնի
խաւարածիս,

Մի՛ զարհուրեցնիր սպշահարիս, մի՛ խորովիր
խարշատուածիս,

Մի՛ մահացնիր հիւանդիս, մի՛ ծանրաբեռնիր
տկարիս,

Մի՛ անելացնիր անուր՝ կարկամաձ թիկունքիս,

Մի՛ բարդիր ողբեր դառն հեծեձանքիս,

Մի՛ ուժգնօրէն վարվիր հողիս հետ,

Մի՛ սաստկապէս՝ մոխրիս հետ,

Մի՛ անաչառօրէն՝ ստեղծուածիս հետ,
Մի՛ ահարկութեամբ՝ փոշուս հետ:

Բ

Մի՛ խստութեամբ ընդհարուիր մեծդ փոքրիս հետ,
Լոյսդ՝ ստուերիս հետ,
Բնութեամբ բարիդ՝ ի բնէ չարիս հետ,
Ողկոյգդ օրհնութեան՝ անիծեալ պտղիս հետ,
Քաղցրութիւնդ՝ ճշմարիտ՝ համակ դառնութեանս
հետ,

Փառաւորեալդ անփոփոխ՝ իսպառ անարգիս հետ,
Կենաց նշխարդ՝ կաւեղէն զանգուածիս հետ,
Տէրերի Տէրդ՝ երկրային տիղմիս հետ,
Աննուագ լիութիւնդ՝ չքաւոր ստրուկիս հետ,
Անկապուտ ճոխութիւնդ՝ անպատասպար
տառապեալիս հետ,

Անկարօտ բարութիւնդ՝ ամենաթշուառ աղքատիս
հետ:

Քանզի ո՞վ է նա, որ առաւօտեան լոյսին հասնելով՝
Կտարակուսի, թէ խաւարի մէջ կարող է ընկնել,
Կամ մօտ լինելով կեանքին՝ մահանալ,
Կամ ազատութեան՝ եւ բռնութեան ենթարկուել,
Կամ շնորհին՝ եւ դատապարտուել,
Կամ փրկութեան՝ եւ մատնուել,
Կամ նորոգման՝ եւ քայքայուել,
Կամ օրհնութեան՝ եւ տարագրուել,
Կամ բժշկութեան՝ եւ վիրաւորուել,
Կամ լիութեան՝ եւ նուազել,
Կամ առատ հացի՝ եւ քաղցել,
Կամ հոսող գետերի՝ եւ պապակել,
Կամ մայրական գթութեան՝ եւ նրանից նենգուել,
Կամ աստուածային խնամող աջիդ՝ եւ տառապել:

Գ

Արդ բորոտութեամբ մարմնի սաստկապէս
վարակուածի հետ

Ե՛ս էլ վշտահար հոգովրս ահա պաղատում եմ քեզ.
"Տէ՛ր, եթէ ուզես՝ կարող ես ինձ մաքրել":

Մշտագիշեր խարխափումներով տանջուող
կոյրերի հետ

Հառաչում եմ ձայնով մեծակական.

Ոչ թէ անուանում եմ քեզ Դաւթի որդի,

Այլ աստուածային էութեան իբրեւ ծնունդ եմ
դաւանում քեզ.

Ոչ միայն կոչում եմ Ռաբբի,

Որ պատուանուն է իսկութիւնը գիտենալ կարծող
վարդապետների,

Այլեւ հաւատում եմ քեզ, որպէս Տիրոջ երկնի եւ
երկրի:

Ոչ միայն մօտից ձեռքդ երկարելով, ո՛վ դու
բարեգութ

Աստուած մերձաւոր,

Այլեւ վստահ եմ, թէ մեծ միջոցով նոյնիսկ ինձանից
հեռու լինելով՝

Խօսքդ կարող է բուժել թշուառիս:

Կամեցողութեանդ եւ ողորմութեանդ միջեւ
անջրպետ չեմ դնում երբէք,

Որ երկմտութիւն է նշանակում տարակուսելի,

Այլ համոզուած եմ, թէ կկամենաս որպէս
բարեգութ

Եւ կկարենաս որպէս Արարիչ.

Ասա՛ խօսքովդ, եւ ես կբուժուեմ:

Հարիւրապետի հաւատքին եւ ն՛ս կլինեմ լծորդ.

Ոչ միայն մօտիկ տարածութիւնից, խորանից
խորան՝

Զօրաւոր ես դու տալու յարութիւն եւ բժշկութիւն,

Այլեւ երկնքում բազմելով նոյնիսկ,

Ստորեւ, երկրի վրայ բովանդակ դու սքանչելի

հրաշքներ եւ գործում,

Որոնց փոխարէն հատուցանելու եւ ոչինչ չունեմ:

Դ

Շնորհիւր եւ ինձ, ինչպէս որ պոռնիկին ընդունելիս
Վճռեցիր խօսքիդ դատակնիքով հինգ հարիւր
դէնար պարտքը շնորհել,

Աստուած բարութեանց եւ Տէ՛ր երանութեանց:

Որքան շատ բաշխես, այնքան ատելի՛

կփառաւորուես.

Որքան որ շատ տաս, այնքան կսիրուես.

Եւ ատելին ողորմելով՝ դո՛ւ էլ կրկնակի

կբարգաւանես.

Այսքան բարիքներիդ համար իրաւամբ գովուում եւ
դու.

Ամէն բանի տէր լինելով հանդերձ՝ մեզ հաւասար
եւ ցոյց տալիս դու քեզ.

Եւ դու, որ ունես ամէն ինչ առատ՝ մեր ունեցածին
արժէք եւ տալիս.

Քո պարգեւների փոխարէն անճառ՝ մերն իբրեւ
վճար եւ ընդունում դու.

Երկրայինի տեղ անվախճանի տալն եւ արժանի
գտնում.

Մեծ համարելով մերը՝ վեհօրէն գոհանում եւ դու.

Չէ՛ս մեծամտի, երբ քո տուածի փոխարէն
դոյզն-ինչ փառաւորուես:

Նո՛յն գիթութիւնդ ցոյց տուր նաեւ ինձ՝ յոյժ
մեղապարտիս,

Որ երբ թուարկեմ քո պարգեւների երախտիքը ես՝

Նոյն չափով սիրելդ էլ չմոռանամ:

Ամէն բանի մէջ քեզ փա՛ռք յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԺԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, ես ծնունդս մեղքի եւ մահացու երկունքի
որդիս,

Արդարեւ պարտաւոր եմ մի օրուայ մէջ բիւր
քանքարների տոյժը հատուցել:

Սակայն ոչ թէ մարդկային մտքի փոքրութեան
համեմատ եմ ես ներումն հայցում,

Այլ փրկչիդ՝ Յիսուս Քրիստոսի աննուագելի
լիութեան չափով եմ պաղատում մարդասիրութիւն:

Չկայի երբեմն, եւ ստեղծեցիր,

Ես աղաչեցի, եւ դու գոյացրիր,

Դեռ աշխարհ չեկած՝ տեսար դու ինձ,

Չէի յայտնուել, եւ դու գթացիր,

Չէի խնդրել ես՝ խնամարկեցիր,

Չէի բարձրացրել ձեռքս՝ նայեցիր,

Չէի պաղատել՝ եւ ողորմեցիր,

Չէի ձայն հանել, եւ դու լսեցիր,

Չէի հառաչել՝ եւ ունկնդրեցիր,

Գիտէիր, թէ ինչ կպատահի ինձ, եւ չանտեսեցիր,

Նախատես ասքով քո նկատեցիր

չարագործութիւնը պատժապարտիս եւ յօրինեցիր
ինձ:

Բ

Եւ արդ, ես, որ քո ստեղծածն եմ, քեզանով
փրկուած

Եւ այնքան խնամօտ սիրովդ հոգացուած, -

Արա՛ դու այնպէս, որ չարահնար մեղքերի
հարուածն ինձ դէպի կորուստ չտանի իսպառ:

Թող յամառութեան մառախուղը իմ՝ քո
ներողութեան լոյսին չյաղթի,

Եւ ոչ էլ սրտիս կարծրութիւնը՝ քո երկայնամիտ
համբերութեանը,

Եւ կամ մսեղէն այս մահկանացուն՝ քո լրութեանն
ամենակատար,

Ոչ էլ նիւթեղէն տկարութիւնս իմ՝ քո
բարձրութեանն անպարտելի:

Գ

Ահա՛, կարկամած բազուկն իմ հոգու կարկառում
եմ ես քո անուամբ, հզօր,

Արա՛ այն առողջ, ինչպէս էր առաջ,

Երբ դրախտի փափկութեան մէջ կենաց պտուղն
էի քաղում ես:

Ախտաւոր կնոջ նման կաշկանդուած, գոսացած
ձեռքով,

Գլխիկոր, շուար եւ անուղղելի մեղքերով կքած
թշուառ իմ հոգին

Սատանայական ամուր կապանքով ակնկոր, ահա,

Չի նայում վերեւ, որ քո երկնայնոց ողջոյնը չառնէ:

Խոնարհուիր վրաս, միայն ողորմած, եւ

բարձրացրու ինձ՝

Գետնահար ընկած ծառս բանաւոր.

Բարեվայելուչ կեանքով վերստին ծաղկեցրո՛ւ
չորացեալիս,

Ըստ աստուածաբանութեան սուրբ մարգարէի:

Դ

Ինչպէս ի ծնէ լուսագուրկ մի կոյր՝ չունեմ
տեսողութիւն,

Որ կարողանամ տեսնել արարչիդ դէմքն ու
պաղատեմ,

Հզօր բարեգութ, դու միայն պաշտպան,

Քո անճառ սիրոյ հոգածու, ակնարկն ինձ
դարձրնելով՝

Շնչաւոր, խօսուն քո անօթի մէջ անէութիւնից լոյս
գոյացրու դու:

Տասներկու տարուայ ախտով տառապած,
տանջահար, տխուր

Կնոջ նման ես մեղքի արեան մէջ ողողում եմ,
տե՛ս.

Անմատոյց լոյսով քո պարածածկուած՝ նայիր
բարձունքից,

Ուր չկայ քղանցք ձեռագործ վերարկուի, որին ես
դիպչեմ,

Բայց ամէնուրեք տարածուած են քո հրաշքներն
հօր:

Ե

Մեղստ կնոջ պէս պատժապարտս ես
Օծման իւղով չէ, որ մօտենում եմ կենսաձիր
նորիդ,

Կաթիլներն աչքիս գլխիս վարսերով բերելով ընձա,

-

Այլ հաւատս անբիժ՝ իմ բագուկների
վերամբարձումով, ստոյգ դաւանմամբ,

Հոգու ողջոյնով ես փակ շուրթերով երկրպագելով:

Եւ աղբերահոս արցունքներիս հետ խառնելով
նաեւ հեծեժանք, ահա,

Բժշկութիւն եմ աղերսում հոգուս:

Զ

Գոյութիւնն հոգուս՝ մեղկութեամբ լուծուած եւ
քայքայուած է մեղքերով համակ,

Եւ մարմնիս շինուածքը իրենց վրայ վերցնող
նորերս,

Որոնք քայլում են կաղալով տխտեղծ ու խիստ
անհաստատ,

Եւ որոնց չարը արգելք է լինում մտնելու ուղիղ -
Դէպի կենսաթիռ պտղաբեր ծառը տանող ճամփի
մէջ, -

Չօրացրո՛ւ դարձեալ, ո՛վ ամենագօր, քանզի դո՛ւ
միայն կարող ես փրկել:

Քո ստեղծած լեզուս, որով քեզ էի փառաբանում
միշտ,

Ամրափակ խցմամբ կապեց, համրացրեց հողմը
բանասարկուի:

Չգայուն հոգուդ մեծ ողորմութեամբ,

Ինչպէս բուժեցիր Աւետարանում

յիշատակուածին,

Հրաշափառօրէն շնորհիր եւ ի՛նձ Բանդ կենդանի,
Որպէսզի ես էլ խօսեմ անսայթաք:

Է

Ախտով վարակուած՝ մեղքի մահիճն եմ ընկել ես,
ինչպէս կենդանի մեռեալ.

Ի լուր ողբագին հեծեճանքներիս եւ
թշուառութեանն իմ կարեկցելով,

Ո՛վ դու բարերար Որդի Աստծոյ,

Քո օրհնաբանուած աչքերի ցողով ինձ ոտքի՛
հանիր կրկին կենդանի,

Ինչպէս սիրելուդ՝ անշարժ ու անշունչ
մեռելութիւնից:

Ստոյգ անօրէն եմ տարակուսեալ՝ մեղքի գուրքն
ընկած.

Ձեռքըդ ինձ տալով, արե՛ւ անստուեր,

Որդիդ բարձրեալի,

Քո ճաճանչափայլ լոյսի՛ն հանիր ինձ:

Ը

Ինչպէս աղեխարշ թշուառ ճիչերով, մատների
տխուր տատանումներով

Կուրծքը ծեծելով, արցունք թափելով, տխրամած
դէմքի տուայտանքներով

Իր միամօրիկ որդուն ողբացող Նայինի այրին, -

Ես էլ սրտագին, սաստիկ հեծութեամբ պաղատում
եմ քեզ,

Տո՛ւր յուսահատիս քաջալերութիւն քո մխիթարիչ
եւ գթոտ խօսքով,

Ասելով եւ ինձ, ո՛վ բարեբանեալ ստեղծիչ
աշխարհի,

Թէ՛ "Մի՛ լար այդպէս սաստիկ ողբալի".

Որպէսզի կրկին կենդանացած այն պատանու
հետ,

Որ սփոփեց վիշտն իրեն ծնող մօր,

Ես էլ քեզանով իմ ամենապարտ հոգին ընդունեմ
վերանորոգուած:

Թ

Այսահարութեամբ անզգայացած, դիւալլուկ ու
քարակոշկոն,

Հեղձամղձուկ ու եղկելի, քստմնելի, գիսախռի
մազերով,

Վայրենադէմ ու ցնորամիտ մարդկանց հետ, որոնց
դու ողորմեցիր,

Ես էլ նրանց պէս քեզ պիտի դիմեմ, ամենափրկի՛չ:

Հեռու վանիր դու ապականարար գնդերը չարի
մարմնիս խորանից,

Որպէսզի հասնի հոգին քո բարի եւ հանգստանայ
այնտեղ վերստին,

Եւ մաքուր շնչով լցնելով մարմինս ու անդամներս՝

Չզատացնես ինձ՝ խելագարուածիս
ամենաթշուառ:

Ժ

Դժոխաբնակ եւ վտարանդի հոգիների հետ
գերուած՝ նաեւ ես

Արգելափակուած տառապում եմ խիստ:

Փառայեղ ճառագայթը քո ողորմութեան, լոյսդ իմ
անձկալի,

Ծագելով վրաս՝ ինձ պառակտիչի կապերից
փրկիր:

Վհատ կերպարանք է առել հոգիս,

Որ գաղտնորոգայթ եւ աներեւոյթ արահետներում
մոլորաթափառ՝

Գարշ իմ մեղքերով է հիւանդացած:

Իմ՝ չարագործի թոյնից գոյացած այտուցքներն
անտես,

Որդի՛ Աստծոյ,

Քեզ միայն յատուկ քո կարողութեամբ

առողջացրու դու գթասիրաբար:

Զանազանակերպ եւ բազմատեսակ ախտերն
մահացու,

Որոնցից ամէն մէկն իր առանձին արդիւնքն ունի,

Եւ որ ժանտամատ շառաւիղներով հաստատուած
են մեր անօրէն մարմնի մեղկ անդաստանում,

Ամենակալի քո ձեռքով թող որ կորզնս արմատից,

Դու, որ արորով՝ մեր հոգիների դաշտերն անուպայ
մշակում ես միշտ,

Որպէսզի կենաց քո խօսքը յաւէտ արդիւնաւորուի:

ԺԱ

Եւ քանզի ճարակող քաղցկեղի նման

Յանցանքներիս վերքն այս իմ բերած օրինակները
գերազանցեց,

Եւ ախտն ամբողջովին անդամներիս մէջ
տարածուեց, -

Չիք սպեղանի, ինչպես Իսրայելին, որ դրուի
անչափ իմ խարանների վրայ,

Ազդերիս խարսխից մինչև ծայրն իմ անդամների
կառուցուածքի՝

Չի մնացել մի տեղ լիովին առողջ եւ բժշկելի:

Իսկ դու, ողորմա՛ծ, բարերար, օրհնեալ եւ
երկայնամիտ թագաւոր անմահ,

Լսիր վշտահար սրտիս խղճալի պաղատանքներն
այս,

Որ դառնահառաչ քեզ եմ ուղերձում իմ նեղութեան
մէջ,

Տէ՛ր ամենակալ:

ԲԱՆ ԺԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Ով դու, բարի կեանքի յուսատու ամենահայեաց
տեսողութիւն,

Ուշք դիր ցաւագնած հոգուս հեծեճանքների
բարձրաճայն աղաղակին,

Անհա՛ն մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ
կենդանի,

Լուր ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն
պաշտելի,

Բարութիւն խոստովանելի, ազդումն խնկելի,

Դաւանելի իսկութիւն, էութիւն փառասրելի,
գոյութիւն օրհնաբանելի,

Ո՛վ դու Տէր Յիսուս, Հօրդ հետ գովուած ու
երկրպագուած

Եւ սուրբ հոգուդ հետ բարձրացած ու հռչակուած,

Որ մարմնացար մեզ պէս ու մեզ համար,

Որպէսզի մեզ էլ անես քեզ համար ու քեզ նման,

Լոյս ամենայնի, համակ ողորմած, հօր երկնային:

Եւ այժմ քայքայուած ու խորտակուած անօթն իմ
հողեղէն

Աստուածօրէն հրաշակերտելով, աղաչում եմ,
գթա՛ճ, նորոգիր նորէն:

Մեղքերով հնացած պատկերն իմ՝ քո ինձ տուած,
Հալելով կրկին քուրաների մէջ խօսքիդ կայծակով՝
Պաղատում եմ քեզ, ձուլի՛ր վերստին:

Հոգիս պահպանող մարմնիս խորանի շինուածքը
խախտուած՝ հանգստարանը քո,

Աղաչում եմ, ո՛վ բարերար, մաքրագործիր քեզ ի
բնակութիւն:

Իմ չար գործերի փոխարէն մի՛ հատուցիր նոյնը
դու ինձ:

Արբած եմ ես, բայց ոչ թէ գինով, ինչպէս մարգարէն
է ասում.

Թափիր հրամանով քո ազատարար,
ամենակեցո՛յց,

Մահուան բաժակիս թմրեցնող մրուրն
անօրէնութեան,

Որ բաժակդ ես չքամեմ վերջին օրը հատուցման:

Բ

Արդար ես դու իրաւունքիդ մէջ եւ յաղթող՝ քո
դատաստանում.

Թէ մատնես մահուան՝ ճշմարիտն արած կլինես.

Թէ դատապարտես, այստեղից սկսելով
կշտամբութիւնդ տանջողական՝ հատուցում է ճիշտ

Թէ անդունդների խորքերը սուզես,

Թէ կենդանութեան շարժումները դադարեցնես,

Թէ գօրութիւնն իմ խօսքի ունայնացնես,

Թէ պատուհաններն աչքերիս ստուերացնես,

Թէ կեանքի ճաշակն ինձնից հետ առնես,

Թէ ընդհանրական կերակրից ինձ զրկես,

Թէ օրերիս երկարութիւնը կարճացնես,

Թէ իջնող քաղցր ցողի հետ մէկտեղ վերից հուր
թափես,

Թէ խօսքդ լսելուց ինձ քաղցած թողնես,

Թէ ականջներիս դռները խցես,

Թէ շնորհիդ պատկերն ինձանից կտրես,

Թէ ոտքիս տակի հողը սարսես,

Թէ ինձ անձկալի քո լոյսից հանես,

Թէ այս աշխարհից ինձ բոլորովին դու դուրս
վտարես,

Թէ հրաբորբոք փայլատակումով ինձ սահաբեկես,

Թէ անբուժելի ցաւերով պատժես,

Թէ ինձ չարչարող դէտրին մատնես,

Թէ ցասման հողմով ինձ հեռու քշես,

Եւ թէ ուրիշ նոր չարչարանքների գործիքներ
կազմես -

Տարտարոսից վատ եւ գեհեներից էլ աւելի սաստիկ,

Աւելի թունոտ, քան թէ որդերը, եւ քան խաւարը
տարակուսելի

Եւ երկիւղալի՝ խորխորատից էլ, եւ ողորմելի՝
մերկութիւնը քան, -

Ես ինքս անձամբ վկայում եմ, թէ արժանի եմ
խիստ այդ բոլորին:

Գ

Եւ քանզի մեղքերս նման են իրար,

Ուրեմն եւ նրանց հատուցումներն էլ պէտք է որ
նման լինեն իրարու,

Իբրեւ միմեանց պատկերակից, միատեսակ եւ
զուգակշիռ,

Այս հասկացողութեան կրողներն են,

Ուստի կարելոք է խոստովանել եւ քողը վերցնել
նրանց երեսի,

Որպէսզի տեսնի փնտրողը նրան եւ ծանօթանայ,

Քանի որ ջերմ սիրով չմօտեցայ ես ընկերոջս

կարիքներին,

Իրաւացի է, որ առաջին իսկ վտանգի պահին ստռեմ տազնապաժ:

Եւ որովհետեւ ես չսանձեցի ցանկութիւններս ապերասան,

Ուստի եղկելուս արժանի է, որ կրում եմ կիզումն անգովանալի:

Եւ քանի որ ես չսիրեցի ւաւտիսը լոյսիդ՝

Արդար է, որ ես կորստեան մէզի թանձր խաւարում խարխափեմ մոլորագնաց:

Եւ քանզի խտրութիւն չդրի մանր ու մուկը յանցանքների միջեւ, համարելով նրանք անվնասակար,

Չազիր գեռունների խայթումներից խոցուտում եմ արդ արժանապէս:

Եւ քանի որ ես ձեռք չերկարեցի վտանգի մէջ վշտակրին օգնելու,

Տեղին է, որ գարշ ապականութեան գուրին մատնուեմ:

Դ

Եւ արդ, ո՛չ աստուածային քո գանձերից՝ չարիք,

Ո՛չ քո լոյսի շողերից՝ խաւար,

Եւ ոչ էլ քեզ ապաւինելուց սայթաքումներ առաջ կգան,

Այլ ես ինքս՝ կորստեան որդիս գտայ այս բոլորը:

Բազում անօրէն մեղքերս են, որոնք նիւթեցին այսքան բարկութիւն:

Մոլորեցուցիչ իշխանի կամքին հնազանդելով՝ նրան թողի ես քո տեղն իսկական,

Ըստ Գրքի յանդիմանութեան:

Ե

Եւ քանզի յայտնի դարձաւ մարմնիս անդամների
գաղտնիքն ու խայտառակութիւնը,

Եւ երեսիս ընկաւ անվայելուչ ստուերն
ամօթանքիս, ըստ մարգարէի առակի,

Ինձ բոլորովին տգեղացնելով՝ մերկ,
խայտառակուած պոռնիկի նման, -

Ծագիր իմ մէջ լոյսը քաւութեան, երկնաւոր արքա,

Որպէսզի թոթափելով մեղքերիս փոշին,

Աւետեաց ձայնը լսած,

Բարեւոնից ետ դարձողների պէս,

Հողից վեր կենալով՝ վերստին նստեմ,

Եւ անսասան՝ յոյսիդ ամրութեանը հիմնուելով,
ինչպէս Եսային է ասել,

Նախնի մաքրութեամբ հագնեմքո բազկի
զօրութիւնը կարող,

Քո քաղցր փառքի մեծութեան համար եւ
աստուածութեանդ ամենապարգեւ,

Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ի ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Տէ՛ր անոխակալ եւ երկայնամիտ, ներող,
բարեգութ, հզօր, ողորմած,

Ահա՛ ճշմարիտ են քո գործերը եւ
դատաստաններիդ խոստովանուած,

Եւ որոշումներիդ վկայուած են, ո՛վ
ծածկութիւնների տեսանո՛ղ:

Երեք երջանկայիշատակ երիտասարդների հետ,

Որոնք կիզանուտ բոցով փորձուեցին ու
չվնասուեցին Բարեւոնի մէջ,

Նրանց թախծալից ե՛րգն եմ հառաչում. -
"Ես մեղանչեցի եւ անօրէն դարձա,
Ապստամբուեցի եւ պատուերներին քո չանսացի":
Մաքուր լինելով հանդերձ՝ այսպէս գոչեցին նրանք
խոստովանաբար,
Իսկ ես, որ իսպառ մահապարտ եմ մի,
Չայնակցելով նրանց այդ ողբերին,
Այս ողբերգութեանս դեռ ուրիշնէ՛ր էլ պիտի
աւելացնեմ ես՝ ամէն բանով մահապարտս,
Դանիելի հետ՝ երանելի եւ սուրբ մարգարէի,
Որը հարազատ ազգական էր քեզ եւ Հուդայի տան
ընտիր շառաւիղ,
Նրա հաճելի եւ նուիրական պաղատանքների
խօսքերն առնելով՝
Իմ պատժապարտի հեծեժանքներով դեռ
ուրիշնէ՛ր էլ պիտի կրկնեմ ես:

Բ

Գիտակցելով մէկտեղ՝ անպատշաճ ընթացք
ունեցայ,
Չարտուղելով շարունակ եւ դժնդակօրէն
սխալուելով.
Եւ այսպէս՝ մեղանչեցի ես ամէն բանի մէջ, ամէն
եղանակով:
Կամքիդ որոշակի սահմանից ես ի դուրս սլացայ,
Որ եւ իսկական օրինակ է մի անմաքուր
անօրէնութեան:
Անչափելի չարիքներն յաճախակի կրկնելով՝ իրենց
լրումին հասցրի,
Ինչ որ ճշգրիտ մի պատկեր է յանցաւորութեան:
Սպառնացիր՝ չգարհուրեցի, խրատեցիր ինձ, եւ
չանսացի,
Որ յայտնի նշան է ըմբոստութեան:

Գ

Արդարություն յարդարեցիր քեզ, ո՛վ բարերար,
Եւ ինձ՝ պատրաստեցիր ամօթ ու պատկառանք:
Քեզ՝ փառք վայելչական եւ ինձ՝ նախաստինք
յարմարաւոր.

Քեզ՝ քաղցր յիշատակ եւ ինձ՝ մաղձ քացախեալ
վերջում.

Քեզ՝ անլուրի բարեբանություն եւ ինձ՝ ողբ ու կոծ.

Քեզ՝ օրհներգություն խնկելի եւ ինձ՝ մերժումն ի
բաց.

Քեզ՝ իրաւունք բազմարժան եւ ինձ՝
ամենավարան պատասխանատւութիւն.

Քեզ՝ փառք աննառ գովեստներով եւ ինձ՝ մոխիր
լիզելու անարգական պատիժ:

Դ

Արդ, ընդունեցիր դու, ո՛վ անկշիռ սահման ընտիր
բարութեանց,

Քոյիններից վեր առար կնդրուկներ ախորժանուշ՝
քեզ համապատասխան,

Իսկ ես ստացայ այստեղ բազում պարսաւանքներ
սրանց դիմաց՝ կրկնակի բարդութեամբ:

Եթէ անբիծներն յանձն էին առնում այսպէս
աղօթել,

Իսկ ես պարսաւի ինչպիսի տողեր հիւսեմ ինձ
համար,

Երբ քան բոլոր դժնաբարոներն առաւել վրիպեցի:

Անառակ ընթացքովն իմ ես մոլորուեցի որպէս
վայրենամիտ,

Եւ հանդգնեցի իմ շրթունքներով երկրաւոր
խօսքեր բարբառել:

Սոյի դարձայ անկասելի կերպով ամօթալի
գործերի մէջ,

Փքուեցի եւ վերացայ եւ, որ փոքր-ինչ ժամանակից
յետոյ մահուան հողն եմ իջնելու.

Գոռոզացայ եւ բարձրամտեցի եւ, որ տէրն իսկ չեմ
հոգուս գրաւական եղող շնչառութեանը:

Ե

Ամբարտաւանացայ՝ փոշիս շնչաւոր,
Ամբարիաւաճեցի կաւս ձայնաւոր,
Հպարտացայ հողս անգոսնելի,
Դէպի վեր ելայ մոխիրս մերժելի,
Բագուկ բարձրացրի՝ բաժակս փշրելի:
Տարածուեցի առաւել, քան իբր վեհ,
Եւ իբրեւ հետ մղուած՝ դարձեալ ինքս իմ մէջ
ամփոփուեցի:

Բարկութեան բոցով ցոլացա՝ տիղմս բանաւոր:
Իբրեւ անմեռ մի՝ մեծամտեցի, եւ, որ
չորքոտանիների հետ մահից եմ կառչած:

Այս կեանքի սիրոյն բացի գիրկս եւ եւ դէմքիս
փոխարէն քեզ թիկունք դարձրի.

Մտքիս թելերով մութ խորհուրդների միջից
սլացայ.

Անարատ հոգիս մարմնիս փափկութեամբ յաւէտ
հիւժեցի.

Զօրութիւնն իմ աջ կողմի տկարացրի,
Իսկ ձախակողմիս ուժգնութիւն տալով՝ յաղթեցի
նրան:

Հոգածութիւնդ իսկ տեսայ ինձ համար, – որն
այստեղ գրել անկարող եմ եւ, ու չպատկառեցի.

2

Վայրի հաւքի պէս սլացայ դէպի սովորութիւնն իմ վաղեմի,

Ինչպէս Ովսէէն Եփրեմի վերաբերեալ է ասել:

Աղօթավայրում ես այս կենցաղի գրադումներով շրջանակուեցի.

Մտքիս երիվարը բանականութեան երասանակով ոտքի չհանեցի:

Հին չարութիւնների վրայ ես ինքս նորերն ստեղծեցի,

Եւ, ինչպէս Յոբն է ասում, անտանելի ծանր անուրներն ինձ վրայ ես ինքս ծանրացրի:

Ինքս ինձ սփածանելի արի անկարկատելի, ըստ Երեմիայի.

Եւ առակոդի խօսքի համաձայն,

Անունն անգրելի մի վիժուածի պէս՝ մարդահամարից ջնջուեցի,

Եւ ըստ Եսայու՝ դաշտանաւորի զգեստի նման զագրելի դարձա:

Որպէս թրծուած խեցեղէն աման՝ աննորոգելի կերպով փշրուեցի:

Եդովմին ուղղած մարգարէական մեղադրանքների համաձայն, ե՛ս էլ

Անօրէնութեան սատակիչ չորրորդ չափն իմ ինձ պատրաստեցի:

Եւ սո՛ւտ կլինի, որ ատելացնեմ ես այդ բոլորին,

Թէ Մողոքի դիւանուէր վրանն անգամ առայ ես՝ դժոխքը ժառանգելու համար:

Երկնայինը լքած՝ ես ինքս էլ ձեւակերպեցի խայտառակ պատկերն Ռեփանի աստղի,

Որն Իսրայելից պաշտուեց Սինայում:

Է

Եւ արդ, քանզի զրկուեցի եւ նախկին շնորհի
համարձակութիւնից,

Ելայ նրանից, հեռացայ դարձեալ եւ բաժանուեցի,

Եւ անպատուաստելի կերպով կտրուեցի, -

Ընդունի՛ր ինձ, Տէր, հոգուդ պատկերով
կերպարանելով ինձ կրկին անգամ,

Ինձ, որ անարժան եմ ապրելու իբրեւ մահապարտ
եւ չարագործ,

Իբրեւ ամօթահար ու ոտքի կոխան եղած
բանասարկուի կողմից,

Որպէս անբժշկելի մանրուած,

Որպէս մահուան յատակը հասած,

Որպէս գարշելի դարձած,

Որպէս կոչումիդ խոտան համարուած,

Որպէս միանգամայն կորստեան մատնուած,

Որպէս դեգերեալ, որպէս վտարուած,

Որպէս տարակուսեալ, որպէս թշուառացած,

Որպէս վիատեալ, որպէս կործանուած,

Որպէս խորտակուած, որպէս կոտորուած,

Որպէս թախծոտուած, որպէս խիստ տրտմած,

Որպէս թշնամանուած:

Ը

Իսկ նայելով վրաս, գթա՛՛՛մ, մարդասէր, հօր,

Ինչպէս նաեւ աղերսական այս խօսքերիս`

Ընդունի՛ր ինձ դարձեալ որպէս զղջացած, որպէս
խոստովանուած,

Որպէս ոտքիդ դիմած, որպէս ապաշխարած:

Դու, որ կշռում ես, չափում ու համարում մեծ`

Հառաչանքն հոգու, ճայնն հեծող շնչի,

Կսկիծը շուրթերի, ցամաքելը լեզուի, տխրութիւնը
դէմքի,

Կամքը խորհուրդների եւ յօժարութիւնը արտի
խորքերից.

Դու, որ փրկութիւնն ես հոգիների
Եւ տեսնում ես չգործուածները,
Ստեղծիչն ես բոլորի եւ աներեւոյթ վերքերի բժիշկ,
Պաշտպանն ես քեզ յուսացողների
Եւ բարեխնամ տէր ամենեցուն՝
Ամէն բանի մէջ քեզ փա՛ռք յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԻԱ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ քանի որ ես ինքս ինձ անձամբ մատնեցի
մահուան իմ ինքնագրութեամբ,
Ու չկանգնեցի երբէք ինչպէս մարդ՝ ոտքի,
Ոչ էլ ստացայ սիրտ բանականի,
Գրքի համաձայն,
Չթողի նախկին մեղանշումներն իմ ու չփոխուեցի,
Չընթացայ ուղիղ ճանապարհով ես, -
Ինչո՞ւ խաւարի հետքերը խոտոր ցոյց չտան ես
այս խօսքիս սկզբում:
Ուստի նախընթաց խօսքերի իմաստն ու ձեւն
անփոփոխ պահելով, այստեղ,
Ըստ այդմ պիտի ես խոստովանեմ
Մնացած բոլոր չարութիւններս՝ յաջորդ տողերով:

Բ

Արժանապատիժ ժանտագործս օտար՝
Գունդը Բեկիարի անեցրի անսաստ իմ ընթացքով:
Ճարպիկ, խաբեբայ եւ գարշօրէն պարող դեւերի
համար

Կարաւումներ, կայթեր, ցոյցեր ու վագրեր
պատրաստեցի եւ իմ ծովուծեսամբ,
Եւ ընդունեցի դահիճներից այդ կործանուած՝
Հարուածներ գաղտնի եւ խոցեր անյայտ:
Քրիստոսի խաչով չհալածեցի եւ այդ
վտարուածներին,
Այլ առաւել եւս զօրացրի նրանց:
Հեզ ողորմելոյս անօրէնութեան հետեւանքով
Հայիոյում է Յիսուսիդ անունն այսականների մէջ,
Ինչպէս մի ժամանակ հեթանոսների մէջ՝
Իսրայէլի պատճառով:
Ես ինքս իմ ձեռքով տնկեցի իմ մէջ
Ապականարար եւ վնասակար բազում
պատուհասներ՝
Հոգոյս ծաղիկն ուտող եւ սպառող ժանգն ու
թրթուրը եւ այլ ուտիչներ,
Որոնց սուրբ Հովելն է նկարագրում իսրայէլացոց
երկրի համար
Իբրեւ օրինակ աւագակների եւ չար ոգիների՝ իր
հրաշակերտ ողբերգութեան մէջ:
Սատակեցնելու փոխարէն՝ իմ մէջ ինքս
ստեղծեցի, անեցրի նրանց,
Եւ իմ անձի դէմ հաւաքեցի բիւր մահազէն
մարտիկներ.
Շուրջս անպատկառ եւ անիրաւ կշտամբիչներ
գոյացրի.
Չինեցի իմ դէմ անզգամ եւ անպարտելի
հակառակորդներ.
Քաղցրի փոխարէն դառնութիւնն առա ինձ իբրեւ
բաժին՝
Ես՝ արարչի դէմ նենգաւորս միշտ եւ բանասարկուի
հանդէպ՝ հաւատարիմ:

Գ

Աւանդ աղէտիս, վիշտ ու վտանգիս, մթին ամօթիս
եւ անարգանքիս.

Ես ինչպէ՞ս հիմայ պիտի հանդգնեմ խօսքերս
յայտնապէս հրապարակել:

Մեծ է գուժկան ձայնս ու բարձրադաղակ բողոքն
իմ ահա յոյժ անտանելի:

Քանզի եթէ հնար լինէր հոգիս տեսնել,

Պիտի երեւար, թէ ո՞րքան տգեղ է նա, տկար եւ
ազագուն,

Հեծեճագին ցաւերով մատնուած ծայրաստիճան
վարանումի,

Եւ մրոտուած, աղտոտ գոյնով զագրելի, ինչպէս
մեհեանի պաշտօնատար,

Չի միեւնոյնն է, թէ՛ սպասարկել կուռքին ճուլածոյ
եւ կամ ծառայել մեղքերի պիտին:

Դ

Արդ, ես քայլեցի կորստեան այս խաւարահետ
ճանապարհով

Եւ ցանկալի բաժինը դարձրի անկոխ անապատ,

Ինչպէս մեղադրում է մարգարէն

Իսրայելի քահանաներին:

Եւ ես, որ տմարդների կարգն եմ դասուած՝
ինչպէ՞ս համարեմ ինձ մարդ.

Ինչպէ՞ս անուանուեմ բանական, երբ կցորդուել եմ
յիմար անբաններին,

Ինչպէ՞ս կարող եմ կոչուել տեսանող, երբ խաւարել
եմ ներքին լոյսս ես,

Ինչպէ՞ս համբաւուեմ ես իմացական, երբ
իմացութեանս դռներն են փակուել,

Կամ ինչո՞վ ցոյց տամ ինքս ինձ որպէս պատկեր
Աստծոյ անեղծ եւ անմահ, երբ անձնասպան եմ եղել

հոգեպէս.

Եւ ոչ իսկ շարժուն եւ կամ շնչաւոր կարող եմ
կոչուել, թո՛ղ թէ հոգեւոր եւ իմացական:

Ե

Անօթների մէջ անպիտան եմ ես եւ անարգագոյնը՝
որմնաքարերի մէջ,

Արհամարիտում եմ կանչուածների մէջ եւ
վատթարը՝ հրաւիրուածների խմբում,

Ահարեկուած մահուան արհաւիրքով եւ բոլորից
լքուած անխրախոյս:

Երուսաղէմի ցաւերով ու տանջանքներով եմ ես
պատժուած, ըստ Երեմիայի խօսքի.

Պակասել են օրերս հեծութեամբ եւ տարիներս
ընթացքը՝ հառաչանքներով,

Ըստ սաղմոսողի նուագերգութեան:

Ինչպէս ասուին ցեցից եւ փայտը որդից՝

Այդպէս նաեւ ես սրտիս խիթերից հալուեցի
խապառ ըստ իմաստունի:

Ու սաղմոսողի խօսքի համաձայն սարդոստայնի
պէս մաշուեցի ահա եւ դարձայ անպէտ.

Առաւօտեան ամպի եւ վաղորդեան ցողի պէս
ցնդեցի ես, մարգարէութեան խօսքի համաձայն:

Զ

Բայց ես իմ յոյսը մարդու վրայ չեմ դրել,

Որ տեսանողի ակնարկած անէծքն վրաս առնելով
վիատուեմ անյուսօրէն,

Այլ քեզ վրայ, Տէ՛ր իմ ոգեսէր,

Որ լցուած անբաւ բարեգթութեամբ

Նոյնիսկ խաչի վրայ բեւեռուած պահին՝

Մեծ ողորմութեամբ աղօթեցիր դու առ հայրդ

բարձրեալ՝ քեզ չարչարողների համար:

Արդ, շնորհի՛ր ինձ դու քառութեան յոյս, կեանք եւ
ապաւէն,

Որպէսզի թշուառ շունչս երբ փչեմ՝ ստանամ
հոգին քո բարի:

Եւ քեզ քո Հօր հետ ու քո սուրբ Հոգուն՝

Զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն եւ փառք,
յաւիտեանս. ամէն:

ՔԱՆ ԻՔ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Նախատուած անձիս կշտամբանքների շարքը նոյն
ձեւով ու պատկերներով

Պիտի կրկնեմ ես այստեղ վերստին նոր-նոր
բարդութեամբ.

Կսկծեցուցիչ դառն այս խօսքերիս դատակնիքը
յանդիմանական

Ամենագէտը թերեւս համարի ճիշտ
խոստովանանք

Իմ բոլոր գաղտնի եւ չար գործերի:

Բ

Խօսուն մի ձի եմ ես, կարծրերախ, սանձակոտոր
եւ ապերասան,

Հովանակ անհամբոյր, վայրենի եւ անկրթական,
Երինջ իրտչող, անուղղայ եւ անվարժական,
Մարդ մոլեգին, տարագրուած եւ կորստական,
Մանուկ մեղաւոր, անխրատ եւ թափառական,
Տնտես մահապարտ, տարտամ եւ անգործնական,
Բանական անասնաբարո, գազանացեալ եւ

անմաքրական,
Ձիթենի լքուած, անպտուղ եւ կործանական,
Մարմին՝ հոգիս տրտմեցնող, դատող ու
տանջողական,
Խոցուած եմ անբուժելի, անխնամ եւ
անկանգնական,
Վատնուած եւ անգտնելի ոսկի շարոց եմ
կայսերական,
Ծառայ եմ սխալական, փախստական եւ
թշուառական:

Գ

Եւ այսպէս, ահա, ես ինքս իմ դէմ եղա կամովին
անձնամատ սաստիկ եւ մարմնակործան,
Հոգեկորոյս եւ միշտ մտախար,
Կամակոր իսկական եւ սրտաբեկ,
Ուշագնաց եւ խելակորոյս,
Չգայագուրկ եւ իմաստասպառ,
Հայրատատես եւ եղեռնալուր:
Ես ամէն կողմից բռնուած ամբողջովին մահաբեր
երկունքի բորբոքումներով՝
Մի լաւ բանի մէջ, Տէր իմ, ոչ մի կերպ քեզ պիտանի
չեմ:
Ողբում եմ ես այն որովայնը, որ ինձ երկնել է,
Ողբում ստինքներն այն, որ սնել են ինձ:
Ինչո՞ւ կաթի հետ մակարդուած ես մաղձ չծծեցի,
Եւ ինչո՞ւ քաղցրութեան փոխարէն չտրուեց ինձ
դառնութիւն:

Դ

Չի եթէ ես իմ խօսքերով այսքան ինքս իմ դէմ եղայ
անձնադատ դատախազ դժնի,

Քեզ վերընծայեմ գոհաբանությիւն՝
Ի փառս քո Հօր՝ մեծ Աստծոյ, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Տէ՛ր, Աստուած ամենայնի եւ զօրաւոր ամէն
բանում,

Տէ՛ր անպարագիր եւ անվայրափակ,
Բոլո՛ր իսկութեամբդ ամէնքին մօտիկ,

Ամէնուր եւ դու, եւ չկայ ոչ մի սահման առանց
քեզ:

Չես երեւում երբէք, բայց առանց լոյսիդ չի
տեսնում ոչինչ,

Ո՛վ ահաւոր փառք եւ անհաս անուն,

Մեծութեան կոչում, ձայն անբաւելի,

Իսկութիւն անքնին, անմատչելի հեռաւոր եւ
անընդմիջելի մերձաւոր,

Տեսնող՝ հեծութեան եւ նկատիչ՝ թշուառութեան,

Տիրութեան այցելու եւ ամենաբոյժ հնար՝

աննարութեան,

Հայր գթութեան, ծագող ողորմութեան եւ

Աստուած միախթարութեան:

Բ

Տէ՛ր, ողորմութեամբ նայիր բազմավտանգ
ախտերի դառնավիշտ իմ պատկերին,

Որ քո հանդէպ եմ տածում ահա:

Կարեկից եղիր ինձ բժշկապէս եւ ոչ թէ որպէս
քննիչ-դատաւոր:

Արդարեւ մեծ է տազնապն այս ցաւատանց

տարակուսանքի եւ վարանման,

Երբ մեղքով է տարուած մարմինն ամբողջովին,

Իսկ հոգին չի մեկուսացած չար գործերից,

Երբ զգայարանքները կապկապուած են

մոլորութիւնների սովորութեամբ,

Եւ զանգուածը շաղախուած է մահացու կրքերով.

Երբ սրտի զգայութիւնը խայթերով է խոցոտուած,

Եւ բարիքների ակնկալութիւնն իսպառ վերացած.

Երբ բանականութեամբ հանդերձ՝ անասունների շարքն է դասուած,

Եւ գոյութեան հետ զագրելի գարշութիւններ են շարամանուած.

Երբ արտաքնապէս թէեւ առողջ, սակայն ներքնապէս է վիրաւորուած

Եւ յիշելով իր մեղքերը սաստիկ՝ յուսահատութեան է միշտ մատնուած.

Երբ որ նախապէս գործած մեղքերի

տագնապումներով է տարակուսուած,

Եւ աղօթքի յստակութիւնն իսպառ պղտորուած.

Երբ խղճմտանքը խռովանքներով է յոյժ տոչորուած

Եւ ձեռքը մահին՝ հետեւի գործերն հետազօտելով է միտքն զբաղուած.

Երբ դէմքով դէպի առաջ է դիմում, ոտքերով՝ դէպի հետեւ ընկրկած

Եւ գիտենալով հանդերձ ճշմարիտ գոյութիւնները, անգոններից է շարունակ խաբուած

Եւ մտքի մղած մարտերի մէջ միշտ փոքրութիւններից է յաղթահարուած,

Եւ սրտի սաստիկ հառաչանքներից հազագի դուռն է համակ հրդեհուած.

Երբ ամէնուրեք՝ խոնաւութիւնն է քիմքի տոչորուած

Եւ ամէն կողմից անարեւ մէգով է շրջապատուած.

Երբ ակնկալութեան ընդարձակութիւնն է իսպառ ամփոփուած,

Եւ անտանելի տառապանքներն են
զգայարանների վրայ դրոշմուած.

Երբ որ կորստեան եղկելիութիւնն է մտաբերուած,
Եւ հատուցումի դատավճիռն է մտքի դիւանում
արձանագրուած.

Երբ բարերարի աչքն է զայրալից երեւոյթ առած,
Եւ յոյսը խնդութեամբ հողագանգուածիս դէմ է
զայրագնած.

Երբ որ Աստծոյ ահաւորութիւնն փոքրիկ
էութեանս հետ է ընդհարուած

Եւ իր խօսքերի որոտումով միշտ՝ բանաւոր
մոխրիս դէմ է բարկացած,

Երբ արդարութեան իր քարերով նա մահուան
արժանուս է միշտ քարկոծած,

Երբ որ ինձ տրուած տաղանդը այստեղ
անառակութեան մէջ եմ կորցրած,

Եւ իմ պատուական ասացուածքն իբրեւ անարգ
անարժէք՝ հողի տակ է թաղուած.

Երբ ողջ արգասիքն իմ աշխատանքի՝ ծուլութեան
մութով է ծածկուած

Եւ չի երեւում ճրագի յոյսի պէս հեռու տարուած,

Երբ իրաւագուրկ պատասխանարանն է լեզուիս
կարկամած,

Եւ իմ անհամբոյր բարբառող շուրթերս իրօք
արժանի կերպով պապանձուած.

Երբ հուզեալ միտքս ամէն ուղղութեամբ ցրիւ է
եկած

Եւ օգտակարին հասու լինելու անկարող դարձած,

Եւ լան ու բարին ընտրելու կշռի մէջ յիմարացած.

Երբ ճանապարհը չարի արգելքով է խափանուած,

Եւ վառարանն է իւրի՝ հնոցի մոխիրով լցուած.

Երբ կենաց մատեանից իմ անուան գիրն է
ջնջուած,

Եւ երանութեան փոխարէն այնտեղ կշտամբանք
գրուած:

Գ

Թէ զինուոր եմ տեսնում՝ սպասում եմ մահուան.
Թէ պատգամաւոր՝ խստութեան.
Թէ գրագիր՝ կորստեան մուրհակի.
Թէ կրօնաւոր՝ անէծքի.
Թէ աւետարանիչ՝ ոտքի փոշին թոթափելու.
Թէ բարեկրօն՝ յանդիմանութեան.
Թէ անզգամ՝ կսկծանքի.
Եթէ փորձուեմ ջրով՝ կխորտակուեմ.
Եթէ մի դեղ քննութեան առնեմ՝ կսատակեմ.
Թէ բարիք տեսնեմ, կասկածելով չար գործերիցս՝
կփախչեմ.
Թէ բարձրացած մի ձեռք՝ կկորանամ.
Թէ խրտվիլակ փոքրիկ՝ կսարսեմ.
Թէ լսեմ թնդին մի թեթեւ՝ կընդոստնեմ.
Թէ կերուխումի հրաւեր ստանամ՝ կդողամ.
Թէ մեծիդ ներկայանամ՝ կսարսափեմ.
Թէ հարցաքննութեան կանչուեմ՝ կկարկամեմ.
Թէ իրաւամբ քննուեմ՝ կհամրանամ:

Դ

Արդ, իրար վրայ բարդուած իմ այսքան
տարակոյսները ամենաթշուառ եւ ողորմագին,
Որոնք ի ներքուստ խոցում են սիրտս անբոյժ
ցաւերով, նետերով անտես,
Եւ բեւեռուելով անարտաքսելի՝ նրանք հոգուս
հետ հանապագամուխ ու յարամնաց,
Եւ շարաներով լցնելով հոգիս, հարուածելով
միշտ՝
Սատակիչ մահուանս վտանգն են սաստիկ
նախագուշակում:
Իր ներսը մխուած երկաթը պատող կոյտը

թարախի,

Տագնապը ծածուկ ու մէջս պահուած վերքերն
անդարման

Իմ շնչառութեան միջոցին սաստիկ ցաւ են
պատճառում:

Ուստի եւ նրանց նեղութիւններից չարաչար
ճնշուած,

Թախծալից հոգուս ձայնով բարձրագոյ իւ
աղերսախառն իմ արցունքներով

Ինձ համար նաեւ աղօթող բոլոր նահատակների
հետ այն երկրաստեղծ,

Եւ հեծութեամբ ողբակից նրանց արտասոււանուէր
իմ այս ողբերով,

Ըղձակաթ աղերսն իմ՝ Բարեգործիդ ամենահնար՝
Երկրիցս դէպի երկինքը, ահա, առաքում եմ քեզ:

Շնորհիր, ո՛վ Տէր, հանգիստ ու խաղաղ կեանք
ողորմելի վաստակեալիս,

Ինձ, որ ընդունայն երկրագործեցի.

Ո՛վ համայնդ դու ամէն ինչի մէջ, քեզ փա՛նք
յաւիտեան:

ԲԱՆ ԻԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ի՞նչ բաների արժանի համարելով ինքս
ինձ, մօտենամ ես քեզ աղերսելու,

Արքայութեայն, որից վրիպեցի,

Թե՛ վայելուչ փառքիդ, որից գրկուեցի,

Թե՛ անմահ կեանքիդ, որից վտարուեցի,

Թե՛ պարակցութեանը հրեշտակների, որից
տրոհուեցի,

Թե՛ արդարների մասնակցութեանը, որից
ջոկուեցի,

Թե՛ ուռն լինելու կենդանի որթի, որից պոկուեցի,
Թե՛ ոստը բերկրութեան ծառի, որից գօսացայ,
Թե՛ ծաղիկը փառքի շնորհի, որից թափուեցի,
Թե՛ ժառանգաւորն պանծանաց, որից կորացայ,
Թե՛ հայրական հարագատ գրկին, որից դուրս
ընկայ:

Բ

Լուսեղէն զգեստո՞վ պարծենամ, որից մերկացայ,
Թե՛ ստացողի դարձին յուսամ ես, որից
խորթացայ,
Ըղձալի լոյսի՞ն դիմեմ ես արդեօք, որից մեկնեցի,
Թե՛ ոսկորներին յօդուեմ Յիսուսի, որից
մերժուեցի,
Նրա թելերի՞ն մօտենամ, որից օտարացայ,
Թե՛ ապաւէնին ապաստանեմ ես, որից զատուեցի,
Նորոգութեանը յուսամ փրկարար, որից մահացայ,
Թե՛ զուարթարար զգաստութեանը, որից լքուեցի,
Կամ ուխտադրական կենաց կանոնին, որից
փոխուեցի,
Թե՛ հաստատական օրինադրութեան, որից
սահեցի,
Անշարժ, անսասան Վեմի՞ն կառչեմ ես, որից
սասանեցի,
Թե՛ սրբոց գնդին լինեմ դասակից, որոնցից ինքս
ինձ ի դուրս մղեցի,
Անդրանիկների քաղաքո՞ւմ շինուեմ, որից ես գերի
քշուեցի,
Թե՛ ամէնօրեայ հացին աղօթեմ, որ չվաստակեցի,
Թե՛ տաժանքների վերացումն խնդրեմ, որոնց
համար չքրտնեցի,
Թե՛ պարզելներով պսակուեմ ես այն, որոնց
արժանի չհանդիսացա
Կամ կենաց գրքո՞ւմ արձանագրուեմ, որից

ջնջուեցի,

Թե՞ երախտիքներդ յիշեմ ես արդեօք, որոնք
մոռացայ:

Գ

Եւ անաւասիկ, ապրելու յոյսի լարը կտրուեց,
Ու վարակուեցի՛ ես բոլորովին գարշ
բորոտութեամբ.

Տգեղ, սպիտակ ու փոքր-ինչ փայլող պալարի պէս
այն,

Որը կրկնակի մեր անմաքրութեան իբրեւ նշանակ՝
Նախնական ախտի սպին է պահոււմ երկդիմի
կերպով,

Ապականութիւնն ինձ պաշարելով՝ սպառեց
մարմինն իմ բոլորովին

Պարծանքի նշոյլը բոլորովին շիջաւ ինձ համար,

Փրկութիւնը վտանգուեց, բարին ստուերացաւ,

Կեանքի դուռն ընդմիշտ փակուեց,

Մխիթարութիւնը վերացաւ,

Դատաստանի ասեանը մօտեցաւ,

Մահուան թոյնն արծարծուեց իմ մէջ,

Սպանուածն իմ մէջ կրկին կենդանացաւ,

Նաւահանգիստը քարերով խցուեց,

Յոյսի շաւիղը կուրացաւ,

Շնորհի ծածկոյթն ինձանից հանուեց,

Փառքի վայելչութիւնն աղօտացաւ,

Առաջնորդող հանճարը խափանուեց,

Կշտամբանքների փուշը շատացաւ,

Անօրէնութեան ուղեշը ծաղկեց,

Գեհեմի բոցը բորբոքուեց իմ դէմ,

Ծառայութեան լուծը սաստկացաւ,

Ստրկութեան կապը գօրացաւ,

Կառոյցը պահող սիւնն անա ընկաւ,

Բարձրութեան վստահարանը կործանուեց,

Ընտանի միաբանությունն անջրպետուեց,
Եւ տխրեց սաստիկ սրբություն սիրող
Աստծոյ հոգին:

Դ

Եւ քանզի եւ դառնությունների մրուրը ճաշակեցի,
- Տանջանքներ, խայթեր ու տխրություններ, վշտեր
հոգեկան,
Ցաւեր անդարմանելի եւ տարակոյսներ
անյուսադրելի,
Ամօթանքներ անպարտակելի,
խայտառակություններ անձածկելի,
Պատկառություններ անհամարձակ, փախուստներ
անդառնալի
Եւ հալածանքներ անմարդասիրելի,
Երկար ու ձեռնուկայն, անպաշար ուղեւորություն,
- Ուստի եւ դու, ո՛վ փրկություն, զօրություն եւ
օգնություն,
Ողորմություն, լուսաւորություն, քաւություն եւ
անմահություն,
Տէր Յիսուս Քրիստոս, Որդի կենդանի Աստծոյ,
արարիչ երկնի եւ երկրի,
Որ ջուր եւ տալիս ծարաւներին անջուր
անապատում,
Օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր,
Երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու,
Պաշտպան աննախանձ, պահապան յաղթող եւ
կեանք անկորուստ,
Միջնորդ երկնային, լիություն աննուագ,
երանություն տօնելի,
Քո ողորմութեան աջ ձեռքը սիրով երկարելով ինձ՝
Ընդունիր եւ ներկայացրու քաւուած եւ սրբուած

ամենապարտիս՝

Քեզ հաւասարապատիւ Հոգուն, ո՛վ կենդանի
Բան,

Որպէսզի քեզնով հաշտուած վերստին՝ իմ մէջ
դառնայ նա:

Եւ քո միջոցով Նա, որ զօրեղ է ինքնութեամբ
Իր մաքուր կամքով ինձ սրբագործած՝

Հօրդ ընծայելով՝

Միաժամանակ ամբողջ իմ շնչով անբաժանօրէն
Կապի, միացնի բարեշնորհիդ հետ:

Որի համար՝ քեզ, Հօրդ ու սուրբ Հոգուդ՝

Երբեակ անձնաւորութեանդ՝ մի բնութեամբ եւ մի
աստուածութեամբ -

Փա՛նք եւ բովանդակ արարածներից
գոհարանութիւն

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԻՇ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ քանզի նախորդ իմ ողբերի մէջ ես մասամբ
միայն նկարագրեցի

Մէկը միւսից ծանր ու գերազանց մեղքերն իմ
այնքան,

Որոնց գերին է դարձել վշտակիր եւ թշուառ հոգիս,

-

Ուստի ես պիտի փոխեմ իմ խօսքի եղանակն
հիմա,

Բայց ո՛չ աւաղանքն իմ աղէտների:

Բ

Կեանքըս ինձ համար նման է սաստիկ ծփացող
ծովի,

Ուր հոգիս, մարմնիս շինուածքով՝ իբրեւ
նաւակում,

Իրար վրայ խուժող անթիւ, անհամար ալիքներից
Տարուբերում է միշտ այս աշխարհում:

Եսային եւս այս օրինակով պատկերացրեց

Երուսաղէմի հախումն ու հանկարծադէպ
քանդումը պարսիկ հրոսակներից,

Որ եւ սիսալ չի լինի համեմատել իմ հոգեւոր
խորտակման հետ:

Մինչ եւ չւում էի անհոգ անտարակոյս
վստահութեամբ,

Հազիւ թէ մտքիցն իմ անցկացնելով դոյզն-ինչ
կասկածանք ինչ-որ արկածի

Փոքր այն միջոցին հանգստի միջեւ եւ
աշխատութեան,

Իբրեւ թէ արդէն նաւահանգիստը հասած լինէի, -
Եւ ահա, ամառուան մէջ ձմեռն յանկարծահաս՝
հողմով իր բքաբեր

Երեքալեան ուժգին բախումով խաղաղութիւնը
խռովեց հանկարծ:

Խորտակուեց նաւը՝ վայրագ ալիքների բախումից.
Թիակների կազմուածքը քայքայուեց.

Պոկուեց իր տեղից կայմը վերամբարձ,

Թռչարանն առագաստի պատռուեց ծուեններով
անկարկատելի.

Շինուածքի շքեղութիւնն անշքացաւ,

Ու խզուեցին բոլոր առասանները ձիգ.

Գլխակողմի բարձրադիր դիտարանը
խոնարհուեց,

Կտրուեց պարանն ապավանդակի,

Խարսխի յենարանը քայքայուեց,

Ու բաժանուեցին իրար կցորդուած գերաններն

երկու.

Ուղղիչների սամիները գալարուեցին,
Ընկղմուեց լաստի յատակը իսկոյն, հիմքն ու
հաստարանն ամբողջ շինուածքի.

Ղեկի սարքն ամբողջ սուգուեց տեղնուտեղ,
Չուելու յարմարանքները պակասեցին,
Կոտրուեց իսկոյն ողնափայտն ամուր.

Կապարանները զիստի ջարդուփշուր եղան,
Նաւագոզն անպէտքացաւ,

Հետնակողմը նաւի, եզերող շրթներով, խախտուեց
ու դուրս թռաւ.

Բազմոցներն ընկնելով՝ անհետացան.

Վայելչագեղ վանդակապատն իջաւ յատակ.

Շուռ եկաւ գահաւորակն հանգստաւետ.

Իրար կպած տախտակաշարքերն անջատուեցին
իրարից,

Եւ նրանց ամրապնդող բեւեռները եղան:

Գ

Ողբերի յիշատակարան դարձած արդիւնքն ինձ
նմանուեց:

Նաւապետը դէմ-յանդիման նաւի՝ դեզերում է,
ողբում,

Ձեռքը ծնոտին դրած՝ արցունքի գե՛տ է
հոսեցնում:

Նաւից մնացած սակաւաթիւ բեկորները պեկոծ
ծովի ծփանքի վրայ

Բանականների նման խողխողուած՝ հեծում են
թախծոտ ու ողորմագին:

Եւ այսպէս, ահա, սխալուած չենք լինի, եթէ ասենք,
Որ նաւապետը բարի իր երկնաւոր զօրքով՝ այս
աշխարհի ծովում

Իմանալի իմ գոյութեան խորտակուած տապանն է
աշխարում.

Քանզի արդարեւ բարեգութ Տէրը լացեց
Իր թաղուած ազգակցի վրայ, որպէս օրինակ՝
համայն մարդկութեան,
Լացեց նա նոյնպէս մոլորեալ Երուսաղէմի, ինչպէս
եւ մոլեգնած Հուդայի վրայ,
Որոնցից երկուսը մնացին անյոյս՝ նման
քայքայուած նաւի.
Իսկ մէկը նրանցից արդէն անդունդի յատակը
հասած՝
Յոյսի առասանն իր ձեռքն ունենալով՝
Դէպի ապահով խաղաղութիւնը դուրս եկաւ
նորէն:

Դ

Կտեննե՛մ արդէօք ես երբեւիցէ մարմնի
տապանակն իմ բազմախորտակ՝ կրկին նորոգուած.
Կտեննե՛մ արդէօք ողբալի հոգուս նաւը փշրուած՝
կրկին ողջ-առողջ.
Մեծ տարածութեամբ բաժանուածս ես կլինե՛մ
արդէօք դարձեալ միացած.
Կտեննե՛մ արդէօք հոգնաթափիժ վշտացեալիս
սիրտը դարձեալ ուրախ.
Կարո՞ղ եմ յուսալ՝ յաւէտ խաթարուած պատկերն
իմ բնութեան յարդարուած նորից.
Կտեննե՛մ արդէօք թշուառացեալիս քանդուած
տաղաւարը կրկին կանգուն.
Յուսա՞մ, թէ պիտի տեսնեմ տարամերժ հոգիս
ազատուած,
Եւ լոյսիդ շնորհից գրկուածիս կրկին
վերակազդուրուած.
Պիտի ցոյց տա՞ս արդէօք ողորմաբար վայելքն
ընտանի քո պայծառութեան.
Կտեննե՛մ արդէօք երբեւիցէ ամենատխուր դէմքը
հոգուս՝ ժպտուն.

Արդեօք կյսե՞մ գուժկան ճայնի տեղ աւետեաց
համբաւն ինձ առաքուած.

Կտեսնե՞մ արդեօք իմ բիւրակործան վշրուած
անօթն վերանորոգուած.

Պատուհաններն իմ մտքի աչքերի կտեսնե՞ն
արդեօք պարտամուրհակն իմ մի օր պատռուած.

Օրն իմ անձկութեան քաւութեանդ շնորհիւ՝
կծագի՞ր արդեօք քո լոյսը վրաս,

Արդեօք կմտնե՞մ լուսախորանի խնջոյքը մի օր քո
առաջնորդութեամբ.

Անկեանք, ցամաքած ոսկորներս կրկին
կկենդանանա՞ն,

Ըստ Եզեկիէլի՝ ներգործուն շնչիս ետ գալով
դարձեալ գօրութիւն առած.

Կլինի՞ր արդեօք, որ կրկին նայեմ քո սուրբ
տանարին, -

Ինչպէս մարգարէն, որ աղաղակեց կետ ձկան
պորտից. -

Ես, որ կանգնել եմ դէմդ ամօթահար՝ լոյսիցդ
մերժուած.

Մթնածիս վրայ խաւարասնունդ կծագի՞ր արդեօք
պայծառ առաւօտ.

Եւ մշտասառոյց տագնապեալս ես կհասցնե՞մ
արդեօք գարուն տեսնելու.

Կտեսնե՞մ արդեօք նարակ ինձ համար հոգիները
դալարեցնող ցողն անձրեւային.

Կլինի՞ր, որ տեսնեմ գազանաբեկ մերժելի ոչխարս
կրկին քո ամենագուրթ կամքի հօ՛տը դարձած:

Ե

Եւ, սակայն, ինչպէս որ Յոբն է ասում,
Չարի թակարդներն անելանելի պաշարել են ինձ,
Իսկ եթէ քո բարերար կամքի ողորմութեան լոյսն
ինձ ցոյց տրուի,

Քո գրթութեան դուռը բացուի,
Փառքիդ նառագայթը ծաւալուի,
Ձեռքիդ խնամքը յայտնուի,
Կենացդ արեգակի օրը տարածուի,
Քո առաւօտեան ըղձալի դէմքը պարզուի,
Քաղցրութեանդ առատութիւնն աղբիւրի պէս
բխի,

Արարչի կողի վտակը հոսի,
Անապակ սիրոյդ ծորումը թափուի,
Աւետեաց շնորհիդ ծագումն երեւա,
Պարգեւիդ ծառը ծաղկի,
Քո օրհնեալ մարմնի մասունքը բաշխուի,
Սակաւ ակնկալութիւնն իրագործուի,
Ընդհատուած ձայնը ողջոյնիդ լսուի,
Հեռացած խաղաղութիւնդ մօտենայ:
Այնժամ յաիտեան այս պայմաններով երանելի,
Հաստատուն յոյսով եւ հաւատով զինուած,
Ապաւինելով սուրբ Հոգուդ, որ պաշտուում է
Հօրդ հետ եւ փառաբանում քաղցրածայն,
Քեզ հետ լոյսի մէջ անմատչելի, քաւութեամբ
հանդերձ,

Ինձ՝ մեղապարտիս կընծայուի ե՛ւ կեանք, ե՛ւ
երանութիւն:

Եւ սրանք որպէս անկորուստ աւանդ կպահուեն իմ
մէջ,

Իբր առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի՝ ի ձիր
անեղծութեան,

Երբեակ անձնաւորութեամբ հզօր, սուրբ ու միակ
Եւ անքննելի տէրութեանդ անճառելի, ասեղ
անունով,

Դո՛ւ ես, որ իսկութեամբ քո եւ էութեամբ,
Եւ բարձրութեամբ քո յարակայ, քաղցրութեամբ,
ողորմութեամբ

Եւ մարդասիրութեամբ պսակուած յաւէտ
թագաւորում ես:

Այո՛, բոլորի համար եւ ըստ ամենայնի, ամենայն

բանում կարող ես, գթած:

Եւ քեզ վայել է փանօք երկրիս վրայ,
Նաեւ հանդերձեալ մշտնջենական աշխարհում,
Մեծ օրն յայտնութեան, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻՉ ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ նրանց հետ, որոնք ողբագին եղանակների
Համաձայն խօսքեր են շարահարում, յօրինում
յարմար,

Ամէն մի տողի վերջում միեւնոյն գիրը դնելով,
Որով արտասուք հոսեցնելու չափ մորմոքեցուցիչ
Առաւել սաստիկ ու սուր են ճմլում սրտի ցաւերը, -
Ուստի ես ինքս գլուխն անցած այժմ

այդպիսիների,

Որոնք լալագին բանաստեղծութիւն են
եղանակում,

Նրանց ողբաձայն հեծեձանքներով վշտակիր
հոգիս եմ պարզում ահա,

Որը չի մեռել դեռ բոլորովին աշխարհի համար,
Ոչ էլ իսկապէս կենդանի է նա Աստծոյ համար.

Ոչ իսկապէս ջերմ, ոչ էլ ցուրտ իրօք, -

Ըստ աւետարանչի առակի՝ գրած իր

յայտնութեան մէջ, -

Որը երիցս ատելի է երբեակ տէրութեանն ու
ամենատես արարչութեանը:

Այս է եղանակն ամենայարմար՝ թախծութիւնը
մեր նկարագրելու,

Հանգաւորելով իւրաքանչիւր տող,

Որով եւ հոգու յոյզերը տխուր ե՛ւս առաւել են
հնչում սրտառուչ:

Բ

Դրամական պարտքն ուրանալով, ես վատս,
յիրաւի,

Գործովս անարժան մատնուել եմ վաղ տոյժ ու
տուգանքի.

Կրկնայանցագործ վատնիչս կորած՝ գանձին
արքունի,

Որ մեծ Աստծոյ հաշիւ պետք է տայ եւ
պատասխանի.

Պետք է բիւր քանքար, մինչդեռ ես չունեմ կշիռ մի
ունկի:

Ես անբարեխօս դառն արգելքի տակ
կապկապուած գերի,

Ճաշակում եմ խիստ ցաւ ու հեծութիւն խաւարում
բանտի.

Տանջւում եմ անօգ հեգ ողորմելիս առանց
պաշարի.

Ինձ համար ողբի մի այլ եղանակ այստեղ
ընտրեցի,

Եւ այս խօսքերովս այն կսկծալի կոծի փոխեցի.

Նոյն չափով ու նոյն վերջաւորութեամբ ես
շարադրեցի,

Թիւ անհատելի եւ խորհրդաւոր երկեակ
տասնեակի:

Հնոցն աղքատութեան մրրկւում է ամէն կողմից
ուժգնակի.

Անպաշտպան, թշուառ՝ դրուած է տխուր սիրտն
իմ գրաւի.

Ապաշնորհ, տկար մարդ եմ ենթակա միշտ
վրիպանքի,

Շուտով ինձանից անգիջում կերպով դատ
կպահանջուի:

Չգայարանս մահուան ու մեղքի գէնքով կխոցուի,

Գերիս՝ անփախուստ կերպով մատնուած բռնի
ախտերի,

Հոշոտում է ինձ սաստը սուր սրով իր սարսափելի:
Այժմուանից, նոյնիսկ, երբ բեմն եմ յիշում ես
դատաստանի,

Անլոյս մռայլը չարատես աչքիս առջեւ կփռուի.
Անօգ, կապկապեալ եղկելիս մատնուել եմ
տարակոյսի.

Երեւում է ինձ պատկերը երկիւղ ազդող վերնայնի:
Տարտարոսի մէջ անարեւ սաստիկ եւ անձածկելի,
Գեհեճի հրում մորմոքում է յոյժ անձն իմ եղկելի,
Անյայտ ու անհետ կորած-կործանուած անդնդում
մեղքի:

Ահա ունեցածս արծաթն անպիտան, որ արժէք
չունի,

Որ չի ընդունուի տէրունի գանձում եւ չի
ամբարուի:

Յանցանքս է պղտոր, եւ ձեռքս անմաքուր,
աննուիրելի.

Բայց ես սրտաբեկ, մատներս շարժելով, յուսալով
դարձի,

Երեսս հողին՝ պաղատում եմ քեզ, դու մայր
Յիսուսի.

Բարեխօս եղիր ինձ մեղաւորիս, երկնի՛ց իսկուհի.
Մաղթիր քաւութիւն ինձ, ո՛վ զօրաւոր փրկանակ
կեանքի,

Թող երկրի վրայ միշտ օրհնութիւններ, բուրումներ
խունկի

Եւ անուշահոտ իւղեր մատուցուն քեզ ախորժելի:

Գ

Իմ այս ողբերի հիւսուածքի վրայ ես մի ուրիշ մաս
եւս աւելացրի,

Շնորհապարգեւ մեծ բարերարին առատ
արցունքներ ընծայ բերեցի.

Չկարողացայ չափելով երբէք գտնել խորութիւնն

ես իմ կորուստի,

Հազիւ թէ հակիրճ խօսքերով միայն ես նրան
հանդէս բերել ջանացի,

Չհասայ նրան ես մինչեւ անգամ արագացնելով
թելերն իմ մտքի:

Խորունկ մեղքերից խելքըս պարտուած՝
բարկութեան բաժակն իմ ձեռքը առի,

Տարակուսանքի տարտամութիւնն իմ ես ինքս
իբրեւ մահ ճաշակեցի:

Եւ այժմ էլ, ահա, յանցանքներս անթիւ երգեցի
ձայնովն իմ ողորմելի:

Մի աներեւոյթ բարկ կրակարան բորբոքում է
մէջս անգովանալի,

Ասես թէ անտես հալոց-քուրաներ եռում են
սաստիկ, անշիջանելի:

Թունաւոր նետի սլաքներ կան սուր՝ շտեմարանի
խորքը իմ սրտի.

Յաւատիթ խիթեր մահացու կերպով խոցում են
բոլոր երակներս յարդի:

Ճեպելու անճար՝ աղիքներիցս չեն կարող ելնել
ցաւերն երկունքի.

Երիկամունքներն իմ երկու կողմից այրում է ջերմը
անդարմանելի.

Անչափ կուտակուած դառն մաղձն ահա
նախադուռն է իմ հասել կոկորդի:

Շնչափողիս մէջ հնչում են ուժգին վիատեցուցիչ
ձայների աւաղի,

Էութեանս բազում մասերը՝ ներհակ իրար դէմ ելել
են պատերազմի.

Կասկածանքների վախով վարանած՝ մատնուել
եմ ես անհուն տագնապի,

Թէեւ հարազատ՝ ջարդում են իրար
դաւաճանաբար, ինչպէս թշնամի,

Թաղուած մեղքերի գարշելի տիղմում՝ ո՛չ մեռած
եմ ես եւ ո՛չ կենդանի:

Հայեացքս քեզ եմ ուղղում, բարերա՛ր, կասկածը

արտունն իմ պատժապարտի,

Որպէսզի կեանքի անյոյս այս վիհից դուրս հանես
դու ինձ լոյսին անձկալի:

Դ

Նա, որ մատեանը այս շարադրեց՝
Երջանիկների շարքում պսակուի,
Ակնկալելով ողորմութիւնը՝
Անարատներին թող հաղորդակցի,
Եւ յանուն Բան-Աստծուդ զենման՝
Բարեգործութեամբըդ կենդանանա,
Գովեալ շուրթերիդ օրհնութիւնը թող
Գիրքս ընծայողի գլխին [միշտ] մնա,
Հաստուի ըղձական խօսքը առակի:

ԲԱՆ ԻԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Քանզի ողբաձայն բանաստեղծութեան հետ
վերընծայեցի ե՛ւ չափական խօսք,

Հիւսեցի կական ու կողկողագին
հառաչ-հեծութիւն,

Դառնաթախիժ լաց, արտասովագին երգ, -

Այժմ վերստին պիտի սկսեմ պաղատանքներն իմ
Խոստովանօրէն եւ զղջողաբար, բարբառելով բաց
Ու մերկանալով ծածուկն ու գաղտնին:

Որպէսզի սկիզբն ամէն մի տողի, ինչպէս եւ վերջը
միեւնոյն բառի կրկնութեամբ,

Այս թախանձալից եւ նմանաձայն աղօթքը այստեղ
ես պիտի դնեմ,

Որ խոնարհութիւն է հոգեկեցոյց:

Բ

Մեղայ՛ ես Մեծիդ բարերարութեանն, անարգս՝
մեղայ՛.

Մեղայ՛ ծագումիդ ճառագայթների, խաւարս
մեղայ՛.

Մեղայ՛ շնորհիդ երախտիքներին, արդարեւ մեղայ՛.

Մեղայ՛ երկնային գթառատ լոյսիդ, յայտնապէս
մեղայ՛.

Մեղայ՛ ոչնչից կեանք ստեղծողիդ, ստուգիւ մեղայ՛.

Մեղայ՛ գերագոյն գոգիդ գրգրալիր, անսահման
մեղայ՛.

Մեղայ՛ աննուագ լոյսիդ վայելմանն, նենգոյս
մեղայ՛.

Մեղայ՛ ճաշակմանն անճառ քո կենաց, բիւր
անգամ մեղայ՛.

Մեղայ՛ միշտ անհաս քո պարգեւներին, հանապագ
մեղայ՛.

Մեղայ՛ քո գովեալ մարմնին Աստծոյ, մահու չափ
մեղայ՛.

Մեղայ՛ արարչիդ պաշտելի արեանն, իսկապէս
մեղայ՛:

Գ

Ահա՛, արդարեւ, հատուածն այս խօսքի՝
"Մեղան" օրհնեալ է եւ յուսադրական, սրտերի
համար:

Աւանդ է նա պատուական, անմոռաց պատկեր,
հայրենական տուրք,

Նախահարց օրէնք, պաշար ընդհանրական,

Անհերքելի խօսք, զօրաւոր պատասխան,

Կենդանութեան կամուրջ՝ ախորժելի՝ վերնայնին,
սիրելի՝ սրբոց,

Անխզելի կապ, հրաշալի բարբառ, անժխտելի

փաստ,

Բաղձալի աղերս, փափագելի սեղան,
անճարներին ճար,

Կարծրութեան վանիչ, կարգ
աստուածապաշտների,

Հեթանոսաց գիրք, վաղնջական օրէնք,

Քրիստոնէաներին հարագատ եւ յաղթող՝
արարչութեանն,

Անջրպետ հօօր, ահաւոր խտրոց,

Բարձրագոյն արուեստ, խորութիւն անչափ,
հիահրաշ տեսիլ,

Կնքուած խորհուրդ, որին չի կարող թափանցել ոչ
ոք,

Արագաթոյի միտքը մինչեւ իսկ անընդունակ է
ըմբռնելու այն:

Չայն բարեպատեհ եւ հրաշալի, որը չլսուեց,

Երբ դասը մերժուած ընդունում էր իր վճիռը
վերջին.

Գուցէ եւ այնժամ ետ առնուէր իսկոյն
մահապարտութեան վճիռը արդար,

Որով դատաստանն այլեւս անելիք չունենալով՝

Յախտենական սահմանը պիտի լուծուէր,
վերանար:

Մեծագոյն փառքի զարդն է այն, որով նոյնիսկ
աստուածութիւնն ինքը կպսակուի պայծառօրէն:

Դ

Քանզի ո՞վ էր, որ վազելով՝ բռնեց եղջիրներից
այս սուրբ սեղանի

Եւ ազատուելով իսկոյն պատժից՝ չմաքրուեց:

Իսկ եթէ Աքար Քարմեանն ու Սաւուղ Կիսեանը եւ
Սիմոնեան Հուդան

"Մեղան" այս ասելով հանդերձ չարդարացան,

Վկայում եմ եւ ես իրաւամբ, խոստովանելով, թէ

արդարացի էր ճշմարտապէս:

Չի նրանք, որ ակամայ եւ բռնադատեալ են այդ խօսքն արտասանում,

Չունեն կատարեալ սէր, հետեւապէս՝ եւ փրկութիւն:

Ե

Իսկ ես կամովին եմ համբուրում, կրկնելով դարձեալ խօսքն այդ երջանիկ, որ մկրտութիւնս է հարազատ:

Մեղայ՛, որ մոռացայ երախտիքներդ, վերստին մեղայ՛.

Մեղայ՛, որ եղա ես յանձնապաստան, յիմարս մեղայ՛.

Մեղայ՛, որ կեանքիդ դրժողը եղա, իսկ եւ իսկ մեղայ՛.

Մեղայ՛, որ խօսքերդ արհամարհեցի, չարաչար մեղայ՛:

Մեղայ՛, սատակման օրուան վազելուս, վատթարս մեղայ՛.

Մեղայ՛ պարտականս անկենդան մահուան, ծաղրելիս մեղայ՛.

Մեղայ՛ անպատկառս՝ բարձրութեանդ հանդէպ, տաղտկալիս մեղայ՛:

Զ

Դարձեալ ու վերջին անգամ աշխարանք իմ հոգու համար: -

Ես ինքս եղայ ինձ դէպի կորուստ-կործանում տանող,

Չի անդարձ կերպով հեռացայ եւ որդիս՝ թշնամի համարուեցի,

Ընկայ երկնքի բարձրութիւնից եւ վարքի փշեր

դիզեզի:

Եւս առաւել է սաստկանում ողբերիս աղաղակն
ահա, -

Չի ես ինքս անձամբ անարգեցի

Ու դարձրի ինձ կորուսիչ բազին:

Ունեմ ես նաեւ մի այլ դժնդակ կսկիծ իմ սրտում. -

Ուրիշները ինձ համարում են այն, ինչ որ չեմ

երբէք:

Արտաքնայարդար բաժակս անմաքուր,

Ծեփուած որմս գարշելի,

Սին պարծանքներով պանունեալս, լոյսս՝ մռայլի
փոխուած,

Գերանակիր այք թշուառ, փառքի շիջած ջահ.

Յանցապարտ իրօք եւ վնասակար ամէն ինչի մէջ
ըստ ամենայնի,

Հանդէպ տէրունեան տնօրինութեանց եւ
աստուածային յայտնութիւնների,

Եւ արարչագիր երեւումների եւ խոնարհութեանց
հանդէպ սուկալի,

Եւ նրա հանդէպ, որին ես իմ իսկ այքերով տեսայ,

Եւ որի համար ես աւելի եմ պատասխանատու,
քան թէ համօրէն Աւետարանի:

Եւ այդ է, որ ինձ պատճառում է զարմանք եւ
հիացում,

Հոգսեր մաշողական եւ տարակոյսներ անկարելի,

Հաշիւներ՝ մտքում անգետեղելի,

Ելքեր անկատար, էջքեր անհաստատ,
յուսալքումներ,

Հանդիմանութիւններ տեղին ու ծաղրուծանակ,

Նզովքներ իրաւացի եւ անէծքներ

արժանահատոյց:

Սրանք են ահա կշտամբութիւնները մեղաւորիս

Եւ ինքնահարուած տանջանքները իմ:

Է

Միայն դո՛ւ կարող ես յանցանքներս ներել
Եւ բուժել մահացու խայթուածներն ամէն,
Տէ՛ր ողորմութեանց, Աստուած բոլորի,
Քրիստոս թագաւոր բարձրեալ Հօր որդի,
Ստեղծիչ, գթած, բարերար, օրհնեալ առատաձեռն,
հարուստ,

Ահաւոր, հզօր ողորմած տեսուչ, ձեռնկալ հաստիչ,
Ապրեցնող, դարմանող, փրկող,
Երկայնամիտ, անոխակալ, ապաւեն,
Բժիշկ գովեալ երկնաւոր, անճառ լոյս ու կեանք,
Հարութիւն, նորոգութիւն եւ քաջութիւն,

Ը

Եթէ համաձայն քո սովորութեան՝
մարդասիրութեամբ նայես ինձ վրայ,
Ես էլ նայելով քեզ՝ դառնապէս կողբամ.
Եթէ լսես ինձ՝ կհառաչեմ.
Եթէ ականջ դնես՝ կպաղատեմ.
Եթէ ներես ինձ՝ կաղաչեմ.
Եթէ դառնաս դէպի ինձ՝ կգոչեմ.
Իսկ եթէ անտես առնես՝ կկործանուեմ.
Եթէ ոտնահարես՝ կուլամ.
Եթէ հոգեպահիկ չընծայես՝ կմեռնեմ.
Ապայ եթէ ահարկու դէմք ցոյց տաս՝ կսատակեմ.
Իսկ եթէ սաստես՝ կդողամ.
Եթէ խեթ աչքով նայես՝ կոսկամ.
Եթէ բարկանաս սաստիկ՝ կսարսափեմ.
Եթէ հալածես՝ կհեծեմ.
Իսկ եթէ ընդվայր զարկես ինձ՝ կոչնչանամ.
Եթէ վիատ ողբերս չդադարեցնես՝ կտագնապեմ.
Եթէ խստանաս՝ կփախչեմ.

Ապայ եթէ սպառնաս՝ կրնկճուեմ.
 Իսկ եթէ քննես՝ կքարկոծուեմ.
 Եթէ ուժգնակի ակնարկես՝ կսուգուեմ.
 Եթէ չխնայես՝ կմերժուեմ.
 Եթէ կանչես՝ կկասկածեմ.
 Իսկ եթէ աչքդ յառես վրաս՝ կամաչեմ.
 Եթէ ճայն տաս՝ կերկնչեմ:
 Չի անարգել եմ ես պարգեւները բարի,
 Երանութիւնը թողել, շնորհը լքել եւ ուխտը դրժել,
 Կենաց աւանդը մոռացել,
 Համարձակութիւնն ու վստահութիւնը կորցրել,
 Արարածների ստեղծողիդ բարկացրել,
 Անճառելի շնորհն եմ ընդոտնել
 Եւ պատուական պատկերն այլայլել:

Թ

Իսկ եթէ խեղդող հեծութեանս այս իմ ու ցաւերիս
 մէջ

Մարդասիրութիւն հասցնես դու ինձ,
 Տէր Յիսուս Քրիստոս,
 Վրաս ի կատար ածելով իօսօքն այն,
 Թէ՛ "Բժշկութիւնը դադարեցնում է մեծամեծ

մեղքերն", -

Ապայ ես այնժամ քո առատագոյն
 մարդասիրութեամբ պատուաստուելով քո մէջ
 Եւ նկարելով լուսեղէն պատկերդ խորքը իմ հոգու,
 Նորից գտնուած՝ կգոտեպնդուեմ քաւուած լիովին
 Ու փրկուելով՝ կրկին կստեղծուեմ յաւիտենական
 անարատ կեանքով.

Եւ քեզ Հօրդ հետ եւ սուրբ Հոգուդ փանօք
 յաւիտեան. ամէն: ...

... փանօք յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԻԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ո՞ր մեղքերս յայտնեմ եւ կամ որո՞նք
մատնացոյց անեմ,

Ո՞ր պիսիւնների մասին ես խօսեմ.

Ո՞րքան ծածուկ յանցանքների մերկացնեմ կամ
որո՞նք խոստովանեմ, -

Ներկայիննե՞րը, որոնք արդէն ունեմ,

Թե՞ անցեալինները, որոնք կուտակեցի.

Գալիքնե՞րը, որոնցից վախենում եմ,

Թե՞ գայթումներս բազում, որոնք ինձ գորբեցին.

Փո՞քրն իմ կարծիքով, որը սակայն մեծ է

համարում Աստուած,

Թե՞ անմարմինը, որն յիշատակել մինչեւ իսկ
չարժէ,

Քի՞չը, որ շատ է, թե՞ թերեւները, որոնք ծանր են ու
խիստ.

Հոգեկան կրքե՞րը կորստաբեր, թե՞ մարմնական
ախտերն սպանիչ.

Հեշտառիթմնե՞րն սկզբում, թե՞ վերջում
վնասողները,

Աներեւոյթնե՞րը, թե՞ տեսանելիները.

Ձեռքով շոշափուողնե՞րը, թե՞ հեռուից շնչողները.

Լայնակի դիւրին խածոտողնե՞րը, թե՞ երկարօրէն
արձակուած նետերը.

Խոր խոցողնե՞րը, թե՞ յայտ յանդիման
սպառողները.

Պոռնկութիւնը բազմագլխեան, թե՞
հիւանդութիւնն անբժշկելի.

Չարի պարարո՞ւմը մարմնովս, թե՞ բարուն սովելը
հոգովս.

Աստծոյ համար անախորժներին տաճած
խնամքնե՞րս,

Թե՛ բռնադատման պարանով ձգուելս նոյն
մոլեգնութեանը.

Դեպի մահ տանող մեղքե՛րը, թե՛ խոհերն ունայն:

Բ

Արդարեւ որպէս կամաւ խելագար, ձորձերս
հանելով,

Ամօթոյքս ցուցադրեցի եւ, գործելով ընդդէմ
յմաստունի.

Թե՛ խոհեմները ամօթոյքն իրենց պէտք է որ
ծածկեն:

Հեռացել եմ ես բարի կարգերից եւ օտարացել
առաքինութեան,

Սրբութեան մէջ եղել եմ անսուրբ եւ կուսութեան
մէջ՝ անմաքուր, Արդարութեան մէջ՝ ամբարիշտ,
բարեպաշտութեան մէջ՝ վնասապարտ.

Բերանովս մօտ եմ ստեղծողին եւ խորհուրդներով՝
հեռու.

Շրթունքներովս եմ ես պատուամատոյց, ըստ
մարգարէի, եւ ո՛չ թէ սրտովս:

Եւ եթէ պէտք է քստմնելիներ ասել այստեղ, -

Մի հանդգնութիւն, որ տանջանքներից ծանր է
աւելի, -

Որպէս Աստծոյ պաշտօնեայ անպէտ, անկայուն
մտքով,

Դեպի մահ տանող զոյգ ճամփաների միջեւ
վարանաձ՝

Չանու՛մ եմ ու չեմ շահու՛մ ոչինչ,

Հետապնդու՛մ եմ ու չեմ հասնու՛մ,

Շտապու՛մ եմ ու չեմ ժամանու՛մ,

Փափագու՛մ եմ ու չեմ հանդիպու՛մ,

Ունեմ ամենայն ինչ երկրաւոր,

Եւ պատգամաւոր եմ աղօթանուէր համայն
աշխարհի:

Գ

Բայց դու, բարերար՝, ներիր այս բազում իմ
յանցանքները եւ միտ մի՛ բերի.

Քանզի դիրին է քեզ համար ջնջելը նրանք,

Քան թէ ինձ համար նկարագրելը հոգնատանջ
ձեռքով:

Ուստի գրեցի առանց խնայելու,

Որպէսզի դու էլ առատապէս ջնջես, օրհնեալ:

Չէ՛ որ մեղաւորներիս համար կոշուեցիր դու
երկայնամիտ, -

Ինչպէս աղօթեց Եզրասն երջանիկ՝ սրտի
հեծութեամբ,

Երբ յո՛յժ անձկութեամբ եւ վիստ հոգով յիշեց
գործերն այն, որ պատմում է նա:

Ամէն տեսակի մահացու կրքերով տանջւում եմ ես,
Ընկած գարշելի վիհը՝ դժնդակ եւ ապականիչ
մեղանչումների:

Եւ չեմ հաւատում, թէ մինչեւ անգամ կլսես դու
ինձ, ինչպէս Յոբն է ասում:

Արդ, ահաւասի՛կ, ես ինքնապարսաւ, անձնադատ
գերի՝

Կամաւորապէս ինքս ինձ մատնելով,

Ապրելու բոլոր հնարներն իմ առջեւ փակեցի,

Խափանեցի ու կնքեցի ամուր ամէն կողմից,

Որ փրկելով ինձ՝ մեղքերով կապկապուածիս՝
կրկնակի անգամ մեծանաս, գովեալ:

Դ

Եւ սակայն հետեւելով մարգարէի բարեխրատ
խորհուրդներին,

Մենք էլ նրա հետ աղօթենք պիտի հոգովդ երգելով,
Հաստատուն յոյսով քեզ ապաւինած:

"Խօսքեր առէք ձեզ հետ, - ասում է Ովսէէն, -

դարձէք ձեր տիրոջն ու ասացէք նրան.

"Կարող ես դու մեր մեղքերը ներել", որպէսզի
բարիք ստանաք,

Եւ ունենաք վայելք բարօրութեան:

Աստուած ահա խօսեց եւ ո՛վ է, որ չկամենայ լսել.

Նոյն ինքը վկայեց, եւ ո՛վ է, որ չուզենայ հաւատալ:

Ե

Արդ, այս խօսքերն են՝ վճիռ պաշտելի,
Սրբազան պայման, օրէնք անփոփոխ,
Կենաց աւետիս, նշան տէրունի եւ բարութեան
դուռ,

Սփոփիչ հրաւեր եւ ճշգրիտ պատկեր,

Անպակասելի գանձ, անմռաց յիշատակ:

Առ այս, եւ ես հաւատալով՝ հաստատում եմ այդ՝
մարգարէի հետ,

Թէ կարող ես ներել բոլորովին մեղքերս
բազմաբեղուն:

Եւ այդպիսով՝ աւելի պիտի մեծանաս դու ու
բարձրանաս կրկին

Իմ կործանուած եւ ամենաթշուառ հոգու հանդէպ:

Ամէն ինչում կարող ես դու, բաւարարում ես
բոլորին եւ հասնում ամէնուրեք,

Յաղթում ես բոլոր բռնութիւններին եւ փշրում
կարծրութիւններն ամէն.

Վանում ես ամէն ընդդիմադիր ուժ եւ վատնում
ամէն խստութիւն.

Ընդոտնում ես ամէն սրութիւն եւ բոլոր
դառնութիւններն անուշացնում,

Քաղցրացնում ես բոլոր դժվարամոքելիները,

Բաշխում ես պարտքերը բոլոր եւ ներում
յանցանքներն ամէն:

Կարող ես, զօրաւոր, հզօր, հնարաւոր ես դու եւ
ամէնարուեստ՝

Ընկղմել բոլորի մեղքերը, չքացնել ու բառնալ
մէջտեղից.

Ինչպէս փայլն այն փոքրիկ կայծի, չնչին
չափազանց եւ չքոտի,

Որ ընկնելով ծովը տիեզերատարած՝ կորչում է
խապառ:

Չ

Արդ, մատեանն այս վերձանողների աղօթքների
խօսքով,

Ողորմի՛ր Որդուդ խաչի եւ մահուան
չարչարանքների համար, Հայր գթած,

Որ նախապատճառն եղաւ ողբաձայն եւ
արտոտրածին իմ այս նուագի,

Եւ որ պատրաստեց կենաց փրկութեան դեղն այս
մեզ համար,

Թող ի՛նքն էլ բուժուի քո անուամբ, հօգ՛ր:

Նա, որ մեզ այսպէս խոստովանութեան ճամփան
ցոյց տուեց,

Թող իր պարտքերից լինի անարատ:

Նա, որ հպարտութեան թելերը կտրել
վարդապետեց մեզ կենաց կանոնի այս
պատգամներով,

Թող որ ազատուի բոլոր մահառիթ
պատահարների չար կապանքներից

Եւ Երրորդութեանդ բարեգործութեամբ նորոգուի
դարձեալ եւ յուսաւորուի.

Ընդ որում եւ մե՛նք պիտի համարենք մեզ
երջանկացած:

Է

Դ՛ո՛ւ, որ այսքան շատ հրաշքներ եւ գործել,
Հայր ամենաստեղծ, անուն ահաւոր, ձայն
սարսափելի,

Կոչումն ընտանի, խօսք համբուրելի, ազդումն
սքանչելի,
Հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն
անճառելի,
Իսկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք
ամենաբարի,
Տէրութիւն անասհմանելի, մեծութիւն անչափելի,
բարձրութիւն անբովանդակելի,
Քանակութիւն անկշռելի, առաւելութիւն
անհասանելի,
Պատճառ որդու՝ հայրութեամբ, այլ ո՛չ նախադաս
լինելով.
Քո միջոցով եւ անպարագիր քո զօրութեան
ջնորհիւ
Սաստի՛ր տառապեցնող ու դիւական տենդիս
ջերմութիւնը,
Որ սպողելով՝ մեղքի հետ մտաւ ներս, որպէսզի
փախչի մարդուց,
Չարհուրելով երկնաւոր գառիդ սխրալի եւ
առատահոս արեան վտակից,
Որով սրսկուեցինք թէպէտ մի անգամ, բայց
մաքրուեցինք մշտնջենապէս:

Ը

Եւ արդ, արարչակերտ այս խորհրդի պատկառելի
խոնարհութիւնից
Թո՛ղ ամաչի սատանան իր հրեշտակների չար
գործերի համար,
Տանջուի՛ թող եւ հալածուի, հեռանալով ու
արտաքսուելով
Քո բնակարանն եղող մարմնի խորանից դէպի
խաւարն արտաքին:
Եւ ջնջի՛ր, սրբիր, դու մեր դէմքերից արցունքն
ողբագին

Եւ հեծե՞ծագին հառաչանքները մեր սրտերից հա՛ն,
Յիշելով հարուածները քստմնափուշ,
Ժանտատեսիլ եւ մահառիթ այն բուեռների,

Որոնցով գամուեց Միածինը քո՝ խաչի աշտարակի
վրայ՝ թող չարը ցաւի գա

Եւ կողքը հերձող սայրասուր պաքի ուժգին
բախումից,

Որից խորապէս մեծ վերք ընդունեց,
Նախապատճառը մահուան թող իսպառ
սատակի՛, կորչի՛:

Եւ քանզի հոգին աւանդելիս իր գովեալ գլուխը
խոնարհեց քո գիրկը, Բարձրեա՛լ,

Ուստի սպասամբութիւնն անբարի բարքի տեր
Բեկիարի

Թո՛ղ ի կոր կործանուի, ըստ ամենայնի կորուստի
մատնուած:

Եւ դարձեալ, քանզի անմահ իսկութիւնն թաղուեց
ու ծածկուեց երկրի արգանդում,

Ապա, ուրեմն դրանով թող որ գոռոզի հոխորտ
հպարտութիւնը

Մահուան դժոխքի մթաստուեր ու խոր յատակը
դիտի,

Եւ թող որ յիշի առաջին հարուածն անբժշկելի,
Որով մահացաւ դիմադրութիւնը թունոտ վիշապի՝
Ամենագորի կենարար չարչարանքների գնով:

Թ

Ի փառս քո եւ ի գովեստ Որդուդ ու սուրբ Հոգուդ է
Խոստովանութիւնն այս, Հայր ողորմութեան,
Քանզի խորախորհուրդ ձեր միութեան մէջ
Մէկդ միւսի գորութեանը կարօտութիւն չունի:
Ուստի եւ մենք փառաւորելով Բանդ անսկիզբ ու
մարմնացած՝

Փառաւորած կլինենք նոյնպէս

Հօրդ անժամանակ:
Եւ քեզ՝ միակ սուրբ Երրորդութեանդ,
Հաւասարապատիւ տէրութեանդ,
Համարուն, անբաժան ինքնութեանդ՝
Օրինաբանութիւն, գոհութիւն, զօրեղութիւն
Եւ աննառ վայելչութիւն մեծութեան, բարեվիճակ
հարթութեան,
Չուզակշիռ հաւասարութեան՝ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Դո՛ւ ես բարիքի սկիզբը միայն,
Գթութիւն աննառ, որդիդ բարձրեալ միակ
Աստծոյ,
Որ ամբողջ օրը արիւր մեզ համար ներման
փրկարան,
Եւ ո՛չ կորստեան դատապարտարան,
Օրուայ չարը փոխարկելով ինձ համար յոյսի
աւետման:
Բժիշկ ախտաւորիս,
Հովիւ մոլորեալ ոչխարիս,
Տէր՝ քեզ ապաւինած ծառայիս,
Գինի անապակ՝ մեծապէս տրտմածիս,
Դեղ-սպեղանի՝ վիրաւորուածիս,
Ազատութիւն՝ մեղքով գրաւուածիս,
Բարի օրհնութիւն՝ մերժուածիս,
Շնորհաց կնիք՝ արհամարհուածիս,
Կոչումի օծումն՝ կողոպտուածիս,
Կանգնումն կրկին՝ կործանուածիս,
Պատսպարան հզօր՝ գլորուածիս,
Օժանդակդ վեհ՝ սայթաքածիս,

Դուռ բարձրադիր՝ տարակուսածիս,
Սանդուղ երանություն՝ եղկելիիս,
Ճանապարհ ուղիղ՝ մոլորուածիս,
Թագաւոր ներող՝ պարտուածիս,
Քաղցր յուսադրութիւն՝ լքուածիս,
Կեանքի ձեռնտու՝ վտարուածիս,

Բ

Դո՛ւ միայն ես մեծ եւ ամէնառատ, որ քո լիովի
բարիքների մէջ՝

Աւելի, քան մենք հասկանում ենք եւ խնդրում,
Սահմանում եւ ու միշտ հեղում, ըստ Պօղոսի
գոհաբանութեան:

Քանզի դո՛ւ պատուիրեցիր, որ վաղորդայնից
մինչեւ արեւամուտ,

Միեւնոյն օրում՝ ինն անգամ յիսուն եւ չորս
անգամ տասը հեղ բարիք գործենք՝

Միշտ ակնկառոյց, սրտով անարգել ներելով
միմեանց մեղքերը սիրով,

Մի բան, որ մարդիկ չեն յուսայ երբէք, թէ կարելի է
այդքանը խնդրել:

Իսկ եթէ իմ թշուառութիւնն ու անարգութիւնը
համեմատենք քո փառքի հետ,

Ամենակարող զօրութիւն ահեղ,

Աստուած բոլորի, օրհնեալ Տէր Քրիստոս,

Ի՞նչպիսի կշռով եւ կամ ի՞նչ չափով կհաւասարուի
հողս՝ հաստողիդ,

Չի անհուն ես դու, անբաւ եւ անհետագօտելի,

Բացարձակ բարի եւ թէ բարկութեան խաւարին՝
անմասն:

Ուստի յոյժ նուազ են համեմատած քո մեծութեան
հետ

Թիւն այն աստղերի, որոնք ոչնչից ստեղծեցիր դու
ու հորջորջեցիր ուրոյն անուններով

Կամ մթնոլորտում հեղուած նիւթն երկրի, որոնք
հաստելով անգոյութիւնից՝

Կերտեցիր երկրի զանգուածն ահագին՝

Շատ քիչ են, քան թէ վերելում յիշուած այն թիւր,
որով

Դու քեզ նմանուել վարդապետեցիր:

Գ

Ահա՛ ընկղմուեց, ծածկուեց անհետ քո
երկայնամիտ կամքի լոյսի մէջ

Բոլորի չարիքն, իբրեւ դոյզն մէզ, որ փարատում է
արեւի տապից,

Ինչպէս որ այստեղ մեր իսկ բնական զգացումները
Նոյնը ցոյց կտան մեր հասարակաց բարքերի
մասին:

Քանզի մարդկանցից այն ո՛վ մեղանչեց, եւ չզղջաց.
Ո՛վ ապականուեց՝ եւ չամաչեց.

Ո՛վ զարշելի դարձաւ՝ եւ չպատկառեց.

Ո՛վ սխալուեց՝ եւ չապաշաւեց.

Ո՛վ կործանուեց՝ եւ չհեծեծեց.

Ո՛վ գայթակղուեց՝ եւ չստրջացաւ.

Ո՛վ յաղթուեց՝ եւ իր բերանը չփակեց.

Ո՛վ խաբուեց՝ եւ հոգոց չհանեց.

Ո՛վ ճաշակեց լեղի՝ եւ չդառնացաւ.

Ո՛վ ընկաւ բարձրից՝ ու վեր չցատկեց.

Ո՛վ կորցրեց մեծութիւնը՝ եւ չաշխարեց,

Ո՛վ գրկուեց երանութիւնից՝ եւ չլացեց.

Ո՛վ կորոպտուեց փառքի շնորհներից՝ ու չողբաց.

Ո՛վ ինքն իր դէմ դարձաւ վնասակար՝ եւ իրեն
չմեղադրեց.

Ո՛վ մերժուեց Աստծոյ երեսից՝ եւ չհառաչեց.

Ո՛վ լսեց Աստծոյ սպառնալիքներն՝ ու չսոսկաց.

Ո՛վ մի մեղքի դէմ հազար չաւաղեց.

Ո՛վ մերկացաւ ձմռանը՝ եւ չսարսռաց.

Ո՛վ գործեց անօրէնութիւն՝ եւ իր խիղճը
քարկոծեց.

Ո՛վ տեսաւ ստրուկին իր մեծութեան մէջ՝ եւ
չցաւեց,

Ո՛վ չարիք գործեց՝ եւ ինքն իրեն չնգովեց.

Ո՛վ բռնուեց ախտով՝ եւ իր անձը չպարսաւեց.

Ո՛վ ամօթալի գործեր կատարեց՝ եւ իր մարմինը
չձաղկեց.

Ո՛վ ձեռք զարկեց անպատկառ գործի՝

եւ իր օրը չանհծեց.

Ո՛վ յիշեց գործածները՝ ու չտապացաւ.

Ո՛վ մտաբերեց գաղտնիները՝ եւ չխորովուեց.

Ո՛վ նկատեց ծածուկները՝ եւ կորստեան մահ
չխնդրեց.

Ո՛վ աներեւոյթները պատկերացրեց՝ եւ գլուխը
չկախեց.

Ո՛վ հեշտաւետ մեղանշումների հետ հնոցի անշէշ
բոցը չխառնեց.

Ո՛վ պազշոտացաւ՝ ու չպապակեց.

Ո՛վ իր կամովին գործած չարիքներն յիշեց՝ եւ իր
սատակման համար չաղօթեց.

Ո՛վ չպատմուելիքները՝ եւ չխռովուեց.

Ո՛վ մարդկային էութեան համար անտանելիները՝
եւ չթախծեց.

Ո՛վ մեծամեծներն՝ ու չմաշուեց.

Ո՛վ անբծութիւնն ապականողները՝ եւ չտոչորուեց.

Ո՛վ տարագրութեան պատճառ եղող
յանցանքները՝ եւ չտագնապեց.

Ո՛վ իր երեսի աղտեղի տեսքը՝ եւ անձը վերնայնի
բարկութեան արժանի չհամարեց.

Ո՛վ աչքի առջեւ բերեց գլխաւոր մեղքերից մէկը՝ եւ
մահացու զէնքով չխոցուեց.

Ո՛վ խայտառակութիւններն յիշեց՝ եւ
վիատութեան ողբաձայն վայեր չհիւսեց.

Ո՛վ արքայական իր գահից զրկուեց՝ եւ
կարկամելով՝ վայր չգլորուեց.

Ո՛վ պսակի տեղ հող դրեց գլխին՝ եւ հոգով
չարաչար չմահացաւ.

Ո՛վ պայծառ պատմունճանի տեղ քուրճ հագաւ՝ եւ
չտխրեց.

Ո՛վ իր կորցրեց՝ եւ չերկնեց արիւն-արտասուք.

Ո՛վ լուսեղէն վերարկուի փոխարէն խաւար
հագաւ՝ եւ չնուաղեց.

Ո՛վ իր սիրելու սուգի վրայ չթառամեց:

Դ

Սրանք են ահա ճշգրտագոյն կերպարանքը
յանդիմանութեան արժանի մեղապարտիս՝

Տխուր դէմք, շիջած ճառագայթ, ցամաքած
խոնաւութիւն, նիհարած շրթունք,

Անշքացած տիպ, տխրամած հոգի, այլայլուած
ձայն, ծռուած պարանոց:

Եթէ մէկը իսկական ճմարտութիւնը ցոյց տա,
Չի ստի, ասելով՝

Ամբարտաւան միտք եւ անհպարտ սիրտ,

Ու չլինի՝ պարզեւ խնդրելու անկարող թշուառ եւ
աղերսելու ծարաւեալ,

Ինքնակշտամբ դեգերող, իրաւամերժ սովեալ,

Արդարալլուկ քաղցած, պատշաճադատ
հարուածեալ,

Ինքնավկայ մահապարտ, արժանապէս
արտաքսուած եւ անձնանեծ եղկելի:

Սրանց օրինակ են ծառայում արդարագործ
փարիսեցիին, որ կշտամբուեց,

Եւ մեղապարտ մաքսաւորը, որ հռչակուեց:

Ե

Եւ արդ, եթէ այն չարիքներն ամէն,
Որոնք հնարում ու սերմանում է մեր սրտերի մէջ
մոլորեալներիս գտնող բանասարկուն,
Իրենց տեղն ունեն օրուայ հաշուի մէջ, -
Ինչո՞ւ չպիտի համրես դու նաեւ այն բարիքները,
Որոնք խնամակալ ապրեցնող քո կամքն է տնկել
մեր մէջ,

Արիացնելու համար մեր հոգին, ո՛վ բարեգութ
Տէր, հօր ու յաղթող,
Քաւիչ մեղաւորների, ամենակարող փրկիչ բոլորի,
Եթէ ուզենաս՝ անդունդները դու երկնքի կփոխես,
Եւ կամ խաւարը մթին՝ կփոխարկես լոյսի,
Դառնահամ լեղին՝ քաղցր մանանայի.
Եւ կամ սաստկավիշտ ողբ ու կոծերից
հարսանեաց ուրախ պար ու նուագներ կարող ես
կազմել:

Սրանք բոլորն էլ դիւրին են քեզ մօտ եւ հնարաւոր,
Եւ դեռ աւելի՛ն կարող ես անել,
Զի տիրում ես դու համայն բոլորին ահաւորապէս.
Փանք քեզ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Լ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ

ՀԵՏ

Ա

Եւ արդ, թող ճշմարտուի քո խօսքը, ողորմած
Աստուած դու բոլորի,
Ներող եւ օրհնեալ՝ այն մեղաւորի մասին,
Որը մի օրում բազմաթիւ անգամ գայթելով՝
վերջապէս դարձի կգայ գոջացած,
Թեկուզ այդ լինի իր վերջին շնչում

Եւ կամ չարութիւն գործած միջոցին:
Մանաւանդ որ դժնեայ կցորդս այս
անձնիշխանական՝
Մի մարտիկ է միշտ, խաբող շողոքորթ, ստութեան
յարած,
Ըստ առակողի՝ հողմեր արածող,
Դժվարբռնելի փախչող՝ հաստողից,
Որսողին գերի՝ մոլեկան մարմնիս,
Ներհակ տնկակից, որի պատճառած
վարանումների
Որքանութիւնը դո՛ւ գիտես միայն:
Սակայն մեղքերին յաջորդում են խիստ
յուսահատական եւ տաժանակոծ,
Բազմավաղելի յո՛յժ ողորմագին բարձրաձայն
ողբեր,
Արցունքով գրուած եւ ի գութ շարժող թառանչներ
թշուառ,
Որոնք մեղքերով տագնապողը, Տէ՛ր, տարածում է
քո առջեւ ամօթահար:

Բ

Եւ որպէսզի կրկնաբանութիւնս շատախօսութեան
չհասնի
Ու չդառնայ աւելի ողբալի, քան այս,
Ասեմ, թէ նա արքայութիւն չէ, որ համարձակւում է
խնդրել քեզանից,
Այլ միայն թեթեւացում տանջանքների.
Ոչ թէ կյուսայ բնակուել լոյսի մէջ ապրողների հետ,
Այլ՝ խաւարի մէջ, գերեզմանականների հետ,
զգայական շնչով.
Ոչ թէ բարձրերի, այլ խորտակուածների եւ
բեկեալների հետ լինել.
Հոգնաբեկ է նա իր հանգստի մէջ եւ
խրախճանքում՝ տրտում,
Դէմքով ժպտուն է եւ մտքով՝ խոցուած.

Երեսը ծիծղուն, եւ աչքն արտասուագին.
Առերեւոյթ սփոփուած է ձեւացնում իրեն,
Իսկ արտասուքը սրտի դառնութիւնն է վկայում:

Գ

Իր երկու ձեռքում երկու ըմպանակ, մէկն արեամբ
լցուած եւ միւսը՝ կաթով.

Եւ վառուող երկու բուրվառ ունի նա, մէկը
խունկով լի, միւսը՝ ճենճերով.

Անօթներ երկու, մէկը քաղցրութեամբ լեցուն եւ
միւսը՝ դառնութեամբ.

Մի գոյգ բաժակներ երկու նիւթով լի, մէկը
արտասուք եւ միւսը՝ ծծումբ.

Մատների ծայրով բռնած երկու տաշտ՝ զինի մէկի
մէջ ու միւսում լեղի:

Տէտողութեան դռներ իրարու ներհակ՝ մէկը լաց
լինելու եւ միւսը սխալուելու տրամադիր.

Իրար հակառակ երկու հալոցներ, մէկն
արծարծում է եւ միւսը՝ մարում.

Երկդիմի նայուածքներ՝ մէկը ողորփչ եւ միւսն
անխնայ բարկութեամբ լեցուն.

Գէպի վեր պարզած երկու բազուկներ՝ մէկն
հարուածելու, միւսը մերժելու.

Դէմք՝ երկու տարբեր արտայայտութեամբ –
տխուր ու ցասկոտ.

Մէկի փոխարէն երկու կշտամբանք՝ ներկայի
համար եւ ապագայի.

Ապաւինումներ կասկածելի՝ մէկը "գոնէ" եւ միւսը
"թերեւս".

Մի բերանի մէջ երկակի բարբառ՝ մէկը եղկութիւն,
միւսը խռովանք.

Միեւնոյն սրտում երկու զգացմունք՝ մէկը
կասկածելի յոյսի եւ միւսը ճշգրիտ կորստեան.

Ամպ մի լրթագոյն, ահագնատեսիլ կրկնակ

տեղումով՝ մէկը սուր նետեր եւ միւսը՝ քարեր.

Որոտում ահեղ երկու բերումով՝ կարկուտ ու կրակ.

Յաւագին գիշեր երկու վշտով լի՝ լալու ու մահուան.

Սուգի առաւօտ երկու գոչիւնով՝ մէկը սաստի եւ միւսն սպառնալիքի.

Արեւներ երկու՝ երկու կողմերից – մէկը խաւարի եւ միւսը կիզման:

Գ

Եթէ մի բռունցք բարձրանայ հանկարծ, կարծում է՝ իրեն է հարուածելու.

Իսկ եթէ երկարի ձեռք պարգեւաձիր՝ նա ինքը իրեն համար յոյս չունի:

Երբ մէկը պարծենում է, կորանում է նա,

Եւ երբ գլուխը բարձր են պահում՝ ընկնում է.

Երբ չար արարքներ են յիշում՝ հեծում է.

Երբ սրբերի մասին է խօսում՝ ամաչում է.

Հանդերձեալի մասին պատմուելիս՝ երերում է.

Երբ մէկից օրհնուի յայտնապէս՝ ծածուկ անիծում է իրեն.

Երբ գովեստ լսի մէկից՝ կշտամբում է իրեն պարսաւանքով.

Երբ նախատուի սաստկապէս՝ գտնում է նա այդ իրաւացի.

Եթէ ուժգին ծաղրուի՝ համարում է այդ սակաւ հատուցում նա իր բազմաթիւ մեղքերի համար.

Եթէ լսի նա՝ իր մահն են ուզում՝ ասում է

"այո" եւ կրկնում դարձեալ.

Եթէ երկնքից մահ ու շանթ նայթի՝ իր դէմքն հազիւ է բարձրացնում վերեւ:

Իր իրաւունքների մատեանն է գոցուած,

Պատասխան տալու յոյսն է կտրուած,

Համարձակութեան ճամփան է փակուած:
Չէր դանդաղի նա լինել անձնասպան,
Եթէ չլինէր այդպիսի կորուստն անփրկելի քայլ:
Արդարեւ վայ՛ այն մեղաւորին,
Որ տարակուսեալ կկանգնի երկու ճամփաների
վրայ, ըստ իմաստունի հոգելից խօսքի:

Ե

Եւ արդ, ինչպէ՛ս չես ողորմում, բարեգութ,
Այսքան ողբաձայն ու կողկողագին
հեծեծանքներիս,
Դու այս խօսքով բարձրացար, ասելով, թե՛
"Ես ողորմած Տէ՛ր եմ":
Ահա՛ չարութեան դէմ գերուս՝ կայ քո բարութիւնը,
Մահապարտիս դառնութեան դէմ՝ քո
քաղցրութիւնը,
Կորուսեալիս գտնելու համար՝ քո ճառագայթը,
Հանդուգնիս մոլութեան դիմաց՝ քո ողորմութիւնը,
Վնասակարիս խստութեան դիմաց՝ քո
հեգութիւնը,
Կործանուածիս օգնելու համար՝ քո աջը,
Ընկղմուածիս դուրս բերելու համար՝ քո ձեռքը,
Անողջանալի վերքերիս բժշկութեան համար՝ քո
մատը,
Ահաբեկուածիս պաշտպանութեան համար՝ քո
ոգին,
Ապերախտիս վստահացնելու համար՝ քո
երկայնամտութիւնը,
Ամենադաժանիս օժման համար՝ քո զօրութիւնը,
Մեղաւորիս քաւութեան համար՝ քո հրամանը,
Փախչողիս ապաւինութեան համար՝ քո ոտքը,
Դուրս սլացողիս պատսպարութեան համար՝ քո
բազուկը,
Վրիպածիս առաջնորդութեան համար՝ քո լոյսը,

Տարակուսեալիս հնարաւորութեան համար՝ քո
հանճարը,
Անիծեալիս դարձեալ ստանալու համար՝ քո
օրհնութիւնը,
Վհատեալիս քաջալերութեան համար՝ քո
խրախոյսը,
Վշտացեալիս մխիթարութեան համար՝ քո
բաժակը,
Նեղեալիս ընդարձակութեան համար՝ քո կամքը,
Ատելուս կանչելու համար՝ քո սէրը,
Սասանեալիս հաստատութեան համար՝ քո
խօսքը,
Հոգով վիրաւորուածիս համար՝ քո արեան
կաթիլը,
Անտես ցաւերս ցրելու համար՝ քո
ակնարկութիւնը,
Յուսահատուածիս վերընտրութեան համար՝ քո
իշխանութիւնը,
Կտրուածիս պատուաստելու համար՝ քո
կցորդութիւնը,
Մահուան խաւարով ծածկուածիս համար՝ շողո
կենսատու,
Խռովեալիս հանդարտութեան համար՝ քո
խաղաղութիւնը
Վայրագօրէն օտարացածիս համար՝ քո ողջոյնը,
Մոլորուածիս դարձի բերելու համար՝ քո ձայնը,
Չի դու ես տիրում բոլորին քո գթութեամբ,
Եւ չկայ քո մէջ խաւարի մասնիկ,
Եւ չկայ բարութիւն առանց քեզ,
Եւ քեզ է վայելում փանօք յաւիտեանս, ամէն:

ԲԱՆ ԼԱ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ այսպէս ահա սաստկացրի եւ ինձ անսփոփելի
ցաւ պատճառող կրքերս,

Ողբալով երկար ե՛լ հեծեճագին, ե՛լ մեծահառաչ,
Որ դու, ողորմանձ, սկզբնահայրդ անյայտ ու
ծածուկ մեղքերի խոստովանութեան,

Որդիդ կենդանի Աստծոյ, Տէր Յիսուս Քրիստոս,
Քաղցրութեանդ նայես քաւելու համար.

Արդարեւ կարող ես դու եւ ձեռնհաս ես
ճշմարտապէս,

Եթէ կամենաս՝ հնարներ ունես դու.

Ինչքան որ կամենում ես, այնքան էլ կարողանում
ես,

Հարստանում ես դու մեծապէս՝ տալով, քան թէ
առնելով,

Բազմանում են գանձերդ ցրուելով, քան թէ
հաւաքելով,

Շատանում է ստացուածքդ սփռելով, քան թէ
խնայելով,

Դիզուում են պաշարներիդ տարածելով, քան թէ
ամբարուելով,

Հաւատալով այսպէս այս բոլորին՝ յոյս ունեմ ես,

Թէ փրկութեան ե՛լք կգտնեմ քեզանով:

Հաւատում եմ անարգս պատուականի հետ,

Եւ յոյս ունեմ ես Աբրահամի հետ եւ Աննայի.

Չի մէկը հաւատաց քո խօսքին, եւ միւսը

քահանայապետի ձայնին անսաց:

Ուստի եւ մէկը խոր ծերութեան մէջ դարձաւ
անհամար որդիների հայր,

Յուսալով, թէ պիտի կարողանար Սառայի
արգանդն ամուլ ու զառամ՝

Բազում ժողովուրդների, մարգարէների եւ ընտիր

թագաւորների

Պտղածին եւ օրհնաբեր անդաստա՛ն տեսնել:

Իսկ միւսն՝ անմշակ երկիր – սենեակը իր
որովայնի

Բարգաւաճեց եօթ զաւակներով, -

Թի՛ւ անհաշուելի, որ աստուածային

յախտենութիւն է նշանակում,

Նրա յարակայութեան սահմանն անհետագօտելի,

Եւ աւագանի նորածին որդոց առատութիւն

անսպառ:

Թիւն այս պանծայի, որ չունի իրեն գոյգը

հաւասար, ո՛չ վերջ, ո՛չ վախճան,

Կուսութիւն է մի ուրոյն ընտրութեամբ միշտ

նուիրական՝

Որ անճառօրէն յախտենութեան դժուարմեկնելի

խորհուրդն է խորին եւ մեր մտքից վեր:

Բ

Արդ, համարի՛ր դու փրկութիւնից յուսահատ
հոգուս համար որպէս արդարացում

Ամենավարան ու կողկողագին ձայնն այս
դառնապէս հեծե՛ծող սրտիս,

Իմ հաւատքի փոքր այս դաւանանքը խնդրագին

Վերոգրեալ երջանիկների հաւատքին հաւասար

դասելով,

Որպէսզի ես էլ ապրեմ նրանց հետ բերկրալից

կեանքով,

Ամուր կառչելով քո շնորհներին, քան թէ գործերիս:

Մանաւանդ որ քո շնորհները բարձր են եւ

կրկնակի փառաւոր

Եւ չեն կշռում ու չափում խօսքով,

Ու հաւատում են ես անտարակոյս, թէ հզօրապէս

կարող են քաւել

Մեղքերս բոլոր՝ խաղաղեցնելով խռովութիւնն իմ:

Այդ շնորհներն են՝ քո ահաւոր արեան հետ
միասին ե՛լ մարմնաւոր ծնողդ խնկելի,
Առաքեալների խմբերը, դասը մարգարէների,
Եւ գնդերը ողջ՝ հեծեալ, հետեւակ եւ սպառազէն,
Ու մերկամարտիկ քաջաբար մրցող
մարտիրոսների, մենակեացների,
Բոյբը ընտրեալ եւ բարեկրօն վանականների,
Հոյքն երկրի վրայ ապրող երկնային հոգեղէնների,
Չինուորութիւններն մեզ կցորդակից
վերնականների,
Տուրքը երախայրիքների, մատուցումը
զվարակների,
Չահավառումներն ու բոյբը իւղով օծուած
խունկերի,
Յաղթանակը փրկութեան նշանների,
Կառուցումներն աստուածարնակ խորանների,
Եւ շնորհի խորհուրդը կատարող ձեռքերը
քահանաների:

Գ

Այսպէս մեր ամէն մի շարժումի մէջ
Աստծուն ենք յիշում, -
Երբ քայլ ենք փոխում, ձեռք ենք կարկառում,
բազուկ բարձրացնում,
Բարի գործերի համար գոհութիւն եւ գայթումների
համար աղաչանք ենք վերընծայում.
Ընտանեկան գրոյցներում եւ հասարակաց
խօսակցութեան միջոցին
Մեր բնական ձայնի, գործերի յաջողութեան եւ
առաքինական ջերմեռանդութեան պահերին,
Գիշեր թէ ցերեկ, քնած ժամանակ եւ կամ արթմնի,
Քեզնով առաջնորդուած հոգեւորների օգտակար
ընթացքում,
Ազգերի միջեւ պատերազմների եւ դելերի հետ

մղուող մարտերում,
Հերձուածողների հետ վիճաբանելիս,
Փոքրերի եւ մեծերի հետ վերաբերուելիս,
Ըմպելիքներ խմելու եւ կերակուրներ ճաշակելու
միջոցին,
Մեզ համար հաճոյ եւ թէ վշտալից բոլոր
ղէպքերում,
Որոնցից առաջինների համար աղօթում ենք մենք,
որ մնան այնպէս,
Եւ միւսները՝ որպէսզի դու գերծ պահես նրանցից՝
Անճառ, անսահման քո հնարքներով
սքանչելապէս,
Քանզի ամէն ոք հաւատում է, թէ օգնելու
պատրաստ՝ կարող ես դու միշտ,
Տակաւին ծծկեր երեխաներին, դեռահաս
պատանիներին,
Վայրենաբարոյ մարդկանց եւ գոռոզ
ստամբակներին:
Եւ թատերական տեսարանների մէջ մինչեւ
անգամ,
Եւ խառնիճաղանջ բազմութիւնների
խումներամներում,
Եւ կամ հօգօրիդ կամքին անհաճո կաքաւումների
ու կայթերի մէջ
Դու չե՛ս մոռացուած:

Դ

Դե՛ւ ստեղծեցիր, բոլորին, եւ քո՛նն են բոլորը,
Եւ դու բոլորի՛ն պիտի ողորմես, միայն բարեգութ.
Զի թէ մեղանչեն իսկ՝ քոնն են, քանզի քո հաշուի
մէջ են,
Եւ գիտեն քո զօրութիւնը, ինչպէս առակողն է
աղօթել,
Որին ես ինքս էլ ձայնակից եմ իմ խղճով

խօսքերով,

Որպէս յանցաւոր հաստատելով այդ:

Հանդգնում եմ ասել, թէ նա, ով գովեստով է տալիս
անունդ, հաւատալով, թէ կաս,

Եւ եթէ նոյնիսկ նա եօթնապատիկ անգամ
յանցանքով վարակուած լինի,

Ինչպէս բերուած է որպէս սպացոյց-օրինակ՝
արդէօք քոնը չէ՞ դարձեալ:

Երբեմն արջնաթոյր ագռաների մէջ

Սպիտականիշ աղաւնիների երամներ ենք
տեսնում,

Եւ ձիերի մէջ իրոխտ, անմաքուր՝ որոջներ
հանդարտաբար,

Եւ գազանակերպ շների թւում՝ օրինուած գառներ,
Խստութեան մէջ՝ հեզութիւն,

Թերութեան մէջ՝ կատարելութիւն,

Հանձնապաստանութեան մէջ՝ խոնարհութիւն,

Ստոյթեան մէջ՝ ճշմարտութիւն,

Խորամանկութեան մէջ՝ միամտութիւն,

Նենգամտութեան մէջ՝ անբծութիւն,

Չարագործութեան մէջ՝ բարութիւն,

Լկոխութեան մէջ՝ պարկեշտութիւն,

Անգթութեան մէջ՝ ողորմութիւն,

Անյուստութեան մէջ՝ սպաշաւութիւն,

Բարկութեան մէջ՝ քաղցրութիւն,

Թշնամութեան մէջ՝ հաշտութիւն,

Խաճանդողութեան մէջ՝ անոխակալութիւն,

Չարչարանքի մէջ՝ քաջակերութիւն,

Եւ նետաձգութեան մէջ՝ օրինութիւն:

Ուստի անկարող եղայ ես դատել ճշգրիտ կերպով,

Թէ այն ո՞վ պիտի երկրածիններից կարենայ
կանխել ժառանգելու քեզ,

Որ կշտամբում ես անաչառօրէն եւ
արդարութեամբ

Այն ամբարիշտին, որը ինքն իրեն մաքուր է
կարծում

Եւ այն պռռնիկին, որ զղջացել է:
Բոլորի համար բարեգործդ դո՛ւ, միանկ թագաւոր,
Օրհնեալ ի բարձունս, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ես հետինս վերոյիշեալ արժանաւորներից,
Պատժապարտների կարգը արդարեւ դասելով
ինքս ինձ,

Ողորմութիւն եմ խնդրում քեզանից բոլորի
աղերս-աղօթքների հետ՝

Նկունների հետ եւ անհամարձակների,

Տկարների հետ եւ փոքրիկների,

Ընկածների հետ եւ արհամարհուածների,

Տարագրուածների հետ եւ դէպի քեզ դարձածների,

Երկմիտների հետ եւ աներկմիտների,

Կործանուածների հետ եւ վերականգնածների,

Ընկնուածների հետ եւ հաստատուածների,

Գլորուածների հետ եւ կանգնածների,

Մերժուածների հետ եւ ընդունուածների,

Ատուածների հետ եւ կոչուածների,

Ապշածների հետ եւ զգաստների,

Անատակների հետ եւ զսպուածների,

Հեռացածների հետ եւ մօտեցածների,

Հերքուածների հետ եւ սիրուածների,

Ամօթահարների հետ եւ զուարթացածների

Եւ ամաչկոտների ու խնդամիտների հետ:

Սակայն ես այստեղ կպատմեմ դարձեալ ոչ թէ
մեղքերը Երուսաղէմի,

Ըստ մարգարէի հրամանատութեան իր նախնի
ժողովրդի վերաբերեալ,

Կամ Յակոբի տան գործերն անօրէն -
Այլ պիտի գամ յայտնելու իմ մեղքերը,
Քանզի իմ մահուան աղէտի վրայ աւանդ ասելով
ըստ մարգարէի,
Ես ինքս իմ ճայնով պիտի մեղադրեմ ինձ՝
սաղմոսողի խօսքի համաձայն,
Որպէսզի իմ այս համայնապատում
խոստովանութեամբ
Պէտք չունենայով այլեւս աւաղ բացականչելու,
Մէկ անգամ ընդմիջտ մաքրուեմ
Էիդ օրհնեալ հրամանով:

Բ

Եւ արդ, ահաւասիկ, ծունկի գալով բարերարիդ
քաղցրութեան առջեւ,
Փռուում եմ հողին ցոյց տալու համար, թէ ինչպէս
եմ ես ի մահ գլորում,
Ես, որ սողունի նման սահելով եւ անասնական
գետնաքարշութեամբ,
Կամաւոր կերպով գամեցի ինքս ինձ այս
կորստական անցաւոր կեանքին
Եւ սակայն հիմա յենուած քեզ, ո՛վ Տէր,
Ինչպէս մարմնով Դաւթի արմատից ընձիւղուած
Եւ աննառօրէն անեղ աստուածութեանդ հետ
շաղկապուած հաստատուն գաւազանի վրայ, որպէս
կեանքի նեցուկի,
Երախտիքներիցդ պատկառելով՝ կիսով չափ
պիտի կանգնեմ դարձեալ,
Կիսաբաց դէմքս հակած դէպի վար, եւ աչքս դէպի
վեր,
Խղճալի հայեացք յառելով քեզ,
Տէ՛ր, որ մօտիկ ես մեր հեծութիւններին,
Եւ ողորմութիւն ես բոլորովին, համակ
քաղցրութիւն, -

Եւ լիճը լոյսիս լցրած արցունքով՝
Յոյսով լեփ-լեցուն պաղատանքներս մեծութեանդ
պիտի ես վերընծայեմ:

Գ

Լսի՛ր աննուագ եւ ամենառատ
երկայնամտութեամբ՝ քեզ դառնացնողիս,
Դո՛ւ մեր փրկութեան պայմանըդ միակ:
Աստուած բոլորի, աննառ մեծութիւն,
Անբովանդակելի բնութիւն, անքննելի իսկութիւն,
Հօր զօրութիւն, կարող բարերարութիւն,
անպակաս լրութիւն,
Աննառ ժառանգութիւն, վայելչական վիճակ,
Առատ պատրաստութիւն, անստուեր
իմաստութիւն,
Տէնչալի տուրք, անձկալի շնորհ, բաղձալի
բերկրութիւն,
Անտխուր հանգիստ, անտարակոյս գիւտ,
անկապտելի կեանք,
Անծախելի ստացուածք, անփոխարինելի
բարձրութիւն,
Ամենարուեստ բժիշկ, անսասան հաստատութիւն,
Դարձուցիչ մոլորուածների, գտնող
կորուսեալների,
Յոյս՝ ապաւինածների, լոյս՝ խաւարածների,
Քաւիչ մեղանչածների, ծածկարանդ փախչողների,
Անդորրիչ խռովեալների, փրկութիւն
մահացածների,
Արձակիչ կապուածների, ազատիչ
մատնուածների,
Պատսպարան սահածների, վշտակիցդ
սայթաքածների,
Երկայնամտութիւն տարակուսեալների.
Լուսեղէն տեսք, ցնծութեան ցոյց, օրհնութեան

անձրել,

Հոգի երեսաց, զօրութիւն դէմքի, հովանի գլխի,
Ճարժիչ շուրթերի, ազդումն խօսքի, կառավար
անձի,

Քարծրացնող բազկի, երկարող՝ ձեռքի, սանձակալ
սրտի,

Ընտանի անուն եւ մերձաւոր ձայն,

Կցորդութիւն հարազատ, խնամածութիւն
հայրական,

Խոստովանուած անուն, պաշտելի պատկեր,
անպարագիր տիպ,

Երկրպագուած տէրութիւն, բարեբանուած
յիշատակ,

Խնդութեան մուտք, անվրէպ շաւիղ, փառքի դուռ,
Ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ
սանդուղք,

Եւ այլ բազմաթիւ խօսքեր գովեստի՝ անհամար
շարքով, անբաւ տողերով,

Որոնք ո՛չ երկրածին բերանը կարող է արտաբերել,

Ո՛չ կարող է տանել մարմնեղէն գործիքը,

Եւ ոչ էլ հոգեղէն իղձերը կարող են կշռել:

Գ

Ամէն տեսնող աչք քեզ է նայում,

Տէ՛ր, Աստուած բոլորի,

Եւ դո՛ւ էլ նայիր քեզ հառաչածայն պաղատող
բոլոր քո ծառաներին,

Աղախիններին, թէ նրանցից էլ աղաչող լինի:

Ընդունի՛ր եւ իմ այս ողբ ու լացով ցանկասէր
աչքիս ցողն արցունքների,

Որով, Տէ՛ր Զրիստոս, թրջում եմ ահա ուտքը
անարատ քո մարդեղութեան,

Եւ օրինակով այն խորհրդաւոր՝ յանցաւոր կնոջ
մագերի,

Ընդունի՛ր նաեւ իմ դաւանութիւնն ու դարձը առ քեզ.

Եւ համբոյրներով իմ շրթունքների՝ կեանքի փրկարար հաղորդութիւնը քո ճաշակելով՝

Համաշունչ կերպով կապիր ինձ քեզ հետ անլոյծ միութեամբ:

Որպէս երաշխիք քո ողորմութեան եւ քո գթութեան նո՛յնպէս բարերար,

Փոքր իմ հաւատքի փոխարէն թող որ քո մեծ պարգեւը ընդունեմ քեզնից:

Գթառատ սիրով, ծառայիս հանդէպ, որ դաւանում է անունդ անձկալի,

Թող որ խստաշունչ հողմերը ձմռան՝ փոխարկուեն հանդարտ մեղմաշունչ օդի,

Սաստիկ մրրիկը՝ ախորժ գեփիւռի,

Կասկածներն երկչոտ՝ մեծ վստահութեան,

Եւ պատիժների պատուհասները՝ երանութեան,

Թախծագին տագնապները՝ հոգեւոր

խրախնանքի,

Ալեկոծութիւնները ծփանուտ՝ խորին

խաղաղութեան,

Եւ դէկի թիավարումները՝ ապահով

նաւահանգստի՛ հասնեն թող,

Մեղքերի բեռների բերքն իմ փոխարկուի՛ թող շնորհաց թռչակի:

Ե

Քեզանից եկող այս բիւր եւ բոլոր բարութիւններով Թող որ բարձրանայ ամենահզօրիդ անունը ինկուած ու խոստովանուած.

Թող ամաչի չար բանասարկուն՝ վռնդուած եւ հալածական.

Թող ոչնչանան մուրհակները մեղքերիս.

Կտրուեն կարթերը, եւ որոգայթները հեռացուեն,

Կտրատուէն կապանքներն ու վիհը վանուի,
Վնասները վերանան, ցնդեն պատրանքներն ու
մեղքերը ջրուէն,

Պարտաթղթերը պատռուէն, լուծը խորտակուի եւ
քեղիքը քանդուէն:

Թող որ փոխարէն չար յանցանքների մռայլ
մթութեան

Նաեւ դեւերի մեզ շրջապատող բանակների տեղ՝
Փառքիդ արելը հասնի մեզ աջից, ձախից,
դիմացից, թիկունքից նոյնպէս,

Լուսաւորելու եւ ապրեցնելու, փրկելու համար:
Իսկ նրանց վրայ, ովքեր լիայոյս սպասում են քո
լոյսի երեւալուն՝

Թող գարնանային ջինջ առաւօտեան ճանա՛նչը
շողա:

Չի կարող ես դու ամէն ինչի մէջ եւ բարերար ես
բոլորի համար,

Կամենում ես դու, որ ամէնքն ապրեն եւ
փրկութիւնն եւ ուզում բոլորի:

2

Ո՛վ ամենապարզեւ ձեռք

Յիսուս Քրիստոսի,

Դարձի՛ր դէպի ինձ, քո շնորհատու աջը
կարկառելով,

Բնակուի՛ր իմ մէջ եւ միացիր ինձ,

Չհեռանալով սիրոյ քո սենեակ՝ անձուկ իմ սրտից:

Նկարագիրդ անեղծանելի, որ նշխարն է
քրիստոնէական փրկաւետ կոչման պանծալի լոյսի,

Հանդիսանալով միջնորդ քո տեղակ՝

Թող ինձ հետ յաւէտ մնայ անկորուստ այս
մատենանի մէջ

Ա՛յն հոգով, որ մեզ յաւիտենական կեանքի կտակ
էր խոստացել անճառ յօրինողդ երկնից:

Եւ քեզ՝ պատճառիդ միակ, եւ միւսիդ՝ միակ
պատճառից,

Եւ քեզ՝ որ դարձեալ պատճառն եւ մէկի,
Երբեակ անձնաւորութեանդ եւ մի
աստուածութեանդ

Վայելում է փառք վեհ երկնաւորներից եւ սրբերի
դասերից,

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԼԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Բանաստեղծութիւնս այս պաշտամունքի,
Որ հոգոս բերքից նուիրում եմ քեզ, օրինեա՛լ
բարեգութ,

Խառնի՛ր, կցելով հաւասարապէս
խնկազգեստների նուիրումներին,

Բարեպաշտ կնոջ՝ Մարիամի իւղի հետ
անուշահոտ:

Հաւասարելով նոյն այն երջանիկ պոռնիկների
հետ,

Որոնց յարգանքով յաւերժահրաշ ընդունեցիր դու,

-

Թող որ մեծապէս պարարուես եւ իմ նուաստ
խօսքերով,

Անհասանելի եւ բարեբանեալ բարձրեալիդ գլխին
տեղ տալով նրանց,

Ձերձ սաղմոսողի բամբասանքներից, որ ասում է,
թէ՛

"Մեղաւորի իւղը թող չօծի վարսագեղ գագաթը":

Բ

Այլ արա՛ւ այնպէս, որ գօրեղացած կրկնակի չափով
Բուրումն այս գրքիս խոստովանութեան ազդի
շատերին,

Նման համասփիւռ, ամենատարած տանն
աշխարհալիր,

Եւ լինի նրանց յիշատակի պէս անմոռանալի:

Դու նոյն այն տէրն ես, որ զգաստացրիր կանանց
մեղաւոր եւ չարախորհուրդ,

Որոնց այլաբանական նմանութիւնն էր վարքը
մարգարէի,

Որ ճմարտատիպ քո պատկերի պէս
կերպաւորեցիր.

Առաջ նրա՛նց մէջ այն անճառօրէն տպաւորելով՝

Ծայրագոյն շնորհիդ կատարումը դու ինձ ցոյց
տուներ էքցիր:

Անասուններին որպէս կերակուր գարու
փոխարէն՝

Քո կենաց հացի ցորենի բերքը դու
բազմահամբար մեզ պարգեւեցիր:

Ապականացու արծաթի տեղակ քո արքունական
պատկերը տուիր.

Հիմարաբար թմրեցնող գինու փոխարէն արարչիդ
արեան բաժակը տուիր.

Հին ժողովրդի հայրատ կնոջից առած իւղի տեղ՝
շնորհիդ օծումն ինձ դարձրիր դու.

Վերցուած գլխաշուք կտաւի տեղակ՝ անբիծ
վերարկուն.

Պերճաշուք ապարանջանի փոխարէն՝

Օրէնքով, աւետարանով եւ գործնական
առաքինութեամբ ձեռք բերուած թռչչքներ
բարեմասնութեան.

Ականջը վայելչօրէն զարդարող գինդի փոխարէն՝

Յիշատակն անստուեր տէրունի ձայնիդ.

Եւ լանջքը պճնող մանեակի տեղակ՝

Քո դրած քաղցր եւ արդար լուծի օրէնքներն
համակ:

Գ

Բայց ինչո՞ւ սրանցով պարծենամ եւ եւ չամաչեմ
դարձեալ նրանց համար:

Ուստի փոխելով եղանակն այս ողբերգական
աղօթագրքի,

Ինչ որ յարմար է ինձ եւ արժանի՝

Մեղապարտութեանս պատիժը պիտի հատուցեմ
եւ այս գլխում,

Որպէս խստագոյն դատախազ՝ համառօտ
մէջբերումներ անելով մարգարէական
գրուածքներից,

Ոչ թէ նրանց հետ պարելով ուրախ, այլ լծակցելով
նրանց ողբերին,

Ուր կան հառաչներ, հեծութեան ձայներ, ցասկոտ
բողոքներ,

Խորտակիչ նախատիւնքներ, սաստիկ լաց ու կոծ:

Բայց մեծ Աստծուդ գութն ամենահաս յոյս
ներշնչեց ինձ,

Որով եւ վերեւ յիշուած բազմաթիւ աղէտների հետ
տրուեցին նաեւ՝

Չղջումներ, խոստովանութիւններ, աւետիս,
պարգեւ,

Լոյսի երեւումներ, խրախոյսներ աստուածային,
փառքի ժառանգութիւն,

Հրաշքների յայտնութիւններ եւ տեսիլներ
սքանչելի,

Որոնցից ոմանք յոյս են ներշնչում, ոմանք
պատճառում վիատութիւններ,

Որոնց մէջ կամաւ, ինձ՝ կործանուածիս
վիճակուեց կորուստ:

Դ

Չի եթէ վարագոյրի ծածկոցը
Եգեկիէլն Աստծոյ զգեստ անուանեց,
Որով ժողովուրդը կարկատուն կուռքեր ստեղծեց,
որը պռոնկանալ է համարում նրանց համար,
Յապա ես ո՛րքան աւելի պատիժ պէտք է որ կրեմ,
Անմաքուրս, որ Աստծուն եմ հազել ներսից ու
դրսից:

Չարմանում եմ ես, թէ ինչպէ՛ս չեմ կիզում,
Շշմում, թէ ինչպէ՛ս չեմ այրում.

Ապշում, թէ ինչպէ՛ս չեմ հափշտակւում,
Տանջուելով, լքուելով, չարչարուելով ու
ջախջախուելով,

Մանրուելով, խորտակուելով, կտրուելով ու
կտոր-կտոր լինելով

Կորուսի ժանիքներից, ինչպէս որ գրուած է
Գրքում:

Բայց պահուած է ինձ միայն սա՛, որպէս յիշեցուցիչ
շող փրկարար յոյսի,

Թէ Քրիստոսեան Աւետարանը կեանք է ճշմարիտ,
Ինչպէս որ բառն էլ այ՛դ է ծանուցում.

Որով տրւում է՝ մեր մեղքերին դարձ,

Պարտքերին՝ շնորհում, եղծումներին՝

նորոգութիւն,

Քաւութիւն անօրէնութեան, բուժումն վերքերի,

Անդորրութիւն տազնապի, ներումն պատժի,

Հանդարտումն պատերազմի, անձրեւ՝ կրակի

վրայ,

Պատուհասի փոխարէն՝ պարգեւ,

Եւ սատակման տեղակ՝ շնորհի արժանացում,

Եւ կեանքի ազատութիւն՝ մահուան գործիքի
փոխարէն:

Ե

Բայց ինչո՞ւ յիշեմ այսքանն ու մէկ-մէկ թուարկեմ
այստեղ,

Անճառելիներն ի բաց թողնելով: -

Բարձրեալ Հօր յիշատակութեամբ մեր
կցորդութիւնը Որդու հետ,

Յանուն Միածին Որդու՝ ընտանութիւնը

Հօր հետ,

Եւ հաղորդումն Հոգու հետ՝ սրանց
սկնարկութեամբ.

Իսաչի փրկանքը եւ սփոփանքը խօսքի,

Ամենագէտի կշռով յօժարակամ վարձատրումն
բարվոք,

Աւագանը կենդանարար, որպէս միջնորդ
հաշտութեան,

Եւ այլ բարիքներ անթիւ, անհամար՝ բարերարիդ
կողմից կուտակուած,

Որ գերծ են լծից եւ հարկից ազատ,

Իշխող են եւ ո՛չ իշխանութեան տակ:

Սրանք են ահա, որ մահուան դառնութեան մէջ
ինձ անտարակոյս կեանք են աւետում.

Չի եթէ սրանք եւ չունենայի, դեռեւս վաղո՛ւց
կորած էի ես,

Իսկ եւ իսկ, ինչպէս երգողն է ասել:

Որդուն փոքրացնելով չէ, որ ես փառաւորում եմ
Հօրը,

Եւ ոչ էլ Հոգին նուաստացնելով՝

Որդուն եմ տալիս նախապատուութիւն,

Այլ դաւանում եմ երեքն համափառ՝ նոյն
արարչութեամբ:

Ամենակալ, բարերար եւ մարդասէր
 Աստուածըդ ամէնքի,
 Երեւացողների, աներեւոյթների արարիչ,
 Փրկող եւ զօրացնող, խնամող եւ խաղաղարար,
 Հոգի հօր չօր,
 Արդ՝ աղերսում ենք քեզ բազկատարած
 Մենք ահաւորիդ առջեւ, գոչելով,
 Մաղթանքով հեծութեան,
 Մաստիկ դողալով եւ երկիւղով մեծ
 Մօտենում ենք անգննելի զօրութեանըդ
 մատուցելու

Նախ՝ պատարագը մեր այս բանական,
 Իբրեւ հայրական անսասան պատուին
 Աթոռակցի եւ փառակցի, արարչակցի,
 Եւ քննողի՝ գաղտնիքները խորածածուկ,
 Կատարեալ կամքի Էմմանուէլ չօր՝
 Քեզ առաքողի, բոլորի փրկչի,
 Կենդանացնողի եւ ստեղծողի:
 Քո միջոցով մեզ ծանուցուեց միասնական
 աստուածութեանդ

Անձնութիւնը միասնական Երրորդութեան:
 Քեզանով եւ քո միջոցով շառաւիղները առաջին
 Նահապետաց, որ տեսանող անուանուեցին,
 Անցեալներն ու գալիքները,
 Եղածներին ու չգոյացածներին
 Անպանոյն խօսքով վերապատմեցին:
 Քեզ Մովսէսը Աստծոյ Ոգի ճանաչեց,
 Որ ջրի վրայ քո ընթանալով,
 Զօրութիւն անսահման,
 Հոգածու հօր հովանաւորմամբ
 Պաշտպանելով թեւատարած,
 Գթասիրելով նոր ծնունդներիս՝
 Պարզեցիր խորհուրդը գաւազանի,
 Որի օրինակով վերջին վարագոյրի

Հոսուն մանուածը ստեղծելուց առաջ,
Տիրապէս կարող,
Անելութիւնից՝ բոլոր գոյերի ու էակների
Բնութիւնն ամբողջ ստեղծագործեցիր:
Քեզանով բոլոր արարածները
Պատրաստուում են նորոգուելու Յարութեան
Ժամին,

Որ մեր այս կեանքի օրն է յուսկ վերջին
Եւ օրն առաջին՝ ողջերի երկրի:
Քո ազգակիցը յօժար միութեամբ
Հնազանդուեց քեզ՝ իբրեւ իր Հօրը:
Հօր էակիցը, անդրանիկ Որդին՝
Մեր կերպարանքով, քո գալն աւետեց,
Ճշմարիտ Աստուած՝
Հաւասար ու համագոյ Հօրը հօգօր,
Քեզ հայիոյելն անքաւելի համարեց,
Քեզ հաստելով՝ ըմբերանեց չարախօսներիին,
Եւ ներեց արդար ու անարատ գտիչն ամէն ինչի,
Որ մեր մեղքերի համար մատնուեց
Եւ յարութիւն առաւ՝ արդարացնելու մեզ:
Փառք նրան քո միջոցով,
Բարեբանութիւն քեզ՝ ամենակալ Հօր հետ
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Է

Վերստին կրկնեմ խօսքի նոյն կարգով, մինչեւ որ
ազդմամբ հաւաստի լոյսը յայտնուի հրաշապէս
վերաւետելու նոր խաղաղութիւն:
Արտասուալից հառաչելով՝
Աղաչում եւ աղերսում ենք
Արարչութեանդ՝ փառաւորուած բոլորի կողմից,
Անեղծ, անստեղծ եւ անժամանակ գրթած Հոգուդ,
Որ մեր անմռունչ հեծութիւնների
Բարեխօսն եւ ողորմած Հօրդ առջեւ,

Որ պահում ես սրբերին
Եւ մաքրագործում յանցաւորներին,
Եւ տանարներ ես կանգնեցնում
Բարձրեալ Հօրդ կենդանի ու ապրեցնող կամօքին:
Արդ՝ ազատիր մեզ անմաքուր բոլոր գործերից,
Որ հաճելի չեն քո բնութեանը,
Թող չմարի փայլը լոյսիդ շնորհների
Մեր աչքերի հայեցումից,
Որովիտեսել իմացանք՝ կմիանաս մեզ,
Թէ յար աղօթենք եւ ապրենք ընտիր, ինկելի
վարքով:

Եւ քանզի մէկըդ Երրորդութիւնից պատարագւում
է,

Միւսն ընդունում՝
Իր անդրանիկի հաշտարար արեամբ
Դառնալով դէպ մեզ,
Դու կընդունես մեր պաղատանքները
Եւ կյարդարես մեզ օթեւաններ՝
Պատուական, բոլոր յարմարանքներով,
Երկնաւոր գառանդ ճաշակումը վայելելու,
Որպէսզի առանց դատապարտող պատիժների
ընդունենք

Նոր կեանքի փրկութեան անմահարար այս
մանանան:

Եւ թող հալչի մեր գայթակղութիւնն այս հրից,
Ինչպէս մարգարէն կենդանախարոյկ կայծակմամբ
Ունելիով մատուցեց,
Որ ամենուր քարոզուի քո գթութիւնը,
Ինչպէս Աստծոյ Որդւով՝ Հօր քաղցրութիւնը,
Որ անառակ որդուն մօտեցրեց հօր
ժառանգութեանը

Եւ պոռնիկներին առաջնորդեց
Արդարների երանութեան երկնային
արքայութիւնը:

Ը

Այո, այո, մէկն եմ ես նրանցից,
Ինձ եւս ընդունիր նրանց հետ
Որպէս մեծ մարդասիրութեան կարօտածի,
Քո շնորհներով փրկուածի,
Քրիստոսի արիւնով գնուածի,
Որ այս ամէնի մէջ եւ ամէն ինչում
Երեւայ քո աստուածութիւնը:
Հօր հետ փառաւորուած համապատուօրէն,
Մի կամք եւ մէկ իշխանութիւն գովական,
Որովհետեւ քոնն է գթութիւնը,
Եւ կարողութիւնը, ե՛ւ մարդասիրութիւնը,
Զօրութիւնն ու փառքը՝
Յաւիտեանս յաւիտենից:
Ամէն:

ԲԱՆ ԼԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Սրանք են ահա իմ թշուառացած շնչի իղձերը եւ
դաւանանքներս քեզ յարմարական,
Քեզ, որ ամէն ինչ բովանդակում ես խօսքով,
Տէ՛ր Աստուած,
Ինչ որ ճառել եմ նախորդում՝ այստեղ պարզեմ
պիտի եւ երկրորդ անգամ:
Իսկ խուռն բազմութեան առջեւ գրաւոր
բեմախօսութիւն
Կամ ժողովրդին մեկնաբանումներ անելու համար
Այս աղերսական աղօթքները ես նուէր բերեցի,
Որոնք հետեւեալ գոհաբանական տողերի մէջ եմ
շարադրել ահա. -

Բ

Աղաչում եմ անփոփոխելի եւ ամենազօր
տերութեանը հզօր հոգուդ,

Ուղարկիր ցողը քո քաղցրութեան եւ բարեգործի՛ր,
Դիոշմելով հոգուս եւ զգայութիւններիս իշխող իմ
մտքում

Ամենալից շնորհը քո բազմապարզեւ
ողորմութեան:

Հերկի՛ր մարմնեղէն կարծրացած սրտիս բանական
անդաստանը,

Որ կարող լինի պտղաբերելու սերմդ հոգեւոր:
Խոստովանում եմք՝ քո ամէնիմաստ էութեամբ է,
որ

Ծաղկում են մեր մէջ, աճում-ուռնանում
պարզեւներն ամէն:

Դո՛ւ ես ձեռնադրում առաքեալներին ու
մարգարէներին ներշնչում,

Ուսուցանում ես վարդապետներին ու համրերին
խօսեցնում,

Բացում խուլերի ականջները փակ:
Ազգակիցը քո, էակիցը Հօր անդրանիկ որդին
Քո գործակցութեամբ իրագործելով այս բոլորն
ահա,

Քեզ Հօր իսկութեան հաւասարակից
Աստուած հռչակեց:
Ծնորի արա՛ նաեւ ինձ՝ մեղաւորիս, որ ես էլ խօսեմ
համարձակութեամբ

Կենդանաբար խորհուրդն աւետեաց
Աւետարանիդ,

Արագաթռիչ մտքի ընթացքով անցնելով անհուն
ասպարեզներով

Քեզնից ներշնչուած կտակարանների:
Եւ երբ ձեռնարկեմ ես հանդիսաւոր
մեկնաբանութեան՝

Հասնի՛ թող որ քո գթութիւնը նախ, իր

Ժամանակին ներշնչելով ինձ՝
Քեզ արժանին, պիտանին եւ հաճելին՝
Քո աստուածութեան փառքի եւ գովեստի,
Ինչպէս նաեւ կաթողիկէ Եկեղեցու կատարեալ
շինութեան համար:
Երկարի՛ր ինձ վրայ աջդ ամենամերձ
Եւ զօրացրո՛ւ ինձ գթութեանդ շնորհներով.
Փարատի՛ր իմ մտքից մոռացութեան մէզը միջին,
Յրելով նրա հետ ե՛ւ խաւարը մեղքի,
Որպէսզի մտքով եւ խոհերով այս երկրաւոր
կեանքից ի վեր բարձրանամ:
Լուսաւորի՛ր դու վերստին իմ մէջ, ո՛վ գերահօգօր,
Աստուածային հրաշալի գիտութեան ծագումն
անստուեր,
Որպէսզի արժանի լինեմ ուսանելու եւ
ուսուցանելու,
Որպէս բարի օրինակ՝ աստուածասէր յտղներին:

Գ

Խոստովանում, դաւանում ենք,
Պաշտում ենք ու երկրպագում
Ամենասուրբ Երրորդութեան
Միասնութիւնը գուգափառ.
Անճառելի աստուածութիւն,
Մշտաբարի եւ նոյնագոյ համապատիւ,
Մտքի սլացքին անհասանելի
Վեր՝ ամէն մի օրինակից եւ բարձր՝
նմանութիւնից,
Որ գերազանց է անպարագիր
բացարձակութեամբ,
Առաջ՝ քան հիմքը յաւիտենութեան,
Դեռ չստեղծուած, չտարրացած էակներից,
Անթարգմանելի օրինաբանութեամբ
Ամենահարուստ մեծութեամբ յաւէտ պսակուած,

Ժամանակները սահմանող,
Ժամանակի մէջ կերպ առածների
Հօրինող-պատճառ,
Տեսանելիներն ու անտեսները ստեղծող
Ո՛չ անուամբ է չափուում,
Ո՛չ հորջորջմամբ է նշանակելի,
Ո՛չ որակով նմանուած
Եւ ոչ կշռած քանակով:
Չի ձեւանում օրինակով,
Չի ճանաչուում որպիսութեամբ,
Տարածուած չէ թերութեամբ,
Ամփոփուած չէ լրութեամբ,
Երբեւէ չէ գրաւուած
Եւ կամ մի տեղ ամփոփուած:

Դ

Հայր գթութեան, ամէն ինչի տեր,
Աստուած բոլորի, որ երկնքում են եւ երկրում,
Բացի Բանից միակ, որով իրենն է ամէն ինչ,
Բոլոր շնչերի տուող ու ստեղծիչ,
Բացի իսկակից հոգուց,
Որով համայնը կազմեց:

Ե

Մէկը երեք անձնաւորութիւնից՝
Երջանկափառ համագօր ահաւորութիւնից,
Այն վերելներից խոնարհուեց ներքեւ,
Որ ի սկզբանէ անբաժան էր ներքեւիներից,
Մնալով անբաժան փառքի աթոռից
Եւ անկարօտ իր ծնողի տեսութեան,
Պարզաբար մտաւ կոյսի արգանդը,
Այնտեղից ելաւ՝ մարմին առնելով անբաժանելի,

Լիակատար մարդ եւ անպակաս աստուածութիւն:
Միակ Որդին միակ Հօր
Եւ Միածին անդրանիկը
Աստուածամայր տիրածին կոյսի:
Իրական երկրածին մարդ եղաւ՝ լինելով արարիչ,
Բայց նման չէր նա երկրածիններին,
Այլ նոր ու ջքնաղ
Թագաւորներին հրաշափառ,
Չտեսնուեց նա դարերում
Եւ չպատահեց ժամանակներում,
Ըստ Սաղմոսողի եղաւ անդրանիկ
Թագաւորների ամբողջ աշխարհի:
Մարմնում մեր բնութեամբ կերպ առաւ անապակ
խառնմամբ,
Հոգու եւ մարմնի յարաբերութեամբ,
Ոսկու եւ հրի,
Կամ աւելի պարզ՝
Լոյսը օդի հետ,
Անփոփոխ եւ անանջատ:

2

Նա եկաւ կամաւ խաչին մեռնելու,
Յանց անարատ գառ զոհուելու գնաց,
Եւ մի գօրաւոր ինքնիշխանութեամբ
Փրկագործեց իր արարածներին:
Երբ կենդանի էր՝ չարչարուեց իրօք
Եւ գերեզմանուեց՝ աստուածութիւնից
անբաժանելի:
Եռօրեայ թաղմամբ
Այն դժոխական սանդարամետում վիատ
բանտուածներին
Քարոզեց նորոգում եւ լոյս:
Եւ աւարտելով փրկագործ ամբողջ
Խորհուրդը իր մարդեղութեան՝

Վերակենցաղեց նա աստուածաբար:
Հողմերի թելով քերովբէների վրայ բարձրացաւ:
Ծածկուեց ամպով անքննելի:
Եւ ամբողջ երկնից վեր բարձրանալով
Ճոխութեամբ բազմեց սկզբնաժառանգ
Հօր աթոռին հաւասար,
Որից բնաւ չբաժանուեց,
Ձեռքքերովին չկորցնելով,
Չնուազեցնելով սեփականը:
Որով եւ գալու է դատաստանին յատուցման
Արդար իրաւանց չափով կշռելու գաղտնիները,
Որին սպասում ենք,
Որին՝ աղօթում,
Հաւատալով՝
Ամէն ինչում, ամէն ինչով
Ամենակալ տէրութեանն իր,
Որ իսկապէս մէկն է միայն այն միակից
Եւ միակի փառակցութեամբ՝
Յաւիտեանս երկրպագուած:

Է

Մշտապէս օրհնում, բարեբանում ենք
Հօր եւ Որդու հետ
Նրանց էակից Հոգուն:
Նա ամենագօր,
Կատարեալ եւ սուրբ եւ ճշմարիտ է,
Որ արարածներ ստեղծեց անէից,
Ինքնագործ է եւ իշխանակից միւս երկուսին՝
Անեղծ, անսահման թագաւորութեամբ,
Պատճառն առաջին, ահաւոր Բանը
Նոյն այդ ինքնութեան,
Նոյնն է նաեւ բարձրացած Հոգին:
Բարի ինքնակալ,
Հօր պարգեւները ամէնքին բաշխող՝

Յանուն Միածնի փառքի պանծացման,
Որ սահմանեց օրէնքները,
Ներշնչող եղաւ մարգարէներին,
Առաքեալների մէջ տպաւորուեց ազգակցի
փշմամբ:
Աղանակերպ Յորդանանում յայտնուեց,
Եկողի փառքի մեծութեան համար,
Եւ աւանդական գրքերում փայլեց,
Հանճարեղացրեց եւ զօրեղացրեց
իմաստուններին,
Վարդապետներին կատարեալ դարձրեց,
Օծեց արքաների, օժանդակեց թագաւորների,
Վերակացուներ տուեց, փրկութիւններ
կարգադրեց,
Ձիրք շնորհեց, քաւութիւններ հանդերձեց,
Քրիստոսի մահուամբ մկրտուածներիս
Իր բնակութիւնը մաքրագործեց,
Որին Հօր եւ Որդու հետ
Նաեւ սուրբ Հոգին ներգործեց
Եւ ինքն Աստուած է՝
Խնկուած տիրապէս
Ամենայնը եւ ամենայնի մէջ:

Ը

Երրորդութեան մէջ նախորդ յիշուողը
Մեծ չէ միւսից,
Նուաստ չի լինում իր նմանակցից յետոյ յիշուելով,
Կամ մէկին ակնարկելիս դէմքի շփոթում չի լինում
Եւ երեքի տրոհմամբ առանձին դէմք չի դառնում:
Եւ չէր մեծարուի Հայրն ամէն ինչով՝
Իր մէջ չունենար Բանի զօրութիւն,
Եւ կամ չունենար թէ Հոգին իր հետ՝
Անշունչ, անկենդան մէկը կլինէր
Եւ կնուազէր ամէն յորդորից:

Բանը եթէ չճանաչուի Հօր անուամբ՝
Մի որք կլինի, [կլինի] լքեալ
Սերած ինչ-որ մի մահկանացուից:
Նոյնպէս եւ Հոգին
Նշանակալից պատճառ թէ չունի՝
Անշուք ինչ-որ բան կլինի միայն,
Թափառիկ իբրեւ անդասելի շունչ:

Թ

Բայց եթէ մէկը փորձի բաժանել
Հօրը իր Որդուց,
Հականառելով, թէ նախ նա չկար,
Կամ բամբասանքով մի անբանական
Պատուել ցանկանայ վեհ մեծութիւնը,
Եւ կամ բխողին նսեմ համարի
Իբրեւ էապէս ոչ հոգեւորի՝
Այդպէս այլ, օտար մի բան է մուծում
Կամ այլայլական ինչ-որ շփոթում
Սուրբ Երրորդութեան անարատ պատուին,
Այդպիսիներին հաւատոյ բանի պարսաքարերով
Հերքում ենք, դուրս ենք վտարում
Իբրեւ գազանի կամ դժնի դեւի,
Նգովում նրանց, նրանց դէմ փակում
[Սուրբ] եկեղեցու գաւիթը, որ եւ
Դուռն է կեանքի:
Ուստի փառք տալով Երրորդութեանը՝
Որպէս մէկ եւ նոյն տէրութիւն,
Ամբողջական ու հաւասարագօր,
Չուզածայն սրբասացութեամբ, համարժէք
հարթութեամբ,
Օրհնեալ, փառաբանեալ երկնքում ու երկրում,
Անդրանիկների խմբից եւ երկրածին
բանականներից
Յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ժ

Արդ, այս մատենանում պատկերուած ծածուկ
խորհուրդների բարձրաձայն խոստովանութիւնը
Մեծ Աստծուդ ամենալուր ականջներին ընծայեցի
ես,

Եւ ահա նրանով սպառագիւնուած՝ մտայ
ասպարեզ:

Բայց ոչ թէ նրա համար, որ կարօտ լինելով
ձայնիս՝ նրանով մեծանաս, -

Չի երբ տակաւին չէիր ստեղծել դու ամենայն ինչ,
Երկինքը անմահ փառաբանելով

Եւ երկիրը՝ հողաստեղծ բանականներով,

Դու փառաւորուած էիր արդէն քո լրութեան մէջ, -

Այլ, որպէսզի ինձ՝ մերժուածիս նոյնպէս, անճան
քաղցրութիւն,

Արժանի անես քեզ ճաշակելու՝ խօսքիս
հաղորդութեամբ:

Սակայն ի՞նչ պէտք է, որ կեանքի կանոն- արքունի
հրամանիդ համաձայն ասեմ՝

Ադոնա՛ տէր,

Եւ հրամայուած պատուէրդ չկատարեմ,

Ես, որ իմ ձեռքով իսկ ջնջեցի ինձ, -

Պատգամիդ նուիրուած ոսկեղէն տախտակս
խօսուն,

Աստուածային մատներովդ գրուած, եւ որը
խորտակելն է իրաւացի.

Եւ ես այժմ նրա նմանութիւնն երկրորդ՝
տիրատեսիլ մուրով եմ պատկերում:

Բայց, քանզի բազում խանդաղատանքով
պաղատեցի քեզ, -

Որոնք չեն գրուած թէեւ այս գլխի տողերի
շարքում, -

Լսիր, բարեգութ, այս խօսքերի հետ նաեւ բոլորը:

Թող աղերսագին այս աղօթքներս էլ յօդուեն
նրանց հետ,

Թերեւս մաքուրների եւ քո կամքը կատարողների
կողմից

Իւղով շաղախուած եւ մէջը խորիսխ բաղարջի
նման

Հացն այս նուիրուած՝ դրուի քո փառքի սեղանի
վրայ:

ԺԱ

Բայց դու, բարերար, համակ մարդասէր,
Քրիստոսդ մի՛ միակ Աստծոյ, հօր եւ ամենակալ,
Որ գերազանցում ես քաղցր ու խնամածու քո
գթութեամբ

Ոչ միայն ինձ գոյակից մարդկանց առհասարակ,
Որք ենթակայ են խռովումների եւ բազմապիսի
հակառակութեանց՝

Այլեւ անարատ հրեշտակներին,
Եւ սրանցից էլ նոյնիսկ ասելի՝ սրբասուններիդ
անբիծ, անբասիր,

Որոնցից մէկն էր նաեւ Եղիան, որի խստութեան
նշանները

Երեք ձեռով երեսն եկան Քորեբ լեռան վրայ՝
Շարժով ահագին, կրակով կիզիչ, եւ ուժգին
հողմով:

Իսկ քո հեզութիւնը երկայնամիտ յայտնուեց
մեղմիկ օղի քաղցրութեամբ, հանդարտաբարո.

Չի ողորմութիւն ես կամենում դու միայն ու միայն,
ինչպէս գրուած է:

Թէեւ մարդկային սերնդից ոմանք գեղեցիկ
վարքով

Առաքինաբար այլ նմանութիւն առան երկնային,
Սակայն երկրածին են նրանք նոյնպէս՝
մարդկանցից ընտրուած:

Իսկ դու չես կարող չարանալ, զի բարի ես
խկութեամբ,

Համօրէն օրհնեալդ, համա՛կ փրկութիւն,

Լիովին հանգիստ եւ անդորրութիւն
ընդհանրական,
Դեռ առողջարար՝ ախտաւորների համար
համօրէն,
Կենդանի ջրի աղբյո՛ւր դու վճիտ, ըստ Երեմիայի:

ԺԲ

Դարձի՛ր դէպի ինձ եւ ողորմի՛ր, անկարո՛տ
Աստուած,
Դու, որ այնքան՝ ծարաւի եւ ու պապակ իմ
փրկութեանը,
Որ մինչեւ անգամ երկնային անմահ եւ
օրհնաբանող զուարթուններին պաշտօն յանձնեցիր
Յանուն մարդկութեան փրկութեան կարգուած
Քահանաներ եւ քաւչապետներ յաւիտենական ի
դիմաց մեր երկնաւորների,
Թշուառ լքեալիս հաշտութեան համար պաղատելու
քեզ մշտնջենապէս, -
"Ողորմի՛ր Երուսաղէմին". որը լուսաւոր մի
խորհուրդ ունի,
Թէ այս երկրաւոր Երուսաղէմի սոյն օրինակով
խնդրում են նրանք
Քո մեծ յայտնութեամբ ողորմել վերին
Երուսաղէմին,
Եւ քեզ կցորդուած մարդկանցով՝ ընկած
հրեշտակների դատարկը լցնել:

ԺԳ

Արդարեւ լսեցիր դու, բարեգո՛ւլթ, անսացիր,
թագաւո՛ր,
Ունկնդրեցիր, կյանք եւ յոյս, ի միտ առար,
երկնաւո՛ր,

Յարգեցիր, հզօր, նկատեցիր, ծածկագե՛տ,
Տեսար, խնամակա՛լ, կարեկցեցիր, անպատո՛ւմ,
Խոնարհեցիր, մի՛շտ բարձրեալ, նուաստացար,
ահաւո՛ր,

Յայտնուեցիր, անճա՛ռ, ամփոփուեցիր,
անսահմա՛ն,

Չափուեցիր, անքնի՛ն, թանձրացար, ճառագա՛յթ,
Մարդացար, անմարմի՛ն, շոշափուեցիր,
անքանա՛կ,

Կերպաւորուեցիր, անորա՛կ,

Կատարեցիր իսկապէս բաղձանքն աղաչողների:

Չուարթունների բերանով եղար թշուառիս՝

Բարի, բարեխօս, միջնորդ կենդանի,

Պատարագ անմահ, սպանդ անվախճան,

Նվեր մաքրունակ, ողջակեզ անձախ, բաժակ

անսպառ:

Ուստի, ողորմած, մարդասէր, օրհնեալ,

Քո կենդանատու կամքով թող որ միշտ

բարեբախտ լինի հոգիս մեղաւոր,

Գովեա՛լ երկայնամիտ, քեզ վայել է փառք

յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, Տէ՛ր զօրութեանց, մեծութիւն ահեղ,

Անտարակոյս տեսողութիւն, կամք

ամենարնդարձակ, առատությո՛ւն անպակաս.

Ո՛վ կկարողանայ պարերգութեան հանդէտով

պատուել ցողի մէկ կաթիլը քո բարութեան,

Դո՛ւ, որ հետամուտ ես միշտ միջոցներ գտնել իմ
փրկութեան համար:

Եւ դեռ աւելին պիտի գրեմ, որպէսզի պատմուի
գալոց:

Հրեշտակասէր չանուանուեցիր դու, որ հիմնեցիր
պետութիւնները նրանց:

Ոչ էլ ասացիր երբեւիցէ, թէ սիրում ես երկինքն իր
ջահերով,

Որոնք քո մատներով յօրինեցիր դու.

Այլ ի պատիւ քեզ՝ մեծագոյն գովութեան արժանի՝
մարդասիրութիւնը գերադասեցիր,

Որով կրկնակի՝ մեծացրիր դու քո անունը անճառ
տակալի խորհուրդներով:

Լուսակերպարան երկրայիններին այն՝
սպասաւորներ կոչեցիր

Եւ յատուկ մատակարարումների վերակացուներ.

Իսկ երկրածիններիս մահկանացու՝

Պերճացրիր դու տիրական եւ աստուածային քո
պաշտելի անուամբ.

Ամէն սահմանից, կշռից ու չափից վեր քո

ծայրագոյն բարութեան մարուր ծորումի համար

Կտակներ անթիւ եւ անբաւ ճառեր յօրինուեցին
քեզ:

Դու եւս, մէկն աստուածային էութիւնից,
մարդանալով,

Ոմանց՝ իրենց համար, եւ ոմանց՝ այլոց,

Չեղեցիր կեանքի պարգեւներ առատ, պէս-պէս
հրաշքներ,

Սքանչելիքներ աստուածագործ եւ նշաններ
նշմարտատեսիլ:

Եթէ գթալով դու ողորմեցիր թերահաւատ
անդամալոյծին,

Տեսնելով, որ նրան խնամողները յոյսով են դիմում
քեզ,

Ո՛րքան աւելի զօրաւոր պիտի լինի քո խօսքը
ամենակարող

Մաքրելու համար մարմինն ախտալից քեզ
հառաչագին աղաղակողիս:

Քանզի արդարեւ շատ անելի մեծ հրաշք է սրբել
անմաքուր հոգին,

Քան թէ լուացուած պատկերը աղտին դարձնել
անենթակա.

Մանաւանդ որ աւագանի շնորհն անելանալով
երկրորդի վրայ`

Է՛լ անելի է բարձրացնում հայրենի փառքն անճառ:

Բ

Դո՛ւ ես, Տէր, որ մաքրում ես մեզ,

Ինչպէս առաջուց ցոյց տուեցիր դու

Մովսէսի վրայ` քո ընտրեալի:

Դու վերակացու եղար Յակոբի տոհմին,

Նրա մեղքերի եւ անօրէնութիւնների մէջ,

Երբ Եգիպտոսում` հեթանոսական խաւարում
նրանք խարխափում էին:

Դո՛ւ ես լուսաւորում մեղաւորներին իրենց
ընթացքի մէջ, ըստ երգող Դաւթի:

Դո՛ւ ես, որ սրտի քարեղէն կարծրութիւնը
փոխարկում ես մարմնի կակղութեան,

Որպէսզի կարող լինի քո խօսքն իր մէջ ընդունելու:

Դո՛ւ ես, որ կարող ես ընձեռել այլ սիրտ եւ մէկ
ճանապարհ`

Երկնչել քեզնից կեանքի բովանդակ տեսողութեան
մէջ:

Դո՛ւ ես, որ խստամիտների մէջ դնում ես քո
երկիւղը միշտ,

Որպէսզի հաւատքով ուշք դարձնեն քեզ,
մարգարէների խօսքի համաձայն:

Գ

Քո աշխարհաստեղծ բերանի օրհնեալ
շրթունքների աստուածեղէն անձրեւների կաթիլը
կենարար,

Որպէս բանալի՝ լսելիքներիս դռանը մօտեցրու,

Որով խորամանկ բանասարկու օձի թոյնը վերցնես
ու բժշկեն դու:

Քո ամենակալ ձեռքով բռնիր շարժուող գործիքն
իմ խօսողութեան,

Եւ ազդի՛ր նրան ձայնի զօրութիւն,

Դո՛ւ, որ տալիս ես լեզու բոլորին՝ ընտիր խօսելու.

Որպէսզի ես էլ, դաստիարակուելով

պատշանապէս,

Չլինի, որ մեր նախահօր նման հանդուգն

խօսելով՝ գրկուեմ քո լոյսից,

Եւ անբանութեան դատապարտուեմ՝ որսողից
քշուած:

Քո կենդանաբաշխ աջը երկարելով՝

Լուսաւորի՛ր վերստին խաւարած աչքերն իմ
հոգու,

Որ չլինի թէ վիշապի շնչով մարելով լապտերն
համարձակութեան՝

Գրվանի ներքոյ մնամ ծածկուած:

Վերցրո՛ւ անօրէնութիւններն իմ,

Տէ՛ր, եւ նետիր նրանք խորքերը ծովի,

Որ փոքր է անչափ քո անսահման մեծութեան
համեմատութեամբ,

Ուր իմ մեղքերը կարող են սուգուել, ըստ
մարգարէի:

Կործանուած հոգուս համար կանգնիր նշան
վստահութեան,

Որ չլինի թէ կառուցուելով վիատութեան կոթող՝

Ծածկուածները հրապարակ հանի բարձրաձայն:

Բա՛ց բժշկարանիդ կենաց վարդապետարանը,
հզօ՛ր եւ գթած,

Որպէսզի մեր մէջ կորուսչի ցանած, մշակած բոլոր
որոմները չար՝

Կամքիդ մանգաղով ընդհուպ արմատից հնձես ու
թափես:

Դ

Երբ Պետրոսի պէս քայլերս ուզեցի ուղղել դէպի
քեզ, Աստուած բոլորի,

Սուգուեցի եւ ես այս աշխարհային մեղսածուփ
ծովի ալիքների մէջ,

Մօտեցրու աջը քո ազատարար, օգնելու համար
ինձ՝ սասանեալիս,

Քանանուհու հետ ձայնակից՝ ե՛ս էլ սրտիս
խորքերից

Պաղատում եմ քեզ, ահա, սովահար որսորդական
շան նման կաղկանձող.

Քո բազմազեղուն ու ճոխ սեղանից բաժին հան եւ
ինձ՝ թշուառ սովեալիս,

Որպէս ապրուստի կերակուր տալով փշրանքներն
հացի:

Փրկի՛ր նիւթեղէն խորանն իմ, ո՛վ դու,

Որ աշխարհ եկար փնտրելու կորածին եւ
սայրեցնելու:

Չի քո է մեծութիւն, յաղթութիւն եւ զօրութիւն.

Դո՛ւ ես քաւութիւն եւ բժշկութիւն, նորոգութիւն եւ
երանութիւն.

Եւ քեզ է վայելում փանձք, երկրպագութիւն
յաւիտեանս. ամէն: ...

... վայելում փանձք, երկրպագութիւն յաւիտեանս.
ամէն:

ՔԱՆ ԼՉ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Որքան էլ շատ լինեն մեղքերս,
Շնորհիդ փրկարար արդիւնքներն անթիւ
Եւ հանդիսադրումն այն չարչարանքների, որոնք
յանձն առար՝

Գերազանցում են նրանց միշտ իրենց
առաւելութեամբ:

Հոգիներն համայն իր մէջ ամփոփող աշդ
արարչագործ

Մահուան գործիքի՝ Խաչի նշանի վրայ գամեցիր,
Որպէսզի կամքիդ դէմ երկարող ձեռքս թուլացնես:

Համընթաց քո գոյգ ոտքերդ ազատարար

Իմ անսանձութեան պատճառով պատժարանի
փայտին կպցրիր,

Որպէսզի զսպէս դու գթածարար վայրագութիւնը
փախչող թշուառիս:

Բ

Չիրամայեցիր, որ քո օրհնեալ գագաթը
կռփողների ձեռքը գոսանար,

Դու, որ քարերի կարծրութիւնը ճեղքեցիր, -

Որպէսզի այդ օրինակով՝ եւ ի՛նձ ներելդ կանխաւ
աւետես:

Քեզ՝ խոստովանուած Աստծուդ գանող
անպիտաններին չսպառնացիր,

Դու, որ արուսեակը մթնացրիր-

Որ մահացածիս բարութեամբ հանդերձ հանգիստ
չնորհես:

Հայիոյիչների չարախօս բերանը չչորացրիր,

Դու, որ լուսնի պատկերը արեան երանգով

գունաւորեցիր, -

Որպէսզի քեզ գովելու համար անհամարձակ
լեզուս զօրացնես:

Չաստեցիր քեզ նախատողների մոլեգնութիւնը,

Դու, որ տարերքն անգամ սասանեցիր, -

Որպէսզի թշուառ գլուխս գթութեանդ օծումով
իւղես:

Քեզ մոլորեցուցիչ անուանող
աստուածասպանների ծնոտների յօղուածներն
իրարից բաժանելով չխախտեցիր,

Դո՛ւ, որ քարերի կարծրութիւնը ճեղքեցիր, -

Որպէսզի բարուց դատարկ իմ հոգին

ընդունայնութեան յօժարութիւնից հանդարտեցնես:

Պահապանների սրերը իրենց ընդերքը չմխեցիր,

Դո՛ւ, որ օձի որովայնը հողի վրայ սողալուն

մատնեցիր, -

Որպէսզի ոսկորներն իմ տառապեալ մարմնի, իբր
զանձարանում պահուած՝

Հարութեան կենացն արժանացնես:

Երբ կենդանակիր քո գերեզմանի տապանաքարը
կնքում էին,

Նրանց տեղնուտեղը թիկունքի վրայ
պառկեցնելով՝ երկրի անդունդները չսուզեցիր,

Որպէսզի հոգուս տապանակի մէջ լոյսիդ նշխարը
հանգչեցնես:

Երբ քեզ կորած եւ իբրեւ երկրաւոր մարմին
գողացուած էին համբաւում,

Դո՛ւ՝ համայնաջինջ եւ սպառսպուռ չկրճատեցիր
նրանց սերունդները,

Որպէսզի եւ ինձ, բարուն հետեւող յիշատակուելու
անարժանիս իսկ

Անկորուստ կերպով, անվնասելի՝ փրկուածներին
մասնակից դարձնես:

Երբ ուրացողները մոլեգնաբար, որպէս
մատնութեան անարգ գրաւական՝

Քո հօր տաճարի զանձարանից մաս էին հանում,

կաշառք տալով արծաթ կրկնակապեն՝
Չդարձրիր նրանց դու քարէ արձան,
Նման՝ Մովսրի տատին պատահած այն հին
հարուածի, -

Որպէսզի եւ ինձ՝ հաստատութեանս մէջ
վրիպեալիս

Եւ մահուան իշխանութեանը վանառուածիս
թշուառ՝

Արեամբ քո փրկելով՝ հաստատուն վեմիդ վրայ
կառուցես:

Օրհնեա՛լ ես կրկին, օրհնեա՛լ վերստին,
Ամէն ինչի մէջ միշտ օրհնաբանուած՝ յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԼԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, թէպէտեւ իմ բարու համար քո ինձ
շնորհած վերոյիշեալ պարգեւներից

Շատ քչերն այստեղ ես գրի առա,

Ո՛վ ամենագութ բարերար, զովեալ եւ ամենագօր,

Բայց եւ այնպէս՝ նրանք արքայագուլուններ են եւ
ինքնակալ իշխաններ,

Չօրութեան որդիներ են նրանք եւ վեհածիններ
մեծափառ, լուսանորոգ եւ հրաշապատիւ,

Որոնք հոշակուած են բարձր բռնած յաղթական
դրոշներով՝ պասկապանոյն գեղագարդուած,

Բերելով իրենց հետ անթիւ օրհնաբան,
քաղցրահամբոյր եւ հեզ,

Երջանիկ խաղաղասէր եւ աստուածահաճո
պետութիւնները այն վերին նահանգների,

Որոնց վերաբերմամբ աղօթեց մարգարէն՝ ասելով.

"Տէ՛ր, զօրութիւններիդ արթնացրու եւ մեզ փրկելու

փութա՛",

Դրանք ասելի զօրաւոր են հալածելու մեր մեղքերը
Եւ հալելու ու հեռացնելու կարկուտն
անյուսութեան,

Քան թէ զօրապետը նախամարտիկ՝ երկնային
պարի -

Գիշերավարը այն խաւարասէր, որը առաջին
հակառակորդն էր բարի Աստծուն:

Անհնար է թուել այն բոլոր շնորհները, որոնք
բարձրեալի կողմից

Անձրեւեցին տկարիս, թշնամուս եւ աստրախտ
ծառայիս վրայ:

Իսկ եթէ ոք համարձակուի խօսել կարողանալ,
ամբողջը թողած՝

Շատ քիչը պիտի կարենայ յիշել այդ շնորհներից:

Դրանց հետ նաեւ մտաբերելով առաջին նիւթը,
որից ստեղծուեց,

Իբրեւ մի տկար եւ նկուն՝ հերքուած մեծ
զօրութիւնից պիտի պարտուի:

Բ

Սակայն, թեպէտեւ այսպէս գրեցի,

Եւ դարձեալ նոյնը պիտի վկայեմ հողիս թերահաս
խակութեան

Եւ ստեղծողիդ կատարելութեան ու բարիքների եւ
իմ անարժանութեան մասին, -

Բայց ամենալոյս եւ բազմազեղուն, աննախանձ,
գովեալ քո արարչութեան զօրութեան հանդէպ

Կփշրուի բանսարկուի պատճառած սրտի
կարծրութիւնը:

Նա է, որ փորձում է յուսահատ վիատութեամբ
քարացնել սիրտս,

Սպառել եւ խոպանացնել երկու աղբիւրներս,

Որոնք իմ զգայական եղեմի մէջ բխեցրեց տնկողը,

Որպէսզի նրանցով ոռոգուի առատ ու ծաղկի իմ
մէջ բարեգործութեան դրախտը կենսատունկ:

Ուստի թող չլինի, որ արտասուքներս
ցամաքեցնելով,

Աղանդահնար պատրանքներով եւ չարաչար
խորամանկութեամբ

Դուրս հանի դարձեալ ինձ իմ նախկին փափուկ
վիճակից:

Իսկ երբ երեւայ հրաշափառօրէն համբարձուած
Աստուածն

Իր խաղաղութեամբ միջնորդն հաշտութեան
աստուածների մէջ,

Շնորհաց կտակը բերելով իր հետ, -

Բախուելով նրան, ինչպէս վիմեղէն ամրապինդ
լեռան,

Կցնդեն բոլոր վնասակար խարդախութիւններն ու
կարճամիտ սրտնեղութիւնները,

Հազիւ թէ հոսող փոքրիկ ջրի պէս, կամ հողի նման,
որ փշրուելով կփռշիւնա:

Գ

Արդ, ոչ թէ մարդկանցից են գալիս
կշտամբանքներս, ինչպէս Յորն է ասում,

Այլ ամենատես աչքերից վերին հրամայողիդ,

Որի երկիւղից խիղճս տազնապած՝ սոսկում եմ,
սարսում կասկածանքներով:

Եւ սակայն դարձեալ սրտաբեկ՝

Ապաստանում եմ յոյսիդ հաստատուն, կենդանի,
անեղծ.

Որպէսզի ողորմութեամբ նայես դու ինձ,

Իբրեւ կորստեան պատժին արժանու,

Երբ ես երկնայնիդ բարերարութեանը
ներկայանամ ձեռնունայն եւ ապշահար,

Երախտիքները անպատում փառքիդ բերեմ ես ինձ

հետ ու քեզ յիշեցնեն.

Քեզ, որ ո՛չ մոռացութեամբ տարուած ես նիրհում,
Ոչ էլ մինչեւ իսկ ակնթարթի չափ ընդմիջումներով՝
հեծեծանքներն ես անտեսում վշտի:

Վերցրո՛ւ ինձանից, աղաչում եմ քեզ, լուսաւոր
խաչովդ՝ խեղդը յանցանքիս,

Հոգատարութեամբ տարակուսական տխրութիւնը
իմ,

Փշանիթ պսակով՝ բողբոջն իմ մեղքերի,
Գանակոծութեամբ՝ հարուածը մահիս,
Ապտակի յուշով՝ տանջանքն ամօթիս,
Թքի թշնամանքով՝ գարշութիւնս անգոսնելի,
Լեղու ճաշակմամբ՝ դառնութիւնը հոգուս:

Դ

Քոնն եմ այս բոլոր բարութիւնները
անբովանդակելի,

Միակ Աստծոյ միածի՛ն Որդի,

Որոնց հետ եւ իմ չարութիւնները յիշատակելով,

Քո ամէնօրինեալ անունն եմ կանչում
բարձրադադակ՝ հոգեղէնների պաղատանքներով:

Մեղապարտութեամբ ամօթահարիս գղջման
խոստովանութեան նայիր

Եւ սատակելու արժանի որդուս ողորմիր՝ անմահ
մահով մեռնելու.

Որպէսզի բազում մեղքերիս չափով

Կրկնապատկուելով առաւելապէս՝ քո
ողորմութի՛ւնդ աւետարանուի

Եւ հռչակուի վեհ ահաւոր հնչմամբ երկնքի մէջ
միշտ եւ երկրի վրայ:

Եւ քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգու հետ՝ փանք
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Ինչպէս որ նախորդ գլուխներից մէկում գրութեան
առայ

Մարմնական անդամների օրէնքի արգասիք
համարուող

Մեղանշանքների այն խաւարային գլխաւոր
ծնունդները,

Որոնք տիրեցին մահուան ժառանգորդիս, -

Այդպէս էլ եւ այժմ, այստեղ, հետեւեալ խօսքերիս
կարգին

Պիտի յիշատակեմ եւ փոքր ի շատե,

Ինչպէս անսահման ծովի ջրերից մի կաթիլ առած՝

Հոգեւոր կեանքի այն օրէնքները,

Որոնք լուսաձնունդներին ազատագրում են

Յիսուս Թրիստոսով:

Բ

Կայսերական են ոմանք արդարեւ, բազմաձ բարձր
գահի վրայ,

Եւ շնորհների պաշարով լցուած ու հարստացած: -

Թագաւորն իր սիրելիներով,

Արքան իր պատուաւորներով,

Պսակաւորն իր իշխաններով,

Բարեհոշակուածն իր համբաւներով,

Յաղթողն իր փողերով,

Զօրավարն իր մարտիկներով,

Գովեալն իր փառքով,

Փեսան իր պարաւորներով,

Դշխոն իր օրիորդներով,

Փեսաւերն իր հանդերձանքներով,

Ազատութիւնն իր շնորհներով,

Խոստովանութիւնն իր քաւութիւնով,
Օգնութիւնն իր ձեռքով,
Պահպանութիւնն իր աջով,
Պարգէն իր զարդով,
Կենաց նշանն իր ամրութիւնով,
Կնիքն իր նկարագրով,
Ամպն իր հովանիով,
Արուեստն իր հրաշքներով,
Հոգին իր անեղծութիւնով,
Խօսքն իր կատարումով,
Ուխտադրութիւնն իր լրումով,
Զօրութիւնն իր հրամաններով,
Աւագանն իր սքանչելիքներով,
Մանանն իր ապականութիւնով,
Կենդանի վեմն իր վտակներով,
Հրեղէն սիւնն իր ճառագայթներով,
Որոտումն իր ազդումներով,
Վերին յոյսն իր փրկութիւնով,
Օրհնութեան ծառն իր պտուղներով,
Եւ բարունակն իր բարիքներով:
Եւ որպէսզի, ջիւնի թէ բոլորն ասելով՝ ամբողջն
աչքաթող անեն,
Ինչպէս արեւին նայելիս կայլայլուի աչքն ու
կտկարանայ,
Պէտք է որ լռեմ ես շատն ասելուց եւ քչին հասնեմ,
Բաւականանալով ամէն ապիկար իմ
կարողութեամբ:

Գ

Բայց աւանդ յաւետ այստեղ իմ թշուառ, եղկելի
հոգուն,
Քանզի խօսքիս կարգն ստիպում է ինձ
Աւետաւոր ձայնի հետ խառնել ե՛ւ գոմէկան բողոք.
Քանի որ սրանց հետ եւ սրանց առընթեր

Կան՝ արդարութիւնն իր կշիռներով,
Վճիռն իր հատուցումներով,
Քննութիւնն իր լոյսով,
Հանդիմանութիւնն իր լապտերներով,
Մերկութիւնն իր պատկառանքներով,
Յայտնութիւնն իր ամօթով,
Անբիծն իր վաստակներով
Եւ սխալուածն իր պատիժներով:

Դ

Դարձեալ եւ դարձեալ ողբ ինձ կրկնապէս, թշուառ
եղկելուս,

Քանզի անհնար բարկութեամբ, ահա,
Գալիս է, հասնում հասակիս հասկին մանգաղը
նրան հնձելու համար.

Դատաւորն՝ ստեանի, եւ հզօրը բեմի համար,
Սպառնացողը կորուստի մատնելու, բազուկը՝
դատաստան տեսնելու,

Պատժիչ գաւազանն՝ հարուածելու,
սպառազինումը՝ վրէժխնդրութեան,

Եւ հովին ընտրութիւն անելու համար:

Եւ քանզի վերջին օրը հատուցման դատի պիտի
ինձ դատապարտեալիս

Քո այն խօսքը, որ դու ինձ ասացիր,

Կանխի՛ր այն, բարեգութ, նախընծաքո
քաղցրութեամբ,

Եւ ինձ, որ վարանական երկիւղով հեծում եմ
նուաղածայն,

Զօրացրո՛ւ վերջին տազնապման ժամիս քո
օրինեալ ձեռքով,

Առաջին օգնութեամբ մխիթարելով, բժշկելով,
քաւելով, եւ կենդանի պահելով:

Եւ քեզ փա՛ռք ամէն ինչի մէջ, յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԼԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ քանզի թողի կերպրս առաջին դելի
թելադրանքով

Եւ կորցրի իսպառ իմ ծուլութեամբ, -
Ուստի այժմ իմ մէջ ցոյց պիտի տամես
կերպարանքը հին.

Դառն ու թախծալից հոգու հեծութեամբ
Անաչառ խայտառակումով, հրապարակօրէն,
Հաւարուած անթիւ եւ ամէն ազգի
բազմութիւնների

Վերապատմեմ ես պիտի բարձրաձայն եւ
մեծարարբառ աղաղակելով:

Բ

Շնչաւոր մի մատեան եմ ես, որն ունի իր մէջ
Ներսից ու դրսից ողբեր ու վայերեւ ձայներ
տխուր,

Իսկ եւ իսկ նման Եզեկիէլի տեսլի տոմարին: -
Քաղաք անպատուար եւ անմահարձան,
Տուն՝ դռան ամուր փականքներից զուրկ,
Աղ՝ միայն տեսքով, այլ ոչ թէ համով,
Չուր աղի, անախորժ՝ ծարաւների համար,
Գետին՝ անօգուտ՝ հողագործութեան,
Դաշտ լքուած՝ հեղեղավայր կնիւնի,
Անդաստան՝ խոպանացած եւ տատասկաբեր,
Աստուածախնամ հողս հոգեւոր, որ բանսարկուի
պատրանքներով՝ մշակուեցի,

Իւղընձիւղ փայտ եմ պտղակորոյս,
Հատանելի մի ծառ ունայնաբոյս,
Կրկնամեռ խօսուն մի տունկ եմ անյոյս,
Ամբողջովին շիջած ճրագարան անյոյս:

Գ

Այժմ վերստին սոյն նմանութեամբ
Այլ աւաղական բազում պատկերներ պիտի
կրկնեն ես: -
Ամօթի դառն պատուհասն է պահուած հեգիս,
Կրճտումն աստամների եւ աչքերի լաց անվերջ՝
եղկելիիս,
Հայրական անսպասելի ցասում՝ ստահակիս,
Ապականութիւն աննորոգելի՝ մեղանչած
մարմնիս,
Նոր կշտամբութիւն՝ ախտալից հոգով, չարիք
գտնողիս,
Տարակուսանքի տարտամ տազնապներ՝ մահով
գերուածիս,
Որոնք երկնային գօրքերը կտան թշուառիս,
Վկայելով, թէ որոմի խրճի պէս վառուելու է
վշտակիր հոգիս,
Ահարկու ճայնով ազդարարելով անբժշկութիւնը
յուսալքուածիս:

Դ

Արդարեւ, սրանք կատակերգական նուագներն են
ահա
Այն քնարահար շրջիկ պոռնիկի, որ ծեծելով իր
կուրծքը, լալագին
Հնչեցնում է յոյժ կսկծեցուցիչ, խղճալի ողբեր,
Ինչպէս Եսային է ասում առակով՝
Տիրոսի մասին գրած պատգամում:
Եթէ սպառնի դիպուածն այն փոքրիկ, իբրեւ
մօտալուտ պատկերացնելով,
Բողոքում էր նա պէս-պէս, բազմակերպ
աւաղումներով,

Լացով ու կոծով պարողների պէս, -
Յապա ինձ համար, որ սպասելով Տիրոջ
գալստեանն անպայման մնացի անպատրաստ
բոլորովին,

Ո՛րքան եւ ո՛րպիսի վիատեցուցիչ երգեր պիտի
մըմնջեմ ես:

Ե

Արդ, եթէ դատաստանի ահաւորութիւնը յիշեմ
վերստին,

Բազմացնեմ պիտի աշխատանքս ես,

Իսկ եթէ տանջանքներս իսկութեամբ աչքիս առաջ
բերեմ՝ երկիւղս կանի,

Եւ եթէ ճշգրիտ պատկերացնեմ ես տեսարանները
նրանց՝

Ինձ համար նախատեսուած հատուցումները
կաւելանան,

Քանզի առաջուց նախատեսելով այդ բոլորը ես,
չապաշխարեցի, թեկուզ անագան:

Բայց դու ինայեցիբ ինձ, գթած, մարդասէր, հօր,
բարերար,

Ամենապարգեւ Քրիստոս թագաւոր, օրհնեալ
յախտեան. ամէն:

ԲԱՆ Խ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Ամենակալ Աստուած բարերար, ստեղծո՛ղ բոլորի,
Ունկնդրի՛ր հառաչանքներիս ձայնին
ստագնապայոյզ.

Եւ ինձ ապագայ կասկածանքների երկիւղից

փրկի՛ր,

Կարող զօրութեամբդ ինձ ազատելով մեղքի
պարտքերից,

Քանզի քո անբաւ մեծութեամբ եւ իմաստութեամբ
անհուն՝

Հնարաւոր է քեզ մօտ ամէն ինչ:

Բ

Եւ քանզի հեռուից տեսնելով հոգուս աչքերով ահա
Ահաւորափայլ հանդէսը քո հանդերձեալ
դատաստանի,

Նկատում եմ ես արդէն կանխապէս

Յերեկը լուսաւոր ու յուսալից՝ սրբերի համար,

Եւ օրը խաւար՝ պատժապարտիս պատուհասի
համար

Ուստի եւ չկայ ոչինչ, որ լինի փախուստիս համար
ապաստանարան.

Ո՛չ անդունդները խորունկ եւ ո՛չ վիհերն անտակ,

Ո՛չ լեռները բարձրաբերձ եւ ո՛չ քարանձաւները,

Ո՛չ ժայռերը կարծրակոռ, ո՛չ էլ ծործոր ու ծերպ,

Ո՛չ փապարները փոսաւոր եւ ո՛չ հոսանքը
հեղեղների,

Ո՛չ բաւիղները խորշերի, ո՛չ շտեմարանները
յարկերի,

Ո՛չ թաքստոցները սենեակների, ո՛չ էլ ծմակները
հովիտների,

Ո՛չ ծործորները դժվարանց, ո՛չ բլուրները
բազմակուտակ.

Ո՛չ քամիները մեծաշունչ, եւ ո՛չ ծովերն անձայր,

Ո՛չ հորձանքները սահանքների, եւ ո՛չ ափերը

հեռաւոր,

Ո՛չ ողբերի ձայները եւ ո՛չ հեղեղներն արցունքի,

Ո՛չ շարժումը մատների, ո՛չ ձեռքերը վերամբարձ

Եւ ոչ էլ պաղատանքը շրթունքների:

Այս բոլորից՝ սաստկագոյն եւ անճողոպրելի՝
Դո՛ւ միայն, Քրիստոս, կարող ես փրկել բազմամեղ
հոգիս

Քո անդորրութեամբ եւ քո դիւրութեամբ
ամենահեմար:

Գ

Ուստի եւ նայի՛ր ինձ շրջապատող վտանգներին
անգերծանելի,

Դո՛ւ միայն քաղցրոջ բոլորի հանդէպ.

Կենազէն խաչիդ յաղթական սրով կտրաստի՛ր
բոլոր ցանցերը վարմիս,

Որոնք ամէնուստ պաշարել են ինձ մահու
գերեալիս,

Տո՛ւր հանգստութիւն սասանեալ ոտքին թիւր
ընթացողիս.

Բուժի՛ր հրատապ ջերմին տոչորումն մղձկեալ
սրտիս,

Մերժի՛ր դիւային եւ չարահեմար շշուկները իմ՝ քեզ
պարտաւորիս.

Հալածի՛ր անյոյս մթութիւնն հոգու՝ չարին
կենակցիս.

Յրի՛ր ծխամած թանձրութիւնները բռնաւոր
մեղքերիս.

Կորցրո՛ւ ապական ցանկութիւնները զազիր
կրքերիս.

Նորոգի՛ր մեծիդ անուան պաշտելի փառքի
լուսեղէն պատկերն ի հոգիս.

Զօրացրո՛ւ շնորհիդ փայլը շողշողուն որպէս շուք
դէմքիս,

Ստատեսութեան ընդունակութիւն տուր
հողեղէնիս,

Հարմար յօրինմամբ վերայարդարիր, որ տեսնի
քեզ պարզ՝

Լուսազարդ մաքրութեամբ զտելով մռայլը
մեղաւորիս,

Աստուածային կենդանի, անեղծ, երկնաւոր
լոյսովդ ծածկելով երեք պատկերներն անձիս:

Չի դու ես միայն օրինեալ հօրդ հետ ի գովեստ
սուրբ Հոգուդ

Յախտեանս յախտենից. ամէն:

ՔԱՆ ԽԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ
ողորմութեան,

Քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ
առողջութեան,

Լուսաւորութեան եւ կենդանութեան, յարութեան
եւ անմահութեան,

Յիշի՛ր ինձ, երբ գաս քո արքայութեամբ,

Ահաւոր, հզօր, բարերար եւ ամենաստեղծ,

Կենդանի, գովեալ, ամենակատար

Եւ մերձ համօրէն արարածների հեծութիւնների:

Ես էլ եմ ահա պաղատում քեզ խաչակցիդ հետ,

Որը քեզ համար ո՛չ բռնուած էր եւ ո՛չ էլ կապուած,

Ո՛չ կախուած եւ ո՛չ բեւեռուած,

Ո՛չ խոշտանգուած էր մեծիդ անունով եւ ո՛չ
անարգուած,

Ո՛չ յլկուած եւ ո՛չ արհամարհուած,

Ո՛չ խորտակուած եւ ո՛չ մահացած,

Այլ արքայութեանը՝ արդարների համար
պահուած լոյսին արժանի համարուած:

Եւ դու հաստատուն ուխտի խոստումով

"Ամէն" – ի երդմամբ,

Յայտնելով տրուած բարիքների

անփոփոխութիւնը,

Փառաւորեցիր նրան եւ փրկութեան յոյս
ներշնչեցիր ինձ՝ իսպառ լքուածիս:

Բ

Օրհնեա՛լ, օրհնեա՛լ եւ դարձեալ օրհնեալ,
Ընդունելով եւ ինձ նոյն հաւատքով՝
Փրկի՛ր կործանումից եւ բարձրացրո՛ւ, ո՛վ
բարերար.

Բժշկիր հիւանդութիւնների ախտերից, ողորմա՛ծ.
Մահուան եզերքից ինձ կեանքին դարձրու, ո՛վ
կենդանութիւն.

Քոնն եմ նաեւ ես, ուստի նրա հետ ապրեցրո՛ւ եւ
ինձ ապաւինութի՛ւն.

Կենդանութեան շունչ ընծայիր դու ինձ՝ հոգով
մեռածիս,

Յարութի՛ւն, դու կեանք եւ անմահութիւն,
Անպակաս բարութիւն, անսպառ շնորհ,
անփոփոխ ներողութիւն,

Աջ ամենազօր, ձեռք ամենիշխան, մատ
ամենամերձ:

Կամեցիր դու, Տէր, եւ պիտի փրկուեմ.

Ակնարկիր միայն գթութեամբ, եւ պիտի
արդարանամ.

Ասա՛ դու խօսքով, եւ իսկոյն պիտի դառնամ
անարատ:

Սոռացի՛ր թիւր իմ չարիքների՝

Եւ անմիջապէս համարձակութիւն պիտի առնեմ
եւ.

Առատաձեռնի՛ր, եւ շուտով պիտի
պատուաստուեմ քո մէջ,

Փառաւորեալդ ամէն ինչի մէջ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Բժշկական հմտության ամենափորձուած
հնարաւորութեամբ
Անախտական կեանքի դու պատճառ, երկնային
գօրեղ թագաւոր՝ Տէ՛ր Յիսուս Քրիստոս,
Աստուած՝ իմանալիների բոլոր եւ տեսանելիների:
Ահա՛ իմ մէջ ես դու, ինչպէս մարգարէն է ասում,
նոր կցորդութեամբ,
Ուստի եւ ես միացած քեզ հետ խօսքի դաշինքով
այս բարեգարդ՝
Թո՛ղ լուսաւորուեմ կրկին ողջացած՝ շնչով ու
մարմնով,
Ըստ ամենայնի կարող եւ անդրդուելի:

Բ

Սպեղանիների կարիք չես զգում դու
Հոգուս վերքերին փայթաթաններ պատրաստելու
համար,
Ո՛չ ժամանակի, ո՛չ միջնորդի եւ ո՛չ էլ երկարաձիգ
օրերի,
Ո՛չ փոփոխական դեղեր տալու եւ ո՛չ
անդամահատման,
Ո՛չ էլ խարելու, վիրահատութեան.
Եւ այլ երկրաւոր դարմանումների,
Որոնք ենթակայ են յաճախ վրիպանքի եւ
ամենասխալ տարակուսութեան:
Բայց քեզ՝ հոգիների եւ մարմինների արարչիդ
Ամենայն ինչ լուսաւոր է, ամենայն ինչ ակներեւ,
Ամէն ինչ գրուած, ամէն ինչ դիւրին եւ հնարաւոր,
Խորհուրդը գլխաւորուած է, խոստումը լցուած,

կամքը կատարուած,

Քո կտակն աւետարան է, քո վճիռն՝ ազատութիւն,
մատենող՝ շնորհ:

Չես կաշկանդուած դու օրէնքներով, ոչ էլ
կանոններով շրջափակուած.

Արգելակուած չես նուաստութեամբ, ոչ էլ
հպատակութեամբ խոնարհուած.

Չես պարփակուած փոքրկութեամբ, ոչ էլ
սահմաններով չափուած.

Չես վրիպած բարութիւնից, ոչ էլ ցասումից
այլայլուած.

Չես սխալուած խստութիւնից, ոչ էլ խռովութիւնից
վրդովուած.

Չես դրդուած անգիտութիւնից, ոչ էլ
ողորմութիւնից՝ փոփոխուած.

Չես իջել բարձրութիւնից, ոչ էլ օգնութիւնից
ընկրկած,

Ոչ էլ փրկութիւնից տկարացած:

Սկիզբն ու լրումն ես դու ամէն ինչի, եւ ամենայն
ինչ քեզանից է.

Փա՛ռք քեզ եւ երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՃՈՅ ՀԵՏ

Ա

Աստուած անսահման, անբացատրելի հարազատ
ծնունդ միակ Աստծոյ,

Արարիչ բոլոր արարածների, Քրիստոս թագաւոր,
Լոյս՝ խաւարի մէջ՝ մթնած սրտերի.

Մեզ հետ՝ մարդ կատարեալ եւ առաքչիդ հետ՝
իսկական Աստուած,

Որ մեր բնութեամբ քունն ես ծանուցում
հրաշապէս:

Օրհնեա՛լ է Հայրդ երկնաւոր եւ անճառ,
Որ առաքեց քեզ երկնից եւ որին փառակից ես դու
արարչութեամբ.

Տարագիր գերուս փրկութեան համար նա այնքա՛ն
հոգաց,

Որ մինչեւ անգամ քեզ մատնեց մարդկանց:

Իսկ դու, որ կարող էիր առանց վշտի աւարտել
խորհուրդը տնօրինութեան,

Հանեցար մահուան բաժակը ըմպել մեղապարտիս
հետ՝

Անթերի մարդկութեամբ եւ անպակաս
աստուածութեամբ:

Եւ սուրբ Հոգին քո կենդանարար, ինչպէս որ քո,
այնպէս եւ իսկակից է Հօրդ,

Եւ էութեամբ համապատիւ՝ ծնողիդ հետ ե՛ւ
ծնուածիդ:

Մի Երրորդութիւն կատարեալ՝ անբաժանելի եւ
անանջատ երեք դէմքով.

Անսկիզբ եւ անժամանակ, բացարձակ բարերար,

Համակ կենդանարար, ամբողջապէս

խաղաղարար,

Ստեղծիչ գոյութեանց եւ յօրինող ամենայնի,

Անքակտելիօրէն եւ մի բնութեամբ փառաւորուած:

Բ

Իսկ եթէ գթած երկնաւոր Հայրը հօր՝ մէկն է
էութիւնից՝

Մահապարտիս յանցանքների համար զոհաբերեց
իր անքնին ծոցի ծնունդը միակ,

Չիւնայելով իրեն համապատիւ սիրելի որդուն,

Այլ կամովին նուիրեց նրան մահուան զէնքերով
չարչարողներին,

Ըստ Չաքարիայի մարգարէութեան,

Թէ՝ "Պիտի զարթնի սուրբ հովուի վրայ,

Եւ պիտի զարկուի հօտապետն ինքը,
Ու ոչխարների հօտը ցրուի",
Ինչպէս նախագրողի օրինակը նուրբ եւ ուխտը
խորանի,
Եւ նուիրումն արեան սպանդի,
Եւ խորհուրդն արրահամեան պատարագի,
Որոնք կանխապէս նկարագրեցին փրկութիւնն
հեզիս՝ կեցուցչիդ կամքով, -
Ուրեմն էլ ինչո՞ւ ես տխրում, ա՛նձն իմ,
Որ քո իսկ գործով եւ յօժարութեամբ ես
կործանուել դու
Եւ ո՛չ Աստծոյ կամեցողութեամբ.
Կամ ինչո՞ւ ես դու խռովում, սիրտս՝
Մտատանջուելով սատանայական
յուսահատութեամբ:
Յուսայ՛ Աստծուն եւ խոստովանիր,
Եւ նա քեզ համար կհոգայ անշուշտ՝
Դաւթեան սաղմոսի եւ մարգարէի կենսախրախոյս
խօսքի համաձայն:

Գ

Իսկ ստեղծողի խնամակալութեան չափն ու
եղանակը ասելի վեր է,
Քան հրեշտակների եւ մարդկանց մտքի
կշռութեան սահմանն,
Ու թէ բիւր անգամ կրկնուի՝ դարձեալ չափել չի
լինի,
Չի բարձրեալ տիրոջ ե՛ւ բաւարարելն է անճառելի:
Մանաւանդ որ նա՝ մէկը օրհնուած համագոյական
Երրորդութիւնից՝
Ուղարկեց միւսին այն օրհնաբանուած,
Որը եւ մեռաւ ի հաճութիւն իր առաքչի կամքին:
Միւս երրորդն ահեղ երկուսի հաւանութեամբ
Բարեմաղթում է մեծաջան բաղձանքով:

Իսկ միեւնոյն բարի իրագործումների մէջ
Նրանց համամիտ միակամութեան սպացոյցներն
են՝

Հոգին՝ կենդանու եւ բանը՝ բանականի,
Պայծառութիւնը՝ փառքի եւ կերպարանքն՝

էութեանը:

Փոյթ՝ ապրեցնելու, սթափ՝ ողորմելու,
Օգնութեան ձեռք կարկառելու եւ փրկելու՝

պատրաստ,

Առատատրութեամբ՝ յորդ, շատութեամբ՝ զեղուն,
Անբաւութեամբ՝ լի, աննուագութեամբ՝ փարթամ,
Երկայնամտութեամբ՝ ճոխ եւ անհասութեամբ՝

բարձր, -

Մի Երրորդութիւն կատարեալ եռանձնեայ,
Օրինեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ով կործանուած իմ անձ, բարի յոյսը
տնկած արտիդ մէջ

Եւ հաւատքի գոտիով պնդած երիկամներիդ
մասերն երկու՝

Յանկական գործարանները քո կրկնապղտոր
խորհուրդների,

Խոստովանի՛ր բարերար Աստծուն մտածածներդ՝
որպէս թէ արդէն գործուած մեղքեր,

Խոհածներդ՝ իբրեւ կատարուածներ,

Անտեսներն՝ իբրեւ արդէն յայտնի,

Սրտիդ մէջ թաքուն պահածներն՝ իբրեւ

բարձրաձայն ասուած.

Ակնարկումներդ՝ իբրեւ իրագործած

մեղանչումներ,

Շուրթերիդ շարժումն՝ իբրեւ չարութեան
գործադրութիւն,

Ուտքերիդ հետքերն՝ իբրեւ վազք ընդդէմ

Աստծոյ պատուիրանների,

Ձեռքերիդ ցասկոտ երկարումն՝ իբրեւ
արինահեղութիւն,

Անվերջ ծիծաղելն՝ իբրեւ կամաւոր լքումն շնորհի,

Երդումն ի դէպ թէ տարադէպ՝ իբրեւ

գործակցութիւն խաբողին,

Ամբարտաւանութիւնն՝ իբրեւ հին կործանիչ
նախաստեղծին իր բարձրութիւնից,

Սրտնեղութիւնն՝ իբրեւ թերահաւատութիւն,

Մեղկութիւնն՝ իբրեւ պարտութիւն զօրաւոր
ամբութեան,

Վշտակրութեան համար տրտնջալն՝ իբրեւ
ուրացութիւն՝ Տիրոջ հետ արած ուխտի,

Անսանձութիւնը՝ իբրեւ մի թողը անգթութեան,

Անբարհաւաճութիւնն՝ իբրեւ վեհերի դէմ
գոռոզացում չնչին բաներով,

Պարծենկոտութիւնն՝ իբրեւ կամակոր
հարազատութիւն չարագործի հետ:

Ակամայ մեղքերն էլ խոստովանիր կամովին
գործած յանցանքների հետ,

Բռնիները՝ հաւանութեամբ կատարուածի հետ,

Նորամոյժները՝ բնածինների հետ,

Անօրէնութիւնը՝ սպաստուածութեան հետ,

Փոքրերը սաստկագոյնների եւ քչերը՝ շատերի
հետ,

Անասելիներն ասա՝ արդէն իսկ ասուած
իմացողին,

Անգրելի մեղքերը՝ իբրեւ տեսնողի աչքի առջեւ
մազնիսաբարի վրայ արձանագրուած,

Մեղքի համար թերթեւագոյն համարուածներն՝
իբրեւ ստուար ու ծանր բեռներ,

Ծածկուածների չափի որոնումը՝ իբրեւ ճշտիւ

պահանջումն

Կետի կորիւնի բերանից առած սաստերի տուրքի՝
չորեքդրամեան ծանրութեամբ.

Անդնդային գործերը՝ իբրեւ Աստծոյ ականջին
արագ հասածներ:

Ճարունակի՛ր սրանք եւ կուտակի՛ր կրկնապէս՝
Հանձնառու լինելով պատմելու այստեղ վերստին
Սաստիկ հեծութեամբ չեղածներն իբրեւ արդէն
եղածներ

Տոյց տուր Աստծուն պարտութիւնը քո հալածեալ
անձի,

Որպէսզի ընդունես դու փոխատուից պարտքերիդ
թողութիւն,

Այն մեղաւորի նման, որին արդարացրեց
Տէրը եւ հոչակեց հրաշափառապէս,
Եւ բազմապատիկ ներբողով կրկնեց գովեստը
զղջման,

Քան թէ պարսաւեց մեղքերը նրա:

Բ

Բարդիր եւ դիզի՛ր, ա՛նձն իմ, մեղապարտ հոգուդ
յանցանքները,

Կշտամբելով յոյժ՝ խօսքերով սաստիկ եւ
նախատական

Քո բազմամասնեայ խոհերը բոլոր եւ գործերը
ժանս՝

Չարութիւն, անօրէնութիւն եւ սխալանք,
Մարտահանդէսից փախուստ եւ պարտութիւն,
Մոլեգնութիւն, ամբարշտութիւն եւ ապշութիւն,
Թմրութիւն եւ քուն՝ արթմնի եւ նիրհումն՝
ընթանալիս,

Օտարոտի խորհուրդ եւ նանիր խօսքեր,
Սէր՝ զազիր գործերի եւ դանդաղում նրանց մէջ,
Տենչեր՝ Աստծոյ համար ստեղի,

Աներկիւղութիւն, անասատութիւն,
անշիտակութիւն,
Թերութիւն, թիրութիւն, թուլութիւն, ժխտութիւն,
Սանձարձակութիւն, ծաղրածութիւն,
խեղկատակութիւն,
Եւ շարժուձեւեր գայթակղեցուցիչ ու
պատրողական,
Անտեղի քաջութիւններ, անյարմար
մարտնչումներ, արիութիւններ անօրինական,
Հոգու խեղդումներ, տատանողական
երկչոտութիւններ,
Բազմոստայն ճիւղեր թափուր, անպտուղ,
Անպատկառ լկտիութիւններ, գժմնութիւններ եւ
գժտութիւններ,
Անմիտ ատելութիւններ եւ մարմաջումներ դիրքին
որսացուող,
Անկշռելի փոքրութիւններ,
խոստմնադրժութիւններ,
Ուխտագանցութիւններ, այլակերպութիւն
նմաններից,
Կեղծիքների քողարկումներ, փառամոլութեան
յիմարութիւններ,
Հաւակնութիւն բարձրահոն, ապիրատութիւն,
եսասիրութիւն,
Նախագահական տենչանք, չարով հատուցում
չարագործներին,
Եւ դրանց հանդէպ բարբաջանք եւ ի զուր ու փուչ
կրքեր,
Գործակցութիւն բանասարկուի
խորամանկութեանը,
Խօսքերի շաղ տալն ու կենաց վանառք
սատակման գնով,
Աւանդների կորուստ, ժառանգութեան վատնում,
կապանք ձգողական,
Երինջների լծափոկով անխզելի՝ բռնուած
անօրէնութիւններ,

Մշտաթաթաւ տղմարնակութիւններ,
Լքումն լաւերի եւ ենթարկումն վատերի,
Դարձի գալուց ետ վերադարձ դէպի նոյն
դժնութիւններ՝

Նորամուտ մտքեր, օտար խորհուրդներ եւ
անկայուն կամք,
Հագագային հեւքեր, անասնական կրքեր,
Իշխանականի ամենասփիւռ ընդարձակութիւն:
Եւ կան դեռ, որոնք անգրեղի են եւ անասելի,
Կամ անպատմելի, անպատկերելի:

Գ

Եւ հիմա, ինչպէ՛ս պիտի բժշկուես, անձն իմ
եղկելի,

Դու, որ խոցուած ես այսքան տեգերով,
Երեսից ընկած անողջանալի այր մի տարագիր,
ըստ մարգարէի,

Չի միայն մէկն էլ վերոգրեալներից բաւական է քեզ
սատակեցնելու,

Դեռ թողնենք, որ դու ժանտ դահիճների այսքան
խմբերով ես շրջապատուած:

Մանաւանդ՝ սոսկ այս օրինակներով չի տրուում
պատկերը տառապեալիս,

Այլ, ինչպէս վիստացող բազմութիւնն անթիւ
կարիճների,

Որոնք օրհասական թոյնը կրում են իրենց պոչի
ծայրին,

Ինչպէս մաշկեղէն մի ամանի մէջ ամփոփուած,
որտեղ խայթոցն է նրանց,

Որոնք արտաքուստ թւում են թէւ բարի, անվնաս,
Բայց ներքուստ ունեն չարի ամբարներ,
կորստեան պահեստ,

Կսկծանքի կոյտ, սատակման գործոններ, մշակներ
մահուան:

Գ

Այդպէս են նաեւ ամբարուած դաժան
անօրէնութեամբ

Թշվառաքրտինք թոշակները քո, ա՛նձն իմ
պարտական կրկին սատակման:

Կամաւորաբար ընդունեցիր դու քո մէջ այն, ինչ որ
Ցանեց թշնամին աշխարհի ազարակում՝ ցորենի
վրայ,

Ո՛վ այր անմաքուր, ամբարիշտ եւ ծոյլ, իսպառ
ստելի,

Որին սիրելի եւ դուրեկան են անառակութեամբ
լցուած ամէն ինչ,

Որոնք թւում է առաքեալն ինքը խիստ
կշտամբական իր այն խօսքերով՝ վերջացրած
այսպէս՝

"Եւ նրանք, ովքեր գիտնալով հանդերձ օրէնքն
Աստծոյ գործում են այսպէս

Կամ գործողներին լինում կամակից՝ արժանի են
մահուան":

Արդ, ես ինքս ինձ արժան դատեցի կրկնակի
պատժի -

Կորչելու իսպառ եւ սատակելու որպէս
մահապարտ.

Բայց դու խնայիր ինձ ողորմութեամբ, բարեգո՛ւլթ,
հօր, կենդանի,

Կամարար, կարող եւ հնարաւոր, օրհնեա՛լ
յաւիտեանս, ամէն:

ԲԱՆ ԽՉ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Վրիպեալս ես ամենայն անգամ, ամենապատիժ,
Միշտ դժնեայ վայրենաբարո, մահով եմ անձամբ
կշտամբում ինքս ինձ.

Ինչպէս արոտական խոզերի գազիր եւ
վայրագասուն երամակներ՝

Գարշելի մեղքեր արածացնող եմ ես նախատելի
վարձով.

Ամայաբնակ ուլերի հորանը խնամող հովիւ եմ ես
մի

Տաւարածների վրանների մօտ,

Ըստ Երգ-երգոցի առակի, որ ինձ է վերաբերում,

Ինձ, որ չեմ ճանաչում նոյնիսկ ու չգիտեմ երբէք,

Թէ որի՞ ձեռքով եւ ո՞ւմ պատկերով, ինչո՞ւ

գոյացայ:

Բ

Ահա՛ մարմինդ կրող երկու միակցորդ ու
խորհրդակից ոտքերիդ վրայ

Հրեշտակի ձեւով ես կառուցուել դու,

Որպէսզի երկու վերեւ բարձրացած քո

բազուկներով վերապացիկ,

Իբրեւ թռչելու համար թել առած՝ դիտես հայրենի
աշխարհը բարձրից:

Ո՛վ յիմար, ինչո՞ւ ինքդ քո կամքով կորացար
գետնին,

Եւ միշտ աշխարհի չնչին ու ճղճիմ հոգսերով
տարուած՝

Անապատական ցիռերի կարգը դասեցիր դու քեզ:

Մարմնիդ աշտանակի վրայ իբրեւ ճրագ

բազմականթեղեան՝

Գլխիդ կտրութիւնը հաստատուեց,

Որպէսզի այդպիսով, չհեռանալով օրինակելի լոյսի
շնորհից,

Տեսնես Աստծուն եւ անանցանելիքն
իմաստասիրես:

Բանականութեան պատուով կրկնապէս
նոխացար,

Որպէսզի վերուստ քեզ տրուած բոլոր
բարեմասնութեանց

Յաղթանակը դու պատմես անարգել անկաշկանդ
լեզվով:

Մատնելով յարմարապէս ճիւղաւորուած ճարտար
քո ձեռքերով

Գործելուդ համար եւ կառուցելու՝

Աստուած կոչուեցիր՝

Համացեղութեամբ իբրեւ գործակից
ամենապարգել աջին Աստծոյ:

Երեք հարիւր վաթսուն յօդերով դու
շաղկապուեցիր,

Միացնելով նրանց քո մէջ պատշաճող թիւը հինգ
զգայարանքների,

Որպէսզի արտաքին առերեւոյթ նիւթեղէն
շինուածքդ

Չմնայ մտքիդ տեսութեան կողմից
անքննադատելի.

Չի ոմանք դրանցից ստուար են եւ զօրաւոր,

Եւ ուրիշներ՝ փոքր են ու պիտանի,

Կան, որ կարծրակերտ են եւ՝ զգայուն,

Եւ դարձեալ, որ գողտրիկ են ու

պատուականագոյն,

Ինչպէս նաեւ կան, որ կարելոր են եւ ամօթալի:

Իսկ բացատրութիւններն այդ բոլորի քո մէջ են
նկարուած,

Իբր անջնջելի արձանի վրայ, անձն իմ եղկելի.

Որի միտքն այն է, թէ ժամանակի մասն

ամենափոքր ու տարին կազմող բոլոր օրերի կարգն
յաջորդական

Սահմանուած՝ մարմնի մասերի թուով
Անսխալ կերպով անայլայլելի՝ պահուած են
այնտեղ:

Գ

Կա եւ հոգեւոր մի այլ օրինակ, -
Միրոյ յօդերով շաղկապուած ի մի սուրբ
Եկեղեցու միութիւնն է այդ,
Որի խորհուրդը դարձեալ քեզանով է
մեկնաբանում:

Այնպէս որ առանց բոլոր մասերի իրար հետ ամուր
սերս կապակցութեան՝

Մեծը փոքրի հետ համաձայնուած մի ընդհանուր
լծի ներքոյ

Քրիստոսի անուամբ հալածանքների շենքի
կատարելութիւնը վնասուած կլինի:

Ինչպէս որ մարմնին պատուաստուած աննշան
անդամներից մէկն եթէ կտրուի եւ կամ պակասի՝

Կրճատուած կլինի մարմնի կազմուածքը, որ
զգայական սենեակն է մարդու,

Որով եւ ահա՛, պատկերն ընտանի կենթարկուի
անարգ մի փոփոխութեան:

Ուրեմն այսպիսով, ինչպէս եւ բազում այլ
անզուգական հրաշակերտութեամբ ստեղծուած՝

Աստծոյ հարազատ պատկերն եւ դու, հոգի՛դ իմ
զերի, իսպառ կշտամբուած:

Թէեւ առաջին նմանութիւնիցդ կողոպտուեցիր,
Կենաց դրախտում մեղանչելով պատուիրանի դէմ,

Բայց աւագանի լուսագարդ շնորհով,

Հոգու փշումն ընդունելով,

Նախկին նոյն պատկերն ստացար դարձեալ:

Դ

Եւ այժմ ինչո՞ւ կորցրիր դու այդ փառքը երկնաւոր,
Ինչպէս կորցրեց նախաստեղծն երբեմն վիճակն
երկնաւոր՝ Ադեն դրախտում:

Ինչո՞ւ ինքդ քո ձեռքով փակեցիր երկինքը քեզ
համար,

Եւ վերելքի դուռը կողպեցիր քո առաջ.

Ինչո՞ւ խառնեցիր մաքուր ջրի հետ աղսն
արցունքներիդ.

Ինչո՞ւ լուացուած ձորձը՝ գարշելի գործերով
զազրելի դարձրիր,

Ինչո՞ւ մեղքերի պատմունճանդ հանած՝ նորից
հազար այն անառակ վարքով.

Ինչո՞ւ ժանտերի ճամփով գնալով ոտքերիդ
մաքրութիւնն աղտեղեցիր.

Ինչո՞ւ կրկնեցիր իրաւադատին
ուխտագանցութիւնն հին պատուիրանի.

Ինչո՞ւ զրկուեցիր շնորհաց պտղից, ինչպէս
Ադամը՝ կենաց ծառից.

Ինչո՞ւ նենգեցիր ինքդ կամովին յաւերժութիւնը
անստուեր յոյսի.

Ինչո՞ւ թոյլ տուիր, որ անհամարձակ՝ ծածկուի
դէմքդ սաստիկ ամօթից.

Ինչո՞ւ զինուեցիր դու ինքդ քո դէմ
հակառակուելով, ո՛վ ընդունարան խելագարութեան.

Ինչո՞ւ որս եղար մահուան ծուղակին, թողած
արահետը վստահելի.

Ինչո՞ւ պատրանքների կարթով բռնուեցիր,
կենդանարարի մարմնին հաղորդակի՛ց դու:

Բայց դու վերստին յուսալով նրան՝ պաղատի՛ր առ
նա,

Որ ապաւեն է, քաւիչ, նորոգիչ, փրկիչ, կեցուցիչ եւ
կենդանարար,

Ողորմած, խնամող, մարդասէր եւ անոխակալ,

Բազմագույթ, օրհնեալ յախտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ամաչելով մեծիդ ահաւորութիւնից, ի՞նչ կարող եմ ասել,

Եթէ ոչ համբանալ եւ բերանս հողիմ՝ լռել արտիս մէջ,

Աչքերս յառած բարի յոյսին, ըստ մարգարէական խօսքի.

Իսկ եթէ բանամ փականքը՝ շարժուող իմ շրթունքների

Եւ կամենամ բռնադատել նրանց, որ խօսեն,
Խղճմտանքիս ձայնը դարձեալ կթելադրէ ինձ
Հիւսել լալագին ու կրկնակական եղերերգութիւն:

Բ

Ուստի ողբակից մեծ մեղաւորին,

Որը կամովին մահացու կերպով անօրինացաւ,

Նրա գոչն իր հետ կրկնում եմ եւ ե՛ս:

"Մեղայ՛, Տէր, մեղայ՛, անօրէնութիւններիս մասին ես ինքս եմ վկայում":

Դրա հետ մէկտեղ հիւսելով նաեւ յիսուներորդ սաղմոսի խօսքերը,

Մեղաւոր հոգուս պարտքերի հաշիւը ես համարում եմ անթուելի,

Աւելի քան հողմից քշուած հիւլէները փոշու՝ օդում համատարած:

Մեղայ՛ երկնքի եւ քո առջեւ.

Անառակ որդու հետ ամօթապարտ եւ ես

Հայրենի գութիդ վերադառնալով՝ թախանձում եմ քեզ:

Եւ տխրադէմ, ահա, քեզ մօտենալով,

Չայնը ողորմելի աղերսանքներիս, արտոսրածին
ողբերի գոչիւնով՝

Քո առջեւ եմ տարածում, Հայր գթութեանց,
Աստուած բոլորի:

Ես արժանի չեմ ոչ միայն որդի կոչուելու,
Այլեւ անուանուելու անպիտան եւ անօգուտ
վարձկան:

Ընդունիր սովեալ տարագրականիս եւ
յանցապարտիս,

Եւ նեղուածիս ու նուաղածիս տանջող ցաւը
քաղցի՝

Կենաց քո հացով դարմանի՛ր դու:

Ընդառաջի՛ր ինձ քո ողորմութեամբ, քանզի ես
նախ քեզ եմ ապաւինել.

Հագցրո՛ւ, գթած եւ անոխակալ, անօրինեալ
մեղապարտիս

Չգեսան այն, որից ես դեռ նախապէս
կողոպտուած էի.

Մեղքերով աղտեղուած աւանդակորոյս ձեռքիս
Մատուցիր կամբով քո ամենառատ՝ մատանին
կնքով համարձակութեան.

Ոտքերիս գարշապարների մերկութիւնը թշուառ
Աւետարանի ամրածածուկ կոշիկներով
պատսպարելով՝

Ապահովի՛ր դու օձի թոյնի դէմ:

Չվարակդ պարարեալ, երկնային, որ քո Միածին
Ռդդին է օրինեալ

Ճշմարիտ մարդասիրութեամբ՝ իմ բարեկարօտ
հոգուն նուիրիր:

Մատուցում է նա միշտ ու չի սպառուում երբէք.

Մորթուելով անթիւ սեղանների վրայ՝ անսպառ է
նա միշտ,

Մնալով ամբողջ՝ բոլորի մէջ եւ բովանդակ՝
խրաքանչիւր մասում,

Իր էութեամբ երկնքում է նա եւ իսկութեամբ՝
երկրում,

Աննուագ մարդկությունը եւ անթերի
աստուածությունը,

Որ փշրուելով բաշխուում է միշտ անհատնում
մասերով,

Որպէսզի բոլորին հաւաքի մի մարմնի մէջ՝ ինքը
լինելով գլուխ:

Քեզ փանք ընդմին, Հայր ողորմութեան,
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Բարձրեալ, հօր, անսկիզբ, ահեղ,
անբովանդակելի,

Ա՛չք աննիրհելի եւ ամենատես, ծնող անքնին
փառքով միածնիդ.

Երկնաւորների եւ երկրաւորների առջեւ
ճշմարտի՛ր քո ողորմութիւնն իմ նկատմամբ.

Տօնի՛ր վերապրումը կորուսեալիս՝ վերնականների
պարերգութեամբ.

Օրհնաբեր խօսքովդ աւետարանի՛ր
կենդանութիւնը մահացեալիս.

Յայտնի՛ր քո կամքի բարեբաստութիւնը, գովեալդ
բոլոր արարածներից.

Ստացի՛ր անճառ անուն քեզ համար, իսկ ինձ
թշուառիս՝ նորոգ փրկութիւն.

Կորցրո՛ւ մեղաւորիս ամբաստանութեան
մուրհակի գիրը.

Մահավճիռը հոգուս ջնջի՛ր դու սիրելի որդուդ
արեան կայլակով.

Վստահութիւնը բարի փրկութեան՝

Քրիստոսի արեամբ նկարի՛ր իմ մէջ.

Բարեգթութեանդ հրաշքները ցոյց տուր

հարսանեաց ճաշկերոյթում քո հարազատին:

Մի՛ փակիր քեզ դիմողիս դէմ սրահի առագաստը
քո կենաց տան.

Մի՛ բաժանիր ինձ բազմականներից եւ քո
բարիքներից մի՛ գրկիր.

Մի՛ պահիր գանձարանիդ մէջ մեղքերն իմ նիւթած
անօրէնութեան.

Մի՛ կնքիր բարեմասնութիւններիդ քսակում
գարշուքիւնն իմ գագրութիւնների.

Մի՛ ծածկիր երկար՝ վերքերն իմ մեղքերի՝
ախտալից մարմնիս մէջ.

Մի՛ դարձնի ինձ տնկակից մահամնա նեխուածքն
ու փտութիւնն իմ ցաւերի,

Այլ քո ողորմած խօսքով վերացրո՛ւ ժանտութիւնն
սպականիչ,

Որպէսզի ազատ հիւծող ախտերից՝
առողջութեանը պատրաստուեմ.

Խորապէս խոցուածիս համար ճարի՛ր զօրաւոր
սպեղանի, ո՛վ գթութեանց հայր.

Տո՛ւր բարի այցելութիւն կարեւեր կործանուածիս,
քանզի քոնն եմ ես, ո՛վ ոգեսէր Տէր:

Եթէ մինչեւ իսկ բիւր հեղ մեղանչեմ, դարձեալ
մեղաւոր չեմ համարուի,

Ապաւինելով քո կենսապարգեւ շնորհին, ո՛վ
բարերար իմ եւ կեանքի տուիչ.

Չի քեզ ճանաչելը կատարեալ արդարութիւն է,

Եւ զօրութիւնդ գիտենալը՝ անմահութեան
արմատ.

Ինչպէս որ առաջուց իմաստունն է գրել.

Եւ դարձեալ այսպէս է ասում նա. -

"Տիրում ես բոլորին, դրա համար էլ խնայում ես
սրանց".

Եւ նմանապէս՝ "Կարող ես դու միշտ, երբ էլ
կամենաս":

Բ

Յուսատու աղերսն այս՝ Սողոմոնի՝ օրինակ եմ ես
առնում ինձ համար,

Չի ոչ ոք, քան նա, ինձ գուգաշաւիղ՝ չեղաւ
բազմամեղ.

Երբեմն որդի՝ յետոյ ատելի.

Երբեմն միջնորդ խաղաղութեան

Աստծոյ ժողովրդին,

Եւ յետոյ խարոց պառակտիչ՝ բազում
խռովութիւնների.

Երբեմն կեանքի օրէնքը եղած եւ ապա փոխուած
մահուան մուրհակի.

Երկնաւորի պաշտումն ընդոտնած, եւ օտարի
անունը ճանաչած:

Անտելի ցրող, անկարօտ գրկող, անսովելի գող,
Շոյուած տրտնջող, փափկացած փախստական,
խրտնած սեղանանենգ,

Պապանձեալ վնասապարտ, քաղցրասնոյց
հայիոյիչ, հայրատեաց զաւակ,

Կտակարանների մատնիչ, Մովսէսի դէմ
չարախօս,

Երախտիքներ մոռացող, սխալական իմաստուն,
ամենագէտ յանցաւոր,

Ամօթապարտ զղջացած, տարակուսեալ
աշխատող, աղօթաւոր կռապաշտ,

Գարձի գալու մէջ դանդաղկոտ եւ ընդունուելու՝
երկմիտ,

Կասկածաւոր հաշտութիւն, ապառնի յուշարար,
երկբայելի փրկութիւն,

Անհաւատալի գիւտ, մեծութեան մնացորդ,
Խարդաւանուած գերի, կիսակտուր պրծած,
կամաւոր անձնամատնիչ,

Տմարդի յոփացած, բազմավրէյ հանճարեղ:

Նա ինքն իր մասին ասածների մէջ դրել է երկու
տարբեր զգացում՝ իրար հակադիր

Ինքնակամօրէն կորստեան համար.
Արգահատանքի եւ երգիծախառն լացի խօսքերով՝
Ամէն տեսակի բարեկաւութեան թելադիր է նա,
Այն ինչ իր կեանքի խոտորումներով
Բոլոր շուրթերին պատճառել է խոր թախծալի
թառանց:

Գ

Չարմանում եմ եւ եւ յուսահատում
տարակուսեալ ապշութեամբ,
Չի եթէ նա այնքան գայթեց, յապա ի՞նչ պիտի
պատահի ինձ:

Ինչպէ՛ս ընկաւ բարձրացածը,
Ինչպէ՛ս սասանուեց հաստատուածը,
Ինչպէ՛ս կործանուեց կառուցուածը,
Ինչպէ՛ս օտարացաւ ճանաչուածը,
Ինչպէ՛ս կատաղեց զաւակն ընտրեալ,
Ինչպէ՛ս հեռացաւ մերձաւորը,
Ինչպէ՛ս աղօտացաւ փայլողը,
Ինչպէ՛ս պատանդուեց ազատուածը,
Ինչպէ՛ս անօրինացաւ ուսուցիչը,
Ինչպէ՛ս անշքացաւ հոչակուածը,
Ինչպէ՛ս անարգուեց փառաւորուածը,
Ինչպէ՛ս փոքրացաւ մեծատունը,
Ինչպէ՛ս ամբարշտացաւ բարեպաշտը,
Ինչպէ՛ս գոռոզացաւ ընտրեալը,
Ինչպէ՛ս ունայնացաւ պատարունը,
Ինչպէ՛ս իւզեց նա իր ուխտը բարձրեալի հետ:
Ամաչում եմ ասել, թէ նաեւ սանդարմետականի
հետ կապուեց:

Ի՞նչ ունէր նա կուռքերի հետ եւ ուսկի՛ց նրա սէրը
պատկերներին.

Ինչո՞ւ կամակցեց խտրականութեանը,
Ինչպէ՛ս ջիշեց Սամուելի յանդիմանութիւնը
Սաուդին,

Թէ՛ "Հմայութիւնները մեղք են, եւ մարդակերպ կուռքը պատճառում է ցաւ ու նեղութիւն":

Ինչպէ՛ս ջիշեց նա յանդիմանութիւնը հայրենի,
Թէ՛ "Հեթանոսների կուռքերն անշունչ դէւեր են,
Եւ նրանց նման են լինելու պաշտողները նրանց":

Մովսէսն ինքն է առաջինը ծաղրում եւ
ամբաստանում սաստիկ, ասելով -

"Տէրն էր միայն առաջնորդում նրան,

Չկային նրանց հետ օտար աստուածներ, որոնց
չէին ճանաչում նրանց հայրերը":

Դ

Ո՛ր է մահատու այլանդակ արձանը Փագովրի,
Ո՛ր սիդոնացոց տխեղծ, անպարկեշտ եւ

ամենանգովեալ իգական ճուլածոն,

Ո՛ր անգրեյի խայտառակութիւնը
զագրակերպարան կանացի սեռի,

Որին անխտիր եւ անասնօրէն անձնատուր բոլոր
մարգարէները պիղծ պաշտամունքի՝

Նուիրում էին մոլի անաստուածութեամբ յանուն
չարութեան անժուժկալ դէլի:

Կինը, որ նախահօրն ի կորուստ որսաց,

Տարաւ ե՛ւ նրա բարերաստութեան ստացուածքը
ողջ.

Մեծութիւնն յաղթեց մտքի առաւելութեանը,

Գոռոզութիւնը գերեց նրան, եւ փափկութիւնն
յիմարացրեց,

Ստրկացնող արծաթը նրան կառավարեց,

Կործանարարի հինաւուրց գէնքը խոցեց
խորապէս մարդուն տօնելի,

Աստծոյ գրկից հանելով նրան՝ ստամբակի ոտքերի
տակ գլորեց.

Մեղկութիւնը մեռցրեց նրան, ծուլութիւնը
թմրեցրեց,

Շվայտութիւնը հարբեցրեց նրան:
Ո՛վ դիւրապատիր մարմին երկրածին, ի՞նչ ողբ ու
կոծով աւաղեմ ես քեզ.

Քանզի ոչ միայն նրան են վերաբերում
բանադրանքներն այս,

Այլեւ կամովին սխալուողներին եւ մոլորուողներին
բոլոր:

Ուստի եւ ահա պէտք է իմանաք այս օրինակով,
Թէ անօգուտ է պարծենալ մարմնական
իմաստութեամբ,

Եթէ Աստծոյ դատելով ընտիր չհամարուի որ:
Այնպէս որ, եթէ մէկը մինչեւ իսկ յիմար էլ լինի,
բայց յոյս դնի ստեղծողի վրայ`

Նա զերծ կմնայ այն չարիքներից, որոնց Սողոմոնն
եղաւ ենթակայ:

Ե

Բայց Սողոմոնն ունի ինքնապարսաւ
կշտամբանքով լի

Եւ սաստիկ քստմնելի` դարձի մի յիշատակարան,
Իբրեւ մէկը, որ մեռցրել է իր մէջ
անձնասիրութեան աշխարհը համայն,

Որն, եթէ ուզենք ճիշտը նկատել,
"ունայնութիւններով" է իմանալի.

Այլեւ մատենով քահանաների եւ սիլոնացի
Աքիայի Գրքով,

Որի մէջ նա իր անցած ողջ կեանքի
դառնութիւններն է երգում արցունքով. -

Չուր ջանք, անօգուտ վաստակ, անմիտ
հետեւանք, անշահ արշաւանք,

Անկայուն գործեր, օտար խորհուրդներ, սին
հոլովումներ,

Բամբասելի բերք, անճիշտ կարծիքներ, սնտոի
սերմեր,

Աւագափուլ շինուածքներ, սպականացու
ստացուածքներ,

Քամահրելի տաժանքներ, ինքնամարտ կռիւ, իր
ոգու դէմ դատ,

Ընդունայն քրտինք, վնասակար փափագ,
Կորստեան շաւիղ, վրիպակ ճանապարհ,
Կործանարար կրթութիւն, մոլորոպատիր
վարժութիւն,

Մշտափայլ տեսողութիւն, ականահայրատ պչրանք,
Պռոնկատիպ կերպարանք, ախտաբորբոք նիւթ,
Դժնատեսիլ գոյն, հոգնատխտուր գեղ,
Սաստիկ մրոտ ծուխ, ցնդելի շոգի,
Աւարի վաճառք, քանդելի տաղաւար,
Ի գուր աղաղակ, անառիթ ծաղրանք,
Արհամարիելի ասպարեզ, անձնավաճառ գիր,
սատակչական ելք,

Անաստուած մտածմունք, ստայօդ ճառ,
Չայրացուցիչ գրոյցներ, եպերելի խճրճանք,
Խելագար խոյզեր, ամօթանքի ցոյցեր, խայտառակ
յայտնութիւններ,

Ապառնի անառակութիւններ, սպաշաւելի
արարքներ,

Ըմբոստների պատմութիւն, ծոյլերի օրինակ,
խորխորատ ծածուկ,

Որս խաւարային, մահագուշակ վիհ, անյատակ
անդունդ,

Ուղեկցութիւն սպանողներին, յիմարական
բարբաջանք,

Դարանակալների վայր, խարխուլ յարկ,
Սասանած շինուածք, խախտուած կամուրջ,
Խուսափուկ երեւոյթ, խաբոդ շողոքորթ, անոպայ
մատնիչ,

Հակառակութիւն ընդդէմ բարձրեալի: -
Խոստովանական խօսքերի բոլոր մասերն այս
որպէս կանոնադրութիւն

Ժողովողն ինքը նախասերմանեց բոլոր,

Չղջումով դարձի եկողների սրտում,
Որպեսզի մարդկանցից ոչ ոք չպարծենայ՝
բամբասանքների նետերով զինուած՝
Իր անձը եւ իր ընկերոջը խոցոտելով.
Չի կռապաշտ է նա, ով քողով է ծածկուած կեղեի
տակ
Եւ ստեղծողին անախորժ գործեր է կատարում:

Չ

Եւ արդ, նա, որ այնքան չմեղանչեց, որքան զղջաց,
Թող չպախարակուի իսպառ, այլ այդպիսին ի
բարին յիշուի,
Իբրեւ հիմք յուսադրութեան բոլոր նրանց, ովքեր
տէրունական ոտքին դիմեցին,
Երբ աստուածութեամբ անբաժանելի նա դժոխքն
այցի իջաւ իր հոգով՝
Կենսագործելու այնտեղ խոստովանողներին,
Որով մեռեալները կենդանիներիս բերին աւետիս
անտարակոյս:
Եւ ես յանցապարտս, որ հասու չեմ նրա
իմաստութեանը,
Բայց մասնակից եմ եղել նրա մեղքերին,
Աղոթում եմ արդ նրա հետ ահա եւ բարեբանուած
մեծիդ պաղատում:
Լցրո՛ւ դու համեստ շարադրանքն այս իմ այն
երջանիկի հանճարեղութեամբ,
Թախանձանքներս թող որ խառնուեն այն յոյժ
աշխատող արքայի աղերս-աղաչանքներին
Եւ դառնան թող որ մեծարանք առ քեզ:
Խնդրանքներն այս իմ մի՛ թողնի անտես,
Ինչպէս խնդրանքներն վեհ արքայորդու, որ իբր
օրինակ տուիր միաճնիդ:
Եւ մենք արենակցին նրա՝ փառակցիդ
նաշակեցինք:

Տո՛ւր փրկութիւն քո ծառային, ամենահնար,
զօրեղ, ահաւոր,
Եւ աւելացրու փառքն ստեղծողիդ՝
Չնջելով նրա մեղքերն անբաւելի:
Յիշելով բարի խորհուրդները նրա, ողորմեալների
հետ նորոգիր նրան,
Որ ամենահամեղ, ախորժանաշակ եւ
բազմապաճոյն առակագրութեամբ
Աստուածութիւնդ քարոզեց եկեղեցուն ընծայուած
յուսագարդ իր մատնանում,
Տոյց տալով բարի ճամփան բոլորին,
Դէպի քեզ գալու խոստովանութեամբ,
Հայր ամենեցուն:
Նրա այս խօսքերն ապացուցում են, թէ հեռու չէր
նա ողորմութիւնից,
Եթէ եռանդուն նրա սրտի մէջ յուսահատութիւն
կաթած չլինէր,
Որ եւ զղջումի անապարանքը փոքր-ինչ
կասեցրէ:

Է

Արդ, ի յուշ բերելով բարեմասնութիւնների
անճառելի,
Ողջունի՛ր գթութեամբ եւ քո երանութեանն
արժանացրու դարձեալ
Դարերից ի վեր մեղադրանքների
քարաձգութեամբ խոշտանգուածին,
Որ առատահոս արտասուքների վտակներով
Իր խրախճանքների ապարանքի յատակը
հեղեղեց սաստկակակիժ ապաշաւութեամբ
Եւ ողորմելի հոգու հեծութեամբ հօր հուզումների
գերազանցեց:
Արցունքներն այդ քո դու երկայնամիտ
ներողութեամբ

Միացրո՛ւ ու խառնիր, գթա՛ծ, միաձնիդ
արցունքներին,

Որ մեր մարմինն առնելով կրեց բովանդակ մեր
վշտերն իր մէջ:

Անվաւեր կերպով նրանը կարծուած սաղմոսի
բարեբանութիւնը ի փառս էակից որդուդ վճռելով,

Նրանով նրա՛ն եւս փրկիր քաղցրութեամբ
աղքատների հետ,

Պուետիկոս մի բարեշնորհ,

Լիովին վարձք էր համարում իրեն

Սողոմոնի հետ միաբան ճայնակցութեամբ՝

Նրա համար իսկ աղերսել առ քեզ,

Որը եւ լրիւ՝ յաւելուածաբար յիշատակուած է
յաջորդ տողերով:

Քանզի նրա յօրինած օստացու բազմահրաշ,
մարգարէանառ պատմագրութիւնը,

Որ աստուածութեանն է արդարացնում,

Հաստատում է, թէ Սողոմոնն արժանացաւ
ողորմութեան:

Ապա ուրեմն նրա համար աղօթելն անելի
անպարսաւելի է, քան չարախօսելը:

Ը

Ուստի եւ ես եմ աղօթում ահա մեծ

վստահութեամբ,

Նրա հետ մէկտեղ գոչիւնս ողբի քեզ ընծայելով.

Չի եթէ ըստ մեր գործերի դատես ու կորցնես մեզ՝

Չի պակասի քո փառքը, քանի որ իրաւունք ունես
դու,

Իսկ եթէ գտնես մեզ՝ կբարձրանաս այնքան,
որքան վայել է քո մեծութեանը:

Չի դու յաւիտեան օրհնաբանելի ես

Ողորմածութեամբ, քան թէ սաստկութեամբ
նախահրաման:

Դարձի՛ր, Տէ՛ր, դարձի՛ր քո խնամարկու գրթութեան
քաղցրութեամբ

Եւ սիրոյդ ձրի եւ ամենառատ պարգեւներով
սփոփիր մեզ,

Որ համանման անբժշկելի տագնապի տապով
տոչորուած՝ տրտում-տխուր ենք յաւէտ:

Փրկարար ձեռքդ դնելով կրկին՝ նորոգի՛ր դու մեզ,

Քաւելով եւ պաշտպանելով մեզ մեղսակործան
խորտակումներից:

Եւ քեզ՝ սկզբիդ միակ եւ անսկզբիդ,

Եւ սկիզբների սկզբնաւորողիդ՝

Սուրբ Երրորդութեանդ եւ մի աստուածութեանդ

Փառք եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

ԲԱՆ ԽԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, անօրէնութիւնները թող չտիրապետեն
Քո երկնային թագաւորութեան կայսերական իմ
պատկերին,

Դու լո՛յս բոլորի, Աստուած:

Թող որ չկապտի գոռոզն ապստամբ՝ շնորհիդ
զարդը իմ կերպարանքից, որ դու ես ստեղծել:

Չթագաւորի մահացու մարմնիս՝ մեղքը
խափանուած գրաւելով ինձ:

Քեզանից բացի չունեմ ես, Քրիստո՛ս, իմ շնչին
իշխող մի այլ թագաւոր,

Որ անբռնադատ հնազանդեցնում ես ինձ քաղցր
լծիդ.

Որ ջնջում ես իմ բազում մեղապարտ կրքերը
խօսքովդ ամենակարող.

Որ քո արեամբ ստացար ինձ եւ քո մարմնով

կերակրեցիր.

Որ սահմանեցիր կեանքի ուխտ անդարձ,
անփոփոխելի.

Որ կնքելով ինձ քո հոգով՝ կցորդեցիր ինձ քեզ եւ
տուիր Հօրդ ժառանգաւորապէս.

Որ յիշատակով չարչարանքներիդ՝ գոհիդ անունով
Համարձակութիւն տուիր աղօթել նոյն
բարերարին,

Ո՛վ դու բոլորի ստեղծիչ ու կեանք:

Դու եւ բոլոր հոգիների Աստուած.

Քո շնորհների պարգեւատրումն այս դու
համարեցիր շատ անելի մեծ, քան հրաշալի գործերդ
բոլոր:

Ո՛չ երկինքն իր զարդերով համակ եւ պայծառագեղ
հրեշտակներով,

Ո՛չ երկիրն ու մարդկութիւնը եւ զարմանաաքանչ
գործերը նրանց,

Ո՛չ լայնատարած ծովն իր մէջ եղող
արարածներով,

Ո՛չ անդունդները իրենց ողջ անբաւ գոյաւորներով,

-

Ո՛չ այնքան այս վեհ արարչութեամբ էր, որ
բարձրացար դու,

Որքան դէպի ինձ կարեկցանք ու գուլթ
ցուցաբերելով,

Երբ մարգարէի բերնով ասացիր, ո՛վ քաղցր յոյսի
բարեշնորհ Տէր. -

"Ո՛վ կայ ինձ պէս Աստուած, որ կարող է միշտ
ներել մեղքերը եւ ջնջել անօրէնութիւնները":

Եւ ակա ինկուած են խօսքերդ, ողորմա՛ծ, եւ
խոստովանուած են բարերարութիւններդ,

Փառաւորուած են խորհուրդներդ խորին եւ
երկրպագուած՝ շնորհներիդ առատութիւնը:

Բ

Արդարեւ, ո՛չ ոք արարածներիդ նիւթեղէն լեզուով
կարող է մեկնել

Գթութիւններիդ մի մասնիկն անգամ, որ ցոյց
տուիր ինձ, յօրինո՛ղ.

Չի ճշմարտապէս մեծ է ւաւիլի այն գօրութիւնը,
Որ հնացածը նորոգում է դարձեալ իր առաջին
պայծառութեամբ,

Քան թէ այն ուժը, որ ոչնչից է ստեղծագործում:
Չի չունես երբէք անկարողութիւն, գօրաւորդ դու
ամէն ինչի մէջ,

Եւ քո մէկ խօսքը բաւական է լոկ, որ հասնեն
գործերն իրենց լրումին,

Ելի՛ր ուրեմն, փառաւորուելու, բարեգործ,
Կրկին ստեղծելով ինձ, որ յոյսս կտրել եմ
փրկութիւնից,

Որ այս ճշմարիտ եւ հաստատական ուխտի
համաձայն՝

Մեծապէս բարձրանայ ձայնդ օրհնարան եւ
աւետաբեր,

Առաւել՝ յայտնի քաւութեանդ շնորհով եւ
ողորմութեանդ լոյսով առինքնող,

Քան թէ գործերով ստեղծողական:
Չի մէկով որպէս արարիչ ես դու ճանաչուում միայն,
Իսկ միւսով՝ ոչ թէ միայն արարիչ, այլեւ
երախտաւոր.

Ոչ միայն ստեղծող, այլ նաեւ քաւիչ,
Ոչ միայն նորոգող, այլեւ բարերար,
Ոչ միայն հաստող, այլեւ ողորմած,
Ոչ միայն կամեցող, այլեւ հնարաւոր,
Ոչ միայն յօրինող, այլեւ հեգ, համեստ,
Ոչ միայն նկարող, այլեւ ամենագօր,
Ոչ միայն առաջնորդ, այլեւ լոյս,
Ոչ միայն խնամող, այլ նաեւ հովիւ,
Ոչ միայն դարմանող, այլեւ հոգածու,

Ոչ միայն ողջացնող, այլ նաև բժիշկ,
Ոչ միայն պաշտպան, այլև զորավար,
Ոչ միայն անյաղթ, այլև թագաւոր,
Ոչ միայն արարիչ, այլ նաև քաղցր,
Ոչ միայն պարգէւատու, այլև առատաձեռն,
Ոչ միայն համբերող, այլ նաև ներող,
Ոչ միայն չբարկացող, այլև անոխակալ,
Ոչ միայն կարեկից ու վշտակից, այլև ծածկագէտ,
Ոչ միայն գթոտ եւ հոգատար, այլև ապաւէն,
Ոչ միայն գերազանցապէս գորովող, այլ նաև
Աստուած,
Եւ քո անսպառ բարութեամբ՝ օրհնուած ըստ
ամենայնի:

Գ

Արդ, ինչպէս որ ստեղծեցիր ինձ, մինչ ոչ իսկ էի, եւ
գոյացնողս հանդիսացար,
Այժմ էլ վերստին յարդարիր ահա հոգին
մաղթողիս՝ նրա տաղաւարն եղող մարմնիս հետ,
Մաքրութեամբ նախկին եւ ամենասուրբ
անարատութեամբ, ինչպէս որ դեռ նոր աշխարհ էր
եկել,
Որ է՛լ աւելի աճեն, զարգանան եւ
բազմապատկուեն
Նորոգ ներկայիս՝ անսահմանելի քո սքանչելեաց
շնորհներն առատ,
Քան ստուերական հներն անցեալի:
Եւ երբ պատմելով թուեմ ես մէկ-մէկ մեղքերս
բոլոր,
Յիշատակելով անտանելիներն, որքան որ մտքիս
թելերը զօրեն,
Անունովդ, հզօր, թո՛ղ արդարանամ:
Եւ երբ ես ինքս պատմեմ բերանովս բծերն իմ
հոգու,

Ների՛ր ամբարիշտ մեղքերը բազում
խոստովանողիս, հզո՛ր ծածկատես, ամենափրկիչ,

Որ չլինի թե աւետումների ամենալրիւ
առատութեան մէջ,

Նախկին վիճակին կարօտեմ դարձեալ՝
Երանի տալով մկրտութեան շնորհներով
փրկուածներին, ըստ սաղմոսի,

Եւ թող չլինի, որ ես մեղքերի փշերով արդէն
սաստիկ խոցոտուած,

Այժմ էլ վերստին քո ձեռքը մխուի մէջս առաւել մեծ
ուժգնութեամբ,

Ծանրացնելով պարտքերիս բեռը, քան
պարգեւների քաղցրութիւնը քո:

Այլ ազատիր ինձ, աղաչում եմ քեզ,
Տէ՛ր ամենայնի,

Եւ փրկիր մահուան ու մեղքերի խիստ օրէնքներից
քո սուրբ հոգով օրինաբանուած:

Քա՛վ լիցի, թե տկարանայ նուազելով
նշմարտութեանդ լոյսն, ինչպէս

Գիւրքն է ասում.

Չի այնտեղից, ուր քաւութիւնն է թագաւորում՝
վտարուած է մեղքը,

Եւ ուր կենդանի խօսքդ է խրախուսում՝ չկայ
յուսահատութիւն,

Եւ երբ շնորհներդ աւելանան, յանցանքները
կհալածուեն,

Երբ մօտ է ձեռքդ աստուածային՝ չկայ
անհնարութիւն,

Այլ կայ համօրէն լուսաւորութիւն,
բովանդակապէս զօրութիւն եւ անպարտելի
կարողութիւն:

Քոնն են՝ փրկութիւն, կենդանութիւն,
նորոգութիւն, ողորմութիւն,

Միանգամայն եւ քաղցրութիւն, արքայութիւն,
անկեղծութիւն

Եւ փա՛նք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆԾ ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Ինչպէս որ առանց Քրիստոս Աստծոյ մեր
հոգիներին փրկութիւն չկայ,

Եւ ոչ էլ առանց աչքի տեսողութեան՝ լոյսի
գոլարճանք,

Եւ կամ արեւի քաղցրութիւն՝ առանց արեւածագի,

-

Այսպէս էլ առանց ծածուկ մեղքերի
խոստովանութեան

Եւ ինքնապարսաւ մեղադրանքների՝ չկայ
քաւութիւն:

Չի քեզ ի՞նչ օգուտ քո մաքրութիւնից, փարիսեցու
հետ եթէ դու դատուես,

Եւ կամ ի՞նչ վնաս ինձ իմ մեղքերից, թէ
մաքսաւորի հետ պիտի գովուեմ,

Կամ ո՞ւր պարսաւուեց Հովել մարգարէն, երիցս
կրկնելով եղկութիւնն անձի,

Կամ մեղադրուել կարո՞ղ է մի սուրբ՝ մեծագոյն
օրը հաշուելու համար.

Եսային ինչպէ՞ս եւ ինչո՞ւ պիտի դիտուի
պղծաշուրթ,

Որ Իսրայէլի տան արարքներից մնաց միշտ հեռու.

Եւ Յիսուսն ինչո՞ւ մեղաւոր լինի աղամեան
մարմնով՝

Կարեկցելով ինձ՝ յանցաւորապէս

Հօրը աղօթած լինելու համար.

Կամ ինչպէ՞ս մեկնել միտքն այս առակի. -

"Միտն իմաստունի՝ սգատան մէջ է,

Իսկ սիրտն անմտի ուրախութեան տան":

Չի նա, որ Աղամի սխալն իր անձին չի վերագրում

Եւ բոլորի մեղքերը չի համարում իրենը, -

Ինչպէս Երջանիկն այն արքաներից, որ մեղաւոր էր համարոււմ իրեն հայրերի գործած յանցանքների մէջ, -

Դրանով իսկ նա մեղանշոււմ է խիստ եւ կորցնոււմ իր արդարութիւնը,

Ինչպէս մէկը, որ անախտակիր է կարծոււմ մարդկային բնութիւնը իր,

Եւ սիրտը երբէք չի կարող բերկրել այն գուարթութեամբ,

Որ պարգեւոււմ է աւետումն յոյսի, եթէ Քրիստոսի առաքելից սովորած՝

Չկարողանայ տրտմել Աստուծոյ կամքի համաձայն, ինչպէս ասուած է:

Բ

Արդ, ըղձալի է ինձ այստեղ յիշել հոգեւոր այն հանճարեղի

Խրատն հինաւուրց, եւ սակայն միշտ նոր, որ Տէրն իսկ կրկնեց.

Ամբարիշտների նանրախորհուրդ ժողովներում

Չգնալ նստել հպարտների առաջին բարձին, -

Որից հաստատուն ուխտ ու պայմանով՝

հրաժարուեցին Դաւիթն ու Երեմիան, -

Այլ իրենց մեղքով խիստ ամօթահար մեծ դատաստանի հատուցման ահով սասանածների արտանց զղջացածների հետ՝

Եւ խոնարի կամքով հաւասարուել հետիններին այստեղ երկրի վրայ.

Սրանցով է, որ բերկրոււմ է բարձրեալ

Աստուածն ու պարարուում:

Եւ այսպէս ահա, ես էլ նրանց հետ, հետեւելով այդ խրատին,

Համարձակոււմ եմ նախադաս լինել բազմականների հետ երանելի:

Այսպիսով գերծ կլինենք մարգարէի մեղադրական
այս խօսքերից,

Որն ակնարկում է վէսերից ոմանց.

"Մի՛ մօտենար ինձ, զի մաքուր եմ ես, եւ ո՛վ կարող
է նայել ինձ":

Երջանիկ Դաւթի անսահման խոնարհութիւնից
օգտուելով՝ կարող կլինեմ նրա հետ ասել. -

"Որպէս անասուն համարուեցի ես՝ զգայագուրկ
եղած,

Վրայ հասան չարիքներն ու ինձ պաշարեցին.

Նեխեցին վերքերս ու փտեցին անբժշկելի՝
անզգամութեան պատճառով",

Ինչպէս նաեւ Ասորեստանում՝ ընտիր, անարատ
անձերից ոմանց

Ինքնադատական կշտամբանքները
մեղապարտութեան,

Որոնցից Եզր մեծ քահանայի այս խօսքն էմ ահա
կրկնում ես ինքս.

"Ոչ իսկ երեսն իմ կարող եմ առ քեզ բարձրացնել,
Աստուած":

Գ

Արդ, ես ճշգրիտ պատկերս ամենայն մարդկանց,

Խառնելով մեղքերս նրանց մեղքերին,

Եւ նրանցով դառնութիւնն իմ կրկնակի
աւելացնելով՝

Հեծեծեմ պիտի նրանց հետ դարձեալ,

Թէպէտեւ պէտք չէ գարշ գոյնի վրայ նոր
տգեղութիւն աւելացնել:

Ահա եւ հիմա ես մեղանչեցի, զի անմտութեամբ
գործեցի քեզ անհաճելին՝ բազում յանցաւոր
սխալանքներով:

Նայիր ինձ, գրթած, ինչպէս որ երբեմն
ուրացութեան մէջ բռնուած Պետրոսին,

Չի ծայր աստիճան ես ունայնացա:
Քո ողորմութեան ճառագայթը ծագիր ինձ վրայ,
համակ բարերարութիւն,
Որպէսզի, ո՛վ Տէր, քո օրհնութիւնն ընդունելով՝
Արդարանամ, կենդանանամ եւ լինեմ մաքուր
Ինձ լկող մեղքերից, որոնք դո՛ւ չես ստեղծել:
Մեղապարտ ձեռքերս քեզ պարզելու
համարձակութիւն չունեմ.

Մինչեւ որ մօտեցնես քո օրհնեալ աջը
դատապարտեալիս նորոգելու:

Արդ, յաղթի՛ր դարձեալ յամառութեանս քո
հեզութեամբ

Եւ գալով դէպի ինձ մարդասիրաբար,
Եւ քո բացարձակ ու կատարեալ կարողութեամբ
Ների՛ր առաջին, միջին եւ վերջին մեղքերս բոլոր,
Ո՛վ անհասներին հասնող, լոյս արդարների,
Քրիստոս թագաւոր:

Դ

Արժանի չեմ ես քո օրհնեալ անունն յիշելու,
Չի յանցաւոր եմ մահացու կերպով բարեգործիդ
հանդէպ,

Կնիքիդ հանդէպ ու շնորհիդ,

Փշումիդ ու պարգեւիդ,

Աւանդիդ, ձիրքիդ եւ անունիդ,

Որդեգրութեանդ,

Արքայական պատուիդ ու պատկերիդ,

Դրոշմիդ, օծումիդ ու ճոխութեանդ,

Համարձակութեանդ եւ ընտանութեանդ,

Կեանքիդ, լոյսիդ ու երանութեանդ,

Պսակիդ անկապտելի եւ խոստումներիդ

ծածկուած

Որոնք, Տէ՛ր Քրիստոս, բազում ձեւերով աւետեցիր
ինձ՝

Յամառողիս, իժիս եւ քարբիս, եւ ամուր խոցուած
խուլ ականջներիս:

Քո շարունակ աւելացող բարութեան դիմաց՝
Բազմապատկուեցին չարութիւններն իմ եւ ինձ
կործանեցին իսպառ,
Չատելով կեանքից, կապեցին մահուան,
Ծառայ կարգելով ապականութեան:

Ե

Արդ, դու ես միայն իրաւակշիռ եւ ճշմարտադատ,
ո՛վ բարերար եւ օրհնեալդ գթութեան մէջ.

Ես մեղանչեցի քո դէմ՝ գործելով անօրէնութիւն,
եղայ անիրաւ,

Եւ որի համար եղծուեցի ու գեղծուեցի,

Յանցաւորապէս ամբարշտացայ,

Ու չլսեցի քո խօսքը գովուած, խոստովանուած ու
երկրպագուած:

Դու ինքդ իսկ երեւացիր անճառելի քո սիրով,

Որը գրելն իսկ դժուարին է խիստ եւ նշանակելը՝
սարսափելի:

Քեզ արդարութիւն եւ փառք, եւ մշտնջենական
գովութիւն,

Իսկ ինձ՝ ամօթապարտիս քո դէմ, ինամակա՛յ,

Քաւութիւն եւ ողորմութիւն եւ բժշկութիւն,

Օգնութիւն եւ պահպանութիւն սրտի ու հոգու.

Բարեբանեալդ ըստ ամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Օրհնեա՛լ տիրապէս էութեանդ մէջ,
Անասհմանելի, անփոփոխելի, իսկապէս բարի,
Պաշտում խնկելի եւ երջանկութիւն խոստովանելի
ամենայն երկրի,

Յարատեւ յոյսի ամենապատրաստ դու
յայտնութիւն,

Գթած, ողորմած, որ չես պահում ոխ մի ակնթարթ
իսկ

Ընդդէմ բազմամեայ մեղանչումների:

Անասհման առաւելութեամբ եւ հրաշապէս
զարմանալի,

Աւելի, քան թէ երբեւէ բոլոր նախահայրերին,

Դու քո երկնահոս եւ բարեբանեալ վտակները
ողորմութեան

Նոր շնորհաբաշխութեամբ՝ մէկի տեղ կրկնակի
հանեցիր հեղել:

Երբեմնի անձուկ լուսամուտը այն, որտեղից
հագիւ, ըստ Սողոմոնի,

Չափաւոր գիտութիւնների աղօտ նշոյլներն էին
թափանցում,

Դու, ինչպէս նրա, այնպէս նաեւ ինձ՝ թշուառիս
համար բացիր ընդարձակ,

Առազաստն այն անջրպետող, որ արգելում էր

Մուտքն աստուածային ողորմութեան ճրի

պարզեւների:

Անցեալում՝ աւետաւոր յիշատակումների հետ

Պատկերաւոր օրինակներով ասացիր դու մեզ.

"Դարձէք դուք ինձ, եւ ես ձեզ պիտի դառնամ",

Կամ՝ "Երբ կդառնաս ու կհառաչես, այնժամ դու
կայրես":

Բ

Եւ կամ թէ՛ "Աղջամուղջի սեւութիւնը դու
կփոխարկես ձեան պայծառութեան,

Եւ արեամբ ներկուած մարդկանց դու կդարձնես
գեղմի պէս մարուր ըստ Եսայու եւ Չաքարիայի,

Թէ՛ բարկութեանդ մէջ ողորմութիւնդ էլ ես
մտաբերում.

Թէ՛ Իսրայէլի քաղաքները անապատանան պիտի

Եւ ապա դարձեալ դառնան բնակելի.

Թէ՛ ճանապարհները պիտի ամայնանան առ ի չգոյժ
մարդկանց.

Եւ ապա դարձեալ դառնան բանուկ.

Թէ՛ պիտի թուլանան ոգու սովով եւ քո ձեռքով
դարձեալ զօրանան.

Թէ՛ Աստուած գայրագին իր տեղը պիտի գնա

Եւ պիտի դառնայ դարձեալ ողորմութեամբ.

Կթողնի նա մեզ՝ բայց ե՛ւ կների,

Կսաստի թէեւ ու կսպառնա, բայց եւ կրկին

կպաշտպանի.

Եւ մինչ խռովայոյզ է սիրտը նրա՝ կշարժուի գուրծն
իր ինամքների:

Գ

Մարգարէների խօսքերն այս խնկելի,

Որոնք քո օրինեալ գալստեան հրամանն էին
ազդարարում առաջուց,

Եւ որ հնար չէ նիւթեղէն լեզուով բոլորը թուել,
քանզի անբաւ են,

Օրինակներ են, նմանութիւններ նուագ, փոքր ու
հին, ժամանակաւոր՝

Քո անտաւոր յայտնութեան եւ խաչիդ
փրկագործութեան համեմատութեամբ:

Դու ամենուրեք կառուցեցիր խորաններ՝ քո

արեան ուխտի վկայութեան,
 Որոնք մեծաբարբառ աղաղակում են միշտ՝
 Աբելի մահուան դատակնիքից աւելի բարձրաձայն
 հռչակելով,
 Յաղթանակը բարի պատերազմիդ
 Յանուն երկրորդ եւ անմահ կեանքի շնորհների՝
 Մկրտութեան, յարութեան, նորոգութեան,
 Ընտանութեան քեզ հետ եւ քո սուրբ Հոգու
 միաւորութեան,
 Քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան,
 Մշտնջենաւոր մաքրութեան եւ ճշմարիտ
 երանութեան,
 Վերնայինների հետ կցորդութեան, անկապուտ
 փառքի,
 Եւ մեր շուրթերի բարձրեալին ուղղած
 աղաչողական հաշտարար խօսքի:
 Եւ այն, ինչ ասելն իսկ ահաւոր է,
 Գրում եմ այստեղ եւ ի յիշատակ մեծ երախտիքիդ.
 Կարող ենք լինել մենք աստուած նոյնիսկ՝
 շնորհներով ընտիր
 Եւ ստեղծողիդ հետ միանալ՝
 Տէրունի մարմինդ ճաշակելով եւ խառնուելով
 կենաց լոյսիդ հետ,
 Մինչ ըստ Պօղոսի՝ չուներ հին օրէնքն այսպէս
 կատարեալ երջանիկ խոստում:
 Իսկ դու, փրկութի՛ն, քաւիչ բոլորի, եկար հայրենի
 քո հարստութեամբ
 Եւ մեր յոյսն առ քեզ անկրճատելի՝ արիր յարատեւ
 կատարելապէս:
 Փա՛նք քեզ Հօրդ հետ՝ ի գովք սուրբ Հոգուդ
 բարերանութեան,
 Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԾԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Զօրութիւնների՝ դու Տէր եւ թագաւոր բոլոր
գոյութիւնների.

Օրհնաբանուած ողորմութիւն եւ բոլորի
Աստուած,

Որ իշխում ես լայնատարած եւ ընդարձակ
անսահմանութեան վրայ,

Դու ես չափն ու քանակութիւնը բոլոր
մեծութիւնների,

Մինչ այն աստիճան, որ կարծրը հեղուկ է քեզ մօտ
եւ լոյծը՝ պնդակազմ,

Անհնար ոչինչ չկայ քեզ համար, ո՛վ դու յաղթական
գօրութիւն անեղ.

Հուրը զովասուն ցող է քեզ համար եւ անձրեւը՝
բոց կիզանողական:

Քարին կարող ես դու կեանք ներշնչել ու տալ
կերպարանք,

Եւ բանականին դարձնել անխօս եւ անշունչ
արձան:

Պատուի ես արժանացնում դու քեզ ողորմ
մեղապարտին

Եւ կարծեցեալ մաքրորին՝ արդար քննութեամբ
դատապարտում:

Մահաներձին բարի բերկրութեամբ արձակում ես
դու,

Եւ ամօթահարին՝ օծութեամբ դարձնում
զուարթերես:

Ոտքի ես հանում թակարդի մէջ գորրուածին

Եւ սասանեալին ապահով վեմի վրայ հաստատում:

Հիւանդին բազմահառաչ՝ երջանկացնում ես դու,

Առաջ գնացածին ետ դարձնում վերստին:

Եւ երբ սպառում են բարիքները մեզ համար,

Այնժամ դու է՛լ ասելի զարմանասքանչ գործեր ես
կատարում,

Քանզի դու գիտես ներել մեր մեղքերն ու
անօրէնութիւնները ջնջել,

Քաւիչ լինել անիրաւութիւնների եւ մեր մեղքերը
չիշել,

Ինչպէս գրում են Եսային եւ Երեմիան:

Բ

Եւ քանզի այս նոր փրկութեան շնորհներին
գոհաբանութեամբ հետեւելով

Եւ տեսնելով նրանց շատութիւնն անբաւ, լռեցի
իսկոյն ու պապանձուեցի.

Ուստի եւ ահա յիշելով դարձեալ լոյսիդ անսպառ
բարիքներն ամէն,

Որոնք քո կողմից պարգեւուած են ինձ՝ յամառ
թշուառիս,

Քո՛ւ աղերսով՝ քե՛զ պիտի պաղատեմ,
Իմ այս մատեանի խօսքերին դարձեալ
յարմարեցնելով

Թախծութեամբ լեցուն հեծեճագին բազմաթիւ
տողեր:

Սակայն ի հանոյս տուողիդ պիտի առնեմ ու
խառնեմ՝ Տաւերի հետ՝ դեղ,

Վհատութեան հետ՝ իրախոյս,

Յուսահատութեան հետ՝ յիշատակն անուան
հաստողիդ,

Տիրութեանս հետ՝ սփոփանքը քո,

Դառնութեանս հետ՝ քաղցրութիւնը կենարարիդ,

Օրէնքի պատժի հետ՝ քո շնորհը,

Անիծապարտութեան հետ՝ օրհնութիւնդ
ազատարար,

Մարմնի մահուան հետ՝ նորոգութիւնդ
կատարեալ:

Գ

Հաւատում եմ եւ հօօրիդ խօսքին եւ հաստատում
այն.

Լսի՛ր դու սրտիս լռութիւնը, Տէ՛ր Յիսուս,
Որը դէպի քեզ մեծածայն հնչումն է երկրագոյ:
Մարմնակից ու պատկերակից լինելով մեզ հետ,
Ինչպէս անօրինակ քահանայապետ, օրինակի
լուծը խորտակելով,

Անասունների տեղ մահուամբ զենուած,
Բարեբանուած մարմնիդ նուիրումով
Անմահապէս մատուցում ես միշտ եւ քաւութիւն
շնորհում աննուագօրէն

Ոչ միայն սակաւ մեղանչողներին, այլ նաեւ նրանց,
Որոնք փրկութեան ոչ մի յոյս չունեն:

Կեանքը մեղքի մէջ մեր մարմնի համար ինչքա՛ն
կարող է տեսական լինել,

Եթէ մինչեւ իսկ բիւր-բիւր տարիներ
երկարածգուի,

Երբ դու Աստուածդ զենումն յօժար կամքով յանձն
առած,

Մահն համբերութեամբ տարար՝ բաշխուելով ի
քաւութիւն մեզ:

Աղբյո՛ւրդ մաքրութեան, ոչ թէ մահապարտ լինելով
եւ դու գոհում օրէցօր,

Այլ որպէսզի մեզ հաշտեցնես Հօրդ հետ՝
հանեցնելով նրան,

Քո կամքով, հոգուդ գործակցութեամբ՝
մատուցում ես միշտ:

Իսկ դու, բոլորի Աստուածդ անքնին, իմ
պատկերով՝ ինձ՝

Փրկութեանս համար, իմ անունից,
Որպէս թէ ես ինքս կցորդուելով՝ միացած լինէի
Նոյն մարմնով պարունակուած էութեանդ հետ,
Ո՛վ բարերար, ինձ համար եւ իմ կերպարանքով,
Փոխ առնելով իմ պարտքերը եւ անպարտելիդ

մահ ընդունելով

Մահապարտիս պատիժն ու պատուհասը

Որպէս թէ կամաւոր կերպով քո փոխարէն ես
կկրեմ, -

Բազմիցս մեռնելով՝ մնում ես դարձեալ կենդանի:

Ոչ թէ ուրացողների ձեռքով, այլ հաւատացողների
հաւատքով է,

Որ նուիրում ես դու աստուածօրէն ու բաշխում
անհատնում մասերով:

Դ

Ոմն աղօթաւոր, կուռքերի մի պաշտօնատար
Այս մասին մի մեծ եւ անկշռելի դատողութիւն էր
անում,

Յոյս տալով իրեն անյարմարագիր խօսքով
այսպիսի.

"Հաւատում եմ ես տիրանալ փառքի եւ
երջանկութեան,

Երբ հասնի վախճանն անցաւոր մարմնիս":

Այդ նոյն խորհրդի միջոցով, քան թէ
մարտիրոսութեամբ,

Եւ կամ ուղղելով ընթացքս թշուառ:

Բայց նկատեցի, որ նա անճառութիւնն այս
խորհրդի դաւանում էր այնպէս,

Թէ մաքուրներն իսկ, առանց նուիրման այս
յիշատակին,

Թէ գոնէ հոգով խառնուելով այդ մեծ
հրաշակերտութեան հետ՝

Չեն կարող իսկապէս բոլորովին կատարեալ
դառնալ:

Եւ ապա ասում էր նա յուսալով վստահապէս՝

"Մեղաւորիս համար դու կրկնապէս

մատուցուեցիր եւ եղար իմ եսը ճշմարտապէս

Քո համեղութեան փոխարէն դառնութիւնն իմ

առնելով,

Եւ քո իսկ մարմնով՝ լուսեղէն կեանքի նշխարովդ
դու պատարագուեցիր”:

Եւ սակայն, քանզի վերնատան մէջ, առաջին
անգամ,

Բարեշնորհի հաղորդութեան խորհրդի ժամանակ,
Որպէս անհնար եւ անբուժելի մեղքերի դարման՝
Նա բաշխեց մարմինն ու արիւնը իր որպէս
քառութիւն, -

Ուստի եւ, ահա, հաղորդութիւնն այս վեր էր
դասում նա,

Քան թէ վկայուածի նահատակութիւնն արեամբ
կատարուած:

Այս օրինակով համոզուած էր նա եւ
հաւատացնում էր միանգամայն,

Թէ այս փրկանքով հնարաւոր է հասնել յարգանքի
եւ փառքի տիրանալ,

Քան թէ քառութեամբ եւ ողորմութեամբ կամ
շնորհումով.

Չի աստուածային զօրութիւնը վեր է, քան թէ
մարդկայինը,

Եւ աստուածախառն տիրական մարմնի
կամաւորական նուիրումն է վեհ,

Քան անասնական սպանդի մատուցումը.

Անմահը, քան թէ մահկանացուն,

Լոյսը ահաւոր, քան թէ խաւարը,

Հաւիտենականը, քան թէ անցաւորը,

Բարձրեալը, քան թէ երկրաւորը,

Անստեղծը, քան թէ եղածը,

Իսկութեամբ բարին, քան թէ բնութեամբ վատը.

Մանաւանդ որ իր ձեռքն է կամենալն ու
կենսագործելը,

Տալով օրհնութեան առիթ եւ ոչ թէ պատճառ՝
դառն անէծքների:

Ե

Աղաչում եմ, գլխած, տուր հոգով-սրտով
խոցուածիս

Երկնուց ընծայուած կենաց դէղը քո:

Քաղցրութեամբ, Տէ՛ր, մօտեցիր դու ինձ՝ բազում
մեղքերով ախտաւորուածիս.

Ձնջի՛ր պարտքերս, ամենակատար
բաւականութիւն:

Եւ ճշմարիտ է ինձ համար, իրօք, իմաստն այս
խօսքի,

Թէ՛ ստեղծիչդ ամենայնի՛ սրբերի մէջ ես
բնակւում.

Ճիշտ է արդարեւ, թէ ինչ որ ցանես, նոյնը կհնձես,
Ինչպէս Պօղոսն է ասում յիրաւի՝

Ցաւագին աչքերն արեւի տապին տոկալ չեն
կարող:

Իսկ դու, բարերար, ստեղծիչդ ամենայնի՛
ոչնչութիւնից,

Գնահատում ես յաւէտ իսկապէս դաւանելը քեզ,

Որպէս կարող ուժ՝ կեանք տալու համար:

Օրէնքով դու չես սահմանափակուած, այլ վեր ես
ամէն մի սահմանումից,

Եւ մանաւանդ թէ կարող ես խզել կանոնի ամէն
տեսակ կապանքներ,

Մնալով միայն ի՛նքդ աւետեաց պայման ու
խոստում

Յոյժ տարակուսեալ յանցաւորների համար
համօրէն:

Եւ քեզ՝ Հօր ու սուրբ Հոգու հետ՝ փանք,
իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ այսպէս ահա, ողորմում ես դու բոլոր քեզ վրայ
յոյս դնողներին,

Ո՛վ սկզբնալոյս աչքի տեսողութիւն եւ սրտի
գիտութեան Յիսուս,

Դո՛ւ ես բարերարում, դո՛ւ ես տալիս կեանք եւ
անմահութիւն:

Դէպի ինձ դարձիր քո գթութեամբ, եւ պիտի
պատրաստես իմ դարձը առ քեզ կրկնակի՝
բերկրութեամբ,

Չի առանց քո կամքի չեմ կարող լինել
վերանորոգուած.

Եւ եթէ չկամենաս գթալ, չեմ կարող փրկուել
մահապարտս ես.

Եւ կառավարիչդ եթէ չհարթես դէպի քեզ բերող
ճանապարհը՝

Աջից ու ձախից խորունկ վիհերն ինձ կորուստ
կսպառնան:

Բ

Չեմ պարծենում ես՝ նախատեալս ամէն կողմից,

Չեմ պանծա պարսաւեալս,

Չեմ խրոխտում լքեալս,

Չեմ մեծաբանում պապանձեալս,

Չեմ ըմբոստանում ծաղրեալս,

Չեմ երջանկանում եղկելիս, եւ չեմ արդարանում
ամբարիշտս,

Քանզի, ինչպէս առանց սանձակալի երիվարն
ուղիղ ընթանալ չի կարող,

Ո՛չ էլ նաւն առանց ղեկավարի կշարժուի առաջ,

Ո՛չ արորն ուղիղ ակոս կբանա առանց մանկալի,
Եւ ո՛չ զոյգ լծերն յարմար կընթանան առանց
հօտաղի,

Ո՛չ ամալը առանց քամու կշուի,
Ո՛չ աստղերն անժամանակ կցնդեն ու
կգումարուեն.

Եւ արենն առանց տարրեղէն օդի իր շրջանը
կբոլորի, -

Այդպէս նաեւ ես այդ բոլորի հետ չեմ կարող անել
ոչինչ, ոչ մի բան

Առանց բարեգործիդ ակնարկութեան եւ
հրամանի:

Չի դու ես միայն, որ կեանք ես տալիս
բանականներին

Ու խնամք տանում արարածներին
բոլոր-բովանդակ,

Եւ քո ձեռքումն է իմ փրկութիւնը, ըստ
սաղմոսողի:

Դո՛ւ ես հնչեցնում ամէն հասակի մարդկանց
ականջին

Քո աւետաբեր ձայնը խնդալից, -

"Իմ հանգստին եկէք, սաստիկ հոգնածներ, եւ ես
ձեզ պիտի մաքրեմ մեղքերից":

Գ

Իսկ ինձ ի՞նչ օգուտ լուացումից, եթէ պիտի
դարձեալ դառնամ զագրելի,

Եւ կամ ի՞նչ օգուտ նաշակումից, եթէ գեհեճի
պիտի մատնուեմ.

Ի՞նչպէս պարծենամ ես Աբրահամով, երբ
խորթացել եմ նրա գործերից,

Գարշելի որդիս ամովրացի հօր եւ մօր՝ քետացի
կամ քանանացի,

Ըստ մարգարէի խօսքի՝ կարծես թէ ինձ համար

ասուած.

Ժառանգս մերժելի՝ եթովպացի եւ ո՛չ
Սառայի արգանդի ծնունդ,
Ըստ այն առածի, որով տեսանողն ինձ է
ակնարկում.

Ես եղբայրս Շամրինի կամ Գոմորի,
Անլուայ եւ անաղելի
Ծնունդս՝ Ոողի եւ Ոողիբայի խակակուրթ եւ տհաս
պորտի,
Ըստ Եգեկիելի կշտամբութեան:

Դ

Ինչպէս ոմն, որ հողմակոծ ծովի ծփանքների մէջ
Սաստկապէս ծեծկուած, լկուած ուժգին ու խիստ
տագնապով

Կտարուի՝ ընկած հեղեղագնաց հախտուն
հոսանքում,

Որ ձեռքի մատներն այս կողմ ու այն կողմ
տարուբերելով,

Ձերթ գարնանագայր գետերի յուժկու հորձանքից
քշուած,

Ակամայ վազքով եւ թաւալգլոր խղճալիօրէն,

Ու խառնախառիւ, պղտոր, գարշահոտ,
տղմախառն, մամռոտ ջրեր կուլ տալով,

Շնչասպառ իսպառ կքշուի մահաբեր սաստիկ
ցաւերով

Ու կիսեղդուի ուղիւտերում սուգուած, -

Այդպէս են եւ են՝ եղկելիս, ահա,

Խօսում են՝ ու չեն իմանում,

Գոչում են՝ ու ոչինչ չեն լսում,

Ձայն են տալիս՝ ու չեն արթնանում,

Կանչում են՝ ու տեղիցս չեն շարժւում,

Փող են հնչեցնում՝ եւ չեն գումարւում,

Վիրաւորւում են՝ ու չեն զգում,

Ու գարշատեսիլ կուռքերի նման թափուր եմ
խապառ բարի մտքերի ներգործութիւնից:

Բերուած օրինակն, արդարեւ, պատկերն է իմ
խկական,

Բայց աւելի քան ատելի, վատթար եւ մեղադրելի
Եւ Զրիստոսի կողմից արժանի
դատապարտուելու:

Ե

Եւ քանզի անդարձ ճանապարհի համար իմ այս
կտակը,

Որպէս յիշատակ աշխարհում գործած մեղքերի՝
թողի ընթերցողներին,

Որ իմ խօսքերով հանապազ աղօթք կարդան առ
Աստուած, -

Թող որ այն մնա իբր ընդունելի
խոստովանութեան

Ողբաձայն աղերս-աղաղակ ընդմիշտ, ո՛վ
ամենակալ,

Եւ գիրն այս՝ մարմնիս, եւ խօսքը՝ հոգուս տեղ
Թախանձեն թող միշտ անսահմանելուդ,

Իբր անեղծական անմահ մաղթողից ընդունելով
այս աղերսն իմ ձայնով,

Բարեգո՛ւթ, մարդասէր, օրինեալ յաւիտեանս.
ամէն:

ԲԱՆ ԾԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Հոգուս թելերով շրջեցի մարդկանց անթիւ
անհամար սերունդների մէջ

Եւ ինքս իմ մէջ կշռադատելով՝ չգտայ ոչ որ ինձ
չափ մեղաւոր.

Եւ դրա համար Դաւթեան սաղմոսի խօսքերով
սաստիկ,

Որ նմանում է դառն կշտամբող գաւազանաւոր
կառավարչի,

Պախարակում եմ ինքս ինձ ահա. -

"Ո՛վ կհաւասարուի ինձ չարութեան եւ
անօրէնութեան մէջ":

Վկայում եմ եւ ես, կրկին անգամ հաստատելով,
Թէ այս խօսքերն իսկապէս ինձ են վերաբերում.

Ուստի գտնում եմ ես իրաւացի համարել միայն
մեղաւոր ինքս ինձ,

Քան թէ իմ խօսքերով շատերի դատապարտել:

Այսպիսով, իմ դէմ մեղանշողներին ներելուս
համար՝

Գուցէ դու էլ ինձ շնորհես ներում:

Բ

Եւ արդ, այս անգամ հաճոյական ի՞նչ
աղաչանքներ

Եւ ընդունելի խումկերի անուշ ծուխեր մատուցեմ,

Գովեա՛լ երկնաւոր թագաւոր Քրիստոս,

Եթէ ոչ խնդրել, որ օրհնես ինձնից
անիծուածներին,

Արձակել կապուածներին եւ

դատապարտուածներին ազատել,

Բարիք անել նգովուածներին եւ պասկել
թշնամանուածներին,

Սփոփել տրտմածներին եւ դարմանել
խորտակուածներին,

Խնամել խրտնածներին եւ պատասպարել
նենգուածներին,

Եւ մարմնով վիրաւորուածներին բժշկել հոգով:

Եթէ օրհնութեամբ մօտեցայ մէկին՝ յսիր,

Իսկ թէ անէծքով՝ մի՛ ընդունիր, գթած:

Գ

Ես տառապեալս ամենաթշուառ, հետինս այս
մատեանով աղօթողների մէջ՝

Բովանդակ հոգով ներեցի իմ դէմ մեղանշողներին:

Դո՛ւ արգելեցիր իղձը դժնդակ չար անէծքների,

Եւ ես խղճալով իմ հանդէպ բոլոր նենգաւորներին՝

Իմ ամբողջ սրտով ցանկացայ նրանց՝ յաշտութիւն
գտնել բարիների հետ,

Եւ որոնց համար ծուներ դնելով՝ պաղատեցի ես:

Յապա դու, որ ինձ այցի ես գալու,

Որքան աւելի պիտի ողորմես, ըստ քո մեծութեան,

Գովեսա՛ ինամակալ, կեանքդ մահկանացուիս,

Հօրդ՝ տկարիս, ամենակարողդ՝ վարանեալիս,

Աղբիւրդ իմաստութեան՝ յիմարիս եւ թմրեալիս:

Քանզի սխալուելով սաստիկ, ինչպէս խաւարին
անընտել սուգակ,

Անգգայապէս ես ինքս մահուան ծուղակը ընկայ,

Չհասկացա կորուստը, որոգայթն անգիտացայ,

Չտեսա որսացող ծածուկ մեքենաները,

Չկասկածեցի կեղծաւոր վարմի խաբեութեանը,

Չնկատեցի գայթակղութիւնը ինձ շրջապատած,

Չշոշափեցի պատանդիչ ցանցարկը կարթի,

Չարիքները վրայ հասան ինձ,

Եւ ես չկարողացայ ճանաչել նրանց, ըստ

սաղմոսողի:

Եւ արդ, ինչպէս որ մի հեթանոս իմաստասէրի
չիմացուած մահը չարիք համարել թուաց իսկ որ
ճիշտ,

Ես էլ իմ խօսքով հաստատում եմ այդ.

Գ

Քանզի անզգայ անասունների պէս մեռնում ենք ու
չենք զարհուրում,

Կորչում ենք՝ ու չենք սարսափում,

Թաղւում ենք՝ ու չենք խոնարհում,

Տարագրւում ենք՝ ու չենք տագնապում,

Եղծւում ենք՝ ու չենք զղշում,

Մաշւում ենք՝ ու չենք հասկանում,

Պակասում ենք՝ ու չենք վերալրւում,

Քայլում ենք՝ ու չենք զգուշանում,

Գերւում ենք՝ ու չենք զգում:

Ե

Իսկ Յոբ երանելին հանգիստ է անուանում
վախճանը մարդու.

Նոյնը սուրբի հետ եւ ե՛ս կասէի,

Եթէ մահացու գործերի բեռը ես չունենայի վրաս
ծանրացած:

Մանաւանդ որ որոգայթը գաղտնի է, եւ այն
լարողն աներեւոյթ,

Եւ ժամանակի տարրը ոչնչից,

Անցեալը անյայտ, եւ ապառնին կասկածելի,

Ես անհամբեր, եւ բնութիւնս թերահաւատ,

Ոտքերս անհաստատ, եւ միտքս ցնդած,

Կրքերս բռնաւոր, եւ բարքս անժուժկալ,

Մարմինս մեղսամակարդ, եւ ցանկութիւններս

երկրասեր,

Դիմադրությունը տնկակից է ինձ եւ խառնուածքս ներհակական,

Բնակարանս է կաւեղէն, եւ անձրեւներն ուժգնակի,

Կարիքներս անթուելի, եւ պատահարներն ամենագրաւ,

Միտքս չարախնամ, եւ տենչերս չարական,

Կեանքս է միօրյա, եւ զվարճութիւնները վաղանց,

Խտրկանքներն են հիմնական, եւ խաղալիքները սողայական,

Աշխատութիւններն ընդունայն, եւ վայելքներն երազական,

Ամբարները ոչնչութեամբ են լի, եւ պահեստները քամով,

Ստուերի եմ նման, եւ կերպարանքս է ծիծաղելի,

Չի, ըստ Պօղոսի, երբ պատուիրանը վրայ հասաւ,

Ինձ անպատրաստ գտնելով իրեն,

Կենդանացան մեղքերն արդարութեան երեւումով,

Եւ ես մահացա կեանքի համար ու կորստեան

համար կենդանացա:

2

Օտարներն ու չարի գունդերը գողացան սրտիս ստացուածքները, -

Համաձայն Գրքի կանխաբանութեան,

Որով սկսեց պակասել իմ մէջ իմաստութիւնը, ըստ առակողի,

Եւ աւելանալ ո՛չ բարու ցանկութիւնը:

Հոգուս աչքը ջառեցի կեանքիս գլուխը եղող Զրիստոսին,

Որպէսզի ուղիղ ճամփով գնայի:

Կամենալով ուժգին վազել՝ սուգուեցի սաստկապէս,

Անչափելիին ձգտելով՝ չկարողացայ հասնել իմ
չափին,

Փորձելով բարձրանալ մեծագոյնին՝ գլորուեցի
ցած,

Երկնային ուղուց՝ անդունդ գահավիժեցի,
Չգուշանալով առաւելապէս՝ խիստ վնասուեցի,
Ուզելով մնալ ամբողջական՝ մանրապէս
մասնատուեցի,

Ձախի դէմ մրցել կարծելով՝ աջից գայթեցի,
Երկրորդը փնտրելով՝ առաջինը կորցրի,
Աննշանի հետեւից գնալով՝ կարեւորից գրկուեցի,
Ուխտը պահել ուզելով՝ դաշինքը դրժեցի,
Սովորութիւններիցս կտրուելով՝ կորուսիչները
գտա,

Փոքրերից փախչելով՝ մեծամեծների մատնուեցի,
Ինչ որ ես ինքս էի ստեղծել՝ դաժան դատախազ
կարգեցի իմ դէմ:

Սրանց բոլորին մատնուած գերուս՝ դու ինքդ
միայն կարող ես փրկել,

Մահուան ընծայուած հոգիս վերստին կեանքին
դարձնելով.

Չի դու միայն, Տէր Յիսուս, ճանաչուում ես
բարերար,

Անսահման փառքով Հօր եւ սուրբ Հոգու հետ
Օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾՉ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՃՈՅ ՀԵՏ

Ա

Իսկ իմ՝ մահառիթ մեղքերի դժոխարմատ ծառիս
դառն պտուղները,

Որոնք ընտանի թշնամիներ են, հակառակորդ

հարազատներ եւ որդիներ դաւանան
Ստորեւ պիտ նշեմ մանրամասն ու ցոյց տամ
իրենց իսկ անունով,
Որոնք են ահա. -
Սիրտ նանրախորհուրդ, բերան չարախօս,
Աչք հայրատատես, վրիպալուր ականջ, ձեռքեր
մահաձիգ,
Երիկամունք անփորձ, մոլորաշաւիղ ոտքեր,
Ընթացք աներկիւղ, խտտորնակի հետք,
Ծխախառն շունչ,
Գնացք խաւարային, լեարդ քարահանգոյն,
Դատարկ խորհուրդ, անկայուն կամք, անփոփոխ
չարիք,
Բարեմասնութիւն սասանեալ, հոգի տարագիր,
վանառուած աւանդ:
Վիրաւոր գագան, նետահար թռչուն,
Փախստական քարավեժ, բռնուած յանցապարտ,
ծովակուր աւագակ:
Նենգաւոր զինուոր, անպատրաստ մարտիկ,
անժոյժ սպառագէն,
Անաշխոյժ մշակ, անխրախոյս աղօթաւոր,
ստորաքարշ բեմական,
Քահանայ անկնդրուկ, Օրէնուսոյց անուէր:
Դպիր կշտամբուած՝ իւելագար իմաստակ,
անճոռնի ճարտասան:
Կերպարանք անպատկառ, անամօթ դէմք եւ լաիրշ
երես,
Գոյն անհրապոյր, տմարդի տիպ, ծանակուած
գեղեցկութիւն,
Խանգարուած խորտիկ, գարշելի ճաշակ,
Դաղձախեղդ այգի, որդնահար որթ, փշաբեր
պարտէզ,
Հասկ ուտիճակեր եւ մեղր՝ դարձած մկների
ճարակ,
Անպաշտպան անկեալ, սնապարծ յուսահատ
անհամոզ նզովեալ,

Անհաշտ բաժանուած, ունայնաբան շաղակրատ,
անասնամիտ գոռոզ,

Անասնօրէն ապիրատ, դժոխային ագահ,
հանդուգն ապերասան,

Սոլեզնութիւն անաստուած, ձեռնձգութիւն
սպանիչ,

Տատասկացան երկրագործ, երջանկութիւն
եղկելի,

Վատթարացած մեծութիւն, անշքացած
վայելչութիւն,

Տկարացած կարողութիւն, խոնարհուած
բարձրութիւն,

Ոտնակոխ փառաւորութիւն,
պատուիրագանցութիւն մշտական եւ ինքնակամ
սխալանք,

Սատակարար խարդախ, նենգաւոր խորհրդակից,
Բարեկամ գժտուած, հագարապետ գողամիտ,

Մերձաւոր կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ
կարկամ,

Ոգի անկարեկիր, ըղձանքներ անսէր,

Սարդատեաց բարք եւ անգութ աղիք,

Ընթացք անխոհեմ, աներեւոյթ ախտեր,

Անիծեալ գաղտնիքներ, նախատելի դիպուածներ:

Վաճառական վատնող, շուայտ շահարար,
արբեցող պաշտօնեայ,

Խարդախ գանձապահ, բանսարկու
պատգամաւոր, դռնապան քնկոտ:

Աղքատ հպարտ եւ զլացող մեծատուն:

Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ,
բնակակից չարախօս,

Սուրհանդակ անժաման, մեղապարտ թղթաբեր,

Խռովարար առաքեալ եւ միջնորդ անմիտ:

Արքա արտալսած, թագաւոր թարմատար, կայսր
հոգեկործան,

Իշխան տիրադաւ, գրկող զօրավար,

Աչառու դատաւոր, ինքնագլուխ ռամիկ:

Նախատողի ծաղր, սիրելիի լաց,
Բանագրի պարսաւ, յանդիմանողի
դատախազութիւն:

Քանզի վեհագոյն այդ կոչումները եւ էի կրում
երբեմն իրօք,

Իսկ յետոյ վատթար որակումներին այդ
արժանացաւ:

Սրանք են ահա եւ այլ բազմաթիւ
խարդախութիւններն այն վնասակար,
Որոնց մի քանիսից խաբուեցի եւ որպէս յիմար,
Եւ ոմանց կողմից տկարաբար տիրուեցի,
Ինքս ինձ կամովին մատնելով մահուան:

Բ

Արդ, քեզ ատելի եւ ինձ դէպի կորուստ տանող
Վերոյիշեալներից որո՞նք ընծայեմ քեզ ի սպաս
պաշտամունքի.

Ապականութեամբ պաշարուածիս որպիսի՞ք
ներկայացնեմ քո ամենասուրբ մեծութեանը.

Եւ կամ դու ո՞րքան երկայնամտութեամբ պիտի
համբերես այսքան մեղքերիս.

Ո՞րքան ներես, ինչպէ՞ս պիտի լռես,

Եւ մանաւանդ ինչպէ՞ս պիտի հանդուրժես.

Մահու սատակման արժանուս ինչպէ՞ս
չենթարկես գանակոծութեան:

Բայց աննառագայթ մթութեամբ խաւարամած
հոգիներին

Քո ողորմութեան լոյսով հանդիպի՛ր դու,

Բժշկելու, քաւելու եւ կենագործելու համար
նրանց.

Ո՛վ զօրեղութիւն անվթարելի, քեզ փա՛նք
յաւիտեան. ամէն:

ՔԱՆ ԾԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Քրիստոս Աստուած, անուն ահաւոր,
Մեծութեան տեսակ, տիպար անքնին,
բարձրութեան պատկեր,
Անսահման զօրութիւն, կերպարան փրկարար
լոյսի,
Պաշտպան դու կեանքի, դո՛ւն արքայութեան
վերին հանգստի,
Խաղաղութեան ճանապարհ,
Ապաւինութիւն նորոգ եւ անտխուր երանութիւն,
Ամենակալ ինքնիշխանութիւն բոլոր էութեանց,
Օրինութեան կոչումն, աւետաբեր ձայն,
բերկրութեան բարբառ,
Անմահութեան դեղ,
Որդի՛դ դու անճառ միակ Աստծոյ,
Ինչ որ անհնարին է ինձ՝ դիւրին է քեզ համար.
Ինչ որ անհասանելի է ինձ՝ քեզ համար
սահմանուած է.
Ինչ որ անանց է ինձ՝ մօտիկ է քեզ համար.
Ինչ որ ծածկուած է եղկելոյս՝ մերձաւոր է քո
երանութեանը.
Ինչ որ անկարելի է ինձ՝ քեզ համար կատարուած.
Ինչ որ ինձ համար անկշռելի է՝ քո անճառութեան
համար չափուած է.
Ինչ որ յուսահատեցնում է ինձ՝ քեզ սփոփանք է
բերում.
Ինչ որ անբժշկելի է ինձ՝ անվտանգ է քեզ համար.
Ինչ որ հեծութիւն է պատճառում ինձ՝ քեզ համար
խնդառիթ է.
Ինչ որ ծանր է ինձ՝ թերթւագոյն է քեզ համար.
Ինչ որ ստեղծուած է ինձ համար, զօրեղութեանդ
գրուած է.

Ինչ որ ինձ համար կորած է, քո ձեռքումն է այն,
Ինչ որ անթուելի է ինձ՝ քեզ համար համարուած է.
Ինչ որ ինձ համար մռայլ է, քեզ համար ճառագայթ
է.

Ինչ որ ինձ համար անհաշուելի է, բովանդակուած
է օրհնեալ ձեռքերիդ մէջ.

Ինչ որ սուկալի է ինձ՝ հեշտալի է քեզ համար.

Ինչ որ փախչելի է ինձ՝ քեզ համար վանելի է.

Ինչ որ անմատոյց է ինձ՝ դիւրամատչելի է քեզ
համար.

Ինչ որ մահաբեր է ինձ՝ քո աստուածային
գօրութեան համար անգոյութիւն է:

Բ

Բայց դու, ողորմած Աստուած բոլորի,
Տէր Յիսուս Զրիստոս,
Եթէ գթաս ինձ, կարող ես ելքի մի հնար գտնել:
Յանուն քո օրհնեալ Հօր վեհմ փառքի եւ քո սուրբ
Հոգու կամքի գթառատ՝

Տե՛ս տառապանքներն իմ տաժանելի՝ քեզ
յայտ-յանդիման,

Եւ սրտիս խորքից դատախազ լինելն ինքս իմ
անձի դէմ:

Իմ ամենացրուած բնութեան իսկութեանը նայիր
դու

Եւ բժշկութիւն պարգեւիր իմ վերքերին,
Տո՛ւր հնարաւորութիւն՝ կորուստից դուրս գալու,
Չերծումն՝ բազմամասնեայ մահից եւ կենաց
շաւիղ՝ ապականուածիս,

Նորոգութիւն եղծեալիս եւ յոյսի մուտք
ամբարշտիս,

Եթէ ես, հակառակ իմ բնութեանը, կամք
ցուցաբերեցի այս բոլորն ասելու,

Յապա դու ո՞րքան աւելի պիտի բարերարես ինձ,

ինչ որ բնածին եւ յատուկ է քեզ:

Եթէ փշերից քաղցրահամ պտուղ քաղուեց,

Քո կենաց ծառից ո՛րքան աւելի անմահական համ
պիտի ստացուի:

Եթէ ես իմ աստվիների համար քո ողորմութիւնը
խնդրեցի,

Դու ինչպէ՛ս պիտի կրկնակին չտաս քո անսպառ
առատութիւնից ինձ, որ քոնն եմ, ո՛վ ամենագոր:

Գ

Արդ քո մեծութիւնը տե՛ս, բարձրեալ, եւ նայելով իմ
փոքրութեան վրայ,

Ընդունի՛ր սակաւ խոստովանութիւնն անթիւ
մեղքերիս,

Ո՛վ դու, որ տեսնում ես բոլորը:

Եւ ինչպէս որ հաշուի չառար Վէմի գլորուելը,

Անտեսի՛ր նոյնպէս սասանուելը դու փոքրիկ
աւագիս.

Ինչպէս որ իսկոյն վերացրիր Դաւթի
պատժապարտութիւնը, երբ ասաց՝ մեղա,

Նոյնն արա՛ւ եւ ինձ, ո՛վ երկայնամիտ, լսելով ձայնն
իմ հեծեճանքների.

Դու, որ բոլորին անաչառութեամբ եւ առատօրէն

Տալիս ես, որպէս յաղթող բարի, բազմիմաստ

Եւ չես նախատում հետին ստրուկիս, որպէս
ողորմած եւ ամենաստեղծ,

Ստացի՛ր կրկին եւ մի՛ կորցնի ինձ՝ քո արիւնով
բուժուածիս, գթա՛ծ.

Ձի դու կարող ես քաւել ու փրկել,

Եւ քեզ վայել է փա՛ռք ամէն ինչում յաւիտեանս.
ամէն: ...

... յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Օրհնեալ ես դու, Տէր Յիսուս, Հօր հետ՝ բարեհաճ
կամքով սուրբ Հոգու,

Եւ բոլոր օրհնուածներն օրհնեալիցդ օրհնուեցին,
Դ՞ու՛ միայն օրհնեալ Որդիդ օրհնեալի:

Քեզանից բացի չի՛ք շնչիս իշխող թագաւոր,

Քրիստո՛ս:

"Յակոբն, – ասում է Եսային, – օրհնուած կլինի
այն ժամանակ,

Երբ կվերցնեմ մեղքերը նրա":

Եւ արդ, ողորմի՛ր ինձ, Տէ՛ր բարեգութ, համաձայն
նախնի քո սովորութեան,

Եւ օրհնի՛ր անօթդ այս բանական, ըստ Դաւթի եւ
ըստ Մովսէսի,

Որպէսզի խօսքովդ փրկութեան հասած՝
քաւութիւն գտնեմ քեզնից օրհնուելով:

Հրաշագործի՛ր ինձ աստուածապէս, ողորմած
արքա երկնաւոր,

Ինչպէս որ արիւր Բերեղեզայի սրահում
հաւարուած

Եւ երկար ժամանակ մահիճը ընկած
ախտաւորներին:

Դրանցից մէկը այն կրկնակի թերահաւատն էր եւ
երեսունութ տարուայ անդամալոյծը,

Եւ դու չզլացար նրան քո բժշկարար օգնութիւնը,

Գիտենալով նոյնիսկ նրա չարութիւնն անուղղելի,

Որ նիւթեց նա քեզ՝ երախտաւորիդ, մեծիդ եւ

բարերարիդ՝

Մատնութեան օրը, տիրամարտութեան դառն այն
գիշերը:

Բ

Թէւ դու նրան նախօրօք զգուշացրիր,
Թէ՛ մի՛ մեղանչիր, որպէսզի կրկին չարիք չգա քեզ,
Բայց չդադարեց լինել ձեռներեցն ու առաջինը այն
ժանտ մարդկանց մէջ,

Որոնք քեզ խաչին դատապարտեցին:

Եւ դու այդպէս կախարդ ջատուկի, անյարիր
ընկած

Եւ մահվամբ չոքած չարաշուք մարդուն,
ողորմեցիր,

Անճան բարութիւն, սխրալի մարդասիրութիւն,

Սարսափելի ներողամտութիւն, սոսկալի
երկայնամտութիւն,

Անբաւելի քաղցրութիւն, փառատրելի հեզութիւն,

Որ միշտ յաղթում ես գթութիւնից ու չես

թշնամանում,

Պարտում ես ողորմութիւնից ու չես պարսաւում,

Բռնադատում ես մարդասիրութիւնից ու չես

արհամարհում,

Հարկադրում ես բարութիւնից ու չես հայհոյում,

Ստիպում ես սիրուց ու չես բամբասում:

Պաղատում ես դու քեզ դարձիս համար ու չես
ձանձրանում,

Վազում ես ապերասանիս հետեւից ու չես
հոգնում,

Ձայնում ես չլսողիս ու չես սրտմտում,

Շտապում ես մեղկացեալիս մօտ ու կանգ չես
առնում:

Չարիս համար բարի ես եւ ամենապարտիս
համար ներող,

Քաւիչ ես մեղաւորիս համարեւ խաւարեալիս լոյս,

Եւ մահացածիս համար կեանք ես դու:

Գ

Այսպէս են ասում բոլոր հոգեշունչ գրքերն
օգտակար,

Եւ որոնք յաճախ ծնուն են անճառ եւ զարմանալի
երկնաւոր պտուղներ:

Ասա՛ նաեւ ինձ՝ թշուառիս, օրհնեալ
ամենապարգեւ, -

"Վեր կաց ու վերցրու մեղքերի մահիճը
կործանուածիդ,

Եւ իմ հետեւից արի, որ հասնես անհոգնում
կեանքի խաղաղ հանգստին":

Քո հրամանի ամենակարող սուսերով կտրի՛ր
Կապանքները պիրկ եւ դժոխային
երիզապատուած իմ մահազգեստի

Եւ մահասարսուռ սաստկութեամբ խեղդող
հանգոյցները քանդի՛ր,

Ուղարկելով ինձ՝ մահուան արժանուս, քո
աստուածային կենսաբեր խօսքով

Դէպի վեր՝ անանց, յաւերժ բերկրութեան
ազատութեան մէջ:

Մի՛ կենագործիր տակաւ-տակաւ եւ մի՛ ձգձգիր
օրէցօր երբէք,

Որ հետզհետէ մեղքերի բեռան ծանրութիւնն
ստուար

Չճնշի ազդրերս ու չկռացնի ինձի վար՝ դժոխքին
նայելու,

Եւ ուժգնակի գոռոզ բռնութեամբ հոգեւորական
զէնքերս ի դերեւ հանելով մահուան ծառայեցնի ինձ:

Այլ դու օգնիր ինձ, բարի՛ վշտակից,
Մահուան երկունքի այս իմ ցաւագին
հեծե՛ծանքներում,

Սատակման փայտը վրայիցս առնելով, ինչպէս
երբեմն՝ պահակի ուսից,

Որով վայելուչ կորթոյ կառուցես քո յաղթանակի
արի գօրութեան,

Ամուր հաւատքով, հաստատուն յոյսով ինձ
բեւեռելով քեզ հետ՝ անապթաք:

Եւ քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգու հետ փա՛նք,
իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Հաւատում եմ եւ վկայում գիտակցաբար՝
Քեզանից ազդուած մտատեսութեամբ
Թէ ըղձալի են քեզ, բարերա՛ր,
Աղաչանքները մեղաւորների, քան թէ
խնդրանքներն արդարների:

Չի մէկն իր մեղքերը խոստովանելով շնորհիդ է
սպասում

Եւ ճանաչելով չափն իր բնութեան՝ ծառանում
ինքն իր դէմ,

Որպէս մեծ կշտամբիչ եւ ինքնոգոր մարտակից,
Դառն յանդիմանող ու ծածկատես դատախագ:
Իսկ միւսն իր բարի գործերին նայելով՝
յանձնապաստան վստահութեամբ՝

Մոռանում է սահմանն իր բնութեան եւ
պարգեւներ է ակնկալում, քան թէ ողորմութիւն:

Եւ այդ պատճառով մէկի մօտ յօրինում են անթիւ
ճառեր,

Որոնք բարձրաձայն քո ողորմութիւնն են
փողահարում,

Իսկ միւսը լռում է դրանց մասին, ո՛վ անքննելի,
ահաւոր եւ ամենախնամ:

Ամաչում եմ ասել, թէ երկրաւորիս գործերի
պատմութիւնն իսկ քոնից էլ առաջ է անցել.

Ուստի արա՛ այնպէս, ո՛վ Տէր,

Որ քոնից աւելի չգօրանայ աջն հողեղէնի.

Մարդկանց ջանքերը թող որ չկշռեն
ողորմութիւններդ:

Բ

Առողջ անդամներ ունեցողներն անկարօտ են
բժշկութեան,

Եւ այքով տեսնողներն առաջնորդի պէտք չունեն,
Ինչքով փարթամները լիացածների դռների շուրջը
չեն դեգերում,

Եւ կուշտ ու կուռ կերածները չեն սպասում հացի
սեղանի փշրանքներին,

Եւ վարքով մաքուրները ողորմութեան անկարօտ
են:

Ուստի ինձ գրայ եւ ողորմիր, բարձրեա՛լ երկնաւոր
հօր,

Ինձ՝ վարանեալիս ամենատխուր:

Չի եթէ Յոբին ես նմանուէի,

Ինքս էլ նրա պէս կասէի՝ արդար եւ անարատ եմ.

Եթէ լինէի ես Մովսէսի պէս՝ ինքս էլ նրա պէս
կասէի վստահ՝

"Տէրը պիտի ճանաչի նրանց, ովքեր իրենն են",

Եթէ լինէի ես Դաւթի նման, կասէի նոյնպէս՝

"Արեցի իրաւունք եւ արդարութիւն".

Եւ դարձեալ մարդկային բնութիւնից վեր այս
խօսքը հոխորտ՝

"Եթէ սրտիս մէջ անօրէնութիւն տեսնէի,

Տէրն ինձ չէր լսի".

Եթէ Եղիային նմանուէի ես՝ պիտի կոչէի ինձ

"ա՛յր Աստծոյ".

Թէ Երեմիային՝ ճշմարտութիւնդ կօրինակէի.

Եթէ լինէի Եզեկիայի պէս՝ ինքս էլ իրաւամբ
կպարծենայի՝

"Զո աչքի առաջ ես արդարութեամբ քայլեցի".

Պօղոսի նման եթէ լինէի, կանուանէի ես ինձ՝

Բնակարան, ներշնչարան եւ ընդունարան
 Աստծոյ խօսքի՝
 Բայց ես անօրէնս, օրէնքին գիտակ լինելով
 մէկտեղ,
 Ոչ միայն չեմ կարող ներկայացնել քեզ անձս
 նրանց պէս վստահ խօսքերով,
 Եւ չարս իսպառ, բարիների պէս՝ այդ նոյն
 խօսքերը քո առջեւ յիշել,
 Այլեւ չեմ կարող՝ բովանդակ արարածներից
 բարեհոշակուած
 Անունդ, հզօր, ամբարշտացած իմ լեզուով գովել:
 Իսկ դու, որ կարող ես ամէն բանում եւ հնարաւոր,
 Տուր ինձ ոգի փրկութեան, պաշտպանութեան աջ
 եւ օգնութեան ձեռք,
 Բարութեան հրաման, ողորմութեան լոյս,
 նորոգութեան խօսք,
 Քաւութեան պատճառ եւ կեանքի նեցուկ՝ օգնող
 գաւազան:
 Քանզի դու ես յոյս ապաւինութեան,
 Տէր Յիսուս Քրիստոս,
 Օրհնեա՛լդ Հօր եւ սուրբ Հոգու հետ յաւիտեանս.
 ամէն:

ԲԱՆ Կ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, քանի որ ինձ յայտնի է ճշգրիտ առակով
 արդէն,
 Թէ՛ չի վայելում մեղաւոր բերնին
 օրհնաբանութիւն, -
 Ինչպէ՛ս պիտի նոյն գովութիւնը քեզ կրկնեմ
 վերստին աղաչաւորս խիստ ամօթապարտ,
 Որ անէծքներ եմ ընդունում անվերջ՝

սաղմոսարանում, ինձ համար ասուած:

Ի՞նչպէս ինձ համար երգեմ վտանգներ եւ նախատիքներ արձանագրեմ

Ու մերկ գրկիս մէջ շուշանի տեղակ փշեր հաւաքեմ.

Եւ ի՞նչպէս պիտի համարձակուեմ ես

Դաւթի պէս ասել,

Թէ՛ "Պիտի փշրես մեղաւորների ատամները դու",

Եւ դարձեալ ինչպէս՝ "Անօրէններ չպիտի բնակուենք աշքի առջեւ".

Ինչպէ՛ս, թէ՛ "Դատիր ինձ, Տէր, ըստ արդարութեան քո եւ իմ՝ անբծութեան":

Եւ կամ թէ ինչպէ՛ս՝ "Չարիքները մեղաւորների վրայ պիտի կատարուեն",

Ինչպէ՛ս, թէ՛ "Պիտի խորտակուեն չարի եւ մեղաւորի բազուկները",

Եւ ուրիշները հետեւեալ կարգով.

Ինչպէ՛ս կարող եմ ասել, թէ՛ "Մեղաւորների վրայ տեղան պիտի հուր, ծծումբ, որոգայթ".

Ինչպէ՛ս, թէ՛ "Տէրը կթուլացնի նենգաւոր շրթունքներն ու լեզուները մեծաբանող".

Ինչպէ՛ս, թէ՛ "Սիրտս քննեցիր եւ չգտար այնտեղ անիրաւութիւն".

Եւ ինչպէ՛ս դրան յաջորդող խօսքն այս,

Թէ՛ "Չգուշացա խստասիրտների ճանապարհից ես".

Եւ ինչպէ՛ս ապա, թէ՛ "Արդարութեամբ ես քո երեսը պիտի ելնեմ".

Ինչպէ՛ս, թէ՛ "Ես էլ անբիծ պիտի լինեմ նրա հետ".

Ինչպէ՛ս եւ միւսը, թէ՛ "Տէրն ինձ ըստ իմ արդարութեան եւ ձեռքի մաքրութեան պիտի հատուցի".

Ես ինքս ինչպէ՛ս իմ ստութիւնը պիտի ծանակեմ, ասելով սուրբի հետ, թէ՛

"Ձեռքերս սրբութեամբ պիտի լուանամ".

Սնոտիների մէջ նստածս ինչպէ՛ս ամբարիշտների

աթոռները բամբասեմ.

Ինչպե՞ս թշուառս երջանկի պարծանքն ինձ վրայ առնեմ,

Թե՛ "Դատիր ինձ, Տէր, զի անմեղութեանս մեջ քայլեցի ես".

Ինչպե՞ս օտարս բարի գործերից՝ պիտի շարժեմ գո՛ւրջը գաղտնագէտիդ,

Թե՛ "Մի՛ դասիր ինձ ամբարիշտներին".

Ի՞նչպէս ես ինքս լինելով անիծապարտ, ուրիշների համար սսեմ՝

"Տո՛ւր նրանց, Տէր, ըստ նրանց գործի",

Եւ համարձակուեմ շարունակելու:

Բ

Մնացածներն էլ եթէ գումարեմ առաջիններին,
Կրկնապէս պիտի ծանրանան ցաւերս ու
դառնութիւններս անեն,

Բայց արցունքների շեղչերից միայն դոյզն-ինչ առնելով,

Առայժմ պիտի բաւականանամ սաղմոսարանի
Ընտանի ձայնի հանապազօրեայ
յանդիմանութեամբ,

Որ ամբարիշտիս կշտամբում է միշտ:

Դրանց հետ նաեւ քառասունիններորդ գլխի
վերջին հատուածի յանդիմանական տողերը,

Որոնք գարշելի համարելով ինձ՝ խայտառակում
են միշտ եւ հանապազ:

Խցելով բերանս, որպէսզի չփառաբանեմ՝ անձս
եղկելի են ներկայացնում.

Եւ աստուածային ձայնով ինձ ամբաստանելով՝
գրկում են կեանքի յոյսից,

Միաժամանակ, ինչպէս պատնէշի վրայից, քարեր
են նետում վրաս:

Եթէ ծանր է ուրիշներից անէծք ընդունել,

Ապա կրկնակի ծանրածանր է անձամբ ինքն իրեն անիծելը:

Իսկ եթէ օրէնք է մերձաւորներից նախատինքներ չառնել,

Ապա ուրեմն ամենատեսիցոյ սպասել դրանք՝

Արիւնալից ցաւ, սարսափելի վիշտ ու մտալկանք են պատճառում մեզ:

Բայց ով որ նրանց խոնարհութեամբ անձնատուր լինի,

Եւ գաւազանով ծեծի ինքն իրեն, կշտամբի ու դառն անէծքներ կարդա,

Այդպիսին պիտի օրհնուի Վերնայնի խոստովանած եւ ամէնիշխան բերանի շրթունքներով.

Չի նա ճշգրիտ կերպով բացատրեց դարձն իր դէպի նա, կեանքի ճիշտ ճամփից չհեռանալով.

Միրոյ օրէնքով նա իր մեղքերի արմատը կտրեց,

Չնուաճուելով չարախօսների խարդաւանքից,

Քրիստոսի հօտի բժշկուած ոչխարը եղաւ նա,

Դիմելով աղիքների խոցերը բուժող աղին:

Բայց անբանների բարքին է յատուկ ասուն կենդանիների

Կենսաձիր խօսքի դալար, ծաղկածին դաշտավայրում՝

Մտքի թմրութեամբ մահացու արոտներ ճարակելը:

Գ

Արդ, քանզի իսկ եւ իսկ ինձ համար է ասուած վերջին օրինակն այս կշտամբողական,

Եւ չար դիպուածներն ու պատահմունքներն ինձ են ակնարկում,

Որոնք նիւթեցի ես ինքս որպէս սաստիկ տոչորող կիզիչ կրակներ,

Նրանք երկնքից թափելով իմաստութեանս
 ճրագարանի՝ գագաթի վրայ:
 Այլևս սաղմոսն ինձ ի՞նչ օգուտ կարող է բերել,
 Երբ ինքս նրա բազմերանգութիւնից մնացի
 անպտուղ,
 Ու չնվագեցի հոգով այն, ինչ որ
 Պօղոսն է թելադրում:
 Ի՞նչպէս կարող եմ մեծագոյնս եւ մեղաւորներից
 եւ պիտանիներից նկունս
 Մարգարէի երգերին խառնել Տիրոջ խօսքերը եւ
 ասել սուրբի հետ.
 "Հեռացէ՛ք ինձնից բոլորդ էլ, որ գործում էք
 անօրէնութիւն":
 Ես, որ չեմ կատարել օրէնքի եւ շնորհի բազում
 պատուիրաններից եւ ոչ մէկը՝
 Ինչպէ՛ս բարբառեմ երջանիկի հետ,
 Որը մեզ համար սահմանածը նախ ինքը
 գործադրեց,
 Թէ՛ "Ես՝ քո ծառան պահեցի այս", եւ դրանց
 հետեւող խօսքերը:
 Կեանքի կատարեալ իմաստութիւնից թափուրս
 ինչպէ՛ս
 Տիրոջ երկիւղածների հետ օրհնեմ.
 Ինչպէ՛ս պիտի մաղթանքներից մեծագոյնին
 իմոնքն էլ կցեմ,
 Թէ՛ "Մի բան խնդրեցի եւ Տիրոջից՝ տեսնել իր
 վայելչութիւնը
 Եւ իր տաճարի հրամանատարը լինել":
 Ի՞նչպէս ձեռնամուխ լինեմ այն բանին, որ
 արգելուած է ինձ,
 Երբ լսում եմ, թէ՛ ուղղամիտներին վայել է միայն
 օրհնութիւն կարդալ:
 Ես իմ սեփական շուրթերովս ինչպէ՛ս ինքս ինձ
 անիծեմ,
 Ասելով, թէ՛ "Տիրոջ աչքը չարագործների վրայ է,
 Չնջելու համար նրանց յիշատակն երկրի երեսից".

Ի՞նչպէս՝ եւ միւսը, թէ՛ "Չարերը շուտով պիտի ջնջուեն".

Ի՞նչպէս այն խօսքը, որ արդարեւ ինձ է վերաբերում,

Թէ՛ "Բազուկները ամբարիշտների պիտի խորտակուեն".

Ի՞նչպէս պաղատեմ սատակման համար,

Թէ՛ "Պիտի կորչեն մեղաւորները":

Ի՞նչպէս թաթախեմ թափառող լեզու օրհնեալ խօսքի մէջ,

Թէ՛ "Հսկեցի եւ կեանքիս ընթացքը, որ չմեղանչեմ ինքս իմ լեզվով".

Ի՞նչպէս մեղքերի փշերով խեղդուածս պարծենամ խօսքովն անարատի,

Թէ՛ "Իմ անբծութեան մէջ ընդունեցիր ինձ".

Ի՞նչպէս եւ մեղաւորս եւ կրկնակի պատժապարտս

Պարսաւեմ պիտի իմ նմաններին, նրանցից

ազատուելս մատթելով,

Թէ՛ "Մեղաւոր ու նենգ մարդկանցից ազատի՛ր ինձ, Աստուած":

Գ

Ի՞նչպէս, որպէս ոչ կռապաշտ, անպատկառօրէն խրոխտամ ունայն պարծանքով,

Դալթի հետ ասելով՝ "Մի՞թէ մոռացել ենք մենք անունն Աստծոյ,

Եւ կամ օտար աստուածներին աղօթելու ձեռք ենք երկարել":

Ձի նա, որ գարշելի մեղքերի մէջ կընկնի,

Այդպիսին կառուցած կլինի պաշտելու համար

Անասնական, ախտարժարժ եւ պոռոնկապատիր

կերպարանքներ՝

Աստարտի, Քամովսի, Մեղքոմի եւ թարմատար

Թարահատի արձաններ արու,

Ինչպէս նաեւ կանացի զագիր ու աղծապիղծ
կուռքեր

Եւ իշանդամ առականքների անծածկոյթ
ծանակութիւններ:

Ինչպէս չամաչեմ ասել նահատակի հետ, որ
բարութեան էր միշտ հետամուտ,

Թէ՛ "Ամէն օր մեռնում ենք քեզ համար",

Եւ հետեւեալ տողերն այդ սաղմոսի:

Ինչպէս յիմարս մարդկանց մէջ եւ վատթարս
հանդգնեմ ասել,

Թէ՛ "Բերանս իմաստութիւն պիտի պատմի, եւ
սիրտս՝ հանճար":

Ինչպէս ես՝ մարդակորոյս կեղծաւորս
երեսպաշտների ոսկորների ցրումը մաղթեմ.

Ինչպէս կրկին երկրորդուած մեծանուն
բարութիւնն այն,

Թէ՛ "Հանելի պիտի լինեմ տիրոջը կենդանեաց
երկրում":

Ինչպէս ես անբաւ մեղքերի տէրս, արդարից
առած՝ բարբառեմ այսպէս, -

"Ոչ մեղք ունեմ ես եւ ոչ էլ յանցանք, ընթացքս
եղաւ անմեղ եւ ուղիղ":

Ինչպէս ինքս ինձ մատնեմ կորստեան այսպէս
ասելով՝

"Անօրէնութիւն գործողներին մի՛ ողորմիր":

Եւ կամ թէ ասեմ. "Ինչպէս մոմը, որ հալոււմ է
կրակի դիմաց,

Այդպէս էլ պիտի լինեն մեղաւորներն

Աստծոյ առջեւ":

Ե

Ի՞նչպէս՝ ապականացու փափկութեամբ շոյուածս
այս ինձ անվայել խօսքը հաստատեմ,

Թէ՛ "Ես ընկճեցի իմ անձը ծոմով".

Ի՞նչպէս նաեւ այս խօսքը նոյնիմաստ, -

"Նրանց նեղութեան մէջ ես քուրջ էի հագնում

Եւ, ինչպէս սգաւոր ու տրտում՝ խոնարհ էի".

Ի՞նչպէս հանդարտուեմ իմ նմանների պատիժն
յիշելով,

Թէ՛ "Աստծոյ բարկութեան մրուրը չի սպառուի,

Եւ պիտի խմեն նրանից երկրի բոլոր

մեղաւորները":

Ի՞նչպէս՝ սրա հետ եւ միւսը, թէ՛

"Մեղաւորների բոլոր եղջիւրները պիտի փշրես
դու".

Ի՞նչպէս, Յակոբի ապերախտութեան մասին
պատմելով, կարող եմ հեզնել նրան

Ես, որ ստուերի տեղ ճշմարտութիւնն ընդունած,

նրանց հետ եւ նրանց թերութեամբ

Մոռացա Քրիստոսի երախտիքները՝

աստուածահրաշ խաչի փրկանքով,

Եւս առաւել, քան նրանք, որոնք չուզեցին

Չօրաւորութիւնն Մովսէսի սքանչելագործ ցուպի,

Որ տէրունական տնօրինութեան մի օրինակն էր:

Ի՞նչպէս կարող եմ ցոյց տալ մեզ վրայ խուժող

դեւերի -

Խմբերի խուժողուժ եւ օտարացել՝ աղէտները ողջ,

Ասելով, թէ՛ "Մեր մէջ գտնուող բարիների

դիակներն իբրեւ կեր

Ձգեցին գիշատիչ թռչուններին, այսինքն՝ օղային
դեւերին":

Ի՞նչպէս կարող եմ ճանապարհի վրայ ընկած
խօսքի սերմը

Եւ չարի հետ միաբանուած կամքը անուանել
սուրբ,

Ի՞նչպէս սուրբ կոչեմ պատերազմի հետ նոյն
շաւղով գնացող՝

Իմ ճանապարհից դուրս եկած մտքի գուպարը
գաղտնամարտ,

Որ ես զօրացրի՝ գործակցելով բանասարկուի
հնարքներին:

Չեմ կարող աղերսել քեզ, թե՛ "Մի՛ լռիր եւ մի՛
դադարիր, Աստուած",

Ինչպէս եւ՝ "Խորհեցին քո սուրբերի վրայ եւ
ասացին", -

Եւ միւս խօսքերը՝ սաղմոսարանի այս աղօթքի
մէջ:

Չի յոյժ տեղին է, որ այս խօսքերով ճանաչենք
մոլեկան բռնութիւնը դէտրի,

Եւ նրանց հետ նաեւ իրենց արքանեակներին,

Որոնք մղում են ճակատամարտ միշտ, խռովելով
նեղկան:

Չ

Այդ բոլորից, Տէր Քրիստոս,

Որդիդ դու բարձրեալ եւ մեծ Աստծոյ,

Պահէ՛ս ու պահպանես երկնային զօրքիդ

շրջափակութեամբ,

Բոլոր հողմերից ու խաբողների յարձակումներից

Լուսեղէն խաչովդ պաշտպանելով մեզ:

Չի թէւ իմ մէջ գտնուեն անօրէնութիւններ

բազմօրինակ,

Սակայն ո՛չ երբէք հայիոյութիւններ:

Չհանգստացա՛ր դու ինձ նման ամբարիշտների
կորուստով,

Այլ ամենագորով թախծութեամբ, ջրհեղեղով
ջնջուած

Չազրագործների վրայ մինչեւ իսկ կրկնապէս
վշտացար,

Նրանց այդպիսի մահն համարելով
անհանդուրժելի եւ յոյժ անհանո:

Լսողներին զարմանալի այս խօսքն ասացիր դու,
Թէ՝ "Այլեւս մարդկանց գործերի պատճառով
երկիրը չպիտի անհիծեմ":

Մխիթարուում ես դու մեծապէս ու պարարուում՝
Անմաքուր ու սատակման արժանի մարդկանց
կենդանացման համար.

Ինչպէս որ երբեմն, դդմենու առակով ցոյց
տուեցիր դու

Կործանուելու արժանիներին խնայելդ, ողորմա՛ծ.
Եւ մի ուրիշի վրայ նեղացար, սաստիկ վշտացած,
Երբ նա անձրեւն ուշացնում էր, որպէսզի
ուրացողները ապրուստ չունենան:

Եւ բազմապիսի յիշատակարժան եւ անճառելի
Բարութիւններ ցուցաբերեցիր դու վերջին օրերին.
Քո կողմից՝ առաքեալներիդ միջոցով հրամայեցիր
ողջոյն տալ քաղցրահամ՝

Հասարակաց բոլոր եւ անհամբոյր հեռաւորներին:
Նաեւ ի՛նձ վրայ ցողիր հայրական սէրդ գթառատ,
կենդանի Աստուած,

Որպէսզի ես էլ գտնեմ փրկութիւն՝
Քաւուած մեղքերից ամէնառատ քո
այցելութեամբ:

Եւ քեզ Հօր եւ սուրբ Հոգու հետ փա՛ռք
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԱ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՃՈՅ ՀԵՏ

Ա

Եւ ինչո՞ւ համար պիտի մէջ բերեմ եւ իմ տաւիղով
երգեմ անդադար,

Սաղմոսարանի խօսքերն այն բոլոր,

Որոնք իմ դէմ են միշտ եւ շարունակ, որպէս
նախաստիճք եւ որպէս նգովք:

Ինչպէ՛ս կարող եմ շուքը երջանկի յարմարեցնել
ինձ դատապարտուածիս,

Այսպէս ասելով նրա հետ մէկտեղ, թե՛ նենգամիտը
ինձ չմօտեցաւ:

Եւ ինչպէ՛ս դարձեալ գարհուրեցուցիչ, յաջորդ
տողերում կարգով թուարկուած՝

Բարեմասնութիւններն այն բոլոր, որոնք հին
օրէնքի թագաւորի, զինուորական մարգարէի

Եւ մարմնական հրամանատարի նկարագրի գծերն
են,

Երկնայիններին անգամ ցանկալի՝ կրկնեմ եւ
կեանքից չյուսահատուեմ,

Ես, որ նոր օրէնքի ակտարանիչ եւ շնորհների
աշակերտ լինելով հանդերձ

Այդ երկնահաճոյ արժանիքներից անմասն եմ
խապառ:

Ըստ իրաւախոհ արդարի՛ ինչպէ՛ս պիտի զինուեմ
մեղաւորների դէմ,

Պատրաստ լինելով առաւօտեան վաղ
արթնացածի պէս

Սպանել նրանց, ըստ առակողի:

Ես, որ իմ մարմնի անդամներն անգամ
գանահարելով չխրատեցի:

Ի՞նչպէս արդ մեծի արիութիւնը օրինակելով՝

Կարենամ ջնջել անօրէններին Տիրոջ քաղաքից,

Երբ իմ հոգու մէջ բուսած մեղքերն իսկչմեռցրի ես:

Ինչպէ՛ս սուտ խօսեմ նրա մօտ, որին

ծածկուածները յայտնի են, արդէն,

Ասելով՝ "Մոխիրն իբրեւ հաց կերա".

Ես, որ Երգողի աղբերակների յստակ արցունքին

Իմ հուզումներից պղտոր մի կաթիլ իսկ չմիացրի,

Ի՞նչպէս նրա հետ կարող եմ ասել՝

"Ըմպելիքս խառնեցի ես արտասուքներով

Եւ անկողինս արցունքներով թրջեցի":

Եւ ապա, որո՞նք վերագրեմ ես ինձ՝ մեղքերով
մահացեալիս,

Երբ աստուածասէրն ի բոլոր սրտէ նախնեաց
յանցանքներն

Իրենն է համարում, ասելով այսպէս. -

"Մենք մեղանչեցինք մեր հայրերի հետ,
անօրինացանք եւ յանցանք գործեցինք",

Եւ այս սաղմոսի հետագա բոլոր տողերը, որոնք
Իրաւամբ ինձ են յարմար աւելի, քան Իսրայէլին:
Ինչո՞վ արժանի լինեմ դասուելու բարիների հետ,
Երբ չգտնուեց իմ մէջ այն դեղն իսկ, որ յարգուեց
որպէս մարդկային մի գիւտ,

Այսինքն գարշելով կերակուրներից՝ մահու չափ
քաղցել,

Եւ երկարատեւ ճգնութիւններով՝ հոգով նուաղել,
Ըստ տարակրօն հրեաների եւ հեթանոսների
երբեմնի սովորութեան:

Արդարութիւնն իմ ինչպէ՞ս կարող է մնալ
յաւիտեան, որը եւ երբէք ի գործ չդրի:

Բ

Բայց, որպէսզի երկարաբանութեամբ չդառնամ
ստղտկալի,

Պիտի աշխատեմ խօսքս համառօտել:

Ի՞նչ կարող ես ասել այն խօսքերի տեղ,

Որոնք նուազեց օրհներգ ու Դաւթի ձայնն
աստուածաշունչ,

Թէ՛ "Բոլոր սրտովս ես քեզ փնտրեցի":

Ի՞նչպէս սրա հետ ասեմ աւելին,

Թէ՛ "Ամէն տեսակ չար ճամփաներից ոտքս
կտրեցի":

Ի՞նչպէս սրա հետ ասեմ աւելին,

Թէ՛ "Իմ սրտի մէջ պահեցի խօսքերդ, որպէսզի քո
դէմ չմեղանչեմ":

Ի՞նչպէս ունայնութիւններս որպէս
կատարելութիւններ ճառեմ մաքուրների հետ,

Թէ՛ "Քո պատուէրներից դաս առնելով, ասեցի
բոլոր ճանապարհները չարագործների":

Ի՞նչպէս ես հեզի ճշմարտութիւնը՝ իմ խաբեբայի
մշտնջենական

Սուտ երդումների հետ համակարգեմ, ուխտելով
հաւատարմի հետ,

Թէ՛ "Հաստատապէս երդուեցի պահել
դատաստանդ արդար":

Ի՞նչպէս կրկնեմ ես այն պատգամը, թէ՛
"Փրկութիւնը հեռու է մեղաւորներից":

Որը իմ վերջին վճռի մահագոյժ հրեշտակն է:

Ի՞նչպէս չարս իրօք, բարիների պէս, -

Որոնք Տիրոջից առնում են իրենց հատուցումն
արդար,

Հեղեղելով այս տողը ասեմ, թէ՛

"Տէրը բարիք կանի ուղղամիտներին":

Ի՞նչպէս այն անաչառ եւ կտրուկ փոխատրութիւնը
մոլորեալիս,

Թէ՛ "Միալուսածներին հափշտակելով կտանի
նրանց հետ, ովքեր գործում են անօրէնութիւն":

Ինչպէ՛ս պարծանքը Աստուածագետտի
պատուաստեմ ես ինձ ամօթահարիս,

Նրա խօսքն ասելով. "Չբարձրացաւ սիրտս, Տէր,

Եւ աչքերս երբէք չզվարճացան":

Ինչպէ՛ս ընդունեմ մարմնականից վեր խօսքն
անճառելի,

Որպէս քաջալեր յուսահատուածիս, գանձիս
գեհենի,

Ասելով Աստծոյ հոգով օժեալի հետ,

"Առաջուց տեսար, որ լեզուիս վրայ նենգութիւն
չկա",

Եւ սաղմոսի այս մարգարեական գլխի սկզբից
մինչեւ վերջ գրուած խօսքերը բոլոր:

Եւ ի՞նչպէս ինքս, որ համաբան եմ դժնասիրտ

մարդկանց եւ դասակից նրանց,

Ես, որդիս մահով ջնջուելու արժան՝ բարեշնորհի խօսքը բարբառեմ. -

"Չէ որ, ահա, Տէ՛ր, քեզ աստղներին ես ատեցի", -

Եւ մնացածներն ապա այս կարգի:

Ի՞նչպէս դու, ա՛նձն իմ, որ աշխարհի ամէնէն աշխարելին ես,

Տօնելի Վեհի վստահութեամբ

Չստուգուած հոգիդ առաջ մղելով, պանծաս ինքնագով պսակուածի հետ,

Թէ՛ "Փորձիր ինձ, Տէր, եւ տես՝ կա՞ միթե անօրէնութիւն իմ ձեռքերի մէջ",

Դրա հետ նաեւ յաւելուածները:

Չար լինելով ես՝ ինչպէ՛ս չարերից ազատուել մաղթեմ,

Իրենց յոյսն Աստծոյ վրայ դրածներին ձայնակցելով,

Թէ՛ "Պահիր ինձ, Տէր, մեղաւոր եւ չար մարդու ձեռքերից":

Ի՞նչպէս վեր կենամ՝ փառաւորեալի հետ աղօթելու Աստծուն,

Թէ՛ "Դու ես իմ յոյսն ու բաժինը կենդանեաց երկրում":

Ի՞նչպէս, իբրեւ թէ ճգնաւորի հետ մրցման դուրս եկած,

Յաղթանակի մրցանակը թագաւորիդ մատուցելով,

Այս անմահակ աղօթքն անեմ ես աղերսագին. -

"Արդարներդ պիտի սպասեն, մինչեւ դու հատուցես ինձ":

Գ

Բարեբանեալ է նաեւ հոգեւոր այս միտքը,
Որով ամէն ինչ արհամարհելով,

Արարածների սկզբնապատճառին է ընտրում միայն ասելով՝

"Երանի՛ այն ժողովրդին, որի տերը՝ իր Աստուածն է".

Եւ այս նման է Տիրոջ վարմունքին, որով նա փորձչին յանդիմանեց նրա անպատկառութեան համար:

Մեծ է նաեւ այն շնորհը երանութեամբ լի համարձակութիւնն այն երկիւղած,

Թէ՛ "Զո սուրբերը պիտի օրհնեն քեզ":

Ըղձալի է նաեւ հոգեւոր հաղորդութեան ընտանութիւնն այն մտերիմ,

Որով մարդ իր յոյսը դնում է միայն

Աստծոյ վրայ

Եւ նրա մէջ էլ մնում հաստատուն սաղմոսի խօսքերով քաջակերական,

Թէ՛ "Տէրը կատարում է իր երկիւղածների կամքը",

Եւ սպա թէ՛ "Տէրը պահում է բոլոր նրանց, ովքեր սիրում են նրան,

Եւ ջնջում բոլոր մեղաւորներին":

Պատգամներ տխուր եւ ուրախական սաղմոսարանի վերջին գլուխների մէջ,

Որոնք ցոյց են տալիս արդարների ու մեղաւորների վերջին հատուցման օրինակները:

Իմաստով միմեանց հաղորդակից են եւ այն երգուածները,

Թէ՛ "Տէրն հեզերին իր մօտ կընդունի

Եւ մինչեւ գետին կիտնարհեցնի

ամբարտաւաններին": -

Ուրեմն ո՛րքան եղկութիւններ կան իմ առաջ:

Իսկ եթե՛ "Տէրը սիրում է իր սուրբ ժողովրդին

Եւ հեզերին բարձրացնում է փրկելով նրանց", -

Յապա ես գուրկս արժանիքներից՝ ի՛նչ յոյսով

ամբանամ:

Իսկ եթէ Աստուած սրբերից է օրհնում իսկապէս,

Յապա ես օտարս մաքրութիւնից՝ որո՞նց կարգը

դասուեմ:

Իսկ եթէ սրանց մօտ դնեմ իբրև յանդիմանութեան
յիշատակարան,

Կանխերգածներից այս տողը, թէ՛

"Միրեցէք Տիրոջը, ո՛վ նրա սուրբեր,

Չի ուղղութիւն է ուզում նա եւ կրկնակի կպատժի
գոռոզներին", -

Յապա ո՞ր գնդում պիտի լինեմ ես,

Գերիս գրաւուած՝ գաղտնի մեղքերի գիւտարար
չարին:

Դ

Քանզի, ինչպէս որ կտատանուեն տագնապով
տերեւները եղեւնու դալար տունկերի

Ու շարժուելով ուժգին հողմերից՝ կթափուեն
գետին, -

Այդպէս էլ ջանաց ջարդել չար ոգին իմ վարք ու
բարքի

Բարեբեր ճիւղերն՝ ի վեր բարձրացած,

Եւ որոնք անեղ մշակիդ ձեռքով էին յօրինուած,

Կրկին ու կրկին արմատացնելով հաստատի՛ր
ամուր

Նո՛ր անապական պտղաւորութեամբ զարդարելով
այն

Քո ինամատար կամքին յանձնուած՝ կեանքի
անդատանում,

Ամենապարգէլ թագաւոր Քրիստոս, օրինեա՛լ
յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԿԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

այց արդ, ես ինչո՞ւ վերոյիշեալ կանխագուշակող
սաղմոսի վրայ

Մարգարէներից ուրիշ հատուածներ էլ
չաւելացնեմ:

Սակայն ի՞նչ ճաշակ ստանամ պիտի այն
կերակուրից,

Որն ուտելու եմ ցաւերիս մէջ անզգայացած.

Եւ կամ ի՞նչ օգուտ կտայ սաղմոսն ինձ, եթէ
չըմբռնեմ իմաստը նրա:

Չի նզովում եմ ինքս ինձ նրանով՝ ու չեմ
հասկանում,

Լուացում եմ՝ ու չեմ պայծառանում,

Ծագում է արեւն՝ ու չեմ լուսաւորում,

Մեղր եմ ճաշակում՝ ու չեմ քաղցրանում,

Դեղերով լցւում եմ՝ ու չեմ բժշկւում,

Դիմում եմ նոյնին՝ ու դատարկ դուրս գալիս,

Ծաղրում եմ միշտ՝ ու չեմ խրատում,

Յորդորում նոյնպէս՝ ու չեմ զգաստանում:

Բ

Արդարեւ՝ իմ մէջ են մեղքերն ու
անօրէնութիւնները,

Եւ ես նրանց մէջ մաշւում եմ,

Ինչպէս որ մարգարէն է ասում ի դէմս
յանցապարտների,

Մեկնաբանելով առակն հին տիկերի եւ նոր զինու:

Չի եթէ, ինչպէս Եսային է ասում՝

"Անօրէններն ու մեղաւորները միասին պիտի
սատակեն",

Այա եւ ինձ դժնիիս համար էլ նոյնն է վիճակուած:
Քանզի յիշում եմ սաղմոսի այն խօսքը, թէ՛
"Կհատուցի նրանց, որոնք աւելի են գոռոզանում":
Միև ընթերցուածն էլ կցում եմ սրան. -
"Տիրոջ օրն հպարտ եւ ամբարտաւան մարդկանց
վրայ է",
Ինչպէս եւ՝ "Մեղաւորներն իրենց մօր արգանդում
խկ օտարացան".
Եւ նմանիմաստ տողերն ըստ կարգի:
Կցում եմ սրան, թէ՛ "Անօրէնները երկրի՝ պիտի
կործանուեն",
Եւ՝ "Ամբարիշտն երկրից պիտի վերանա",
Եւ՝ "Պիտի մերժուեն անիրաւները":
Ողբացէք վրաս այս խօսքի համար,
Թէ՛ "Ինչպէս եղեզը կվառուի կրակների մէջ,
Այնպէս էլ մեղաւորները այրուեն պիտի բոցերում
բորբոք":
Լացէք սաղմոսի այս խօսքի համար, -
"Կրակի կայծեր պիտի թափես դու նրանց վրայ":

Գ

Ողբեր կարդացէք դուք աստուածային այն վճռի
համար,
Որ մարգարէի բերանով է զարդարուած. -
"Եթէ չկամենաք լսել ինձ, սուրը ձեզ պիտի ուտի":
Կոծեցէք այն սաղմոսի առթիւ,
Թէ՛ "Մահը պիտի հովուի նրանց":
Աղի արցունքներ խառնեցէք դուք իմ
հեծութիւններին հառաչանքներով,
Երբ բարձրեալն ինքը՝ Իսրայէլի հետ՝ սաղմոսի
խօսքով նաեւ ինձ ասի. -
"Իմ ժողովուրդը ձայնս չլսեց":
Աւաղ ասացէք դուք ինձ թշուառիս, երբ նոյնն է
կրկնում մի այլ մարգարէ. -

"Վայ՛ նրանց, զի հեռացան ինձնից":
Տխրամած սրտով նոր աղաղակի փող հնչեցրէք
դուք,
Երբ Աստծոյ տեսնողը, ամաչեցնելով ինձ,
Կշտամբի սաստիկ Յակոբի տոհմի հետ
ապերասան,
Թէ՛ "Տեսէք, ո՛վ արհամարհոտներ, զարմացէ՛ք եւ
ջնջուեցէ՛ք":

Դ

Բայց դու, որիդ երեսից փախել եմ սարսափահար,
հետ տար ինձանից
Եւ պատեան դիր ահաւորիդ բարկութեան վրաս
բարձրացած սուրն սպառնալից,
Եւ քո բարեբաշխ, խնամոտ աջովդ ինձ հասնելով,
Կեանքի օծումը պարգեւիր ինձ՝ քեզ աղաչողիս:
Եւ քեզ փառք բարձր երկնայիններից եւ երկրային
բոլոր մահկանացուներից,
Սահմանների մէջ բոլոր ազգերի, յաւիտեանս.
ամէն:

ԲԱՆ ԿԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Բարերար եւ բազմագույթ, մարդասէր եւ
երկայնամիտ միակ թագաւոր,
Հօրդ հետ պատուուած եւ օրհնաբանուած
Տէ՛ր ամենայնի,
Որդի՛դ կենդանի Աստծոյ,
Դու, որ ինձ երբէք կորչելու տեղիք չես տալիս,
Եւ ամենեւին չես փորձուում չարից,
Ու մեղաւորի մահն իսկ չես ուզում,

Եւ կամքդ փրկութիւն է բերում բոլորին,
Մեղքի մրրիկը քառութեան մեղմաշունչ գեփիւռի
ես փոխում դու

Եւ բարկութեան հուրը փոխարկում անձրեւի:

Դու, որ քո բարի հրամանին չանսացող կնոջն հետ
դարձրիր իր ընթացքից,

Նոյն արձանի մէջ կերպաւորելով գոյգ
գոյացութեամբ երկու բնութիւն, -

Ո՛չ անմեղների եւ ո՛չ էլ իսպառ պատժուածների
կարգը իրապէս դասելով նրան:

Դու, որ ծովի լոյծ ջրերն հորձանուտ՝ քարակոյտի
պէս իրար վրայ դիզեցիր բարդ-բարդ

Եւ անապատի կարծրանիւթ վէմն իբրեւ հոսող
վտակ բխեցրիր:

Դու, Յորդանանի սրընթաց վայրէջքը կանգնեցրիր
հրաշապէս,

Դարձնելով այն որպէս լուացումի աւազան
հեթանոսների հետնորդների համար:

Երիբովի պարիսպը պնդակուռ -

Սատանայի բռնութեան կործանման որպէս
օրինակ -

Թեթեւ յարդի պէս օդ ցնդեցրիր դու,

Եւ այդ քաղաքի ջուրը վնասակար, այլաբանօրէն,
Որպէս օրինակ քանանացոց փրկութեանը, դէպի
բարին փոխուելուն՝

Դու խորհրդաւոր աղով համեմելով՝ անուշացրիր:

Մեռայի դառնութիւնը-նշանակ
անհաւատութեան՝

Դու կենաց փայտով պիտանի դարձրիր,
քաղցրացրիր քեզ պէս՝ միացնելով քեզ հետ:

Գետից առնուած ջուրն ինչպէս արիւն
մակարդեցիր դու ցամաքի վրայ, -

Իբրեւ նշանակ անհուն հաճութեանդ, որի
համաձայն,

Անփոփոխ պիտի գունաւորվեր նոր երանգով
բոսորային:

Անկենդան գաւազանին անթոյն վիշապի
նմանութիւն ու տիպ տուեցիր,

Ի պատկերացումն քո ըստ մեզ ձեւակերպմանն ու
ընտրութեանն օտար ազգերի:

Մովսէսի երջանիկ աջը պահպանելով անեղծ ու
անփոփոխ՝

Յոյց տուիր դու մեզ նախապէս ապագայի
հրաշքներդ, բարձրեա՛լ,

Որոնք մարդեղութեանդ ընթացքին պիտի
կատարէիր,

Եւ ապա, քեզանով՝ ախտաւոր մարմնիս
մաքրագործուելը գուշակեցիր:

Եւ դու այս բոլորով, ահա, ամէնուրեք,

Մեղաւորներին կորստեան ենթակա,
բարեխնամօրէն,

Սիրոյդ հրաշքով կատարուող անակնկալ գիտը
գուշակեցիր,

Օրհնեա՛րդ ամենագութ:

Բ

Ծլեցնում ես դու երկրից կանաչ խոտ ու կեանքի
կոչում անշունչ մեռեալին,

Անշարժին կառավարում ես որպէս ընթացող,

Անարգ արգանդից դուրս ես կոչում քեզ
պատկերակիցներ,

Պատանիներին սեղանատամներ տալիս
ըմբռնխնող

Եւ նրանց մաքուր այտերի վրայ մազ ես անեցնում,

Եւ սեւասաղարթ վարսերը ձեան պէս
գարմանագործում,

Յոյց տալով, թէ քո կարողութիւնը անցնում է ամէն
սահմանից, հզօ՛ր,

Շրթունքների բնագդական թոթովանքները,
ինչպէս Յոբն է ասում,

Փոխարկում ես դու հարազատ ու պարզ
արտաբերութեան,

Սասանում ես դու երկրին ու նրա սիւները՝
հիմքից,

Յոյց տալով թէ, դո՛ւ կմնաս միայն անկորնչելի:

Դու թաւալում ես տարերքը, որպէս անցաւոր իրեր
Եւ դարձեալ նոյն տեղ հաստատում դրանք որպէս
մնայուն.

Այսպէս՝ յայտնելով, թէ կարող ես դու նոյն այդ
դիւրութեամբ

Կապել մեր բազում մեղքերը եւ կամ արձակել:

Անզգա էութիւնն արուսեակի սանձահարում ես
կարծես թէ երասանով,

Այդպէս՝ ցոյց տալով, թէ մեր բնութեան
հակումները չար

Կարող ես դիւրաւ դու հանդարտեցնել, երբ էլ
կամենաս:

Անբարբառ լուսնի բոլորակը դու մերթ ունայն ես
անում եւ մերթ պատարուն,

Ապացուցելով, որպէս աւետիս, այդ տեսնողներիս,

Թէ բարիքներից նուազած մեր մեղապարտ
մարմինները

Դու նախաստեղծ հարստութեամբ կամբողջացնես
դարձեալ:

Անխօս աստղերի բազմութիւնը դու իբրեւ
փոքրաթիւ հօտերի խմբեր,

Բաժանում ես իրարից եւ հաւաքում դարձեալ,

Ի խորհուրդ կենաց հաստատուն յոյսի, ո՛վ
քաղցրահայեաց տեսութիւն,

Թէ դու չաղաչող լեզուներին էլ կարող ես լրիւ
նոյնպէս ողորմել:

Գ

Ծովում, դու կեանքի ու մահուան միջև ճամփա
ես բացում ուղիղ ապահով,

Այդպիսով հաստատ հաւաստիացնելով, թէ
վտանգաւոր վայրում էլ նոյնպէս

Կարող ենք լինել անգայթակղելի՝ քեզնով
պաշտպանուած:

Ինչպէս կաթսայում կրակի վրայ եռացող ջուրը,
Այդպէս՝ մեղքերի պղտոր մրրիկն էլ քո կամքի
խօսքով կդադարեցնես:

Նայում ես երկրին ու շարժում ես այն,
Որպէսզի անբան այդ գանգուածով զգաստացնես
մեզ՝ մտաւորներին:

Ալիքների վրայ տատանուող փոքրիկ մակոյկի
նման

Դողդում ես դու հողագանգուածի թանձրութիւնն
անբաւ,

Որով բովանդակ արարածներին ծանուցանում ես,
թէ կաս աներկբա,

Եւ որ քո զօրեղ խօսքով ես հիմնել տիեզերքն
համայն:

Մերմանում ես դու մեր անշնչացած մարմիններն
հողում,

Եւ այնտեղ նրանց անկորուստ պահելով՝
կենդանացնում կրկին,

Ապականելին հողին պահ տալով անեղծն
ստանում,

Դու մահկանացու նիւթի հետ կենաց նշխարդ ես
խառնում:

Դու քո ակնարկող մի հրամանով ստեղծուածների
ողջ անկերպարան

Փոքր-ինչ վայրկեանում ձեւակերպեցիր ամէն մէկն
իր պէս:

Քոնն են զօրութիւնն ու կարողութիւնը,

Չի դու օրերի հոլովումներով շրջանակում ես

տարուայ եղանակները,

Իւրաքանչիւրն իր ժամանակին, բազմապիսի
գեղեցկութեամբ՝ մեր տեսողութեան համար:

Անմռունչներին ձայն ես տալիս դու իբրեւ
կենդանու.

Ներշնչում միայն, ու քայլում են նրանք.

Դո՛ւ ես լոկ հինում հնարագիտութեան անճառ
արուեստով մէզն ու առաւօտը:

Առաջնաստեղծ գոյացութեան նախակարգ
յօրինուածքից յետոյ,

Ըստ երանելի մի գրուածքի կանխահիաց
գարնացման, -

Երբ դու մարդացար, կատարեցիր մեծամեծ
փառաւոր հրաշագործութիւններ, -

Որոնց թիւ չկա, ստեղծելով նոր ու նուիրական

Մի ուրիշ աշխարհ աւելի անեղծ, քան առաջինը:

Դ

Դու, որ մեր յանցանքը քունը համարեցիր եւ
արդարութիւնդ շնորհեցիր մեզ,

Որ մեր հաշտութեան փրկանակն ինքդ քեզ վրայ
առար,

Որ դու չես դադարում ողորմելուց, -

Դարձրո՛ւ ամբարշտիս երկիւղածութիւնը
բարեպաշտի,

Թմրածիս զգաստացուցիչ արթնութեանը սրտի,

Անմարտրիս՝ պայծառ ու մաքուր կերպարանքի,

Բազմամեղիս՝ անբծութեանն համեստ սուրբ
պատկերի,

Կոտրուածիս՝ առողջութեան անխորտակելի,

Լացածիս՝ զուարթ ուրախութեանն անտխրելի,

Յուսահատուածիս՝ միացնող սիրոյ անլուծելի,

Ամօթահարիս՝ հաստատուն վստահութեան
անշարժելի,

Խաւարածիս՝ Երանոյթեան լոյսին անմեկնելի,
Մահուան գերուս՝ կեանքին անապականելի.
Որպէսզի խոստովանուած անունդ, Յիսուս,
Փառաւորուի Հօր եւ սուրբ Հոգուդ հետ՝
Երկնքում եւ երկրի վրայ եւ նրանց բոլոր
բնակիչներից,
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, ամէն ինչում բացարձակապէս ուղիղ եւ,
Աստուած,
Իրաւունքով դատում եւ եւ արդարութեամբ
կշռում,
Ճշմարտութեամբ չափում եւ եւ օրինութեամբ
հետեւում,
Ընթանում եւ ուղիղ եւ ստուգութիւն եւ սիրում,
Յատակութիւն եւ կամենում դու եւ
յուսաւորութիւն համբուրում,
Փորձելով յանդիմանում եւ, երկայնամտութեամբ
քննում:
Չունես նենգութիւն եւ ոչ էլ գողգութիւն,
Այլ հեգութիւն համակ, հանդարտութիւն եւ
ողորմութիւն:

Բ

Արդարացար, ո՛վ անայայլ, վերին իմաստութիւն
հաննարեղ քո Հօր,
Ինչպէս որ անզիջ գովեստով վկայեցին շնորհովդ
քեզ որդեգրուածները,

Քո մեզ պարգեւած անտարանի այն սուրբ խօսքի
համաձայն, թե՛

"Չողբացի ես, երբ կոծեցին, ոչ էլ կաքաւեցի, երբ
փող հնչեցրին":

Մի՛ անօրինիր, ասացիր անօրէնիս,

Բայց ես ամբացա նոյն չարութիւնների մէջ.

Մի բարձրացնիր եղջիւրդ դէպի վեր, մեղաւորիս
ասացիր,

Եւ ես քեզ հակառակ գործեցի.

Չզգացի խոտորեալս երբէք, թէ քո ձեռքումն են

Բարձրամիտ հպարտների եղջիւրներն

արքայական

Խոնարհեցնել կամ բարձրացնել, ըստ Ամբակումի,
Դաւթի եւ Չաքարիայի,

Դու ինձ օրհնութիւն կամեցար. ողորմա՛ծ,

Իսկ ես անիծեալս՝ մեծ տարագրութեամբ

խոտորուեցի դէպի ինձ արժանին:

Սիրեցի բարկութիւն եւ ո՛չ բարութիւն.

Շոշափեցի խաւարն ու ոչ թէ լոյսը.

Կենդանի ձայնիդ, գթա՛ծ, անզգամօրէն

պատասխանեցի.

"Որդն անմահ է" եւ "Կրակն անշէջ",

Կշտամբանքն անվերջ, տեղը յաւերժական, եւ

օրինակը սոսկալի է, – ասացիր խօսքով Եսայու,

Եւ ես չիմացայ, ըստ սաղմոսողի, որ չըմբռնեցի,

Այլ ընթացայ մտաւոր մռայլ կուրութեան մէջ:

Գ

Դու մարգարէի խօսքով ցոյց տուիր,

Թե՛ օրհնութիւն կատանայ նա, ով օրէնք է դնում,

Եւ ես փութացի այդ համառօտել:

Դաւթին իր խօսքերով, Տէ՛ր Յիսուս Քրիստոս,

Հոգեւոր վեմի վրայ քո մատով արձանագրուած՝

Կանգնեցիր որպէս յիշատակարան, ինչպէս որ

նաեւ ինքն է վկայում,

Թէ՛ "Ես պահեցի քո օրէնքները ամէն ժամանակ,
յաւիտեան".

Այդ միեւնոյնը հաստատում է նա երկրորդ անգամ՝
Վերջին բառի անդրադարձութեամբ
"Եւ յաւիտեանս յաւիտենից".

Որոնց հետ եւ այլ պանծալի խօսքեր
խրախուսեցին ինձ,

Բայց ես անզգա՝ անապարեցի տօնին
Բահադու եւ ո՛չ Աստծոյ,

Եւ երկմտութեամբ զոյգ ճամփաների վրայ
կադացի,

Ձեռք վերցնելով բարի գործերից, ինչպէս ծաղրելով
ասում է Եղիան:

Ունեմ Սովսէսին իր օրէնքներով՝ մեռելների
աշխարհից եկած,

Նաեւ գրքերը մարգարէների՝ հոգուս մէջ գրուած,

Եւ մատեանները առաքեալների, շարուած իմ
մտքի մատների վրայ,

Եւ Տիրոջո՞ր՝ բոլորին հաւասարապէս՝ աւետեաց
կտակով,

Թաղուելուց յետոյ յարութիւն առած՝
անթիւ-անհամար ննջեցեալներով:

Բայց ես աւելի՛ անհաւատ, քան այն մեծատան
եղբայրները հինգ,

Որոնք մի տեսակ իսկապէս յարմար օրինակներ են
Ողորմելի յոփացածների զգայարանքներին, -
Դարբնի սալի պէս մնացի անոստ իմ անչափ
յամառ քարացած սրտով.

Բելիարի նման եւ չապաշխարեցի:

Դ

Բայց դու վերստին շնորհի՛ր քո ողորմութիւնը
լքուածիս,

Ո՛վ բարի, ահաւոր, մարդասէր, ինամակալ,
Կենդանի, սուրբ, լուսաւոր եւ անվախճան
թագաւոր,
Պանծալի խաչիդ խորհրդի ազդելով
Հիմար երիկամներիս եւ յուսալքուած անպտուղ
սրտիս
Մեղքերով կորդացած անբերրի անդաստանիս
վրայ,
Որպէսզի հօօր ամենակալիդ գթառատ կամքի
օժանդակութեամբ
Որոտայ հոգիս, եւ վշտագնածիս աչքերից յորդեն,
Վազեն ոռոգող արտասուքների վարար վտակներ,
Եւ ինձ մեղքերից մաքրելով՝ փրկեն,
Քեզ մօտ հաճելի եւ ընդունելի լինելու համար,
Ամենապարգեւ Տէ՛րդ բոլորի, փառաւորեալդ
յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԿԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, ես նախնիս ամբարիշտների,
Գլխաւորս մեղաւորների, պէտս անիրաւների,
Առաջինս պարտաւորների, պատկերս
յանցաւորների,
Ատոիկեցիս՝ ըստ վատթարութեան եւ ո՛չ ըստ
բարեբաստութեան,
Անպատումներն իմ պատմեցի ահա,
Ամօթալի արարքներս նշաւակեցի,
Գաղտնիքներն հրապարակեցի,
Ծածուկներն յայտնեցի,
Թաքցրածներն ի ցոյց հանեցի,
Ամփոփուածներն տարածեցի,
Դառնութեան մաղձը ժայթքեցի,

Գործակցութիւնս չարին՝ մատնեցի,
Վերքիս թարախն ամբարուած՝ քամեցի,
Մեղքերիս խորութիւնը ծանուցեցի,
Կեղծիքների ծածկոյթը մի կողմ քաշեցի
Տգեղութեան քողը վերցրի,
Ամօթանքի զգեստը մերկացրի,
Գարշելիներն ի յայտ հանեցի,
Մրուրը մահուան փսիւեցի,
Պալարներն հոգուս խոցերի քահանայապետ
Քրիստոսիդ բացի:
Անձս անխնայ չարչարեցի,
Մարմնիս նկատմամբ սէր ցոյց չտուի,
Հին արմատներն ի տես հանեցի,
Բնութեանս կարիքներին չընդառաջեցի,
Միաբանութեան կապը նրանց հետ խզեցի,
Սրտիս դղեակը քանդեցի,
Որսացուած կամքիս հետ, իբրեւ մահուան
դարանակալի հետ, կռուեցի,
Պահուստն անյայտ իմ մեղքերի արտաքս հանեցի:
Մթերուած ախտերի գանձը մեծիդ առջեւ դրեցի,
Դատախազին դատաւորի հանդէպ կանգնեցրի,
Ապառնիների փորձն այժմից առա,
Կործանողի հետ դաշինքն իմ բեկանեցի,
Իտաբերայի հետ ուխտս խափանեցի,
Մարտի յաղթական աւարտը,
Յիսուս, քե՛զ վստահեցի,
Ռազմիկ գնդերը շարժման մէջ դրի,
Հարձակումներին դիմադրելու յոյսն Աստծոյ
խօսքի վրայ հիմնեցի,
Իսաւարասէրների փառանգը՝ լուսեղէնների
զէնքին մատնեցի:

Բ

Եւ արդ, ամենայն արարածների ստեղծիչ
Քրիստոս,
Որդիդ բարձրեալ Աստծոյ,
Մի՛ մեղադրիր ինձ՝ դատելով խստիւ մեծ օրն
հատուցման,
Ինձ, որ ա՛յժմ արդէն պարսաւուած եմ խիստ
խօսքերով այսպէս
Եւ ստացել եմ զանակոծութեան այսքա՛ն
հարուածներ:
Ուրեմն, հզօ՛ր անքնին, անճառ. բարերար
թագաւոր անմահ.
Այսպիսի ամօթալից ինքնապարսաւ
խոնարհութեանս համար,
Որով ինքքս ինձ անողոք կերպով դատաւիտեցի, -
Նվազներով այս մատեանի,
Ծածկիր՝ սատանայի դէմքն ամօթի անարգանքով
Եւ խաչիդ նշանով զօրացրո՛ւ երեսն
ամօթահարիս:
Լուսեղէն կնիքդ տեսքիս գեղեցկութեանը թող
միանա,
Նշանդ ամրութեան թող որ դրոշմուի իմ
կերպարանքին,
Թող կենաց փայտիդ ձեւը պատկերուի այտերիս
վրայ,
Արուեստն հրաշքներիդ որպէս շուք թող որ տպուի
ճակատիս,
Թո՛ղ չաղաւաղուի քո լուսապաճոյն դրոշմն ինձ
վրայ,
Աչքիս բիբերից թող չվերցուի ճաճանչդ
օրհնութեան,
Չհեռացուի գլխիցս քո վստահութեան
առհաւատչեան,
Տյառնագրութեանդ փառքը բերանիս ամուր

սեմերիցն թո՛ղ չսասանուի,

Երկրպագելի պահպանակդ թող միանա սրտիս
զգայարանքին,

Գոյակցութեանս չորս նիւթերի մէջ քառաթելիդ
յո՛յսը թող թափանցի,

Փրկչիդ իշխանութիւնն օժանդակի թող
կարկառուող ձեռքիս,

Մատուցման համար ստեղծուած մատներիս

Համարձակութեան խորհրդարանդ թո՛ղ
բարեգործես:

Գ

Աշխարհից մեկնելիս՝ սրբութիւնդ ինձնից թող
չհեռանայ,

Երբ պատանեն պարտապանիս՝ պատիւս թող
չպակասի,

Փրկութիւնդ անդաւանան թող չլքի հոգիս,

Ու չջնջուեն քոնը համարուող շնչիցս գրերն
կենդանատուիդ,

Զօրեղ արիւնիդ նկարը թող չեղծուի խորանից իմ
աստուածատիպ,

Եւ բնակուի ինձ հետ գերեզմանիս մէջ:

Թշուառ մարմնիս մաշուելուց յետոյ շնորհիդ
օծումն ինձ մօտ թող պահուի,

Որ նորոգութեան օրը նրանով ես ներկայանամ
փառաց փեսայիդ,

Ճանաչուեմ թող ես այդ նշաններովդ ու
վաստակներովդ պճնուեմ,

Ու մեծագոյնիդ երախտիքներով գնահատուե՛մ
թող,

Եւ ողորմութեամբդ քաւուած՝ աւագանի զգեստով
պերճանամ,

Տո՛ւր ինձ, բարեգութ, վերարկուդ անապական,

Որ տառապում եմ մարմնիս մեղքերով:

Թող որ քոնոնց դէմ չելնի՛ բանասարկուն,
Հոգիս հնացնողը թո՛ղ ոչնչանա,
Խաւարաբնակների խաբկանքները թող հանդէս
չգան,

Թող քո անունով օրհնուի, գթա՛ծ, վիհն իմ
հանգստեան,

Թող ողորմութեամբդ լցուի լիուլի գուրն իմ
գերութեան,

Թող որ քեզանով ընդարձակուի տեղն իմ
թշուառութեան,

Թող խաղաղ լինի, խնամո՛ղ, ինձ համար բանտը
բարկութեան,

Թող արգանդը մութ՝ սնի ինձ իր մէջ յանուն
յարութեան,

Յոյսովդ թող ինձ իր մէջ ամփոփի տունը
անձկութեան,

Թող ես քո ձեռքով պահուեմ խշտեակում այդ
տարտամութեան,

Թող որ ընդունուեմ ես քո թելերով տագնապի
տան մէջ,

Եղի՛ր դու, գովեա՛լ, ինձ հետ վտանգով լեցուն
սենեակում,

Աւա՛ղ ինձ այստեղ բիւր-հազար անգամ,

Չի երբեմն վերնային էի եւ այժմ անդնդային,

Տօնելի երբեմն եւ այժմ եղկելի:

Դ

Բայց եւ դու դարձեալ օրհնուած ես բոլոր
արարածներից՝

Երկնայիններից, երկրայիններից եւ մեռելներից
սանդարամետի,

Անպարտականդ այս տարագրութեան:

Ե՛ս վրիպեցի, ե՛ս օտարացայ, ե՛ս յիմարացայ,

Ե՛ս պարտուեցի եւ դարձա խոտան:

Ե՛ս վիստուեցի, ե՛ս կարկամեցի եւ կործանուեցի.
Ե՛ս մոլորուեցի, ե՛ս մատնուեցի, ե՛ս մերժուեցի.
Ե՛ս խորթացայ, գերուեցի եւ գայթակղուեցի.
Ե՛ս նզովուեցի, ե՛ս թշուառացայ, հարբեցի եւ
վատթարացայ,
Ե՛ս ընկղմուեցի, ե՛ս խաբուեցի, ե՛ս անօրէնացայ.
Ե՛ս ապականուեցի, մահացայ եւ իսպառ
եղծուեցի:
Այս բոլորի մէջ դու չարութեան մատ չունես,
Մնում ես դու միշտ միայն ու միայն անփոփոխ
բարի:

Ե

Երբ կամքդ ինձ հետ է՝ խաւարը ճառագայթ է ինձ
համար.

Յոյսիդ ճրագն երբ կայ, գիշերն արշալոյս է.

Հաղորդուելով մարմնիդ՝ կասկածների
ամօթանքից զերծ կլինեմ.

Իսկ ես ինքս ինձ կենդանի չեմ համարում, յիշելով
վախճանն անխուսափելի,

Եւ ոչ էլ կորած եմ կարծում ես ինձ,

Քանզի անկասկած հաւատում եմ ես նորոգման
հրաշքին:

Կեանքիդ դուռն առջեւս համարում եմ փակ՝ իմ
անքաւելի մեղքերի համար,

Բայց ես տեսնում եմ միաժամանակ դրախտն իմ
առջեւ բաց,

Որ աւետում է փրկութիւնդ ինձ:

Քանզի ո՛չ այնքան վիստութեան գոյժն է
տագնապեցնում,

Որքան փրկութեան համար կարկառած ձեռքդ է
խրախոյս քաջալերական:

Ուստի, տո՛ւր դու, Տէ՛ր, տո՛ւր ողորմութիւն

Գոհարանութիւն կարդացող բոլոր

բանականներին,
Օրհնեա՛լ յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԿԶ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Արդ, ով որ առնի այս համեստ մատեանի
մաղթանքների սպեղանին,

Նրանով աղօթելու համար, եթէ այդպիսին
մեղաւոր է մի՛

Ե՛ս էլ թող նրան մասնակից լինեմ իմ այս
խօսքերով.

Իսկ եթէ երբէք լինի ոմն արդար այր աղօթարկու,

Ես էլ նրա հետ թող այս մատեանով գտնեմ
գթութիւն:

Եւ ապա, եթէ այդպիսին իրեն զգա երջանիկ, ինձ
համարելով միայն եղկելի,

Այդ նոյնը նաեւ հաստատում եմ ե՛ս,

Բայց նա էլ յիշի թող Սողոմոնին եւ այս հոգեշունչ
խօսքերը նրա, -

"Ո՛վ վստահօրէն կարող է ասել, թէ ունի սուրբ
սիրտ,

Եւ կամ պարծենալ, թէ մարութ է մեղքերից".

Եւ թէ՛ "Չի եղել երկրածին մի մարդ՝ զերծ իրեն
համար պատասխան տալուց".

Ինչպէս եւ ոչ ոք՝ յաղթող համարուած՝ ինքնարշաւ
վազքով,

Եթէ մինչեւ իսկ ունենայ թելեր նա բարձրաթոնիչ:

Ուստի նաեւ նա՛ թող զգուշանա, երկիւղ կրելով,

Որ հաստատ վեմի վրայ է նոյնիսկ,

Պօղոսից ուսած.

Որպէսզի միգուցէ գետին ընկնելով՝

Նմանուի այս իրաւադատ կանոնը սահմանողին:

Այլ նոյնիսկ եւ նա՛, որ մաքուր է, թող այս
կշտամբանքը դաս անի իրեն,

Չիջնելու համար անխտեմ կերպով իր
բարձրութիւնից.

Իսկ պատժապարտն էլ թող ընդունի այն՝ առիթ
ազատութեան:

Որով հոգեւոր մահուան կործանումից վեր
բարձրանալով՝ ապրի լիայոյս:

Իսկ ինձ համար այս պատգամները թող լինեն
փորագրուած արձանագրութիւն յաւերժ
անեղծանելի,

Որ իմ եղկելի եւ մահկանացու անձի փոխարէն՝
Հեծութեան, լացի անդադար հնչմամբ, առանց
լռելու միշտ աղաղակի:

Եւ թող որ լինի, որ բեկբեկուած ոսկորներս
հողապատեան շիրմի ծածկոյթի տակ

Անմռունչ ձայնով՝ խոստովանական այս
աղօթքներս եղանակեն.

Ինչպէս եւ հողում լուծուած մարմինս անլուր
բարբառով

Այս պաղատանքներս թող որ առաքի քեզ՝
ծածկատեսիլ:

Բ

Տէ՛ր գթութեանց, աղբիւր ողորմութեանց,
պարգեւաբաշխ բարի,

Որդիդ բարձրեալի Տէ՛ր Յիսուս Քրիստոս,

Ողորմի՛ր, ինայիբ, մարդասիրիբ,

Նայիբ վշտերիս եւ տե՛ս սրտաբեկութիւնս,

Խոնարհուի՛ր թշուառութեանս վրայ,

Տե՛ս տարակուսական տագնապս անձեռնհաս,

Կարեկից եղիբ ի կորուստ տանող ցաւերիս մէջ

ինձ,

Շոշափի՛ր բժշկապէս վերքերն իմ թշուառագոյն,

Ականջ դիր քաղցրութեամբ ողորմագին
հեծեժանքներիս,

Լսի՛ր գերեզմանի խորունկ անդունդից հնչող
անմռունչ հառաչանքներս,

Թող քո ամենալուր ականջներից ներս մտնի
Հիւծուած անդամներիս ձայնը պաղատագին:
Եւ քանզի անապական է կենդանութեանս
գրաւական հոգին,

Ուստի թող անփոփոխ լինի սիրոյդ գթութիւնը
նաեւ,

Կցորդ եղիր դու հեզութեամբ՝ տկարութեանս իմ
տաժանելի:

Գ

Մեռեալ պատկերիս դէմ ոխ մի՛ պահիր,
Անշունչ կերպարանքիս հետ մի՛ մտնի
դատաքննութեան,

Մահով տանջուածիս դու նոր հարուածներ մի՛
աւելացնի,

Կոտորուած խեցեղէն անօթիս հետ մի՛ մարտնչիր
ուժգնութեամբ,

Վնռով խոշտանգուածիս վրայ մի՛ բարկանայ
կրկին,

Կործանուած շինուածքիս մի՛ տար նոր
պատուհաս,

Սպանուած շանս վրայ քարեր մի՛ արձակիր,
Չախջախուած լուխս վրայ մի՛ որոտայ

սաստկապէս,

Անարգ հողիս դէմ իբր անբարիաւանճի՝ մի՛ մոռնա
ուժգին,

Մոխրիս մերժելի մի՛ կանչիր դատաստանի
քննութեան,

Ցնդելի փոշուս մի՛ համարիր դու քեզ
ընդդիմամարտ,

Տիղմս տաղտկայի մի՛ կարծիր դու քեզ որպէս
նսոխ,

Գարշուրեանս անգոսնելի մի՛ վանիր իբրեւ
բռնամարտիկի,

Դուրս շարտուելիք կոճղիս մի՛ պահիր գեհենի
համար որպէս վառելիք,

Այսքան խօսքերով բազմաթիւ անգամ
կշտամբուածիս

Դու էլ վերստին մի՛ յանդիմանիր:

Դ

Սրանք են ահա այն սրտաբեկիչ ու հոգնաթախիծ
աղաչանքները,

Որոնք իմ թշուառ ու խաւարարգել շիրմից պիտ
հնչեն.

Եւ թող քո օրհնեալ խօսքը հաստատի, թէ
աղօթողիս սրտի համաձայն

Պիտի մնամ ես անայլայլելի:

Քանզի հիմա էլ, մինչդեռ խօսում եմ դեռեւս
կենդանի՝

Մեռած եմ արդէն անհասիղ համար.

Ինչպէս եւ մահվամբ կոչելիս անգամ

Անեղծ կմնամ ես իմ հաւատքով, ըստ հրամանի
ամենագորիդ:

Արդ, աղաչում եմ, Տէր Յիսուս Քրիստոս,
ողորմութեամբ նայիր դու ինձ

Եւ մի՛ թողնի, որ բնակակից լինեմ Բելիարին:

Թշվառիս թաղման ժամանակ, տապանի
անկենդանական թնդիւնը մահագեկոյց,

Որպէս աղաղակ լալահառաչ՝ քեզ ինձ հետ
հաշտեցնող,

Արժանացրո՛ւ քո լսողութեանը, միանկ բարեգործ,

Հոգեսէր, հգօր եւ մի՛շտ մարդասէր.

Եւ քո բարի հոգին թող բնակուի ինձ հետ, լոյս

տալով ինձ խաւարի մէջ,

Թող մնան ինձ հետ քո կենարար չարչարանքների
մատուները պաշտելի,

Որպէսզի, իբրեւ գանձարանի աւանդ, պահելով
ինձ քո մէջ, կենսանորոգեն.

Որպէս զինուորական սարք անվատնելի թող
պատկանեն ինձ

Ու մնան ինձ հետ իբրեւ մնայուն պարսաքարեր՝
հոգու հնարքների,

Չարի գնդերը հալածելու համար:

Նրա իմ դէմ մղած մարտը թո՛ղ քեզանով վանուի,
Տէ՛ր,

Չի եթէ նա ելնի իմ դէմ պատերազմելու,

Տեսնելով քաղաքն առանց զինուորի եւ
ազդարարող գործիքը՝ անձայն,

Քե՛զ կունենամ, Տէ՛ր, անքուն պահապան
մշտնջենապէս:

Ե

Չի եթէ շտապի չարն այժմ եւեթ, առաջ քան օրը
կատարածի,

Եւ պատրաստի ինձ համար անելանելի
արգելարան,

Ես տէրունական աղօթքն իմ կուղղեմ նրա դէմ,
որպէս մահացու հարուած.

Եթէ կարենայ ինձ զցել գետին,

Արարչին արած իմ ծնրադրութեամբ նրան
կխոցեմ.

Եթէ յաջողի երկրի մոխրի մէջ գլորել նա ինձ,

Աստծոյ երեսնիվայր ընկնելը թող հալածի նրան.

Եթէ տանջալից ցաւեր նիւթէ ինձ,

Աշխարհի փրկչի քրտինքը առատ արեամբ
շաղախուած՝ թող նեղի նրան.

Եթէ շունչս նա պատանդ վերցնի, որպէսզի բարի

ճամփով չընթանամ`

Ամենաստեղծի կապանքը թող ինձ ազատ
արձակի.

Եթե բռնադատի ինձ ուրանալու լոյսի
պարզեւները,

Համբերութիւնդ` աստուածամարտների
հայհոյութեան դէմ`

Թող որ նրան էլ նրանց հետ մէկտեղ
պապանձեցնի.

Եթե գաղտնապէս հարուած հասցնող զէնքերի
նետեր արձակի վրաս,

Կապարճների հօր շքեղ աղեղի խոցող սլաքը թող
դիպչի նրան.

Եթե խաւարած լոյսի շղարշով անամօթաբար
աչքիս մէջ մտնի,

Ամենակատարեալի ծածկուած գլխի
կռփահարումը թող տանջի նրան.

Եթե մոլեգնի ձեռքիս վստահութիւնը կաշկանդել,

Թող ստեղծողի ձեռքը տրուած եղեգնը չարչարելով
նրան լռեցնի.

Եթե անամօթ ծաղր ու ծիծաղով ինձ հետ
կատակի,

Ամենագօրի` ծաղրանք տանելը թող հեզնի նրան.

Եթե պէս-պէս հուռութքների բժժանքով
խորամանկի,

Հօր Աստծոյ երեսին տրուած ապտակը նրան
ամաչեցնի թող.

Եթե գիշերուայ մութը իջնելիս խաբէութեան
խաւարով կռուի լկտիաբար,

Տէ՛ր, լոյսիդ պայծառ ճառագայթման հետ` թող
խայտառակուի.

Եթե հաւակնի, թե կկարենայ փորձութիւնների
արեգակնակեզ

Վատնիչ խորշակի կեսօրուայ տապով ինձ
բոլորովին արմատից խախտել,

Թող քո լուսեղէն նշանի գօրութեամբ

արմատախիլ՝ չորանա.

Եթէ փորձի նա փշումով տրուած շնորհից ինձ
գրկել,

Այն թուրքը, որ մեղաւորիս փոխարէն քերորենների
տէրն ընդունեց,

Թող ամօթահար անի նրան:

2

Եթէ կծոտող ժանիքներ ցոյց տայ ինձ,
Երկնաւորի բերանի լռութիւնը թող նրան
պապանձեցնի.

Եթէ ցանկական խայթուածքներ պատճառի
հոգուս,

Ամենաստեղծին զարնուած բեւեռները նրան
կսկծեցնեն թող.

Եթէ անիրաւ խորհուրդների ճանապարհով ինձ
մոլորեցնի,

Անհասանելու ոտքի մեխերը թող նրան կապեն.

Եթէ հարբեցնի ինձ դժնաբարոյ հրապոյրներով,

Թող բարերարին տրուած լեղիով խառնուած
քացախը նրան դառնացնի.

Եթէ ծառի առաջին պտղի ճաշակման մէջ գտնի
ինձ,

Խաչի սոսկալի խորհուրդով բռնուած՝ թող ի՛սպառ
դատապարտուի.

Եթէ Տիրոջ հրամանին հնազանդուելու դէմ
ընդվզել սովորեցնի ինձ,

Անսահմանելու պարանոցի բերումն թող կործանի
նրան.

Թէ սատակամահ անելու համար հալածի նա ինձ
եւ վիրաւորի,

Ադամին ստեղծողի կողքը մխուած ահագին տեգր
թո՛ղ պատռի նրան.

Եթէ դժոխային վշտերի երկունքներով պաշարի

նա ինձ,

Ամենակալի պատանքի կտաւը թող կաշկանդի նրան.

Թէ խարդախութեամբ փորձի ինձ մահուան յատակը ձգել,

Մահուան վէմի մէջ կենդանի Աստոյ բնակուելը թող նրան մեռցնի.

Եթէ մարդկային իմ գայթակղութեան վրայ նա խնդա,

Թող կարկամ կամքով կորանայ կրկին.

Չի Աստուածն անմահ յարութեան փառքով՝

Բոլոր մեռելներին նորոգեց իր հետ:

Թէ հազարամեայ փոքր կապանքի լուծումով բերկրի,

Բայց թող որ իսկոյն դողայ վերստին

Անվերջ-անվախճան տանջարանի մէջ սաստիկ կաշկանդող յուսկ շղթաների անգերծ տագնապից

Եթէ առաջին իսկ հարուածի հետ նա դժուարանայ,

Մեծ դատաստանի մեծ օրը ահեղ, կորստեան գո՛յժը թող տրուի նրան՝

Նրա եւ իր հրեշտակների համար պատրաստուած անշէջ գեհե՛նով:

Է

Իսկ ինձ, որ քեզ եմ ապաւինել,

Տէ՛ր Յիսուս,

Միակ թագաւոր, ինքնակալ, գօրեղ, արարիչ երկնի եւ երկրի,

Եւ նրանց մէջ եղած բոլոր զարդերի,

Ինձ, որ աչքս քո գալստեանն եմ յառել

Եւ փրկչիդ ողորմութեանն եմ սպասում յոյսով,

Քո ոտքն եմ ընկնում եւ համբուրում եմ հետքերը զարշապարիդ.

Պարտութիւնս եմ խոստովանում եւ մեղքերս
հրապարակում,
Կշտամբանքների քարերով ծեծկում եմ եւ սրտիս
հառաչանքներով այրում,
Խղճիս խայթերով խոցոտում եմ եւ շնչիս բոցով
տոչորում,
Այրում եմ արցունքներիս աղի ցողով ու
երիկամներիս կսկծանքով կիզում,
Յուսակտուր հոգով ցամաքում եմ եւ դառնաշունչ
հողմով մարում.
Թախանձանքի խօսքերով երերում եմ եւ
կողկողագին հեծութեամբ դողում,
Տաժանելի տանջանքներով տուայտում եմ եւ
հոգուս տագնապներով տատանում,
Սրբիկների կոծով ծփում եմ եւ ալիքների
բախումից սասանում,
Ի լուր համբաւի սարսում եմ եւ վախի յիշատակով
կորչում,
Ատեանի տեսարանով հալում եմ եւ մեծիդ
սպառնալիքներով մեռնում, -
Լսի՛ր, բազմագո՛ւթ, քաւիչ, մարդասէր եւ
երկայնամիտ,
Քաղցրութիւն անճառ, օր բարի եւ տիւ տենչալի,
Չի կարող ես դու ամէն ինչի մէջ
Ինչպէս եւ վերջին շունչս փչելիս ինձ փրկագործել:
Քեզ Հօր եւ սուրբ Հոգուդ հետ փա՛նք յաւիտեանս.
ամէն:

ՔԱՆ ԿԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ սակայն Քրիստոս Աստծոյ իրաւունքի խօսքը
արդարացի է յոյժ իմ նկատմամբ,

Քան սատանայի, որ սկզբնահայրն է չարիքների.
Քանզի յայտնուեց նա նրա համար, որպէսզի
քանդի գործերը նրա,

Իսկ ինձ համար, որպէսզի իմ հնացած պատկերը
նորոգի

Աստծոյ կերպարանքով,

Առնելով մեր իսկ նմանութիւնը կատարելապէս

Եւ միացնելով իր բնութեանը խառնուածքը մեր:

Բազում շնորհներից ոչինչ չտուեց նա սատանային,

Այնինչ ինձ վրայ հեղեց առատօրէն.

Նրա համար երբէք չչարչարուեց,

Իսկ ինձ համար զոհուում է նա հանապազ.

Սատանան անհաղորդ է կեանքին,

Իսկ ես փրկութիւն եմ վայելում միշտ.

Նա հալածուած է խաչով,

Իսկ ես զօրացած եմ այդ նո՛յն նշանով.

Նա մերժուած է լոյսից,

Իսկ ես միացած եմ նրա փառքի հետ.

Նրան երկրի վրայ անգամ հանգիստ չխոստացաւ,

Իսկ ինձ երկինքը տուեց սեփականութիւն.

Կտրեց նրա յոյսի առհաւատչեան,

Եւ իմը հաստատեց առանց իզելու.

Նրան խոզերի երամակում արգելափակեց,

Եւ իմ մէջ ի՛նքը զօրացաւ.

Կարիճների հետ համեմատեց նրան,

Եւ ինձ ճառագայթ յայտարարեց.

Սողունների նմանեցրեց նրան,

Եւ ինձ իր անունով կնքեց:

Բ

Իսկ ես լքեցի երախտիքն այսքան բարիքների անող
Աստծոյ

Եւ չարին հետեւեցի՝ նրա հետ մէկտեղ դժոխքի
յատակը հայելու համար:

Ուստի արժան եմ բարիքների ապերախտս
անշնորհակալ եւ անընդունակ սիրո,
Մեղքի պարանով եմ ձգուած՝ երկկամունքիցս
խոցուած խորապէս.

Ճիւղակոտոր ծառ եմ արմաւենու,
Քացախացած գինի, հեղեղուած ցորեն,
Ջնջուած մութիակ, պատռուած վճիռ,
աղաւաղուած կնիք,

Ձեւ այլափոխուած, վերարկու կիզուած, կորած
ընպանակ,

Ընկղմուած նաւ, մանրուած մարգարիտ,
սուզուած անգին քար,

Տունկ եմ գոսացած, նեցուկ խորտակուած, փայտ
խապառ փտած,

Խամբած մանրագոր, փլատակուած տուն,
խարխլուած խորան,

Բոյս արմատախիլ, ձէթ՝ թափուած աղբոտ
հրապարակում,

Մոխրակոյտերի վրայ հոսած կաթ,
Քաջերի գնդում մահապարտ եմ մի:

Գ

Չի անձն իմ ողբալի, Բաբելոնի առակի համաձայն՝
մարգարէներից ասուած՝

Երուսաղէմի հետ եւ նրա նման յորդոր լսեց միշտ
եւ չխրատուեց:

Պատճառն այն է, որ այստեղ անգոսնուած եմ,
այնտեղ՝ խայտառակուած,

Այստեղ պարսաւուած եւ այնտեղ կշտամբուած,

Այստեղ ծաղրուած եւ այնտեղ նախատուած,

Այստեղ անարգուած եւ այնտեղ յանդիմանուած,

Այս կողմը ապշած եւ այն կողմը՝ լքուած,

Այստեղ հեծութիւն, այնտեղ հառաչանք,

Այստեղ կասկածներ եւ այնտեղ վախճան,

Այստեղ վախ ու վիշտ եւ այնտեղ հաստուցում,
Այստեղ արկածներ եւ այնտեղ դատաստան,
Ուր ո՛չ խօսելու իրաւունք կա եւ ո՛չ պաղատելու,
Ո՛չ օրերը թիւ ունեն եւ ո՛չ ժամանակը վախճան,
Ո՛չ յոյսի կամուրջ եւ ո՛չ ողորմութեան դուռ,
Ո՛չ աջ պաշտպանող եւ ո՛չ օգնող ձեռք:

Դ

Սակայն ապաւեն ես դու, դու ինքդ փրկութիւն,
Դո՛ւ այցելութիւն, դու քաւութիւն, դու
երանութիւն,
Դո՛ւ ես բժշկում, դու ես ողորմում, միայնդ հօգօր,
Կենդանի անճառ, Տէր Յիսուս Զրիստոս բարերար
Աստուած,
Օրհնեա՛լ, օրհնեա՛լ եւ դարձեալ օրհնեալ,
Յաւետ բարձրացած քո սուրբ Հոգու հետ
Մեծիդ իսկակից Հօր փառքի համար՝
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, յիշելով ահարկութիւնը վերոգրեալների,
Որոնք Աստծոյ կողմից ինձ հասած
սպառնալիքներ են ահագնապէս,
Ինչպէ՛ս դադարեմ նոր ողբերգութեան տողեր
հիւսելուց,
Եւ կամ ինչպէ՛ս ցամաքեն հեղեղներն արցունքիս:
Չի եթէ քառավտակ գետերի ճիւղաւորումները
բոլոր,
Որոնք յորդահոս ծաւալուելով ոռոգում են ողջ

եղեմն ու երկիր,

Լիառատ, լրիւ բաւականութեամբ ջուր տալով
նրանց,

Իրենց ուղիներով ու ակունքներով աչքերս լցունեն, -
Չեն կարող երբէք զովացնել սաստիկ բոցն իմ
մեղքերի:

Կամ եթէ նոյնիսկ, ըստ մարգարէի
ըղձականութեան,

Գլուխս լցուի ջրերի առատութեամբ,
Եւ տեսողութեանս ճրագարանները աղբիւրներ
կայլակեն՝

Չեն կարող չափել վշտերն անպատում կոտորում
հոգուս.

Եւ ոչ էլ սրտով կարելի է խոցուած, եղերապատում
բանահիւսութեամբ

Լալկան կիների ջայլերը բոլոր՝ կարող են ցաւերս
Ու աղէտներս երգի վերածել եւ կամ նուագել
ձայնով ողբական:

Բ

Ի՛մ արշխարի գալու օրն է նզովուած եւ ոչ թէ Յոբի
կամ Երեմիայի.

Ձի տօնելի է նրանց ծննդեան օրը բարեբախտ եւ
ո՛չ մերժելի,

Եւ աշխարհն ամբողջ չարժէ նրանցից թեկուզ եւ
մէկին:

Ապա ուրեմն ինձ է վերաբերում նրանց անիծած
օրը,

Երբ ես՝ անարժանս լոյսի եւ ամէն տեսակ բարիքի՝
աշխարհ եմ եկել,

Դատնալով այստեղ կորստեան որդի եւ մահուան
դրկից,

Մշակ մեղքերի եւ արբանեակ անօրէնութեանց:
Եղո՛ւկ ինձ, զի ես չմնացի հաստատ կեանքի այն

ուխտին,

Որ, ո՛վ բարերար, դո՛ւ սահմանեցիր:

Չհետեւեցի քո կենդանարար եւ անմահացնող
պատուիրաններին,

Չաշխատեցի եւ արմտիք հնձել,

Որ խռովայից ձմռան օրերին ուտեստ ունենամ.

Ո՛չ ամուր պատեր կառուցեցի եւ եւ ոչ էլ ձեղուն
կապեցի յարկիս,

Որպէսզի մրրկաշունչ քամիներից պաշտպանուեմ:

Գ

Երկար ճանապարհի համար նշխար մի պաշար եւ
չամբարեցի,

Որ դարմանէի տագնապը սովի.

Աղերսագին աղօթքներ չպատրաստեցի քեզ
համար,

Որոնցով քո առաջ ելնել համարձակուեցի.

Չհաւաքեցի փրկութեան պաշար մաքրակեաց
վարքով,

Որ նորոգութիւնս երաշխաւորեր.

Աշխարհում հաշիւս ճիշտ չբռնեցի իմ մատնիչի
հետ,

Որ դատաւորի ձեռքից այժմուանից իսկ պրծնէի.

Օրհնայիր ձեռքով չներկայացայ,

Որով սրբուելով մասնակից լինէի օրէնսդրին.

Ո՛չ դէմքս պահպանեցի, ո՛չ էլ թիկունքս
պատսպարեցի,

Ո՛չ աջ ձեռքս զէնք առայ եւ ո՛չ էլ ձախս՝ վահան,

Որ պատերազմում մնայի անվտանգ,

Չրահ չհագցրի երիվարիս, ոչ էլ մարտիկներիս
սպառագինեցի,

Որ կարենայի ճակատ յարդարել.

Վաղահաս պտուղը չքաղեցի, եւ ուշհասուկին
չժամանեցի

Եւ ահաւասիկ շուարել եմ ես բարիքներից զուրկ:
Չունեմ մաքրութեան ծաղիկ եւ ոչ էլ իւղ
ողորմութեան,
Եւ գիշեր է մութ, մռայլ ու անշող.
Մահուան նիրհով եմ քնել ես,
Եւ կոշողի փողի տագնապն ստիպում է ինձ.
Չարդը հարսանեաց մերկացրի կրկին եւ ձեթը
վարքի լքեցի դարձեալ
Եւ հարսանիքի դուռն ահաւասիկ փակւում է:

Դ

Եւ արդ, այսքա՛ն վշտերի մէջ ես ինչպե՞ս
մխիթարուեմ,
Կամ խաւարամած տարակոյսներիս կենսաւետ
յոյսին որքա՛ն լոյս խառնեմ.
Եւ կամ ո՞ւր արդեօք ոտքս հաստատեմ,
Ո՞ր վստահութեան աչքերս յառեմ,
Եւ կամ ո՞ւր տեսնեմ անդորրութիւնը իմ
ծփանքների,
Կամ ո՞ր ըղձալի հանգստութեանը ձեռք
կարկառեմ:
Եթէ երկնքի բարձր ձեղունին պարզեմ ձեռքս ես,
Այնտեղից տեղաց հուրը Սողոմնի, ինչպէս ասուած
է:
Իսկ եթէ երկրի խորունկ յատակին՝
Նա՛ բացեց երախն իր հափշտակիչ ու կուլ տուեց
Դաթանին՝
Աբիրոնի բանակներով:
Եթէ հանդգնեմ փախչել բռնողից՝
Գուցէ բռնի ինձ վիշապն ահագին:
Գազանների հետ եթէ թափառեմ՝
Նրանք առաւել շտապեն պիտի արարչի վրէժն
ինձնից առնելու,
Քան մի ժամանակ Եդիսէինը՝

Բեթելացի մատաղասի քրմորդիներից:
Եթէ այքս ամենատարած օղի պարզութեանն
յառեն՝

Եգիպտացոց համար շոշափելի խաւար դարձաւ
այն.

Թէ թռչուններին՝ բարձունքում ճախրող՝
Մորթուած գոհերի արիւնաբոսոր դիերն ուտելու
են կոչուած նրանք:

Ե

Տկարների դէմ եթէ խիզախեմ՝
Կապառուեմ պիծակներից, եւ ինձ ի՞նչ պէտք են
առիւծներ այլևս:

Պատառօտող արջերից եթէ ճողոպրեմ՝
Արիւնաձարաւ մժեղները ինձ պատահեն պիտի:
Եթէ ինչ-որ տեղ ես անհոգ նստեմ՝
Ամենաչնչին մժղուկները վառուող կրակի
մոծիրների պէս շուրջս կմաղուեն:

Միեղջիւրանու եղջիւրից եթէ փախչեմ ու պրծնեմ՝
Մորմոքեցուցիչ մանր մուների ճիրանները ինձ
պիտի կեղեքեն:

Շտեմարանի մի խորշը եթէ թաքնուեմ, կույզ գամ՝
Մեղքի նմանակ գարշ ու տաղտկալի գորտերը
պիտի ինձ զգուեցնեն:

Անդաստաններում եթէ ինչ-որ տեղ գտնեմ ինձ
համար ու տեղաւորուեմ՝

Շնաճանճերի տարմերը պիտի իմ շուրջը պատեն:
Մի կողմ են թողնում մորեխն ու մարախ – զօրքեր
զօրաւոր,

Ժանգը անկենդան, ուտիճը անտես, թրթուր
թունաւոր,

Ջուր թուացող կարկուտով ու ոչնչացնող եղեամով
հանդերձ,

Որոնք մեր այքին թւում են թէւ անզէն ու անզօր,

չնչին, չքոտի,

Բայց եւ Աստծոյ մի ակնարկութեամբ նրանք
խիստ գոռոզ եւ ուժգնաբար

Չարկեցին, դուրս հանեցին ու հալածեցին
յաղթականօրէն

Իր գաւազանով հայարտ եւ ամբարտաւան
բռնաւոր Փարաւոնին:

Մրանք են ահա մահացու խոցող, գաղտնի
վնասող, լկող ու թաքուն

Տեսակները այն հոգեւոր անտես չարչարանքների,
Որոնք որպէս պատիժ ուղարկուեցին
եգիպտացոց՝ նրանց անօրէն գործերի համար:

Չ

Բայց դու, ամենագօ՛ր, արարիչ եւ տէր բոլորի,
Յաղթող հանդիսացիր թշնամիներիս՝ հալածելով
նրանց.

Եւ ինձ ողորմի՛ր կրկին գթութեամբ՝ փրկարար
ձեռքդ մօտեցնելով ինձ,

Որ վարանած եմ եւ տարակուսած, խոշտանգուած
եւ մահապարտ.

Չի դու ես միայն ճանաչուում Աստուած՝

Միշտ փառաւորուած Հօր եւ սուրբ Հոգու հետ

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Եւ քանի որ ես, իմ գոյացութեան ամենահնար
արուեստաւորիդ՝

Տիրոջդ ու Աստծուդ ձեռքով, քո սիրոյ մէջ, ինչպէս

գտող քուրայում,

Եռում եմ շարունակ ու չեմ պարզում երբեք,
Խտունում եմ միշտ ձուլուելու համար ու չեմ
միանում, -

Ուստի, երկնաւո՛ր դու արծաթագործ,
ճարտարապե՛տ իմ,

Ի գո՛ւր ես հոգնում եւ ընդունայն ես ջանում ինձ
համար,

Ըստ մարգարէի յայտնի առակի՝ չարութիւնս
չհալուեց,

Եւ ահա, ես ինքս կամովին չարաչար մոլեգնելով,
Մի ողորմելի եւ դիւահար խելագարի պէս
Խօսում եմ հանդգնաբար անկարգ՝ աւելի մեղքերս
անեցնելու,

Քան թէ հաշտութեան մի ճար գտնելու:

Եւ որպէսզի հանդերձեալում պատրաստուող
տանջանքները

Չերեւան ինձ անընտել դէպքեր, անսովոր
պատահարներ եւ անօրինակ հանդիպումներ, -

Ընդմիշտ անմոռաց պահեց իմ մարմնում,
այստեղից իսկ,

Նախկին անէծքներից մնացած հազիւ նկատելի
հետքերը,

Որպէսզի փոքր ու չնչին տարրերից մեծին
սովորենք:

Բ

Որովայնի մէջ եմ առաջանում ինքնաբերաբար ու
բազմանում

Շարժուն ու պէս-պէս ճապուկ ճճիներ,

Աղիքների գաղտնակուր որդեր, այրող այտուցներ,

Բշտիկներ բազում բոցի պէս կիզող

Եւ անկերպարան, անձեւ անիծներ,

Եւ այլ քրտնածին ու զագրաթորմի՝

Կսկիծ, եռ ու քոր պատճառող անիծ, ե՛լ լու, ե՛լ
ոջիլ,

Ու վայրենական այլ ասպատակներ,
Որոնք գիշերամարտ դեւերի եւ խաւարատէր,
զինուած բարբարոս գնդերի նման,

Եւ արաբական քանասար գայլերի
գազանութեամբ,

Կորակոր ընթացքով, արջնաթոյր գոյնով,
Կրկնոյր ու կեռ կտուցով՝ կարճի խայթոցի նման,
Խոցելով, ինչպէս դժնիկ փշով՝ ծծում են, քաշում
արիւնը մեր թաց

Եւ հանգստարան անկողնում չարչարում են մեզ:

Եւ երբ մէկը իր ձեռքը երկարի նրանց՝ արժանի
պատիժը տալու,

Չգում են իսկոյն մարդուն պատճառած վնասը
իրենց

Եւ իսկոյն եւեթ, լերկամարմին ու փոքրիկ
հասակով

Թռչում են, կարծես թէ թելեր առած,

Եւ մարախի պէս ոստոստելով՝ այս ու այն կողմ
ընկնում,

Աղուէսների նենգ ու խաբեպատիր բարքի
համաձայն

Փախուստ են տալիս ամէն ուղղութեամբ
խորամանկելով

Մտնում ծակուծուկ, մահուան երկիւղից
փրկուելու համար:

Եւ իրենց չնչին չքոտի տեղով ոչ միայն ռամիկների
ու խառնիճաղանջների,

Այլեւ ահագին հզօր թագաւորների կփախցնեն
նրանք,

Կհանեն վերը՝ դատիկոնը բարձր ապարանքների

Եւ կամ բացօթեայ կրնակեցնեն:

Շատ քաջեր անգամ, որոնք իշխեցին ամբոխների
վրայ

Եւ ժողովուրդների տիրեցին, եւ ազգերի

քաղաքներ առան,

Խոստովանում են պարտութիւնն իրենց զօրեղ
ձեռքերի,

Թէ՛ "Որովհետեւ չկարողացանք մեզանից
հզօրների բռնութեանը դիմադրել,

Այդ պատճառով էլ խոյս տուինք ահա եւ հասանք
այստեղ:

Գ

Բայց ինչո՞ւ եմ ես խօսում այդ չնչին, աննշան
այնպէս ու ծիծաղելի գոյութեանց մասին,

Նրա համար, որ նրանք զօրաւոր եւ անհերքելի
ջատագովներ են աստուածութեան

Եւ հանդերձեալներն են յիշեցնում ինձ,

Որոնք անօրէն իմ մարմնի մէջ ծնւում են իբրեւ
դառն պտուղներ:

Դրանց նման են եւ դրսից եկող ախտերն սպանիչ

Եւ ուսիչների կոյտերն անողոք, որոնցից անհնար
է ազատուել,

Որոնց մեր մարմնին պատճառած ահարկու
ցաւերով

Կարողանում ենք գալիք տանջանքներն
իմաստասիրել:

Եւ կարելի չէ գտնել որեւէ ապաստանարան,

Որ կարողանանք խոյս տալ նրանցից եւ ազատ
մնալ.

Չի առանց կամքիդ եւ ակնարկութեանդ

Ի չիք են անցել մարդկային բոլոր ճար ու
հնարանք:

Իսկ դու, բարերա՛ր, կեանքի ամէն դեղ ու
դարմանն ունես բաւականապէս,

Եթէ կամենաս փրկել, նորոգել, քաւել, բժշկել եւ
կենագործել:

Եւ քեզ փա՛նք յամենայնի յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

ԱՆՀՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Ստեղծուածների մէջ անդասելի այս
մանրութեանց յետոյ երկրային՝
Խօսքիս ընթացքը բարձրացնեմ պիտի մինչեւ
մեծագոյն արարածները,
Ահաւորի արդար եւ անաչառ գործերի մասին
ճառաբանելով,
Բայց եթէ նոյնիսկ շատ մօտիկ լինեն նրանք
Աստծոյ,
Ինչպէս որ էին նահապետները մեր
աստուածամերձ,
Եւ կամ մաքրագոյն, ինչպէս եղել են
մարգարէները,
Կամ անբժագոյն, ինչպէս առաքեալները,
Կամ ընտրելագոյն, ինչպէս մարտիրոսները, -
Չո՛ր է նրանցից հոգու փրկութիւն յուսալ ինձ
համար,
Եթէ դու, ո՛վ աննուագ բարի եւ անփոփոխ
խնամակալութիւն
Եւ անպակաս ողորմութիւն, ցոյց չտաս ինձ քո
մարդասիրութիւնը:

Բ

Չի եթէ նոյնիսկ Աբրահամին իրե՛ն ձայն արձակեմ,
Ինչպէս ընչեղի ողորմագին առակն է ինձ
ուսուցանում,
Տապից պապակուելիս անգամ նա մի կարթիլ ջուր
չի կարող տալ ինձ,
Քանի որ նա էլ մարդ է՝ մարդկային
անճարակութեամբ:

Եթէ Մովսէսին դիմեմ՝ նա էլ է համակուած
դարձեալ նոյն տկարութեամբ,
Զի անգօր եղաւ փրկել այն մարդուն,
Որն իր վառելիք ցախի պաշարը շաբաթ օրն էր
հաւարում:

Եթէ Ահարոնին՝ նա եւս ուրիշին աղաչելու կարիք
զգաց,

Իսկ եթէ Դաւթին իր բոլոր բարի գործերով
հանդերձ՝ նա էլ չմնաց անմեղադրելի.

Իսկ եթէ Նոյին, Յոբին դիմեմ ես, կամ Դանիէլին՝
Եզէկիէլ մարգարէն նրանց անուներն
յիշատակելով,

Այսպէս խօսեց նրանց մասին՝

Աստծուց ներշնչուած. -

"Կենդանի եմ ես, ասում է Տէրը, թէ նրանք չպիտի
կարողանան

Ազատել իրենց ուստրերին ու դուստրերին
վերահաս բարկութիւնից,

Այլ միայն իրենք պիտի ազատուեն":

Իսկ եթէ դիմեմ հաւատքի վեմին՝ Պետրոսին,
Քո ինամքներից դոյզն-ինչ խորթացած՝ նա՛ եւս
ենթարկուեց իմ մոլորանքին,

Թողնում եմ այստեղ յիշել մէկ առ մէկ այն
շատ-շատերին,

Որոնք անձնատուր եղան զանազան տեսակ
կորքերի,

Թէեւ յաւիտեան երջանիկ լինեն:

Դրանցից մէկն է Հովաս անունով ոմն մարգարէ,

Որի աստուածառաք սպասաւորութեան մէջ
մարդկօրէն գայթակղութիւնը

Անբացատրելի է մնում շատերին, ինչպէս էլ որ
մեկնաբանուի:

Գ

Եւ քանզի սահմանափակ է մարդկանց
փրկութեան կարողութիւնը,

Նրանք իրենք էլ ողորմութիւն գտան բարերարիդ
կողմից եւ ամենակալիդ շնորհիւ զօրացան,

Կոչուեցին պաշտպանողիցդ եւ հնարաւորիցդ
քառուեցին,

Ներուեցին սագատարարիցդ եւ
անախտականիցդ բժշկուեցին,

Կենսագործուեցին անապականիցդ եւ
նորոգողիցդ յուսաւորուեցին:

Հետեւապէս, գիտենալով չափն ու սահմանը
հողածին բնութեանս,

Որպէս հարազատ նմանակիցներ՝

Ի վստահութիւն յուսահատներին եւ ի խրախոյս՝

Ահա եւ քեզ եմ դիմում ես միայն,

Որդի՛դ կենդանի Աստծոյ՝ Քրիստոս, օրհնեալ
ամէն ինչի մէջ:

Եւս առաւել կճշմարտունէն վերոգրեալ
օրինակները,

Եթէ այստեղ, այս աղօթքի մէջ յիշենք նմանօրինակ

Եւ այս խօսքն արդար, որ երջանիկ
իմաստուններից մէկն է ասել,

Թէ՛ "Բարի է Տիրոջ ձեռքն ընկնելը, եւ ոչ թէ
մարդկանց.

Չի, ինչպէս որ մեծ է նա, այդպէս էլ մեծ է նրա
ողորմութիւնը":

Ու թէեւ այս խօսքով Դաւթին էր ակնարկում,

Բայց երբ որ երեք աստուածային հարուածներ էին
առաջադրում նրան,

Նա ինքը յօժար, կամաւոր կերպով սատակիչ
մահուան դատավճիռն ընտրեց,

Ընդունելով այն իբրեւ կենդանութիւն, որ
Քրիստոսի հաւատքով կանի եւ կզօրանա,

Քան թէ միւս երկու այն հարուածները, որոնք

տանջում են ու չեն ողորմում:

Եւ սակայն անյարմար չի լինի, որ ես էլ այդ խօսքից
օրինակ վերցնեմ իմ կորած հոգու համար,

Որ տոչորում է ապրելու հնար գտնելու տենչով:

Այսպիսով, սակայն, իմ ողբերգական այս
մատեանի մէջ, -

Առանց որի չի կարելի մօտենալ Տիրոջը, -

Ես ոչ թէ նուաստացնում եմ փրկուածներին, այլ
փրկչի անունն եմ պսակում

Եւ նրա շնորհն եմ բարեհոշակում բոլորին.

Ու խոստովանում եմ հաստատ խօսքով, թէ
նոյնիսկ նրանք,

Որոնք շատ բարձր են թռչում իրենց սուրբ վարքի
թելերով,

Կարօտ են դարձեալ քո ողորմութեան դէպ ու
դարմանին:

Դ

Ուստի եւ ահա, դու կեանք, փրկութիւն ու
բժշկութիւն,

Դու անմահութիւն, լուսաւորութիւն ու
երանութիւն,

Անդորրացրո՛ւ ինձ իմ մեղքերի չարչարանքներից,

Որպէսզի ինքս ինձ ընդմիշտ մեղադրող

հեծութիւնների

Չանձրացուցիչ թախանձանքներից հանգստանաս
եւ դո՛ւ

Որ ոչ այլ ինչով, այլ միայն մարդկանց
փրկութեամբ ես պարարում,

Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀՔ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Ձե՛զ եմ ասում արդ, ո՛վ մենակեացների խմբեր
Եւ աշակերտներ մենաստանների,
Դուք, որ անբաւ բարի պարգեւների յուսալից
ակնկալութեամբ

Ձեր ձեռքերի մերկ մատներով զինուորագրուած
էք Տիրոջը՝

Ձե՛զ ընծայեցի խօսքի խորտիկներով
պատրաստուած սեղանն այս սահա,

Ընդունեցէ՛ք աւանդն այս խոստովանութեան՝ ի
նորոգութիւն եւ ի փրկութիւն հոգիների:

Ճանաչեցէ՛ք սրանով մարմնի պարտութիւնը,

Յիշեցէ՛ք առաքելականի հետ միասին՝
մարգարէական խօսքերը մեզ ի խրատ,

Թէ՛ "Ոչ մի մարմին թող չպարծենա

Աստոյ առջեւ",

Ինչպէս եւ՝ "Չկայ ոչ իսկ մի արդար":

Մի՛ մոռացէք նաեւ այս խօսքը տերունական,

Թէ՛ "Պատուիրանը կատարելիս էլ համարեցէք
ձեզ անպիտան ծառայ",

Եւ թող չլինի, որ խաբողը ձեզ կարենայ որսալ:

Յիշեցէք դուք այն գրուածքը նաեւ,

Թէ՛ "Ընտիրներն են նրա կերակուրները":

Չի մինչեւ իսկ ես, որ այս մասնաւոր, նուազ
պտուղը ձեզ մատուցեցի,

Վկայում եմ, թէ ես ինքս էլ ունեմ բիւր
բամբասանքի,

Ինքնադատութեան արժանի մեղքեր անբժշկելի,

Սկզբնահօրից սկսած մինչեւ սերունդները յուսկ.

Յօժարական մի յանձնառութեամբ՝

Բոլորիդ գործած յանցանքները ես վրաս առնելով:

Բ

Լսեցի անպարտ մեկի բերանից ու չհաւանեցի
Խօսքն այս անյարմար՝ ուղղուած Նրան,
Որի առաջ ոչ մի երկրածին չի կարող արդարանալ,

-
Թէ՛ "Չշնացայ երբէք ու չպոռնկացայ,
Ոչ էլ աշխարհիկ մահաբոյր քաղցրութիւններ
ճաշակեցի":

Սա էլ է կոչում անօրէնութիւն, -
Թող ների Աստուած այդ խօսքը նրան, -
Զի եթէ նոյնիսկ ճիշտ լինի ասուած՝ սայթաքում է
դարձեալ:

Այդպէս նաեւ Չաքարիայի՝ ի դէմս Իսրայելի
ժողովրդի ասուած

Խօսքն այս անվայել, որ փարիսեցու խօսքին է
նման,

Թէ՛ "Օրհնեալ լինի Տէրը, զի հարստացանք":

Գ

Բայց քանի որ ես ամենագէտ
Աստծոյ դատաստանին եմ յանձնել ինձ,
Որը սրտի աներեւոյթ մեղքերը կշռելով՝
Ուզում է դատել ինձ նրանց համար ամենաիրաւ
հատուցմամբ, -

Չպիտի ձեւանամ տեսանողի առաջ,
Չպիտի կեղծեմ քննողի մօտ,
Չպիտի ստեմ ամենայն ինչ նկատողին,
Չպիտի մտնեմ խաբէբայութեամբ Մեծի աչքը ես,
Չպիտի ցոփութիւններս քողարկեմ առերեւոյթ
բարութեամբ,

Չպիտի երբէք ապիկարիս ներկայեմ որպէս
ընտանի պատկեր,

Չպիտի խենեշանամ օտարոտի զարդարանքով,

Չպիտի պնդուեն ուրիշների պայծառութեամբ,
Ոչ էլ տգեղութիւնս պիտի պարտակեն
պանունանքներով:

Չկայ ոչ որ մեղաւոր ինձ պէս, ոչ որ՝ անօրէն,
Ոչ որ ամբարիշտ, ոչ որ անիրաւ, ոչ որ չարագործ,
Ոչ որ խոտորուած, ոչ որ սխալուած, ոչ որ
մոլեգնած,

Ոչ որ խարդախած, ոչ որ շաղախուած, ոչ որ
ամօթահար,

Ոչ որ դատապարտուած, -

Ես ինքս եմ միայն եւ ուրիշ ոչ որ.

Ես եմ այդ բոլորը, եւ բոլորի յանցանքներն իմ մէջ
են:

Ո՛չ հեթանոսները, զի չգիտէին,

Ո՛չ հրեաները, քանզի կուրացան,

Ո՛չ տգէտներն ու գռեհիկները, քանզի զուրկ էին
իմաստութիւնից:

Դ

Վարժապետ կոչուեցի ես, որ ամբաստանութիւն է
իմ դէմ.

Ռաբբի, ռաբբի անուանուեցի ես, եւ Աստծոյ վայել
գովեստը եղծեցի.

Բարի ասուեցի՝ եղկութիւն ժառանգելուս համար.

Սուրբ վկայուեցի մարդկանցից, որ անմաքուր եմ
Աստծոյ առջեւ.

Արդար ճանաչուեցի՝ ամբարիշտս ամէն ինչով.

Հրճուեցի մարդկանց գովեստով, որ Քրիստոսի
ատեանում ծաղրելի լինեմ.

Աւագանից Արթուն կոչուեցի, եւ ննջեցի մահուան
քնով.

Հսկող հորջորջուեցի փրկութեան օրը, բայց
զգաստութեան դէմ աչք փակեցի:

Ահա՛ դատաստան, ահա յանդիմանութիւն,

Ահա՛ նոր կշտամբանք եւ հին դատապարտութիւն,
Ահա՛ ամօթանք դէմքի եւ տագնապ հոգու,
Ահա՛ քննութիւն մանր մեղքերի, որոնք
մեծամեծների կշիռ ունեն:

Ե

Բայց դու, միայն Տէր Աստուած մարդասէր,
անոխակալ եւ երկայնամիտ,
Ինքնադատական կսկծեցուցիչ նախատինքներն
այս, վերջին օրն ահեղ՝
Մեղապարտիս դատապարտութեան փոխարէնը
համարիր,
Քանի որ դրանք ինքս իմ բերանով ինձ
վերագրեցի,
Թող որ շլետմ այդ բոլորն այլեւս քեզանից, գթա՛ծ,
Արդ, վերցրու իմ վրայից դատապարտութեանս
պահակին,
Չի ես քեզ հետ եմ կապուած հոգուս
տենչանքներով:
Հանի՛ր խայտառակութեանս նախատինքներն
ամօթալի.
Քո կարող աջով ծածկի՛ր մերկ մարմնիս
տգեղութիւնը.
Հանգիստ պարգեւիւր մեղքերի բռնով սաստիկ
հոգնածիս,
Բարի մի ճամփա սահմանիր դու ինձ՝ դէպի քեզ
գալու.
Յիշիր անմոռաց՝ ինձ ողորմելու, տալով հետ
մահու կեանք ամէն կերպով:
Օրհնեալ ես դու երկնքում եւ գովեալ՝ երկրի վրայ.
Եւ բարեբանուած միշտ ամէն ինչում, յաւիտեանս.
ամէն:

ԲԱՆ ՀԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Թագաւոր, բարձրեալ, հզօր, ահաւոր,
Օրհնեալդ միայն, Տէր Յիսուս Քրիստոս,
Լոկ դո՛ւ կարող ես յուսահատ կեանքի
անյուսութեան մէջ
Սատակիչ անէծքներն ապրեցնող օրհնութեան
փոխել,
Եւ վիստեցուցիչ պարսաւանքները զուարթարար
գովքի.
Ամօթի փոխարէն համարձակութիւն շնորհել,
Պատկառանքի փոխարէն՝ պատիւ,
Տարագրութեան փոխարէն՝ բարութեան յոյս.
Բաժանման փոխարէն՝ միութեան ակնկալութիւն,
Սպառնական խօսքի փոխարէն՝ ողորական
սփոփանք
Եւ մէկ անգամ դատապարտութեան փոխարէն՝
կրկնակի ազատութիւն:

Բ

Ողորմիր, Տէ՛ր, մահուան արժանի մեղապարտիս,
Ողորմիր այնօր, երբ կենդանութեան շունչս
կարձակեմ.
Երբ նայուածքս իւեղն դէպի վեր կուղղեմ ես
կողկողագին,
Յոյժ տազնապահար հոգուս տեսութեամբ աչքի
առջեւ բերելով
Այն վտանգաւոր ճամփան, որտեղ անխուսափելի
կերպով անպայման պիտի ընթանամ.
Եւ բնակելի իմ տան երդիկից ելքիս շաւիղը
դիտելով թշուառ կիսամեռութեամբ,

Այլայլուած դէմքով, մատների տարտամ
տատանումներով,

Կարկամ հառաչմամբ, նուազ հեծութեամբ,
ձայնով նուաղած,

Եւ բազմապիսի տարակոյսներով լի տխուր հոգով՝
Սրտիս խորքերից իմ գործած բազում մեղքերի
համար ողբով հառաչեմ:

Բայց դու, բարեգո՛ւթ, կարող ես նոյնպէս եւ այդ
ժամանակ

Զօրաւորապէս հրաշագործել, ասելով ինձ. -

"Թող փրկուի հոգին քո խորտակումից եւ
առողջանա",

Եւ կամ՝ "Թող ներուեն քո մեղքերը քեզ",

"Գնա՛ խաղաղութեամբ՝ մեղքերից մաքրուած":

Այն պաղատանքները, որ չպիտի կարողանամ
հասցնել քեզ այդ ժամին,

Ընդունիր այսօ՛ր մարդասիրաբար,

Ո՛վ երկայնամիտ եւ բազմաշնորհ ամենակեցոյց:

Գ

Եւ մինչդեռ այժմ պերճախօս եմ եւ խորխտաձայն,
սիգացող եւ բարձրապարանոց՝

Այնժամ դիակի պէս պիտի պառկեմ եւ անկենդան,
անխօս,

Կաշկանդուած ձեռքով, թոյլ անդամներով,

Խուփ շրթունքներով, փակուած աչքերով,

Իբրեւ տախտակ անշարժ, կոճկ կիսավառ,

Արձան անզգայ, պատկեր անբարբառ, անշունչ
գոյութիւն,

Ողորմելի տեսիլ, ողբալի կերպարանք, տխրալի
տիպ,

Եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն,
համբացած լեզու,

Զորացած խոտ, թոթափուած ծաղիկ, ծիրած

գեղեցկութիւն,

Շիջած լապտեր, դաստարկ կոկորդ, խոպանացած
սիրտ,

Թալկացած մարմին, քայքայուած որովայն,
Քանդուած տաղաւար, կոտորտուած ոստեր,
անջատուած յօդեր,

Կտրուած ծառ, սղոցուած արմատ,
Լքուած տուն, հնձուած արտ, արմատախիլ բոյս,
Օտարացած բարեկամ, մոռացուած պահեստ,
թաղուած գարշութիւն,

Մերժուած ատելի, վերացուած խոչընդոտ,
անարգուած կմախք,

Եւ իբր անպիտան ոտնակոխ եղած՝ կարօտ
ուրիշների աղօթքներին,

Որոնք թշուառիս հաւատքի ձայնով հառաչալից
աղերս նուագեն պիտի

Արցունքի ցողով տարածելով այն քո բարձունքն ի
վեր՝

Բարերարիդ գլխութեանը:

Նրանք լալագին գոջումով պիտի երգեն դարձը
դէպի քեզ, որ օրհնում եմ ես,

Նշանը փրկարար խաչիդ, որին երկրպագում եմ,
Ճշմարտութիւնը յարութեան, որին հաւատում եմ,

Փառքիդ յայտնութիւնը, որը փառաւորում եմ,

Դատաստանիդ ահաւորութիւնը, որ
խոստովանում եմ,

Խօսքերիդ յանդիմանութիւնը, որից զարհուրում
եմ,

Սուրբ հոգուդ ուղեկցութիւնն ինձ, որ պաշտում
եմ,

Մկրտութիւնը քո օծման, որ եւ համբուրում եմ,

Քեզ հետ թագաւորելը, Տէ՛ր Յիսուս, որի համար
պաղատում եմ:

Եւ այսպէս ահա, թէեւ թուլացաւ, հեռացաւ,
վերացաւ,

Մասնատուեց, փախաւ, սլացաւ

Եւ տեղի տուեց կենդանութիւնն իմ կենցաղի,
Բայց քո պարգեւած յոյսը հաստատուն՝ պահուած
է իմ մէջ,
Որպէս մնայուն եւ անջնջելի յիշատակարան:

Դ

Տե՛ս ողորմութեամբ տարակուսանքները
վտանգեալիս,
Միայն բարեգութ ու փառաբանուած
Որդիդ Աստծոյ,
Որպէսզի քաւես, բժշկես դու ինձ եւ կենագործես,
Պաշտպանես, նորոգես, նկարես, կանգնես,
հաստատես
Եւ վերստին ստեղծագործես երջանիկ
անարատութեամբ:
Քոնն են՝ կարողութիւնը, փրկութիւնն ու
ողորմութիւնը.
Չունես դու անկարողութիւն, այլ՝ լիութի
գորութիւն.
Բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան
թագաւորութիւն,
Իսկութիւն, ինքնութիւն, ամէնուրեք
բացարձակութիւն,
Բարերարութիւն, լուսաւորութիւն:
Փառաւորեալ ես դու տիրապէս, անպակաս եւ
անյաւելուած,
Խնկուած՝ խորհուրդով անբացատրելի սուրբ
Երրորդութեամբդ,
Նաեւ առյաւէտ գովարանուած՝
Հաւասարագոր եւ համապատիւ համագոյութեան
երկրպագութեամբ,
Երեկ եւ այսօր եւ յաիտեանս յաիտենից. ամէն:

ԲԱՆ ՀԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Արքա՛ երկնաւոր, դու Տէ՛ր բոլորի,
Ամէն բանի մէջ եւ ամէն դէպքում միշտ
երկայնամիտ,
Կենդանի Աստուծոյ անքնին որդի:
Այնտեղ պէտք է ողորմել իսկապէս,
Ուր կտրուած է յոյսը վաստակի.
Այնտեղ պէտք է բարեգործել,
Ուր խափանուած է մտքի տեսողութիւնը.
Ա՛յնժամ պէտք է մարդասիրել,
Երբ տկարութեան վտանգն է պաշարել ներքուստ
եւ արտաքուստ.
Այնտե՛ղ է անհրաժեշտ ձեռքիդ բժշկութիւնն
աստուածային,
Ուր տեղի է տուել բոլորովին անդամների
կենդանութիւնը.
Այնտե՛ղ պէտք է լինի այցելութիւնը,
Ուր ելքի հնար չկայ.
Այնժա՛մ է քո մեծութիւնը,
Երբ անյուսալի վերքն առողջացնես.
Ա՛յն է հարազատ քո բնութեանը,
Որ անակնկալ ժամին փրկութեան համար
հրաշագործես,
Ա՛յն ժամանակ հանդէս կգա քո յաղթանակը,
Երբ վերջին շնչիս՝ կեանքի փակուած դուռն իմ
առջեւ բանաս.
Այն են շնորհներդ վայելչական,
Որ մոռանալով իմ չար գործերը՝ քո բարիները
յիշես.
Նրանո՛վ ես դու անդիսակալ,
Որ ապերախտիս երախտագէտի հետ
խնամարկես.

Այնժամ ես միայն պիտի հասկանամ,
Թե ընդունեցիր բանաւոր նուէրս՝ նախկին
գթութեամբդ,
Եթէ վերացնես իմ չար սովորութիւնները:

Բ

Այս պատճառով են հիւսուում ճաշեր ու
նուագերգութիւններ եղանակւում,

Երբ Տէրը բարի՝ բարեգործներին հասանելիքից
պարզեւատրում է ե՛ւ չար ծառային:

Այնպէս որ մինչ նա բանտի է սպասում իրաւամբ՝
Տէրը նրան արքայական ապարանքի մէջ է
նստեցնում.

Մինչ կանչուած է նա տղմուտ գուրբի մէջ
բնակուելու,

Նրան ամէն տեսակի կոչունքների մէջ գահերի
վրայ է բազմեցնում.

Մինչ նայում է նա, որ աչքերը փորեն,
Նայուածքը նրա ուղղում է դէպի ուրախ
բարձունքներ.

Մինչ սպասում է նա իր մատների ծայրատումին,
Համարձակութեան մատանի է մատուցում նրան.

Մինչ վախենում է գանակոծուելուց,
Նրան գթառատ իր գիրկն է առնում.

Մինչ կորստեան է պատրաստուում ահով,
Բազմութեան առաջ, ի տես բոլորի՝ վեր է
բարձրացնում.

Մինչ նա սատակիչ մահվա՛ն աչք ունի,
Նրան կեանքի հետ տալիս է ե՛ւ փառք.

Մինչ սպասում է իրեն գլխատեն,
Նրան պսակով է պայծառացնում:

Սրանք են, գթա՛ծ, պտուղներն օրհնեալ քո
սքանչելարմատ շառաւիղների.

Սրանք են կեանքի արգասիքները քո արարչական

հրամանների.

Սրանք են ըղձալի խորհուրդները քո խոստովանուած տենչանքների.

Սրանք են լոյսի ճաճանչները քո ամենասփիւռ ճառագայթների.

Սրանք են ախորժելի ճաշակները քո բարերանեալ քաղցրութեան:

Գ

Եւ այս բոլորը քունն են միայն, Տէ՛ր,

Քո ներշնչումով եմ գրել սրանք.

Ուստի ես, օրհնեալ, աղաչում եմ քեզ, այդ պարգեւներիցդ ի՛նձ էլ շնորհիր.

Բա՛ց, Տէր, քո բարիքների գանձարանը, ըստ առակողի աղերսանքների:

Բարիքներիդ ամբարներում չխառնես դու իմ չարիքներից.

Չշտեմարանես քեզ համար սիրելի գթութեան եւ ողորմութեան հետ ատելի ոխեր եւ բարկութիւններ.

Քո պաշտելի ստացուածքներում չպահե՛ս քեզ համար անախորժ մթութիւններ ու դժնութիւններ,

Եւ ինձ վնասող մեղքեր ու թշուառութիւններ:

Կեանքիդ մատեանում քո օրհնեալ աջով չգրե՛ս դու պարտամուրհակն իմ անէծքների,

Այլ ինձ համար անհնար համարուածները դիւրին ու հեշտ ցոյց տալով՝

Կրկնակի անգամ եւ է՛լ աւելի մեծացնես դու քո անունը, ո՛վ Տէր:

Դ

Տալիքներս շատ են եւ անհաշիւ,
Բայց քո հրաշալի ողորմութիւնն անհամեմատ
աւելի է.

Բագում են մեղանչանքներս,
Բայց ներողութեանդ հետ համեմատած՝ շա՛տ քիչ
են նրանք,

Հանախակի են չարութիւններս,
Բայց յաղթող է միշտ ամէն բանի դէմ
մարդասիրութիւնդ, ո՛վ ամենակալ.

Անձիս արատներն ի՛նձ համար են ծանր եւ
անթուելի,

Բայց քեզ համար խիստ թեթեւ են նրանք եւ
սահմանափակ.

Ամօթապարտիս պտղաբերած մեղքերի զէնքերն
այնքան զօրեղ չեն կենդանանալու,

Որքան յիշատակն անմահիդ մահուան՝
կործանողի բռնութիւնը վանելու համար:

Փոքրիկ խաւարն ի՞նչ կարող է ազդել
Աստծուդ լոյսին.

Դոյզն աղջամուղջը ինչպէ՛ս դիմանայ
նառագայթներիդ.

Քո խաչելութեան չարչարանքի հետ ինչպէ՛ս
կշռուի

Իմ տկար մարմնի հեշտասէր խակութիւնը.

Ամենակալիդ առատութեան աչքին ի՞նչ են որ
մեղքերի կոյտերը ողջ տիեզերքի,

Եթէ ոչ հողի դիւրափխրուն կոշտ, որ իսկոյն եւեթ
կփռչիանայ քարի հարուածով,

Եւ կամ անձրեւի պղպջակ, որ կամքիդ յորդառատ
հոսմամբ կպայթի իսկոյն եւ կչքանա:

Ե

Քո ամենագոր եւ ամենահնար կարողութիւնը
Իմ յանցանքները քաւելու համար ժամանակի
պէտք չունի բոլորովին, -

Ո՛չ ակնթարթի,

Ո՛չ թռուցիկ ակնարկի տււողութեան,

Ո՛չ կայծակնային կարճատեւ նայուածքի,

Ո՛չ ամենափոքր ուշացման,

Ո՛չ փութագնաց ոտքի քայլափոխի,

Ո՛չ կանգունաչափ բարձրութիւնից կաթիլի
անկման,

Ո՛չ մտքով քաշուած մի գծի,

Ո՛չ լոյսի արագութեան,

Ո՛չ շնչառութեան չափ միջոցի:

Այս բոլոր անձեւ, աննշան եւ անկայուն

օրինակներից

Ո՛չ մէկը այնքան առժամեայ արագ եւ փութանցիկ
չէ,

Որքան մեղքերիս կուտակուած սատոյցների

հալուելը, ցնդելն ու վերանալը քո զօրութեամբ,

Աստուած բոլորի Տէր Յիսուս Քրիստոս,

Որդիդ անքնին՝ կենդանի Աստծոյ:

Դո՛ւ, որ քաղցր արեւ ես պարգեւում բարիների
հետ նաեւ չարերին,

Եւ անձրեւում ես ամէնքի վրայ անաչառօրէն,

Կշռում ես իրաւամբ եւ չափում նրանց վշտերն ու
հոգսերն հաւասարապէս.

Փորձութեան փոքրիկ խթանով ես դու վճարել

տալիս պարտքերը նրանց այստե՛ղ իսկ,

Որոնք մեծ համբերութեամբ սպասում են վերին
հանգստին:

Իսկ ովքեր երկրային կենցաղն ընտրեցին,

Դու ողորմութեամբ ներո՛ւմ ես նրանց,

Սրանց էլ տալով դարման նրանց հետ՝ սպասում
ես դու միշտ նրանց դարձին:

Փանք ամենագորիդ՝
Բարեխնամ երկայնամտությամբ գործած քո
բոլոր հրաշքների համար,
Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՃՈՅ ՀԵՏ

Ա

Այժմ ընկղմուած, զմայլուած
Եւ իսպառ ծածկըուած մեծիդ երախտիրքների
առաւելութիւնից՝
Բազմամասնեայ, շարունակական եւ անճառելի,
Որ աջուճախից առատագոյն ու աննուագելի
լրումով,
Դիմացից ու թիկունքից կուտակուած են
անբաւօրէն,
Մատուցում են, վերընծայում
Ճշմարիտ դաւանման գովեստի աւանդ:
Որովհետեւ ինչպէս երբեմն հերձուածի
չարափառութեամբ,
Ամենապատիր իսաբերութեամբ նենգողի կարթով
զատուած՝ մերժուեցի,
Ելնելով դրախտից,
Այժմ միաւորիչ այս ուղիդ անբծութեամբ
Իրական շնորհի աւանդման համար
Երկրորդ անգամ վերստին համբարձած,
Լոյսի թելերով թռչելով, ահա, երկինք կհասնեմ:
Բայց քանզի արգանդից, ուր յղացայ,
Ծնուած հոգետր երկունքով,
Մեծ եւ երջանիկ անարատ դժխոյ,
Իսկուհի բոլոր կոյսերի,
Գովելի ու պանծալի իմ մօրը հարկ է
Սահմանուած կարգով արձանագրել այս

մատեանի մէջ,

Որպէսզի ծնուի եւ ցուցադրուի,
Նաեւ այլ գալիք ազգերին պատմուի
Խնկելի փառքի որքանութիւնը՝
Արժանի պաշտումով պատուուած՝
Իբրեւ մաքուր մարմին
Բան-Աստծոյ մարդեղութեան գլխի հետ՝
Ի յիշատակ հաւատի այս ճառի
Երրորդութեան դաւանութեան:

Բ

Հոգեմկար բանի պատկերի այս օրինակով,
Որ յարմարում է լոյսի խորանին,
Գթած, օրհնեալ, ընդունի՛ր ինձ՝
Քառուած ու սրբուած սրա մէջ:
Հանի՛ր սրանով հոգուցս մեղքի նախաստինքները,
Բազմեցրու սրա հովանու ներքոյ՝ անմեղ ու
անբիծ,

Տկարիս Դաւթի տանը գումարիր,
Այնտեղից Աստծոյ տունըդ փոխադրիր,
Ըստ մարգարէի, Յիսուս, որ քեզ է սկնարկում,
Սոսկ մուտքի եւ անօգուտ ելքի չհետեւես,
Ջերմութիւնն հաւատիս քեզ պաղ չթուայ,
Եւ ողջոյնի համբոյրս անարգ չհամարես:
Պաշտամունքս ապաշնորհ չորակես,
Երկրպագութիւնս իբր անխորհուրդ չլքես:
Պատկերի տեսիլն անպտուղ չլինի,
Իսկ սքանչելի կերպարանքը՝ աննշոյլ:
Չմոռացուի սպանդն անկրակ ողջակեզի,
Ճառիս ուխտի պատարագը վտարուելով չցրուի.
Լոյսի ճաշակըդ ինձ մահ չբերի,
Կողերիդ արեան բաժակը
Դատապարտութիւն չլինի:

Գ

Աղաչում եմ քեզ, Տէր Յիսուս, մէկդ այդ
Էութիւնից,
Որի ճաշակմամբ քո Հօր եւ սուրբ Հոգու
Գիտութիւնը ճանաչեցինք,
Չի կարգերը ամենապարզել [սուրբ] եկեղեցու
Հէնց քեզանից սովորեցինք
Կեանքի փրկութեան ու բարիքների
Աղոթանքներ այս լուսարանում,
Տարածելով սիրտս, ձեռքերս պարզած՝
Խօսքի կնդրուկն այս, սրանում բնակուողիդ,
Ամէն ինչի տիրողիդ,
Երեքսրբեանիդ մատուցելով՝
Յաւերթ ընծայում ենք բարեշնորհութեան այս
բարբառով:

Դ

Հաւատոյ պաշտամունքին,
Օրհնութեան երգերի վերաձայնած նուագներով
Փառաբանում ենք եղածների բարեհրաման
պատճառին՝
Անսկիզբ Երրորդութեանը, անհամեմատ
բարձրութեամբ,
Անհաս խորհուրդների ու անըմբռնելի
իմաստների,
Անզննելի զգայութիւնների,
Անբերելի արարածների,
Որ իր մէջ ամփոփում է վերնական երկնքի
Եւ անսահման ներքին խորութիւնների
քանակութիւնը,
Սպառումների վերջն ու սկիզբների
նախադրութիւնը,
Մէկը երեք անշփոթելի կերպարներից,

Եւ երեքը մի անբաժանելի իսկութիւն,
Վեր քան մտքի ազատութիւնը՝
Հրաձգուած ամէնուր բովանդակապէս:
Անփոփոխ բարի, անասանելի ուղղութիւն,
Սիրոյ անխառն կերպարանք, անյաջորդ
մեծութիւն,
Անխոնարհելի բարձրութիւն, անվատնելի
տեսութիւն,
Աննուագելի բարերարութիւն,
Կայուն կամք, կենդանի հրաման,
Փրկչեան ակնարկութիւն, ճշմարիտ երանութիւն,
Հաւաստի ակնկալութիւն, անստելի խոստում,
Արգասաւոր աւանդ, ըստոյզ աւետիս,
Աներեւակայելի բարձրութիւն,
Անձեռնարկելի վերապացութիւն:
Մի Հայր միակ Որդու՝ միակ Հոգով պատուուած,
Ամենահարուստ բարութեամբ, ամբողջովին չարից
զերծ,
Օրինաձայն գոհաբանութեամբ,
Անքնին ներբողով գովերգուած:

Ե

Միակ բարձրեալ ահաւոր անուն՝ կցորդութեանց
համապատիւ,
Ազգականութիւններին անպատում,
Եռալոյս զուգակցութիւն,
Անյաւելուածը կատարելութիւններից,
Ինքնիշխան կամաւորութեամբ պատուասիրուած
Հանգունատիպ Հօր մօտ,
Երկնքից իջած
Խոնարհուելով սուրբ Հոգու գործակցութեամբ,
Ընտանի փառքից աննուագ,
Հանեց մտնել մաքրութեան կոյս
Աստուածածնի մայրական արգանդը,

Ուր օրինութեան բոյսն անեցրեց
Անարատութեան լուսասահման անդաստանում:
Համասնունդ ամենակատարեալ էութեանը՝
Անանջրպետ միասնութեամբ,
Թափանցիկ խառնումով աստուածութեան Ոգուն,
Հրաշապէս բաղկացրեց շնչիս գոյութիւնը:
Անստամբակելի կրթութեան սանձերի այդ
երասանով
Ստահակութիւնս հանդարտեցրեց
Եւ կամովին նուիրուելով [սուրբ] խաչին՝
Անմահական տունկի լրութեան ծայրը
բարձրացաւ
Կեանքի պտղի ծաղիկը,
Վիրաւորուեց մահացու մերագնեայ մարմնով
Անընդմիջելի աստուածութեամբ,
Դատապարտման գործիքին դրանով կեանք
տուեց,
Արարչական իսկութեան՝ նրա վրայ
Յաւէտ անբաժանօրէն վշտացած
Նիւթական մարմնի հետ:
Իջաւ խաւար դժոխքի վայրերը՝
Իր աւարն հանեց խոտորողի կապանքներից,
Եւ ասես քնի նիրհից արթնացած,
Մահուան դիմեցումն իր մէջ նահանջեց,
Կանգնեց, կենդանացաւ աստուածօրէն,
Ելաւ երկրից կեանքի հացն ու բանական հօտերի
հովիւր:
Հաւատարիմ եղաւ աշխարհում
Եւ երեսց նոյնութեամբ, բոլորովին աննուագ,
Ինչպէս եկաւ ամբողջական,
Նոյնպէս եւ համբարձաւ,
Բազմեց գերունակ գահոյքին՝
Նախնական պարգութեամբ եւ արարչական
փառաւորութեամբ:
Ում որ բարերար Աստուած եւ բոլորի տէր ենք
ճանաչում՝

Մեծ օրը կդատի ամբողջ երկիրը արդար
ընտրութեամբ,

Ինքն է սկիզբը եւ ինքը՝ կատարածը,
Նոյն եւ առաջինը, նոյն եւ գալիքը,
Անպակաս բովանդակութեամբ
Թագաւորելով անմատոյց լոյսին:

Չ

Օրհնում ենք Հօր եւ Որդու հետ
Նաեւ բխումը անբաժանելի՝
Նրանց փառակից Հոգին տէրունի,
Որ ստեղծեց ամէնը եւ կենդանագործում է
բոլորին,

Որ սկզբից եւեթ շրջում էր
Համապարփակ աշխարհակալ մէզի մէջ,
Նկարում էր, կերպաւորում
Երկրատարած ծովի անբաւութեան ամէնունակ
ջրերով՝

Լոյսի սուրբ աւազանը
Ի կատարումն այժմեան խորհրդիս:
Նախ ստեղծեց եւ այժմ գործում է,
Գոյացրեց եւ մշտապէս կատարում է հրաշքներ,
Սքանչելիքներ, սրբակեացների
կանխատեսումներ,

Աստուածային ներշնչումներ, զարմանալի
գորութիւններ,
Մարգարէներ, առաքեալներ, վարդապետներ՝
Հանճարի կրթութեան վարժողներ:
Յարդարեց Քրիստոսի արեան մատուցման
սրբարանը,

Անձերի քաւութիւնները, մարմինների
առողջութիւնը,

Քրիստոսի նման ողորմութեամբ կարգադրեց
Մարմինների առողջութիւն:

Մկրտեց եւ՝ ջրից գերազանց,
Իրմով միայն նորոգեց ու լուսաւորեց,
Մշտապէս նոյն բարեգործութեամբ է զօրանում:
Յորդանանի հոսանքի մէջ վկայեց
Միածնի աստուածութիւնը,
Ամպի տեսիլով ցոյց տուեց
Թափոր լեռան վրայ, Հօր ճայնով:
Համանման եղանակով հովանի եղաւ
Յակոբի տոհմի ելքին Եգիպտոսից
Մովսէսի զօրավարութեան ուղեգնացութեանը
Սաստիկ հողմով ընկղմեց փարաւոնին:
Նուիրագործում է քահանաներ, իմաստուններ
կազմում,
Թագաւորներ զօրեղացնում,
Քաւութիւն ընձեռում,
Մահացածներին շնորհում է կեանք՝
Նորոգուելու յարութեամբ:
Նոյն ինքը մարդացած Աստծոյ օծումն է,
Մշտնջենական հաւասարութեամբ
Երկրպագուած Հօր հետ՝ ի պատիւ Որդու
մեծութեան,
Անսահման փառաւորութեամբ օրհնեալ
յաւիտեանս:
Ամէն:

Է

Դաւանում ենք ուղիղ, անշեղ, անբիծ հաւատով,
Ողջունում ենք մեր շրթունքի համբոյրով
Աստծոյ բնակութեան եկեղեցին,
Անշունչ վէմերով կառուցուած խորանն այս,
Որ կատարելապէս զարդարուած՝ երկնքից
գերազանց եղաւ,
Որ հէնց նրանցից՝ առաքելական դասերից
հիմնուեց,

Եւ խնկուեց բարձրեալի աշակերտներից,
Պաշտուեց Բանի սպասաւորներից:
Կեանքի այս գանձը
Իր սկիզբն առաւ վերնայարկ սրահից,
Այն վայրից, ուր խորհուրդը կատարուեց,
Որը լցրեց Աստծոյ Հոգին,
Նրանում գորութիւն փայլեցնելով Հոգեգալստեան
մեծ օրը.

Նախ՝ բարետես տունը՝ նախամեծար
առաւելութեամբ,

Իբրեւ օրինակ այս եկեղեցում
Սրբութիւնների շնորհաբաշխման,
Եւ ապա նրա բնակիչները բարեգարդուեցին
նորոգ մի յոյսով:

Ուր հօգօր Աստծոյ արիւնն է բաժանում,
Առաւել քան մահ գուժող Հաբելի [արիւնը],
[Որ] սրանում մեծագոյն բարբառով
Աւետում է յաւերժական կենդանութեան
բերկրանքի ձայնը:

Քանի որ ոչ ոք գորութիւն չունի ծառայելու այս
ահեղ խորհրդին,

Երկնքի տակ եւ արեւին յանդիման,
Թէ չապաւինի սրա թելերին,
Անգամ երկինքը չի բաւարարի տէրունի մարմնի
այս սրբութեանը,

Թէ իբրեւ ծածկոյթ օրհնութեան ձեղունը այս
չունենա:

Որովհետեւ ըստ օրէնքի մահուան անէծքի նա
կարժանանայ,

Ով այս խորանի վկայարանից դուրս
Աստուածային պատարագը մատուցէ:
Եւ մանաւանդ արիւնապարտ կիսամարտի՝
Հոգու օրինակ արիւնը այստեղ եթէ չընծայէ:
Աստ մէկ անգամ է լոկ լուացումը արեամբ
Քրիստոսի,

Որ անգիտաբար չանարգուի աստուածութիւնը

Կրելով մկրտությունն հաւատացեալին
Մէկ անգամ է եւ ձեռնադրութիւնը
Ի պատիւ յոյսի օծութեան,
Որ անբծութեանը խաբէութիւն չխառնուի.
Մէկ է եւ քաւութիւնը շնորհքով, քան
սպաշխարութեամբ,
Որպէսզի ճշմարտութիւնը խորամանկութեամբ
չկերպափոխուի.
Մէկ է հաւատը գալիքի ընտրութեան,
Որ հատուցումի սպառնալիքը
Օտարահամբաւ գրոյց չկարծուի:
Մէկ է մեր երկու գոյութիւնների կշտամբութիւնը
իրաւացի,
Որ չկարծուի, թէ բարի եւ կամ չար հատուցման
համար
Ներքին մարդն անջատ է արտաքինից,
Որ արժանանայ արքայական որդեգրութեան,
Որպէսզի նաեւ երկրային մարմնի
հաղորդակցութեամբ
Ակնյայտօրէն հաստատուի առաւելութիւնը վերին
թագաւորութեան,
Մէկ է եւ յոյսը կենդանութեան՝ անեղծութիւնը
սրբերի,
Որ ունկնդրողները առանց կասկածի հաւատան:

Ը

Պաշտելի այն դժխոն՝ անշունչ եկեղեցին,
Կեանք է բաշխում եւ իշխում է մահին,
Ինչպէս պտուղը Ադամի ճաշակելիք,
Անշունչ է, բայց բանականից էլ գերազանց
Հրաշքներ է գործում, որ դարձնում է կատարեալ
Եւ հաստատում է վերստին,
Փառքի յոյսի կերպարանքը դրոշմելով մեր մէջ:
Գրուած է նաեւ վերին կամարի մեծութեան կերպը,

Որ սկզբնական է, եւ նախակառոյց
 Քան իր բնակիչ հոգեղէն գորքը:
 Նա նոր թռիչք է նուիրում մարմնին՝
 Հոգեկան ինչ-որ մի թերթւութեամբ,
 Այս պատուաւորի հարստութիւնով
 Անարգը դարձնում յարգելի:
 Ինքնակիր մեղքով չի զագրանում նա,
 Եթէ չար մարդիկ, անհաւատները չը ոտնահարեն:
 Նա ինչ-որ տիպ է մի զարմանալի,
 Որ յաղթում է մեր պատկերացումը,
 Անբան՝ կառուցուած է բանականից,
 Օգնում է նրան, ինչպէս վեհագոյն՝ անչափ
 նուաստին:
 Մեծ է քան մարդը՝
 Յաղթող ցուպի պէս ընտրեալ Մովսէսի.
 Բարձր՝ առաւել, քան բանականը,
 Ինչպէս խորհրդաւոր ծաղկած գաւազանը՝
 Ահարոնի,
 Եւ գերագանց է, քան մտաւորը,
 Ինչպէս Եղիայից ու Եղիսեոսից՝
 Սքանչելահրաշ արուեստով փայլած
 Մաշկեակը, որ գետը հերձեց:
 Սրբասուն ձեռքին օգնում է կրկնակ
 կատարելութեամբ,
 Ոչ թէ զինելով քարից ու հողից նիւթուած
 մարմինը,
 Այլ հարագատ ու գոյակից է նա
 Թէ զգայականներին եւ թէ սրբերին:
 Ինչպէս կենդանի եւ անմահ վէմը
 Թէ կործանող է, եւ թէ կանգնեցնող,
 Ինչպէս դատաւորն ամենայն հոգւոց՝
 Հրաշապէս օրհնող եւ անիծող է,
 Աներեւոյթը տեսնողի նման՝
 Մէկին կշտամբում, միւսին խնամում,
 Կանչում է իր մօտ, արձանագրում,
 Որպէս հրամայողն արարածներիս:

Գիմամարտներից անհարուածելի,
Հաւիտենական [այն] լեռը ինչպէս.
Մեծի հրաշագործ ուռկանի նման
Հոգի է որսում.
Առանց մեղքերի ու վրիպանքի
Նա Զրիստոսի հետքով է գնում՝
Բարձր ճոխութեամբ ու բաց ճակատով,
Գլուխը բարձր՝ ինչպէս Գովեալը:

Թ

Եւ այնքան մեծ է իր սրբութիւնը՝
Աստծոյ պատկերով ստեղծուածներին
Չանազանում է ըստ իր կանոնի.
Ընտրութեան բազում փորձերից յետոյ
Սխալուած մէկը թէ համարձակուի
Գաւիթը մտնել՝ չի պղծուի [բնաւ],
Այլ դժկամում է անպատրաստների
թերութիւններից.
Նա չի նգովում, այլ զիջանում է
Շնորհի չափը չիմացողներին.
Չի վիատում իր մեղքն համբելով,
Այլ մեր գործերից մթագնում է լոկ
Եւ չի թողնում, որ կրկին մօտենան,
Փարուեն ոտքերին Կենդանատուի,
Ինչպէ՛ս տիրական խորհուրդը անճառ
Միեւնոյն օրը կրկնել չի լինի,
Որ չապականուի անխոհեմաբար:
Նա զօրեղապէս կարեկցում է մեզ՝
Ազատ լինելով մեր արատներից,
Դատում է անձայն, Տիրոջ հրամանով, առանց
խօսքերի:

Ժ

Նաեւ տապան է նա մի մաքրական
Եւ երջանկագոյն,
Որ պահպանում է կեանքի պէտաց մէջ մեզ՝
չխեղդուելու.

Ոչ թէ բազմաթիւ անբան գազանների
Եւ սակաւ մարդկանց,
Այլ հաւաքում է երկրայիններին ու վերիններին,
Հաւասարապէս ամփոփում իր մէջ,
Չի տրում ջրի պէկոծութեան,
Այլ բարձունքներն է ելնում երկնքի:
Իբրեւ աշակերտ

Որ հրահանգուած է Աստոյ Հոգուց,
Խուսափում է նա նենգութիւններից
Չի բողոքում նա մահու հարուածից,
Բռնում տանում է կեանքի աւետման,
Ոչ թէ Նոյի ձեռնարկումով է կազմում,
Այլ Հաստողի հրամանով է կառուցում,

Ոչ Մովսէսն ու Բեսելիելը,
Այլ Աստոյ Միածինն է
Սուրբ Հոգու հետ պատրաստում,
Ոչ թէ յարաշարժ կամ յարափոխ,
Այլ մշտակառոյց անասան հիմքով
Հաստատում է այն:

Ինչպէս փայտեղէն տապանակն անխօս -
Չի տեսնում, բայց մեզ առաջնորդում է.
Իբրեւ անբանակ Էի կերպարանք առաջ գնալով
Հանդերձեալի մէջ լուսաւոր կեանքի տեղ է
պատրաստում:

Ոգիելի հետ կասակի այնտեղ,
Թէ խաչի նման հոգիների մէջ չդրոշմուի,
Տեղնուտեղը, նոյն պահին կսպանի՝
Երկրասիրաբար եւ անասնային մի լծակցութեամբ
Գետընթաց սայլով, իբրեւ մի անօթ՝
Թէ վերցնեն տանեն:

Մարմնի լեզվով չէ, այլ հրեշտակների
Նման է խօսում:

Եւ ոչ ականջով,

Մտքի շարժումով լսում է արագ.

Չունի յստակ ձայն խօսքի ու բանի,

Բայց պատգամները Յիսուսի գործի

Պատմում, հասցնում է բոլոր ազգերին,

Չունի խոսափող ու ձայնալարեր,

Բայց եւ ազդում է մի աստուածային կենդանի
շնչով.

Առանց ջիլերի ու ոսկորների`

Եւ երկու հազար կանգուն լայնութեամբ

Ինչպէս անհամար գնդից բարձրեալի,

Այն եբրայական զինեալ ամբոխի վերապրած
գունդը

Առաջ էր գնում, այժմ նրանց հետ,

Ինչպէս եւ նրանք, որ պիղծ են, անսուրբ,

Մեղքերի աղտով այրուած, հեռացած,

Տաժանակրութեամբ աղիւս սարքելուց

ազատուածներին

Ուղեկցում է նա:

Մարմնացած Աստծոյ էութիւնն անգամ

Ահա այս վէմի անունով կոչուեց,

Կողի պատռումով խմցրեց բոլորիս:

Ոչ երակների արիւն ընթացքը,

Այլ վերին Լոյսի շառաւիղները

Թափանց միութեամբ կենդանացնելով

Նորոգ է պահում: Կանխանչում է

Ոչ Մողմունի, Չօրաբարելի հսկողութիւնը,

Այլ իմաստութիւնն Ամենակալի.

Նա չի պարուրում աննուիրագործ ու սովորական

Իւղով` Յակորբի կողմից,

Այլ փառքով Մեծի եւ Ահաւորի արեամբ է օծում:

Երկրային նիւթից տուն չէ, այլ մարմին երկնային

լոյսից,

Սրա զաւակներին Աստուած կնքում է ու

ձեռնադրում,
Ոչ թե երկրածին յղացումների,
Այլ երկնային արքայութեան ժառանգներ է
պատրաստում,
Որ իր ծոցում գրկուածներին
Աբրահամի զոգին նուիրաբերէ:
Սրա հարսնութեան փեսան է
Որդին կենդանի Աստծոյ
Հայրապետների խմբերն են նրա հարսնաքոյրերը.
Սա կմոռացնի կռամոլութեան բարձունքը դիւտտ,
Քանզի ծանօթ է երկնային Աստծուն,
Ամբողջապէս մերժելի են արձանները կուռքերի,
Եւ Քրիստոս է երկրպագւում նրա բոլոր քարերի
մէջ.
Ակնյայտ քակտումն է անտառների ուրվական
իղձի,
Քանզի աշխարհի ողջ մայրիկներից
Կենաց փայտի նմանութեամբ
Տէրն այստեղ է զոհաբերում:
[Եկեղեցին] խորտակումն է
Դիւապատիր հմայական արձանների,
Չէ՞ որ զովական կարկեհան քարն է
Ապրող վէմերով ու զոհարներով
Իր մէջ հաստատում:

ԺԱ

Այս աստուածընկալ եւ չքնաղ յարկը
Ազատ է ամէն ծառայութիւնից:
Օրինակը չէ Վերին Սիոնի,
Այլ նրանով է, որ ճանաչում են ճշմարտութիւնը.
Ո՛չ կապուած բազին կռապաշտութեան,
Եւ կամ պատժարան օրէնքի լծով,
Այլ՝ պարգեւարան Տիրոջ բարութեան,
Երկրպագում ենք:

Երբէք չի սասանում ձեւափոխուելով,
 Այլ փառքի նոյն շուքով ընդարձակում է.
 Սա երկինքն է երկնի, ե՛ւ երկրի վրայ,
 Հոչակում է նա շողարձակելով:
 Ինչպէս չէ հնար Քրիստոս առանց Հօր,
 Նոյնպէս առանց այս մօր արգանդի
 Կատարեալ Հոգի հնարաւոր չէ:
 Անընդգրկելին շրջում է անտուն
 Եթէ այս տան մէջ չտաղաւարուի.
 Գլուխ դնելու տեղ անգամ չունի
 Տէրն ամենայնի,
 Թէ կեանքի այս կայարանում չօթեւանի:
 Հպարտանում է աւելի շատ այս նիւթեղէն տնով,
 Քան թէ երկնային վերին կամարով:
 Աստուածային լոյսի անբաւութիւնը
 Մարգարէի դէմքի նման
 Օրինակն այս նոյնպէս ծածկեց.
 Եւ ինչպէս փախան երեսի փայլից,
 Այս նմանութեամբ տանարի մարդիկ
 չհանդարտուեցին,
 Մեծ գովերգութեան տօնահանդէսին,
 Երբ որ դասերը բանականներիս
 Ի մի հաւարուած նուագերգում են,
 Այստե՛ղ են կրկին բաղձանքով օրհնում,
 Քան վայելչական այն դրախտի մէջ:

ԺԲ

Այս մայրն երկնաւոր, երկնային լոյսով
 Աւելի քան մայրը երկրաւոր,
 Ծնչող, մարմնաւոր, ինձ գգուեց որդու պէս:
 Նրա կրծքի կաթն արիւնն է Քրիստոսի:
 Եթէ մէկը սա պատկերն համարի
 [սուրբ] Աստուածածնի՝
 Օրէնքին դէմ չէ:

Որպէս փրկական խաչի զօրութեան
Չարմանազան նշաններ ու սքանչելիք է
հրաշագործում,

Եւ դատաստանի բեմը այստեղ է հաստատուած
սհա,

Սրանով է, որ խորթ բարք ունեցող
հերձուածողների

Մոլեգին ճառող բերանն է սանձուում:

Նա ունի նաեւ իմանալի եւ բանական քարեր,

Որոնցով անսուրբ գազանամիտներ

Վտարում է նա, դարձնում տարագիր

Նաեւ աստուածներ է ծնում եղական

Միակ Աստծու` Քրիստոսի պատկերով:

Եւ դարձած դէպի մեզ խոստացած

Ունի եւ գիրն իր արեւելք հայող`

Նախ մեզ խոստացուած բնակատեղի,

Կարծես թէ ձեռքով նա յստակօրէն մեզ ցոյց է

տալիս

Աստծոյ գալստեան ճանապարհները,

Մեզ քարոզում է փայլակի տիրական առակը,

Յիշեցնում բոլոր արարածներին,

Թէ արեւելքից պիտի յայտնուի փրկութիւնը մեր:

[Նա] հալածում է ցաւերը, բուժում

ախտաժեւտներին,

Յաղթահարում է բռնութիւնը դեւերի:

Նրա արգանդը աւազանն է կենդանարար,

Եւ նրա հարսանքին առաքեալների դասերն են

պարում:

Այնքան է ճոխացել բարգաւաճ երանութեամբ,

Մինչեւ իսկ վայելչապէս

Տիրոջ անուամբ հորջորջուեց.

Լոյսի Տիրամօր տիտղոս ստացաւ

Միածին Որդու մերձաւորներից:

Նա հանդարտիկ նաւահանգիստն է

Խոռովահուզեալ մեղաւորների,

Եւ վերին դասուց իրախճանարան,

Եւ տարակուսեալ յանցապարտների անվրէպ
բուժարան,
Անպատմելի Երրորդութիւնն իր մէջ է, որ
Փառաբանուում է՝ բոլորից օրհնուելով:

ԺԳ

Իսկ եթէ մէկը չարութեան ձեռքը
Հանդգնի պարզել վերին արքայութեան
Եւ մարմնաւոր գիւտ, մարդկային հնարք,
Կամ երկրակենցաղ արուեստ համարի
Ձեռակերտ տաճարի վերաբերեալ աւանդները
Եւ ոչ՝ առաւել կեանքի մի շնորհ եւ աստուածային
ակնկալութիւն,
Եւ կամ սուրբ Հոգու յայտնած նորալոյս
նախագրութիւն,
Եւ բարձրեալի երախտիքի ամենատուր
լրիւութիւն,
Եւ ինկարկուած խորհրդարան արարչական
կամքի,
Առաքեալների աջի բարեհանճար հիմնարկութիւն,
Կարճ՝ երկնքի դուռ եւ կենդանի
Աստծոյ քաղաք,
Եւ անպարտ ողջերի մայր՝ ճշգրիտ պատկեր
բանական կերպիս,
Հոգուս խորհուրդն իմանալի,
Իսկ շոշափելին՝ պատկերը մարմնիս,
Այնտեղի անճառ սրբութիւնները գերազանցող
Մի նոր սրբութիւն.
Եւ Քրիստոսի փառաշուք նշանով պսակուած,
Այդպիսի չիտատովանողներին զրկում է իր
տեսութիւնից
Հայրն ամենակալ իր էակից Բանի ձեռքով,
Վերցնելով նրանից եւ փառակից Հոգու շնորհի
աւանդը,

Եւ փակուելու է կեանքի առազաստի դուռը նրա առջեւ:

Իսկ մենք վկայում ենք այն՝ որ գրեցինք,

Հաւատալով մեր ասածին

Ի փառս եւ յանուն ամենակալ Երրորդութեան,

Եւ մէկ աստուածութեան,

Յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԲԱՆ ՀՉ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Աստուած ողորմած, բազմագութ, հզօր,
Ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ,
Չկայ ոչ մի բան քեզ համար բնաւ անձեռնարկելի,
Նոյնիսկ եթէ նա մեր մտքի համար լինի անհնար:
Դժնի փշի տեղ դու քաղցր պտուղ կարող ես տալ,
Սկզբնահայրդ այս նոր ու զարմանալի կենաց
կանոնի.

Քանզի բարիք անել ատելիին եւ աղօթել հալածչի
համար,

Փրկութիւն հայցել խոցողին եւ սպանողին
ներումն ինդրել՝

Դո՛ւ էիր, որ ընծայեցիր մեզ պտուղն այս հրաշալի,
Որի քաղցրութիւնն է անճառելի եւ անօրինակ,
Քո բարեբանուած կամքին հաճելի
Եւ ճաշակելի գովեալ շուրթերիդ:
Հոգի՛դ մեր երեսի եւ գօրութիւնդ մեր
գեղեցկութեան,

Դու Տէ՛ր Քրիստոս, օրհնեալ ի բարձունս:

Բայց ամենավրէպ երկրածին մարդիկ

Քո բարեմատոյց ձեռքերին անգամ չարութեամբ
հատուցեցին:

Իսկ դու լինելով լոյս ու լուսատու,

Չես լսում անէծք ու չես ախորժում չարից,
Չես ուզում կորուստ, չես ցանկանում մահ,
Չես հուզում խռովութիւնից,
Չես ենթարկում ցասման,
Չես հարկադրում բարկութիւնից,
Չես մթագնում սիրուց,
Չես այլայլում գթութիւնից,
Չես փոփոխում բարութիւնից,
Ո՛չ թիկունքդ ես շուռ տալիս եւ ո՛չ էլ երես ես
դարձնում,
Այլ լո՛յս ես համակ եւ փրկութիւն ամբողջովին:

Բ

Եթէ ուզենաս քաւել՝ կարող ես.
Եթէ բժշկել՝ զօրաւոր ես.
Եթէ կենդանացնել՝ ձեռնհաս ես.
Եթէ շնորհել՝ առատաձեռն ես.
Եթէ առողջացնել՝ հնարաւոր ես.
Եթէ պարգեւել՝ ամենալեցուն ես.
Եթէ արդարացնել՝ ամենարուեստ ես.
Եթէ մխիթարել՝ ամենիշխան ես.
Եթէ նորոգել՝ ամենակալ ես.
Եթէ հրաշագործել՝ գերահօր ես.
Եթէ վերստեղծել՝ արարիչ ես.
Եթէ կրկին գոյացնել՝ Աստուած ես.
Եթէ հոգալ կամենաս մեզ՝ ամենատէր ես.
Եթէ մեղքերից կորզել՝ գթասիրտ ես.
Եթէ անարժանիս ընձեռել՝ օրհնեալ ես.
Եթէ որսացողից ազատել՝ փրկիչ ես.
Եթէ շնորհներդ մեր մէջ գեղել՝ հարուստ ես.
Եթէ նախքան մեր խնդրելը ձեռք կարկառել՝
անկարօտ ես.
Եթէ նեղուածիս լայն տեղ դուրս բերել՝ անդորրիչ ես.
Եթէ հետ մնացածիս կոչել՝ խնամակալ ես.

Եթէ սասանեալիս հաստատել՝ վլն ես.
Եթէ ծարաւեալիս հագեցնել՝ աղբիւր ես.
Եթէ ծածուկներին երեւան հանել՝ լոյս ես.
Եթէ օգտակարին ինձ ծանօթացնել՝ բարի ես.
Եթէ արատներն անտեսել՝ երկայնամիտ ես.
Եթէ փոքրիս հետ դատի չմտնել՝ բարձրեալ ես.
Եթէ ծառայիս ձեռք տալ՝ ստեղծող ես.
Եթէ աջովդ պաշտպանել՝ հոգածու ես.
Եթէ վիատածիս դարման մատուցել՝ կերակրող ես.
Եթէ անգէտիս մտքին հագուրդ տալ՝ վարդապետ ես.
Եթէ քեզ դիմողիս ընդունել՝ ապաւէն ես.

Գ

Արդ, այս բոլորը քո ձեռքումն են լոկ, տէ՛ր
նողորմութեան,
Ոչ միայն գրուած, այլև կատարուած ու
գլխաւորուած,
Ո՛վ առաջամարտիկդ համբերութեան
նահատակների մէջ,
Որ իմ փրկութեան համար՝ հօրաբար հանդէս
եկար ճակատամարտի ասպարեզում,
Որպէսզի գոռոզ մարմնիս բռնութեան
կարծրութիւնը դու
Վշտի եւ տառապանքի վարժութիւններով
կակդացնես:
Մեր բնութեան յատուկ տոյժի տազնապը
տաժանագին
Քո անմեղօրէն չարչարուած մարմնով չափեցիր
դու,
Որպէսզի այն քո մէջ որպէս օրինակ ունենալով՝
Գթութիւնդ մեր նկատմամբ առաւելապէս
ցուցաբերես,
Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԷ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Օրհնեալ եւ լուսանորոգ օր է մեծ պատեքի
ուրբաթը սարսափելի,

Երբ եղան երկու արդարակշիռ ընտրութիւնները
սասանած բոլոր արարածների՝

Վերածելու նրանց անփոփոխելի ու երկնակենցաղ
մի այլ էութեան,

Բարձրացածներին խոնարհեցնելով ու վեր
հանելով ընկածներին:

Եւ բարեպատեհ ժամն եկաւ հասաւ,

Գրելու ինձ այս նուագն ողբաձայն՝
գուարճախառն երկիւղով.

Չարչարանքներիդ մասին եմ ուզում խօսել այժմ
եւ,

Որոնք կրեցիր դու իմ փոխարէն,

Աստուած՝ բոլորի:

Բ

Կանգնեցիր իմ կերպարանքով՝ ստեղծածիդ
ստեանի առաջ

Չխօսեցիր դու՝ տուիչդ խօսքի,

Չբարբառեցիր՝ ստեղծողդ լեզուի,

Չայն չարձակեցիր՝ սասանիչդ երկրի,

Չմռնչացիր՝ ամենագոյու փո՛ղդ մեծաձայն,

Ո՛չ երախտիքովդ յանդիմանեցիր

Եւ ոչ էլ նրանց իրենց չարութեամբ
պապանձեցրիր.

Չմատնեցիր դու նրանց ամօթի, որ քեզ մատնեցին
մահուան տանջանքին.

Չդիմադրեցիր, երբ կապեցին քեզ, ոչ էլ նեղացար,

երբ ապտակեցին.

Չնախատեցիր, երբ թքեցին ու չխռովեցիր, երբ բռունցքներով խփեցին քեզ,

Չսրտմտեցիր, երբ կատակեցին, չխոժոռուեցիր, երբ ծաղրեցին:

Պատմունճանը քո վրայից հանեցին, իբրև տկարից Ու դարձեալ հագցրին, իբր կալանաւոր անգերծանելի:

Եթէ լեղիով խառն քացախը չխմեր կամա նա երկու անգամ,

Չէր թափուի մաղձն իմ նախկին դառնութեան:

Համտես արաւ նա յուսահատութեամբ ու մի կողմ տարաւ տարակուսանքով.

Առան նրանից այն մոլեգնաբար եւ տուին դարձեալ անպատկառօրէն.

Եւ խառնիճաղանջ ամբոխի առջեւ գանահարելով նրան սաստկապէս՝

Իսիստ անարգանքի դատապարտեցին.

Ծնրադրեցին՝ ծաղրելու եւ պսակ դրին հեզնելու համար:

Գ

Հանգիստ չտուին կենդանարարիդ,

Այլ պատրաստեցին քեզ համար գործիք, որ կրես:

Ընդունեցիր այն իբրև երկայնամիտ, առար իբրև հեզ,

Ու վերցրիր այն որպէս համբերող,

Եւ շալակեցիր փայտը վշտալից, իբրև յանցապարտ:

Տարար ուսամբարձ այդ գէնքը կենաց, գերթ հովտաշուշան,

Որ գիշերային արհաւիրքներից պահպանես դու մեր քո ձեռքով կերտուած գահը մարմնեղէն՝

Դատապարտութեան վայրում, որպէս թէ

խրախնանքի մէջ:

Դուրս հանեցին քեզ որպէս ողջակեզ.

Կախեցին, ինչպէս Սարեկա խոյը, որին քարշտուին իր եղջիւրներից.

Տարածեցին խաչի սեղանի վրայ իբրեւ պատարագ,

Բեւեռեցին որպէս չարագործի, կապկապեցին իբրեւ ապստամբի

Երկնաւոր խաղաղութանդ՝ իբրեւ աւագակ,

Անկապտելի մեծութեանդ՝ իբրեւ խղճալի,

Քերովբեներից պաշտուածիդ՝ իբրեւ քամահրելի,

Կենաց պատճառիդ՝ իբր արժանաւոր՝ սատակիչ մահուան,

Աւետարանի նկարչիդ իբրեւ օրէնքի հայիոյիչ,

Սարգարէների տիրոջդ ու կատարելութեանդ՝

իբրեւ գրուածքներն համառօտող,

Փառքի ճառագայթներիդ եւ Հօր անքնին

խորհուրդների կնիքիդ իբր հակառակորդ ծնողիդ կամքին,

Իսկապէս օրհնեալիդ՝ իբրեւ տարագրեալ.

Օրէնքի կապն արձակողիդ՝ իբրեւ այր նգովեալ,

Սպառող կրակիդ իբր յաղթահարուած մի

կալանաւոր,

Ահաւորիդ երկնի եւ երկրի՝ իբրեւ հաւաստի պատժապարտ,

Անմատոյց լոյսով պարածածկեալիդ՝ իբրեւ հողածին մի ձերբակալուած:

Դ

Ո՛վ դու քաղցրութիւն եւ երկայնամիտ բարերարութիւն,

Գթառատ ողորմածութիւն եւ Տէ՛ր բոլորի,

Որ ինձ՝ ապերախտ եւ անօրէն ծառայիս համար

Այդ ամէնը կամաւորապէս եւ սիրայօժար

հանութեամբ

Հանձն առար այն մարմնովդ, որ միացրիր քեզ՝ քո
աստուածային էութեանը,

Եւ մինչեւ քնարանը շիրմի՝ անպակաս լրութեամբ,
Ամբողջական նոյնութեամբ մնալով Աստուած
անքնին՝

Կրեցիր դու նոյն նախատինքները՝ անճառելի
համբերութեամբ,

Եւ ապա դարձեալ յարութիւն առար՝

Ինքնիշխան բարձրութեամբ ու պսակուած լոյսով,

Աննուագ մարմնով եւ անթերի աստուածութեամբ:

Օրհնեալ ես փառքով, գովուած գթութեամբ

Եւ բարեբանուած միշտ ողորմութեամբ

Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՀԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՃՈՅ ՀԵՏ

Ա

Եւ արդ, հողանիւթ կերպարանքովս ընկնելով
երեսն ի վայր,

Եւ ծնրադրական երկրպագութեամբ գլուխս
խոնարհած՝

Ողորմած բարեգործիդ կենդանարար ոտքն եմ
համբուրում

Եւ այս աղօթքն եմ ընծայում մեծիդ:

Բ

Աղաչում եմ քեզ, միակ ինամակալ, մարդասէր,
գթած,

Կեցուցիչ, հօր, այցելու, պաշտպան,

Թող ի գուր չանցնեն ինձ համար մարդացած

Աստծուդ փրկարար չարչարանքները,
 Ոչ էլ ընդունայն՝ մատնութեան գիշերը թափած
 քրտինքիդ կաթիլն արիւնախառն.
 Թող չստուերանայ երախտիքը լոյսիդ,
 Որ ճրիաբար, առանց փրկանքի պարգեւեցիր ինձ՝
 թշուառացածիս.
 Թող չջնջուի շնորհներիդ աւետիսը,
 Որ քո կողքից բխած կայլակները նորոգեցին.
 Թող անօգուտ չլինեն չարչարանքներիդ
 պտուղները,
 Որ մատուցեցիր ինձ՝ կարօտեալիս.
 Թող չչարծենայ արտաքսուած բանասարկուն,
 Ինձ՝ ստեղծածիդ սեփականելով.
 Յաղթիր քո կամքով չարի իղձերին,
 Թող դարձեալ ապշի մի անգամ արդէն
 զարհուրածը,
 Թող կրկին դատապարտուի իսպառ
 դատապարտուածը,
 Մի՛ ինայիր խօսքդ ազատարար,
 Որ ինձ՝ ստեղծածիդ ընծայելով քեզ, նորից քեզ
 դարձնի:
 Յոյց տուիր անճառ բարերարութիւնդ՝
 յուսահատութեան չսպասուած ժամին,
 Երբ բոլորովին կտրուած արդէն եւ օտարացած էր
 շարժումը կենդանութեան:
 Մեռար անմահդ եւ նորոգեցիր մահացածներին.
 Համաձեւութեան օրէնքի կարգը եթէ փոխեցիր,
 Ուրեմն դիւրինն ու հեշտագոյնը, առաւել եւս
 հնարաւորը մի՛ արգելիր դու,
 Ո՛վ սկզբնաձիրդ ողորմածութեան,
 Բարեմիտ, օրհնեալ եւ երկայնամիտ թագաւոր:
 Ներգործի՛ր խօսքով քո ամենագօր,
 Որով առաջին օրը դու լոյսն ստեղծեցիր,
 Եւ ես անմիջապէս դէպի լա՛ւր պիտի փոխուեմ.
 Եւ եթէ ինքս ջանադիր չեղա հետեւել լոյսիդ՝
 Դե՛՛ւ էլ ինձ այցի, հայրական լոյսից ծագած

ճառագայթ:

Թող կանչուեմ քեզ մօտ վնասապարտ ծառաս՝
Քեզանից շնորհ եւ ողորմութիւն գտնելու համար.

Պարտքերս հատուցելու համար ժամանակի
երկարաձգման կարիք չկա,
Շնորհ արա ինձ՝ տառապեալիս տեսնելու երեսդ-
Լոյսդ՝ խաւարում վիատ սրտերի:

Արգելի՛ր, փակի՛ր այն ճանապարհը, որտեղից
գեղուն բարիքները քո

Խոյս են տալիս միշտ իմ յիշողութեան
տեսողութիւնից.

Քո միշտ մնայուն գանձերի շնորհն
ամենապայծառ պահի՛ր ինձ համար,

Որ ես դառնալով ընտիր, պատուական՝ քո՛նր
անուանուեմ՝

Պաշտպանուած քեզնով, անսահման բարի:

Գ

Փութայ՛ ինձ շուտով ողորմել, գրած, աղաչում եմ
քեզ,

Ողորմի՛ր հօր, կրկի՛ն ողորմի՛ր:

Մի՛ փոխարկիր դու չարիքներս երկունքի ցաւերի,
ո՛վ համակ բարի,

Մի՛ վերցնի՛ր վտանգուածիս քո կողմից
պարգեւուած շնորհը.

Մի՛ խլիր փշումն ամէնօրինեալ հոգուդ.

Մի՛ լուծի՛ր խնկելի կնիքն արքունական քո
պատկերի:

Սրբուած սրտիս մէջ թող չյայտնուեն մեղքերի
փշեր:

Մի՛ խզի՛ր քեզ հետ սիրոյս ամրապինդ կապը
միութեան.

Մի՛ զլանար ինձ լեզուի ճարտարութիւն՝ վայելուչ
ու ճոխ ճառելու համար.

Մի՛ պակասեցնի արժանիքն աշխա, որպէսզի լոյսիդ
մասունքը բաշխեմ:

Մի՛ գրիք ծանր մահացու մեղքերս կեանքի
դպրութեան քո մատենանի մէջ.

Մի՛ պահիր, մի՛ համարիր իմը,

Մի՛ յիշեցնի, մի՛ ամաչեցնի,

Մի՛ նախատիր, մի՛ ոտնահարիր,

Մի՛ արձանագրիր մեղկութիւններս,

Մի՛ կորստաբեր գործերս ամբարիր,

Մի՛ որպէս մեղադրեալ ամբաստանիր ինձ,

Մի՛ անեցնի ինձ հետ ծառն անէծքների,

Մի՛ արձակիր իմ մէջ վնասակար սաղարթ.

Մի՛ ընձիւղիր մեղքերի ծաղիկ եւ մի՛ թողնի, որ
պտուղ բերի նա.

Մի՛ դնիր իմ առաջ պարտքերիս թուղթը:

Մի՛ թուիր երկնաստեղծ մատներիդ ճիւղերի վրայ՝
գործած մեղքերս.

Մի՛ ահեղօրէն ընդդիմախօսիր՝ անօրէնութիւնս
յիշատակելով.

Մի՛ յանձնիր կամքիս հոգուս աւանդը՝
գերեվարելու.

Մի՛ փառաւորիր ինձ այստեղ, որպէսզի այնտեղ
չդատապարտես.

Անցաւոր կեանքի այս նուագագոյն, սին
հանոյքներով՝

Մի՛ տուժել տայ ինձ՝ յաւիտենական բարիքներն
անբաւ.

Մի՛ չափիր փառքը անվերջանալի՝ այս ժամանակի
կարճատևութեամբ.

Մի՛ գրաւ դնի կեանքըդ անարատ՝ իմ վշտահառաչ
հովտի փոխարէն.

Մի՛ փոխանակի քո անճառելի լոյսը՝ մթամած այս
ստուերի հետ.

Մի՛ թողնի մտքիս երասանը դու, որպէսզի չերթամ
զարտուղի ճամփով.

Մի՛ համարիր բաւ հանգստիս համար՝ կամուրջն

աշխարհի.

Մի՛ պահիր հովիտն իմ խոհեմութեան ստուերի ներքո, որ հանդերձեալում չհրապարակուեմ:

Եթէ ամբարես չար գործերս անթիւ, կմեռնեմ ողջ-ողջ.

Եթէ սրտիս մէջ շտեմարանես՝ այժմուանից անբոց պիտի այրուեմ.

Եթէ անօրէն արարքներս դու քննութեան առնես՝ Առանց քո առջեւ ելնելու՝ պիտի հալուեմ ես իսպառ.

Եթէ մեղքերս թողնես, որ ինձ հետ տնկակից անեն՝ նրանցով պիտի մաշուեմ, սպառուեմ:

Դ

Ի՛նձ նայիր, զօրե՛ղ ամենակարող,
Որ չարութիւններս փախուստ տան ինձնից, եւ գա քո բարին փոխարինելու:

Հրամայիր, գթա՛ճ, ինսամակալ, գովեալ, լո՛յս անշիջելի,

Որ գօրութեամբդ անհուն նորոգուի հաստատապէս

Բնական կառուցուածքն անդամների՝ մարմնեղէն իմ տան,

Որպէսզի այնտեղ անհեռանալի բնակուես բազմած

Եւ հանգստանաս հաճոյ տենչանքով՝ քեզ հետ իմ հոգու ամուր միութեամբ:

Ապականութիւնն իմ մեղքերի իսպառ հեռացնելով,

Անարատությամբ վերակազմես ինձ,

Ամենակեցոյց թագաւոր անմահ,

Տէ՛ր Յիսուս Քրիստոս,

Օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՔԱՆ ՀԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Յիշի՛ր, Տէ՛ր գթած եւ արդարասէր,
Աստուած՝ ճշմարիտ.

Նայի՛ր վերստին քո ստեղծածին, որ սխալական է
իր բնութեամբ.

Չննիր ինձ դարձեալ՝ շրջանառութիւնն իմ արեան,
ահա,

Որ տարածուում է ամէն ուղղութեամբ:

Մօտեցիր դու ինձ բժշկի նման

Եւ տե՛ս, որ մարդ եմ խակամիտ, թերի իմ
խորհուրդներով,

Ինչպէս որ ինքդ վկայեցիր, չեղածներն անգամ
տեսնող սրտագէտ,

Դո՛ւ միայն անմաս՝ ստութեան մութին:

Ապա ուրեմն իրաւացի է, որ դասուեմ կարգն այն
մեղաւորների,

Որոնք իբրեւ երկրածին մարմին մահկանացու

Վրիպել են մարդկօրէն սխալուելով եւ

դատապարտուած են կրկնապէս,

Քան թէ ուզենամ՝ խօսքդ սուտ դուրս գա:

Քանզի արդարեւ դու ինքդ էլ գիտես,

Թէ չար է ի բնէ՛ մեր ծնունդն արդէն եւ ընդաբոյս է
չարութիւնը մեր,

Եւ մեր խորհուրդներն անփոփոխ են միշտ,

Ըստ հոգեհանճար իմաստունի կանխագեկոյց
առակի:

Բ

Թեթևացրո՛ւ սաստկութիւնն այն տանջանքների,
Որոնք պատրաստուած՝ սպասում են ինձ՝
Գեհեների որդուս յախտենական մահուան համար
զարդ դարձնելու ընդմիջտ.

Վերացրո՛ւ մէջտեղից մեղքերս ամօթալի,
Որոնք պահուած են՝ վերջին ատեանին յայտնի
դառնալու թշուառականիս:

Ընծայի՛ր իրատդ խաղաղարար նախապարգեւ քո
ողորմութեամբ,

Որպէսզի անեղ անտանելիներն իմ մտքի առաջ
չպատկերանան,

Կենարար գղջման փոխարէն՝ անյոյս ապշութեան
առաջ կանգնեցնելով ինձ, -

Դատաստանն ահաւոր եւ դատաւորն անկաշառ
ու անխաբելի,

Սոսկալի ամօթն ու կշտամբանքը սարսափելի,

Հանդիմանութիւնն անխուսափելի,

Տագնապն աննողոպրելի,

Պակուցումն անխրախուսելի,

Դողումն անվերջանալի,

Լացն անսփոփելի,

Ատամնակրճտումն անբժշկելի,

Ապականութիւնն անողջանալի,

Սարսափելի անէծքն աստուածային խօսքիդ,

Փակումն գթութեան եւ արգելումն ողորմութեան:

Կգալարուի երկինքն այն ժամանակ,

Եւ կողորդուի երկիրն իր յատակով

Խռովայոյզ ծովի բազմակուտակ կոհակների պէս,

Որոնք փախչում են նախ խուճապահար,

Ապա դառնալով մէկ-միւսի վրայ՝

Խափանում են խոլ ընթացքն երկուստեք ու կանգ
են առնում:

Եւ լայնատարած գետինը այնժամ
տարութերուելով ու տատանուելով՝

Թնդագին բախմամբ կցնցի ուժգին իրենց
հիմունքից

Լեռները բոլոր ու փուլ բերելով՝ կհարթի նրանց:

Կհալուեն համակ ու կիրդեհուեն քարեղէն
նիւթերն ու տարրերն ամէն.

Կայլայլուի երկինքն անեղծանելի մի
փոփոխութեամբ,

Եւ արարածներն իրենց տարերքով կառնեն մի նոր
ձեւ ու նոր կերպարանք:

Ծածուկ գործերը կհրապարակուեն, ու
կյայտնուեն մեր կրքերն անտես.

Մեր վարքն ու կենցաղն ու ներքինը ողջ՝

Պարզ կնկարուեն մեր մարմնի վրայ:

Երկնի թագաւորն ատեան կնստի՝ հատուցման
վճիռն իր ձեռքում պատրաստ:

Գ

Ուստի եւ ահա, վայ ինձ եօթն անգամ՝ կրկին
եղկութեամբ,

Չափով ու կշռով այս նոյն համրանքի,

Որը թուերի անբաւութիւն է պարփակում իր մէջ:

Ի՞նչ պիտի անեմ ողբալի հոգիս՝ այդ մեծ օրուայ
մէջ ամենասահեղ.

Քանզի առաջուց յիշելն աւելի սաստիկ է, քան թէ
հանդիպել նրան:

Ոմն մարգարէ այդ տագնապալից փախուստի
խուճապն անգերծանելի

Պատկերացնում է մեզ առակաւոր այս օրինակով,

Թէ՛ մի մարդ փախչում է առիւծի ձեռքից,

Եւ պատահում է նրան արջը.

Եւ երբ արջից էլ խոյս տալով հասնում եւ մտնում է
տուն,

Եւ ձեռքը յենում է պատին՝ օձն է խայթում նրան:

Եւ ապա, աւելի սաստկացնելով տեսիլն այդ
քստմնելի,

Աւելացնում է դարձեալ ասելով. -

"Ո՛չ ապաքեն իսաւար է Տիրոջ օրը",
"Օր իսաւարի եւ մութի, օր ամպի եւ մառախուղի":

Դ

Երբ կենակից պահապան հրեշտակը՝ հօօր
ոստիկանն իրաւամբ կամբաստանի,

Եւ ահաւոր հատուցողը կյանդիմանի
արդարութեամբ,

Թագաւորի սպասաւորները կանապարեն առանց
խնայելու՝

Ոմանց կեանքի հրաւիրելով եւ ոմանց
դատապարտելով ամօթի,

Ոմանց ծիծաղկոտ եւ ինձ ահարկու ու քստմնելի
երես ցոյց տալով,

Ոմանց լուսապանոյն պսակներ մատուցելով

Եւ այլոց՝ վճիռ մահվամբ կորստեան.

Արդարներին աւետաւոր լուր եւ ինձ՝ գոյժ տխուր՝
անվերջ վշտերի:

Մինչդեռ բարիների համար կմեռնի իսպառ
մահուան յաղթանակը,

Ինձ՝ չարագործիս համար կմնա ընդմիշտ
տեւական.

Դուռ բխելն այլեւս ի գուր կդառնա,

Ու կդադարի գուրն իմ նկատմամբ:

Չարմանահրաշ գրքերն երբ բացուեն,

Ուր գրուած են մեր մինչեւ այժմ ծածուկ մնացած
բոլոր

Գործերը պէս-պէս այս կեանքում վարած
մարդկային բնութեան,

Որի համար եւ գոյութիւն առան էակներն ամէն,

Այնժամ իւրաքանչիւր մարմնի վրայ իսկոյն երեւան
կգան լրիւ դրոշմուած

Եւ երկրաւորներիս հասկացողութեան հանդէպ
կնքուած ու փակուած բոլոր

Անպատմելի խորութիւնները, եւ մեր աչքի առաջ
կպատկերանան:

Այստեղ է, որ ողբ ու արտասուքով գնում է
երկինքը,

Իսկ այնտեղ նրանք իբրեւ ուշ մնացած
ունայնութիւններ՝ կարհամարիուեն ու կմերժուեն.

Այստեղից նախօրօք չառաքուած հեծեժագին
հառաչանքները

Այնտեղ լսելի չեն լինի երբէք.

Կշռքով ցանուած ողորմութիւնները պայծառ
ճրագով ճամփա չեն բանա.

Այնտեղ տապանը նախայանցաւորների եւ
կտակարանը տիրանարզների

Եւ ահաւոր նշանն հիմակուաններիս՝

Հանդէս գալով՝ մեծաձայն պիտի դատախազէն:

Այդ նոյն սոսկալի վայրում՝

Մէկը հայրենի հաղորդութեան ուխտը,

Մէկն էլ անտեսների վկայութեան խորանը,

Միւսը՝ մեծագործ արիւնն Աստոյ

Իբրեւ իրաւացի ամբաստանողներ՝ իմ առջեւ
պիտի տարածեն:

Բազմապիսի տանջարաններ ես ինքս անձամբ
այստեղի՛ց իսկ պատրաստեցի ինձ համար,

Այլեւս ինչպէ՛ս յուսակտուրս միխիթարուեմ:

Չի եթէ նոյնիսկ լուսեղէն գորքերն արդարների
հետ,

Որոնք փառաւորուած են երանութեամբ, սարսում
են ու դողում

Եւ սիրտ չեն անում նայել ահաւոր դատաստանին,

-

Ես եղկելիս, աւանդակորոյս սատակման որդիս
ո՞րտեղ կմնամ,

Ես, որ ոչ միայն չպիտի լինեմ պսակի արժան,

Այլեւ պատուհասն իմ անտանելի եւ կորուստ
պիտի լինի անսպառ:

Ե

Բայց դու շտապիր, ամենապարզեւ, անճա՛ն
գօրութիւն,

Փրկարար ձեռքդ երկարելու ինձ՝ կորստեան
մատնուած գերուս,

Որպէսզի քեզնով օգնութիւն գտած՝ կրկին ետ
դառնամ դժոխքի դռնից

Եւ բոլորովին ամենապատրաստ՝ պատիժներից
զերծ մնամ, անվտանգ:

Գալիքներն այստեղ մտքի աչքերով
նախատեսելով,

Բաւ համարելով լսել տագնապած՝ տանջանքների
ձայնն ահեղահամբաւ,

Քո բարի կամքով ազատուեմ իսպառ եւ
չմատնուեմ առիւծների կորիւններին,

Որոնք խնդրում են քեզանից՝ տալու ինձ իրենց
որպէս կերակուր,

Խժռելու գազանային ատամներով,

Որպէսզի լցնելով որովայնը մահուան՝

Այստեղ պարարուածիս քաշեն ու հալեն այնտեղ,

Ուր պահուում են անսպառ մնացորդ մթերքները՝

Յաւիտենապէս լափուելու համար:

Քանզի դո՛ւ միայն կարող ես կորզել այդ սպառիչ
ժանիքներից

Եւ տանել դէպ կեանք ու երանութիւն,

Ապաւէ՛ն բոլորի՝ լոյսի թագաւոր

Տէր Յիսուս Քրիստոս,

Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆՁ

Ա

Եւ արդ, այսքան յուսահատութիւնների եւ
ահարկու սրտաբեկութեան,

Ահաբեկիչ աստկութեամբ աստուածային
բարկութեան ենթարկուելուց յետոյ,

Թախծայից ոգով, իսպառ տագնապած`

Քեզ եմ աղայում, սուրբ Աստուածածին,

Հրեշտակ մարդկանց մէջ, մարմնատեսիլ քերովբե,

Երկնաւոր արքայուհի,

Անխառն, ինչպէս օդ, մաքուր, ինչպէս յոյս,

Անշաղախ` նման բարձր արուսեակի պատկերին
պայծառ,

Գերազանց, քան սրբութիւնների բնակարան
անկոխելի,

Խոստացուած դու վայր երանաւետ, Եդեմ
շնչաւոր,

Անմահ կենաց ծառ` բոցեղէն սրով

պարունակուած,

Բարձրեալ Հօրից զօրացած եւ հովանաւորուած,

Հանգստութեամբ Հոգու պատրաստուած եւ
մաքրագործուած,

Բնակութեամբ Որդու յարդարուած եւ
տաղաւարուած,

Հօր համար միածին եւ քեզ` անդրանիկ,

Որդիդ` ծնունդով եւ տերդ` արարչութեամբ,

Անաղտ մաքրութեանդ հետ ե՛լ անբիծ բարի,

Անարատ սրբութեանդ հետ ե՛լ բարեխօս
խնամակալ,

Ընդունի՛ր աղօթքն այս աղերսայից քեզ
դաւանողիս,

Եւ այն ընծայիր Աստծուն իբրեւ պաղատանքը քո,

Խառնելով նրան` մեծիդ մատուցուած իմ
պաղատայից ներբողն առաջին.

Հիւսիր, միացրու դառն հեծութիւնն իմ մեղաւորի
Քո երանելի եւ նուիրական խնդրուածքի հետ,
Կեանքի տունկդ դու օրհնուած պտղի,
Որպէսզի քեզնից միշտ բարերարուած
Եւ ապաւինած մաքուր մայրութեանդ ու
լուսաւորուած՝

Ապրեմ եւ Քրիստոս Որդուդ Միածին եւ Տիրոջդ
համար:

Բ

Օգնի՛ր թեւաւոր քո աղօթքներով, ո՛վ
խոստովանուած մայրդ ողջերի,
Որ երբ դուրս ելնեմ այս երկրի հովտից,
Առանց տանջալից չարչարանքների գնամ դէպի
կեանք,

Դէպի պատրաստուած օթեւաններդ:
Թող թեթեւ լինի վախճանն իմ, զի ես ծանրացել եմ
խիստ անօրէնութեամբ,

Օրն իմ տագնապի դարձրու ինձ համար տօն
ուրախութեան,

Դու, որ բուժեցիր երկունքն Եւայի:
Խնդրի՛ր, աղաչիր ու բարեխօսիր,
Չի անճառելի մաքրութեանդ համար հաւատում
եմ ես՝ խօսքդ կրնդունուի:

Արցունքով օգնիր դու վտանգուածիս, գովեա՛լդ
կանանց մէջ.

Ծնկաչոք խնդրիր հաշտութեանս համար, ծնո՛ղդ
Աստծոյ.

Հոգատար եղիր թշուառիս հանդէպ, խորա՛ն
բարձրեալի.

Ձեռք տուր ընկածիս, տանա՛ր երկնային.
Եւ փառաւորի՛ր որդուդ քեզանով,
Որ աստուածօրէն հրաշագործէ ինձ ի քաւութիւն
եւ ողորմութիւն,

Ո՛վ դու Աստծոյ աղախին եւ մայր:

Գ

Բարձրանայ պիտի պատիւդ ինձանով
Եւ փրկութիւնն իմ՝ ցոյց տրուի քեզնով:
Եթէ ինձ գտնես, տիրամայր,
Թէ ինձ ողորմես, սրբուհի՛,
Թէ կորուսեալիս շահես, անարատ,
Եթէ խրտնածիս խնամարկես, երջանի՛կ,
Եթէ ամօթահարիս առաջ տանես, բարեշնորհ,
Եթէ միջնորդես յուսահատուածիս համար, մի՛շտ
սուրբ կոյս,
Եթէ մերժուածիս ընտանեցնես,
Աստճո՛ւց մեծարուած,
Եթէ ցոյց տաս ինձ գթութիւնդ, լուծի՛չդ
անէծքների,
Եթէ տատանեալիս ամրապնդես, հանգի՛ստ,
Եթէ հուզումներս ու խռովքներս հանդարտեցնես,
խաղաղարար,
Եթէ մոլորեալիս մի ճար գտնես, գովեա՛լ,
Եթէ ինձ համար մտնես ասպարեզ, մահվան
նահանջիչ,
Եթէ դառնութիւնս անուշացնես, քաղցրութի՛ւն,
Եթէ բաժանման արգելքը քանդես, հաշտությո՛ւն,
Եթէ անմաքրութիւնս վերացնես, եղծման
ընդոտնիչ,
Եթէ փրկես ինձ՝ մահուան մատնուածիս,
կենդանի՛ լոյս,
Եթէ իմ լացի ձայնը կտրես, բերկրությո՛ւն,
Եթէ խորտակուածիս կազդուրես, կեանքի՛
դարման,
Եթէ կործանուածիս մի ակնարկ գցես, հոգելի՛ց,
Եթէ ողորմութեամբ ինձ պատահես, նուիրական
կտակ,
Օրհնեա՛լդ միայն երջանկալեզու անբիծ
շուրթերից,
Ահա՛ կաթիլ մի կուսութեանդ կաթից

Մեջս անձրեւելով՝ կեանք է տալիս ինձ,
Ո՛վ դու մայր բարձրեալ Տիրոջդ-Յիսուսի,
Երկնի եւ համայն երկրի արարչի, որին ծնեցիր դու
անճառօրէն,

Բովանդակ մարմնով եւ ամբողջովին իր
աստուածութեամբ,

Որ փառաւորուած է Հօր եւ սուրբ Հոգու հետ
Էութեամբ համակ եւ անքննութեամբ մեր
բնութեան հետ միացած,

Ամենայն է նա եւ ամէն ինչում,

Երրորդութիւնից մէկը,

Նրան փանօք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Տէ՛ր Աստուած բարերար, բազմապարզ եւ
թագաւոր,

Կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայն
հանգստարան.

Որ մեղաւորիս համար մարմնացար,

Անպատում գործեր կատարեցիր դու ու շատ
հրաշքներ,

Մինչեւ հասցրիր կատարելութեան՝
մարդեղութիւնդ

Քո ամենալիբ աստուածութեան հետ:

Արդ, յանուն երկնաստեղծ ձեռքովդ ձեռնադրուած
Եւ քո սուրբ հոգով օծուած սրբազան
առաքեալների, -

Որոնց արժանի գովեստն ես արի մի այլ
գրուածքում, ըստ կարողութեանս,

Քո փառքի համար, Տէ՛ր ամենայնի, -

Ի՛նձ էլ ողորմես, յիշելով սէրդդ, որին դու նրանց

արժանացրիր:

Նրանցով ելքի շաւիղ ցոյց տուր ինձ դէպի
երանութիւնը փափագելի:

Նրանց հովվութեան բարի ճայնը թող քաղցր հնչի
ինձ, գերթ կենաց ողջոյն:

Անեղծ փրկութեան յոյսի մէջ ե՛ս էլ բաժին
ունենամ՝

Կեանքի առաջնորդների հետ,
Պատուի այդ շնորհն առաջին անգամ
ստացողների,

Փառաւորեալ խմբերի,
Բանական գետերի,
Բարձրաձայն աւետողների,
Պանծալի իշխանների,
Լուսապայծառ թագով պնուածների,
Զօրաւոր շնորհի անկապուտ զարդով
պայծառացածների,

Տիրական յոյսի գուարթարար իւղով
կատարեալների հետ:

Բ

Եւ արդ, ո՛վ բարձրեալ Քրիստոս Աստուած,
Մեծ պատուիրանիդ աշակերտների հետ,
Յարգելով նրանց աղօթքներն հաճոյ եւ ընդունելի,
Եւ արիւնընծայ, վաստականուէր ու
քրտնակնդրուկ

Աղերսանքները նահատակութեամբ ընտիր
ճանաչուած մարտիրոսների,

Որոնք մահացու եւ մշտաչարչար մարմնով իրենց,
Վտանգաւոր եւ ամենակիր անդամներով,
Երկրաւոր եւ հողագանգուած բնութեամբ
Բոլոր նիւթեղէն գոյութիւնների ու տարրերի հետ
կռիւ մղելով՝

Պսակուեցին, բարձրացան եւ կենդանացան

հոգեպետ,

Եւ արիաբար ելնելով երկրից, ըստ մարգարէի,
Դարձան ճշմարիտ վկաներ ամենափոքր՝
մահուան,

Եւ աշխարհում իսկ նրանք նկատել կարողացան
պարզ՝

Իմանալի, անտեսանելի ու ծածուկ,
Բայց եւ աներկբա յոյսով տեսնուող բարիքներն
ամէն.

Նրանք՝ աշակերտ եւ չարչարակից
առաքելներին,

Իրենց գործերով, կատարեալ լրմամբ նրանց
հաւասար՝

Պարում են հիմա խրախճանքներում,
անսահմանափակ երանութեան մէջ, -

Ընդունիր եւ ի՛նձ, որպէսզի ես էլ նրանց պէս
ընդմիշտ

Հաստատուեմ քո մէջ անեղծ փրկութեամբ:

Գ

Նրանց հետ, որոնք արիւնով ներկուած՝ անցան
կրակի ու սրի միջով՝

Կան քեզ հետեւող, Որդի՛դ Աստծոյ, եւ
սրբակենցաղ հայրեր մենակեաց,

Որոնք անպարտելի քաջութեամբ եւ անպատիր
զգաստութեամբ

Արիաբար մարտնչելով դժնյա եւ գոռոզ մարմնի
բռնութեան դէմ,

Անմարմին Բեկիարին հալածեցին.

Եւ աշխարհային կեանքի ասպարիզում,
մշտամարտ մրցութեամբ,

Առանց ծանրաբեռնուածութեան տաղտկութեան,

Լայնածաւալ աշխարհի պեծուփ ծովից

Թոցնելով թեթեւ հոգիներն իրենց մարմնի ծանր

տապանակով՝

Նաւահանգի՛ստն հասան կեանքի.

Եւ, որպէս վերին վիճակի սիրահարներ, առանց
հետինների վրայ մտածելու,

Յաղթանակի թագն իրենց գլուխը դրին
համարձակօրէն,

Պճնուած իսկապէս պայծառ նոխուրէամբ:

Այդ սուրբ հայրերի աղօթքներով արժանաւոր եւ
խնդրանքներով նուիրական,

Նրանց հետ՝ քեզ մօտ ընդունիր նաեւ ինձ՝
մեղաւորիս:

Դ

Արդ, վերոյիշեալ երջանիկների փառաբանական
աղերսների հետ,

Որոնք ինձ համար են գոչում, բարձրեա՛լ, քեզ ի
հանութիւն,

Ահա ես էլ իմ անմաքուր խօսքերն եմ խառնում՝
այնպէս,

Ինչպէս քաղցրութեան հետ տրուած դառնութիւն,

Կամ փուշ՝ փափկութեան հետ,

Տգեղութիւն՝ վայելչութեան հետ,

Տիղմ՝ գեղեցիկ մարգարտի հետ,

Կամ հող՝ գուտ ոսկու հետ,

Կամ անարժէք քարեր՝ պայծառ արծաթի հետ,

Բացասութիւն ճշմարտութեան հետ,

Կամ ատամնառու աւազ՝ հացի փափուկ

զանգուածի հետ:

Արդ, լսիր, հզօ՛ր, ձեռնհաս, գովեալ,

Նրանցը ինձ համար, իմը նրանց,

Նրանց ի գովեստ, ինձ ի փրկութիւն՝ քո փառքի
համար,

Ամենագութ, բարերար, օրհնեալ եւ երկայնամիտ,

Կարող, անքնին, անեղծ, անստեղծ եւ անճառելի,

Քոնն են պարգեւներն ու շնորհները,
Դու ես սկիզբն ու պատճառը բոլոր
բարութիւնների:

Ե

Չէս դատապարտիչ, այլ ազատարար.
Չէս դու կորուսիչ, այլ գտնող.
Չէս մահացուցիչ, այլ ապրեցնող.
Չէս տարագրիչ, այլ ժողովող.
Չէս մատնիչ, այլ փրկող.
Չէս ընկղմիչ, այլ վեր հանող.
Չէս գլորիչ, այլ կանգնեցնող.
Չէս անիծիչ, այլ օրհնող.
Չէս վրիժառու, այլ ներող.
Չէս թշուառացուցիչ, այլ մխիթարող.
Չէս ջնջում դու, այլ գրում ես.
Չէս սասանեցնում, այլ հաստատում.
Չէս ոտնահարում, այլ սփոփում.
Չէս յօրինում դու պատճառներ մահուան, այլ
հնարներ ես փնտրում կենաց.
Չէս ձգտում սատակեցնելու, այլ փրկելու
ողորմաձաբար:
Չէս մոռանում այցելութիւնդ,
Չէս լքում բարին.
Չէս արգելում գթութիւնդ.
Չէս տալիս վճիռ կորստեան, այլ ազատութեան
կտակ:
Չէս թշնամանում առատաձեռնութեանդ համար,
Եւ շնորհներիդ համար չես բամբասում.
Չէս հայհոյում պարգեւներիդ համար,
Եւ ձրի ընծաներիդ համար չես նախաստում.
Չես անգոսնում երկայնամտութեանդ համար,
Եւ ներելուդ համար չես պարսաւում.
Չես բանասարկում բարութեանդ համար,

Եւ քաղցրութեանդ համար չես անպատուում.
Չես արհամարհում հեգութեանդ համար:
Եւ սրանց համար ոչ թէ տրտունջներ,
Այլ անլռելի գոհաբանութիւններ են առաքւում քեզ:
Վերցրու մեղքերս, հօ՛ր.
Լուծիր անէծքներս, օրհնեա՛լ.
Քաւիր պարտքերս, ողորմա՛ծ.
Ջնջիր յանցանքներս, գթա՛ծ.
Օգնիր ինձ մատույղ, եւ իսկոյն պիտի լինեմ
կատարեալ.
Ի՞նչ կայ քեզ համար, Տէ՛ր իմ, սրանցից աւելի
դիւրին,
Եւ մեղապարտիս համար աւելի կարելորագոյն:
Ուստի քո ստեղծած պատկերիս վրայ, ո՛վ
բարեխնամ,
Կենդանագրի՛ր դու նորոգող դարձեալ եւ
յուսաւորող
Մաքրագործ շնորհիդ փչումն շնչի,
Բազմամեղ հոգին իմ պաշտպանելով:

2

Մի՛ արագացնի, ողորմա՛ծ, կարճ ժամանակում,
օրս տարաժամ,
Որ չլինի թէ անպաշար ու ձեռնունայն ընկնեմ ես
երկար ու անվերջ ճամփայ.
Մի՛ տար ինձ բաժակ դառնութեամբ լեցուն՝
ծարաւած ժամին.
Մի՛ փակիր իմ դէմ յաջողութիւնը հոգեւոր օգտիս,
Եւ հանկարծադէպ ասպատակների նման
սհաւոր՝
Թող չպատահի մահուան գիշերն ինձ.
Տապը տոթակեզ, անպատրաստ պահին, թող
չկտրատի արմատներս ու չհորացնի,
Ոչ էլ յուսնական դիպուածները թող վրաս

հասնելով՝ գաղտնի վնասեն.

Թող իմ մէջ մեղքի սառոյց չպահուի,
Ոչ էլ աշխարհիկ կեանքի ուղիների հոսանքները
ինձ ողողեն, տանեն,

Թող որ հանգիստն ինձ մահ չբերի,
Եւ ոչ էլ նինջը սատակման առաջնորդի.
Թող քունն ինձ կորստեան պատճառ չլինի,
Եւ ոչ էլ նիրհը ապականութիւն առաջ բերի.
Թող որ վախճանը անպատեհ ժամի չարշաւի
վրաս,

Եւ ոչ էլ շունչս վեր բարձրանալիս՝ ցած ընկնի
ինչ-որ արգելքի առած:

Է

Դո՛ւ ես Տէր, դո՛ւ գթած, դո՛ւ բարերար,
Դո՛ւ երկայնամիտ, դո՛ւ ամենակարող,
Դո՛ւ անճառօրէն զօրաւոր՝ ամէն անյուսութեան,
Քաւելու, փրկելու, կենագործելու,
Լուսաւորելու եւ վերստին ամրացնելու,
Գազանների գիշատիչ ժանիքներից կամ
վիշապների ստամներից ի կեանս կորզելու,
Խոր անդունդներից բերկրալից լոյսին բերելու,
Եւ մեղքի հորձանքներում խեղդուելու
ագատելով՝

Երջանիկ արդարների հետ փառքով բազմեցնելու:
Ամենայն հոգի ակնկալու յոյսով քեզ է սպասում
կարօտ քո շնորհին,

Թէ՛ երկնայինները եւ թէ՛ երկրաւորները,
Թէ՛ մեղքով ընկածները եւ թէ՛ արդարութեամբ
նոքի ելածները,

Թէ՛ տէր, թէ՛ ծառայ, թէ՛ տիրուհի եւ թէ՛ աղախին.
Եւ քո ձեռքումն է բոլորի կենդանական շունչը:

Եւ քեզ՝ Հօր եւ սուրբ Հոգու հետ՝ փա՛ռք
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Բարձրեալ անքնին, զօրութիւն ահեղ,
Տէր արարածոց,
Թագաւոր երկնի, ստեղծիչ հրեշտակաց, մտքի
գոյարան,
Հաստիչ հրեղէնների, հոգիների բարի պետ,
Ապաւինութեան աջ, հանգստաւետ
անդորրութիւն,
Լուսալիր տեսութիւն, պայծառութիւն բերկրալից,
Երանութեան ճամփայ, կենդանութեան պատճառ,
Բանականութեան առիթ,
Անվտանգ փրկութիւն,
Առաջնորդ խաղաղութեան,
Պարիսպ ամրութեան, պահպանութեան
պատուար,
Ցանկապատ բոցեղէն՝ մեծագոյն օրհնութիւն,
Անոխակալութեան սահման,
Այս ողբերգութեան մատեանում գրուած
խօսքերովն իմ խոստովանական՝
Սարդկային ազգի մեր թշնամիներին նոյնպէս
բարութեամբ յիշիր,
Եւ տո՛ւր կատարեալ քաւութիւն նրանց եւ
ողորմութիւն:
Մի՛ բարկանար, Տէր, դու նրանց վրայ, որպէս
սրբերին բամբասողների,
Դէպ ինձ ունեցած մեծ սիրոյդ համար եւ իմ
պատճառով,
Այլ իբրեւ չարեր կշտամբողների եւ իրաւաբար
նախատողների՝
Ների՛ր նրանց յանցանքները:
Թե՛ ես, թե՛ նրանք եթէ միասին ելնենք քո առաջ, ով
արդարադատ,

Գուցէ եւ ոմանց մեղքերը մեր դէմ շահտ սակաւ
լինեն

Եւ բամբասանքները՝ իրաւացի.
Իսկ իմ՝ դէպի քեզ, ամենապարզեւ,
ուխտագանցութեան օրինակները
Բագոււմ են, անթիւ եւ անկշռելի:

Բ

Արդ, նայելով, Տէր, անարգիս վրայ, յիշի՛ր
մեծութիւնդ.

Եւ երբ քեզանից բարիք խնդրեմ ես իմ
աստղներին,

Դու նրանց համար, որ քոնն են դարձեալ, ըստ քո
մեծութեան,

Հրաշապէս անճառ բարիքնե՛ր գործիր:

Չսատակեցնես ինձ խայթողներին, այլ ուղղի՛ր
նրանց,

Գջլելով խոտան բարքերն երկրային,

Բարիներն արմատապէս դու թե՛ իմ եւ թե՛ նրանց

մէջ:

Մանաւանդ որ դու լոյս ես ու յոյս,

Իսկ ես խաւար ու խենթ.

Դու ի բնէ բարի ու գովելի,

Իսկ ես՝ չար համակ ու ապիկար,

Դու տէր համօրէն երկնի եւ երկրի,

Իսկ ես չեմ իշխում շնչիս եւ հոգուս.

Դու բարձրեալ ազատ՝ կարիքներից գերծ,

Իսկ ես ենթակայ տաժանքի, վշտի.

Դու վեր երկնային կրքերից բոլոր,

Իսկ ես կաւ անարգ ու գարշելի.

Դու յար կմնաս անհասանելի բարձրութեան վրայ,
ըստ մարգարէի,

Իսկ ես, ըստ նոյնի, կկորչեմ ընդմիշտ.

Քո մէջ նենգութիւն կամ խաւար չկա,

Իսկ ես, որ աւանդն իմ չպահեցի, այդ բոլորն էլ եմ:
Հանի՛ր ինձ բանտից, արձակի՛ր կապանքներից,
Պոկի՛ր ինձ պրկող իմ շղթաներից,
Փրկի՛ր խեղդուելուց,
Ազատի՛ր տազնապներից, քանդի՛ր երկայթներից,
Հան՛ն ինձ պաշարումներից, դուրս բեր
երկմտութիւնից,
Հանգստացրու նեղութիւններից.
Փարատիր վշտերս, սփոփիր տխրութիւններս,
Հանդարտեցրու խռովութիւններս,
Ամոքի՛ր լացս, ցրի՛ր հեծութիւններս,
Հեռացրու ինձ իմ ողբերից ու կազդուրիւր լալուց,
Աստուա՛ժ ողորմութեան եւ պարգեւատու
քաղցրութեան,
Հօրիդ արեան գնով փրկուածիս անտես առնելով՝
գուր մի՛ կորցնիր.
Կանգնեցրո՛ւ դու ինձ, որ բազմավտանգ
հիւանդութիւնից մահուան անփն եմ հասել:

Գ

Ահա՛ բարդուեցին եւ կուտակուեցին ընդունայն
անցած տարիներն իմ ողջ
Ա՛յն օրից, երբ որ աշխարհ եկայ ես, որպէս
անայիտան,
Դեռ անդաստանից իմ մօր արգանդի՝ մեղքերի
դժնիկ փշեր ծլեցնելով.
Մի՛ լինիր ինձ խայթոց խոցոտիչ,
Ինչպէս որ եղար Հուդայի տոհմին եւ կամ Եփրեմի
գաւակի համար:
Եւ քանզի հոգուս մէջ բարեսերմ ցորենի փոխարէն
Խայթող, թունաւոր ու թմրեցուցիչ խոտեր
բուսցրի ու տնկեցի ես, -
Ըստ գրոց իօսբի՝ աւետարանից էլ առաջ ասուած,
-

Ինչպե՞ս չկոչեմ անձն իմ գարշելի դաշտ ու
անդաստան՝

Խեղդուած՝ մեղքերի անիծաբեր փշերով:

Արդարութիւն չսերմանեցի ես, ըստ Ովսելի,

Էլ ինչպե՞ս պիտի հնձեմ կենաց բերքն ու այն
հաւաքեմ,

Մաքուր իմ հոգու կուսական ստինքները
թառամեցին,

Ինչպէս որ մարգարէն Իսրայելի համար է ասում,

Բայց դու կարող ես, Տէր, նրանց կրկին նախկին

տեսքը տալ:

Հուդայի մոլի բարքի համաձայն

Ընդարձակեցի կամքիս մահիճը հոմանի դուերի
համար.

Քո ձեռքն է դարձեալ ամփոփել այն,

Տէ՛ր, նոյն զգաստութեամբ:

Դ

Եթէ մարմնապէս կցորդութիւնը տեսնողի հետ
պոռնիկին դարձրեց անբիծ, անարատ,

Իսկ դու, փրկւոյթո՛ւն, միանալով ինձ հոգեպէս՝
կրկին կմաքրագործես:

Եթէ արեգակն այս անկենդան,

Որ ստեղծել ես դու մատակարար մեր երկրի
համար,

Յամաքեցնում է ճահիճների ցեխն ու խակ
պտուղներ է հասցնում,

Իսկ դու ստեղծի՛չդ ամենայնի, հոգիդ Աստծոյ,

Ո՛րքան աւելի պիտի կարենաս չարիքների տիղմն
աղտեղի

Եւ մեր մեղքերի աղծապիղծ թարախն իսկոյն
սպառել:

Դ՛րա համար է, որ ես խօսքերիս կարգին շտապեցի

Թշնամիներիս համար նոյնպէս բարին հայցել

քեզանից,

Որպէս մահապարտութեամբ հեռացուած
յանցաւորիս

Չզգե՛ս հզօրիդ ամենախնամ աչքից, օրհնեա՛լ
գթօրթիւն:

Արդ, կենագործիր ամենամեղիս՝ մարմնիս
անդամներով, հոգուս բնութեան հետ,

Որպէսզի ես միշտ քեզ վրայ խորհեմ:

Բարեգործներին բարիք խնդրելը օրէնք է
բնութեան,

Եւ մենք այդ բանը անում ենք կամքով մեր
անբռնադատ:

Քանզի արդարեւ այդ մի պատուէրդ կարող է
ամէն հասակ կատարել,

Իսկ երկրորդի գործադրումը նոյն սիրով
հոգատար՝

Նշանակում է նմանուել Աստծուդ:

Այդ իսկ պատճառով գերադասեցի թշնամիներիս
բարիք ցանկանալ,

Քան երախտաւոր բարերարներիս համար
աղերսել:

Ե

Եւ արդ, մէկի տեղ կրկնակի անգամ յիշիր դու
նրանց,

Որոնք անարժանիս քո բարձրագոյն անունով
ընդունեցին.

Եւ տուր դու նրանց, Տէ՛ր ամէնառատ, բարերար եւ
անոխակալ,

Վարձը արդարի եւ մարգարէի,

Թէպէտեւ զուրկ եմ ես բոլորովին արժանիքներից,

Բայց նրանք ըստ իրենց հաւատքի եւ յուսալիր
ականկալութեան,

Ողջամիտ կամքով են նայում ինձ պէս

պատժապարտ գերուս,

Որպէս թէ հոգուս փակ պահարանում կեցուցիչ մասունքդ ունենամ լրիւ:

Եւ դու անսահման գթութեամբ մօտենալով մեղաւորիս, -

Որ անկարող է պահուել քո տեսողութիւնից

Եւ կամ խոյս տալ կշեռքից ուղիղ, անխաբելի, -

Մաքրե՛ս, որպէսզի չխայտառակուեմ մեծ

դատաստանում:

Եւ ինչպէս որ ինձ ուզում են պատուել վայելուչ շուքով սիրելիներիդ քո անուան համար,

Կրօնաւորի զգեստիս բարեձեւութեանը նայելով,

Անգիտակ գաղտնի իմ արատներին՝ երանի են տալիս եղկելուս, -

Դո՛ւ էլ, հնարաւոր՞, ամենապարզել, օրհնեալ մարդասէր,

Ողորմո՛ղդ բոլոր արարածներին հաւասարապէս,

Ամենաթշուառիս հեծութեան համար հաշտուիք նրանց հետ, ըստ իրենց հաւատքի,

Ընծայիր նրանց, տուր որպէս պարգել մեծութիւնդ անեղծ

Եւ քո պսակը յաւերժ անթառամ՝

Ամէն ինչ քննող ու պարգաբանող մեծ

դատաստանի վերջին օրն ահեղ:

2

Անհատնում ու անվատնելի գանձերի մեծ ու փրկարար

Գրաւականն ես դու ստրուկիս համար ու սովեալիս,

Եւ մենք այդ գանձերն հոգուդ երկնքի ի գործ դնելով՝ հարստանում ենք խօսքիդ համաձայն:

Տեղ սահմանիր ինձ հանդարտ ջրի մօտ,

Ամրացրո՛ւ իմ մէջ, անփոփո՛խ, հաստատուն

վաստահույթին.

Կարգիր ինձ համար, օրհնաբանուած,
անկասկածելի յոյսի ամբողջին.

Տուր ինձ, ամենախնամ, անաչառ
պաշտպանություն,

Սասանեալիս՝ բարի անդորրություն,
Տարակուսեալիս՝ լուսոյ ապաւինություն,

Ողբալուս՝ մեծ երջանկություն,

Վհատեալիս՝ կենաց օգնություն,

Լքեալիս՝ հաստատուն օժանդակություն,

Նահանջածիս՝ անսայթաք վերընթացություն:

Զի քոնն են բոլորն ու դու ես տուիչն ամենայնի.

Եւ քո ձեռքով է բաշխում այն ամէնն, ինչ
անհրաժեշտ է մեր կեանքի համար:

Եւ քեզ է վայելում փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

ՔԱՆ ՁԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Երկնաւո՛ր արքայ, բարձրեալ թագաւոր,

Տէ՛ր դու բոլորի եւ ամէնքի յոյս,

Արարիչ տեսանելիների եւ հոգեղէնների հաստիչ,

Պատճառ եղածների եւ կազմող լինելիների,

Տուիչ յոյսի, առիթ առաւօտի, պատրաստիչ

վաղուայ,

Երեւացնո՛ղ երեկոյի, յօրինող խաւարի,

Արուեստաւոր բարեհնար, իմաստութեան գործիչ,

Քաւարան օրհնեալ, հալիչ մեղքերի, հալածիչ

ցաւերի,

Լուծիչ դառնութեան, պահպանարան հանգստի,

Հնարիչ նիրհի, կարգաւորիչ քնի, պարգեւիչ նինջի,

Կարգաւորիչ շնչառութեան, զգայութեան

տւնդութիւն,

Յրիչ ցնորքների, բարեկարգիչ անուրջների,
փոխարկող զարհուրանքի,

Փոփոխիչ տխրութիւն, խափանիչ խայթումների,
Կասկածների փարատիչ, ծփանքների
հանդարտիչ,

Ահաբեկութիւն խարդախների, դէւերի
հարուածիչ,

Ախտերի փախուցիչ եւ ընկղմիչ
գայթակղութիւնների:

Պաշտպանի՛ր ձեռքովդ երկնաստեղծ,
Չօրացրո՛ւ աջովդ բարձրացած,
Ամփոփի՛ր թելերովդ ամենակալ,
Ծածկի՛ր խնամքովդ աստուածային,
Ամրացրո՛ւ վերնայիններիդ վերակացութեամբ,
Շուրջանակի պարսպիր անմահներիդ
գումարտակներով,

Ընդդիմամարտին իմ վանիր գուարթուններիդ
զինուորներով,

Պատսպարի՛ր սասանեայիս աստուածածնիդ
մաղթանքներով,

Անդրանիկներիդ բանակներն ինձ բարի
պահապան կարգիր:

Բաց արա աչքերիս հետ նաեւ տեսանելիքները
մտքիս,

Չգաստացրու շնչիս հետ նաեւ դանդաղութիւնը
ծանրաբեռն իմ կրքերի,

Վերացրու թանձրամած յիմարութիւնն իմ
զգայարանքների, Տէ՛ր,

Վերցրու թանձրութիւնն իմ ծածկոյթի, միա՛կ
բարեգործ:

Լոյսը բացուելիս՝ ողորմութիւնդ էլ ծագիր ինձ
վրայ,

Եւ արեւի հետ՝ քո արդարութեան արեգակը թող
մտնի սիրտս նեղ.

Փառքիդ ճառագայթը մտքիս խորհրդարանում

թող ջահաւորուի.

Եւ խաչակնքումը խաչիդ՝ մարմնիս եւ հոգուս մէջ
թող տարածուի՝ համասփիւռ:

Քեզ եմ յանձնում այսօր քո յօրինած տաղաւարը՝
Այնտեղ բնակուող պահապան հոգուս հետ
միասին.

Չի դու ես Աստուած անքնին,
Ամենակարողդ ամէնքի համար եւ ամէն բանում
բովանդակապէս,

Օրհնեա՛լ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԵ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՑ

Ա

Եւ քանզի գուարթ արթնութիւնը մեր նինջ ես
համարում,

Իսկ լռութիւնը խոր թմրութեան մէջ՝ ի քեզ
ունեցած

Ուղիղ հաւատքի համար՝ աչքերի անթարթ
բացութիւն, -

Ուստի հոգուդ իմաստութեամբ ուղղի՛ր
յաջողուածքն իմ ձեռնարկածի,

Որի համար ահա աղօթում եմ ես մաղթանքներիս
հեծեծագին ձայնով:

Չօրացրո՛ւ ինձ, Տէ՛ր, ճգնաւորական
բարենպատակ իմ վաստակի մէջ,

Կարեկից եղիր իմ տկարութեանն ու թերեւացրո՛ւ
սկիզբն աշխատանքիս:

Արագացրո՛ւ առաջադրուած այս ձեռակերտս,
մշտապէ՛ս կարող,

Դիւրացրո՛ւ նրա ընթացքը դէպի աւարտում լրիւ:
Բերկրութեամբ հասցրո՛ւ ինձ գործի վախճանին,

Արա՛ պնայէս, որ ժամանակին հասնեմ
նպատակիս,

Ուղեկից եղիր իմ ճանապարհին,
Բարձր թռչչքով դէպի օգտակարն ինձ
շտապեցրու,

Աջ կողմս կանգնիր ամենաձանր վտանգի
դէպքում,

Լսեցրու ձայնդ անձկութեանս պահին,
Կորստեան ժամին ձեռքովդ փրկիր,
Ներգործիր մատովդ, երբ որ նեղն ընկնեմ.

Հարթիր արգելքներն ամենաչար խափանման,
Հոգեղէնիդ առաքմամբ, ինչպէս Ամբակումին, ի՛նձ
էլ ճար արա,

Խօսք շնորհիւր ինձ ատեանում, կանգնած՝
բազմութեան առաջ,

Իմաստութիւն դիր իմ մէջ, երբ դէմ-յանդիման
կանգնեմ քննութեան:

Կամքիդ ամպով հովանի եղիր ինձ հրաշապէս,
Ու հանդարտեցրու քո կենաց փայտով մրրիկն իմ
ծովի,

Սանձիր երկրային կենցաղի պատկերը քո
հրամանով.

Չի եթէ դու, Տէ՛ր, ողորմութիւնդ կամենաս ցոյց
տալ,

Կոհակներն այդ լոյծ կարծր կլինեն ատելի, քան
քար,

Իսկ եթէ զլանաս խնամքդ ցամաքում՝

Ամուր գետինը, որպէս անկայուն, փուլ կգա իսկոյն
մեր ոտքերի տակ:

Բ

Ընդունի՛ր, Յիսուս, ձեռնարկութիւնն այս
պաղատանքներիս՝ քեզ ի հաճութիւն,

Եւ ամենակասկածելի սայթաքումն իմ փոխարկիր

մեծ վստահությամբ:

Ինչպէս ջրհեղեղի ամենակործան դարում,
Ովքեր գետնի հարթ տարածության վրայ սայրում
էին անհոգ, առանց երկիւղի,

Ողորմութիւնիցդ գուրկ մնալով՝ կորստեան
մատնուեցին.

Իսկ հովանաւոր լաստի երերուն յատակի վրայ
Գթածիդ անուամբ ապաւինուածներ
պահպանուեցին, -

Այդպէս, նրանց հետ եւ ինձ մշտերեր աղաչաւորիս
Մարդասիրաբար ազատիր եւ տար դէպի խաղաղ
նաւահանգիստ:

Հոգեւոր շահի վարձն ինձ հետ բերելով,
Եւ իմ բազմաթիւ եւ ստորաքարշ մեղքերս թողած,
Քո առակաւոր խօսքի համաձայն, քեզ եմ գալիս,
Տէ՛ր,

Միանալով քեզ յաւերժ անբաժան, օրհնեալդ
համակ:

Եւ կցորդուելով այս մաղթանքներին հոգեղէններն
ամենամաքուր

Մարտիրոսների հետ այն հողեղէն, որոնք
փորձուեցին հրով ու ջրով,

Եւ մեր փոխարէն խնդրեցին քեզ այս աշխարհից
ելնելիս,

Եւ մեզ յիշատակ թողին օգտակար, -

Մեզ ձայնակցելով, միայն ասեն՝ թող լինի՛, լինի՛:

ԲԱՆ ՁԶ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Բազմազանօրէն շարահիւսուած այս հառաչագին
ու տխրալթախիժ ողբերի փոխարէն

Ողորմի՛ր բոլոր հոգիներին դու, թագաւո՛ր գովեալ

Եւ երկայնամիտ,

Եւ առաւել եւս նրանց, որ չունեն կենաց
փրկութեան ակնկալութիւն,

Ինչպէս եւ նրանց, որոնք ննջեցին ի մահ
անպատրաստ՝ իւղի պակասից հանգած լսպտերով:

Ուստի եւ յիշի՛ր, Տէր իմ գթառատ, եւ այդ
պատճառով տուր ինձ իրաւունք,

Թէ ի փառս ահաւոր եւ սքանչելի մեծիդ՝

Մարդու կազմուածքը բաղադրեցիր դու իրար
հակառակ տարբեր տարրերով՝

Մէկը ծանր եւ միւսը թեթեւ, մէկը սառն եւ միւսը
ջերմ,

Որպէսզի մենք այդ ներհակութիւններն հարթ
պահելով միշտ՝

Նրանց համերաշխ հաւասարութեամբ կոչուենք
արդար:

Եւ այդպէս, առաքինաբար, երբ հոգու հետ
բարձրանանք,

Չմոռանանք եւ մեր խոնարհութիւնը կաւի
վերաբերմամբ

Եւ ընդունենք պսակ ճգնաւորական:

Եւ սակայն, ուխտագանց եղանք այս կանոնի դէմ,

Զիջելով կառուցուածքին մեր հողէտէն՝

անասնօրէն սողալով կպանք երկրին՝

Մէկն իր ախտերով, մէկն անգթութեամբ,

Միւսն ամենաբաղձ կերակուրների իր
մոլութիւնով,

Որպէս մշտաբոյժ գագան շարունակ կապուած
մնալով մեր բնութեան հետ:

Պատահում է մերթ, որ մէկը այդ չորս տարրերից
մեր մէջ,

Անողորմելի, անգուսպ պացքով ոստնելով ի դուրս,

Ամբարտաւանում է վայրենապէս:

Եւ այսպէս եթէ տաքանանք մենք քո սիրոյ
ջերմութեամբ,

Մեր մէջ գտնուող բոցի նշխարով,

Յուրտը առնթեր եւ կենակից նրան՝ կասեցնելով
այն, ընդմիջում է բարուն:

Եթէ էութեամբ հրեշտակային օդանեմ դէպի քեզ
թեւել ուզենք,

Այս առաջնաստեղծ հողեղէն նիւթի ծանրութիւնը
հոծ

Մեզ ցած քաշելով՝ կիսափանի մեր թռիչքը իսկոյն:

Բ

Արդ, ամէն կողմից պարտուած ու լքուած,
Որպէս ապիկար, հաշմուած՝ մերժուեցի, կորայ,
քշուեցի.

Եւ մաշուած իսպառ բազում մեղքերից ի մահ
գլորուեցի.

Որի համար էլ պարգեւներից զուրկ՝ ողորմութեան
կողմն եմ նայում,

Եւ ամօթահար երեսով ե՛ս էլ, որ տէր եմ ամէն
տեսակ մեղքերի,

Աղերսում եմ քեզ բոլոր կենդանի մեռեալների
հետ,

Չի կարող ես միշտ մի հնար անել ինձ նման մեռած
ու կորածներին.

Ամէն ինչի մէջ գօրաւոր ես դու.

Եւ մանաւանդ որ կարենալուդ հետ՝ ե՛ւ կամենալն
է քեզ ախորժելի:

Եւ արդ բարգաւաճ ու կենսանորոգ շնորհներն այս
երկու, -

Կամենալն ու կարենալը իրար մօտ գալով,

Կվերանայ անյոյս վիատութիւնը բոլոր
մեղաւորների

Եւ կգա այնժամ, կհասնի շուտով հոգիներ բուժող

Քո հրամանի լոյսն աւետաւոր, Տէ՛ր ամենայնի,

Օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԶԷՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ ահա, քանզի այս ողբերգութեան կտակը
համեստ հասել է իր աւարտին,

Արա՛ այնպէս, Տէ՛ր, որ ինքնանախատ
կշտամբանքների այս խօսքերիս հետ

Վերջ գտնեն նաեւ ու դադար առնեն
սովորութիւններն իմ չար:

Դու ինքդ յուսադրեցիր դատապարտեալիս,
ասելով՝

"Հայրս չի ուզում, որ կորչի մէկն իսկ այս
փոքրիկներից",

Եւ դարձեալ, թէ՛ "Հօրս կամքն է, որ չկորցնեմ
բոլոր ինձ յանձնուածներին":

Բ

Ահա՛ օրհնուած ես դու գթութեան մէջ,
Բարեբանուած միշտ՝ քաղցրութեան մէջ,
Խոստովանուած՝ երկայնամտութեան մէջ,
Եւ նանաչուած ես այցելութեան մէջ.

Քարոզուած Տէր ես դու փրկութեան մէջ.

Եւ ներբողուած ես առատութեան մէջ,

Պատուուած ես պաշտպանութեան մէջ,

Փառաւորուած ես փրկութեան մէջ,

Երկրպագուած՝ անբաւ բարձրութեան մէջ,

Պաշտուած ես անքննութեան մէջ,

Գովեալդ միակ՝ յաղթութեան մէջ,

Հռչակուած՝ հօգորութեան մէջ,

Խնկաւորուած ես ողորմութեան մէջ,

Համբուրուած՝ անճառ հեզութեան մէջ,

Ճաշակուած ես դու խոնարհութեան մէջ:

Եւ քեզ հետ նաեւ ծնողդ երկնաւոր՝
Աստուած բոլորի մխիթարութեան,
Ընդ որում եւ սուրբ ու բարի Հոգիդ,
Դու, որ սահմանեցիր չանտեսել ընկած գրաստը
թշնամու

Եւ անբանութեամբ սայթաքած մարդուն:
Հօրիդ ինձ ցոյց տուած երախտիքներն ու
առաքինութիւնը մեծիդ՝

Փառաբանողներն անվերջ անդադար տօնում են
բարձրում,

Որոնց հետ, ուշադրութեանդ արժանացնելով եւ
այս ձայնն աղերսական՝

Ընդունէ՛ս այն դու մարտիրոսների
պաղատանքներով,

Իբրեւ հաճելի եւ անուշ բուրմունք,

Եւ այս հաշտարար խօսքի փրկանքով՝

Պարտքերը նախնեաց եւ աներեւոյթ վերքերը
բոլոր,

Հոգին ու մարմինը մահացնող միջիններով ու
վերջիններով,

Ներքիններն ու արտաքինները, դրոշմներն ու
բիծերը

Եւ հատուածների խարանները ողջ բժշկիր,
ամենակարո՛ղ,

Ողորմութեանդ դեղերով ջնջելով ու մաքրելով

Բազմապիսի խայթուածքների հետքերը ամէն,

Որոնք քեզ համար հաճելիների հետ նմանապէս

Յոյց կտան նաեւ գարշելիները մեր բնութեան մէջ:

Գ

Եւ եթէ հասնեմ խորին ծերութեան քո
առաջնորդութեամբ՝ մահուան արժանիս,

Մի՛ լքիր ինձ տկարութեանս մէջ եւ մի՛ անարգիր
մագերս սպիտակ,

Մի՛ կորացնիր կործանուածին եւ կքեալին մի՛
իջեցնի,

Մի՛ ցած բերի խոնարհուածին եւ առկայծեալին
հողմի շնչին մի՛ մատնիր,

Մի՛ բաց թողնի դեղեւոդին եւ մի՛ մրսածին՝
անվերարկու.

Թող չմնայ տագնապեալն անդարման, ոչ էլ
խարխլած տունը՝ անխնամ.

Թող չանպատուի պատկերն հնացած, եւ
պարարտութիւնը չանհամանայ.

Թող որ չանարգուի շուքը շնորհի, եւ հնութիւնը
չքամահրուի,

Թող չալեկոծուի հոգուս նաւն, ու յոյսի
երկարութիւնը չկտրուի,

Թող ուղղալարը չխզուի, ու չխանգարուի
յիշողութիւնը,

Թող չքայքայուի մարմնի կազմութիւնն, ու
բարձրացող թելերը չփետտուեն,

Չուարթ գեղեցկութիւնը չտգեղանա, չքաղուի
պայծառ ճանանչը շողի,

Պատուհաններն աչքերիս չփակուեն եւ ոչ էլ
նրանց լոյսը խափանուի,

Թող չընկնի պատկերը խօսուն:

Դ

Աղաչում եմ քեզ, բարեգո՛ւթ, ու պաղատում եմ
բոլոր սրբերով,

Լսիր այս ամէնն իսկ հիմակուանից, որպէսզի
վերջում չմոռանաս:

Դու եղար ինձ առաջնորդ եւ ազատարար, ըստ
սաղմոսողի,

Հանիր նաեւ ինձ Երգողի հետ, Տէ՛ր,
կասկածանքներից ու վարանքներից,

Որոնցից սաստիկ վախենում եմ ես:

Թէւ արժանի չեմ սովորական կերակուրն անգամ
ստանալու քեզանից որպէս վարձք,

Բայց դու սովոր ես եւ կարող նոյնպէս
ապերախտների՛ն էլ բարեգործել,

Քոնն են ամենայն բարիքներն անճառ ու
զարմանալի

Հրաշագործդ միայն՝ կատարեալ
երկայնամտութեամբ:

Օրհնեա՛լ ես դու Հօր եւ սուրբ Հոգուդ հետ
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԸ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Եւ ահաւասիկ, կոտրուած հոգով, աստիկ
յուսահատ,

Խորտակուած սրտով առջելդ եմ թափում ջուրը
իմ կամքի, կաթիլն արցունքի,

Յիշեցնելով արեմաթացի Սամուէլ մարգարէին,

Որ առնելով ջուրն սկաւառակից՝ թափեց քո
առջել, ո՛վ ամենատես,

Յոյց տալու համար ժողովրդին, թէ

խոստովանութեամբ եւ հնազանդութեամբ

Պէտք է ընկնել գարշապարներիդ կենդանարար:

Բ

Եւ արդ, ընդունի՛ր այս աղիողորմ հեծեձանքներով
հիւսուած խօսքերը,

Եւ այս բանաւոր անարիւն զոհի նուէրն հոտոտիր,
թագաւո՛ր երկնի.

Սրբիդ օրհնութեամբ գիրը մատենանի այս

ողբերգութեան,

Եւ դրոշմիր գրուածքն այս որպէս արձան
մշտնջենական՝

Քեզ համար հաճոյ միւս միջնորդական
մաղթանքների հետ:

Թող որ նա ընդմիշտ մնայ քո առաջ եւ
ականջներիդ հնչի շարունակ.

Եւ շրթունքներով ընտրեալներիդ բարբառի՛ թող
նա

Ու հրեշտակներիդ բերանով խօսի.

Թող որ տարածուի աթոռիդ հանդէպ եւ ընծայուի
սուրբ սրահի մէջ քո.

Քո անուան նուիրուած տանարում խնկարկուի եւ
բուրի՛ փառքիդ սեղանի վրայ.

Թող պահուի հարուստ քո գանձարանում եւ թող
ամբարուի ստացուածքիդ մէջ.

Թող որ պատմուի ազգերին ի լուր եւ ժողովրդի
համար քարոզուի.

Պատկերուի՛ թող որ մտքի դռներին եւ
զգայարանքների սեմերին տպուի.

Իբրեւ կենդանի՝ թող պատմի նա իմ գործերն
անօրէն ու խոստովանի.

Եւ թէպէտ որպէս մահացու պիտի վախճանուեմ
եւ,

Սակայն այս համեստ մատեանովս միշտ անմեռ
կմնամ:

Քո կամքով՝ թող այն անեղծ մնայ, Տէ՛ր,

Եւ պատժապարտիս հանդէպ դատաւոր
դառնալով անդուլ,

Անաչառ կշտամբիչ, համարձակ յանդիմանիչ,

Անխնայ պախարակիչ, անողորք պարսաւիչ,

Անհամբոյր ծանակիչ, անմարդասէր մատնիչ,

Անփրկելի տանջարար, անկաշառ գլխատիչ,

Խստասիրտ հրապարակող, աշխարհալուր

բողոքող, -

Մեծաձայն փողով, առանց լռելու,

անդուլ-անդադար՝
Իմ յանցանքները թող խոստովանի:

Գ

Այս գիրքն իմ ձայնով իմ փոխարեն պիտի
աղաղակի,
Ծածկուածները պիտի բանա եւ գաղտնիքներն
հրապարակի,
Կատարուածները բարձրաձայն ողբա,
մոռացուածները հնչեցնի,
Աներեւոյթները պիտի յայտնի, բարուրուածները
բարբառի,
Դուրս պիտի հանի խորքում եղածներն ու
մեղքերը պատմի,
Անտեսները պիտի մերկացնի, թաքցրածները
ցուցահանի,
Սրանով որսերը պիտի շոշափունեն,
գայթակղութիւնները գտնունեն,
Անպատմելիներն հանդէս պիտի գան եւ ճգնունեն
չարի մնացորդները:
Քո ողորմութեան շնորհիւ, Քրիստո՛ս, կեանքը
պիտի թագաւորի
Իմ ցամաքած ոսկորների գանձարանի
պահեստում,
Որով կենդանութեան գարնանամտի արշալոյսին,
օրը պայծառ նորոգութեան,
Շնորհիւ քո ցողի հոգիս անելով անմահ
փրկութեամբ
Եւ անթառամ վերամբարձութեամբ իմանալի
բարիքների ճիւղեր ընձիւղելով,
Պիտի նորից նոր դալարեմ դարձեալ եւ կրկին՝
ծաղկեմ,
Ըստ ներշնչումովդ գրուած գրքերի
յուսադրութեան:

Եւ քեզ՝ միակ փրկչիդ եւ Հոգուդ՝ իսկակցին քո
Հօր

Միասնական տէրութեանդ եւ Երրորդութեանդ
անճառելի

Խորհրդական գովեստով՝ փանք եւ
երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԶԹ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Աստուած եւ Տէր, կեանք եւ արարիչ,
Ողորմած, գթած, լոյս երկայնամիտ,
Անոխակալ, մարդասէր, ամենագութ,
Պարգեւատու, փրկիչ,
Օրհնեա՛լ, գովեալ եւ բարեբանեալ:
Ամուր պահարան, վստահելի պատսպարան,
Բարութիւն՝ առանց նենգութեան,
Ճառագայթ՝ առանց խաւարի,
Քաւիչ մեղքերի, բուժիչ վերքերի,
Անհասներին՝ հնարք, անմերձներին՝ մօտիկ,
Անյուսութեան ելք,
Անունդ խոստովանուած՝ Աստծոյ որդի:
Քեզ եւ ահաւոր ու հզօր Հօրդ
Եւ քեզ հետ երկրպագելի ամենակալ Հոգուդ
Փանք ու պաշտօն գոհաբանութեան
Յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ղ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա

Բարեբանեալ Աստուած, երկնաւոր, միանկ
արարիչ,
Տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գլխութիւն
օրինաբանելի,
Ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն
երկրպագելի,
Խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն
սօնելի,
Պահպանութիւն խնկելի, բարձրեալ անքննելի,
Մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի,
Մխիթարիչ սրտերի, փարատիչ վշտերի,
ապաքինիչ ցաւերի,
Վստահութեան վախճան, վերացումն պարտքերի,
Փոխարկիչ կարիքների, կարգաւորիչ կրքերի,
Հարմարիչ խօսքերի, սանձահարիչ լեզուի,
Պարփակումն շնչի, հաստատիչ հագագի,
Ամփոփիչ խորհուրդների, կրթարան կամքի,
Հանգստացնող հուզմունքների, հանդարտիչ
մրրիկների,
Եւ խաղաղութիւն դու ծփանքների,
Որ բռնում ես իմ՝ իշխանականիս թելերը ամէն
ուղղութեամբ թռչող
Եւ իմաստութեամբ նուաճելով՝ դէպի քեզ
դարձնում:

Բ

Երախտաւորդ միշտ զովաբանուած,
Դու, որ անհպարտ եւ երկայնամիտ հեզութեամբ
համբեր՝

Անճառ հրաշքով տենչում ես հանգչել մաքուրների
մէջ.

Թագաւո՛ր բոլոր արարածների, ըստ ամենայնի
ճանաչուած, գթած,

Սկզբնահայր եւ նախաշաւիղ՝ սիրոյ ընթացքի
Կեանքի՛ ճանապարհ,

Որ քաղցրութեամբ ես առաջնորդում երկնային
լոյսիդ դիմողիս.

Պաշտպան՝ վստահելի,

Որ չես թողնում ինձ՝ սայթաքողս երբէք ի վայր
տապալուեմ.

Յոյսի՛ կերպարանք,

Որ ճմարտագոյն գրաւականով երեւում ես պարզ
քեզ խնդրողներին.

Ապահո՛վ ապաւինութիւն,

Որ չես մատնում երբէք դատապարտութեան
պատժին.

Ազատութեո՛ւն շնորհաձիր,

Որ տալիս ես լիապէս առանց փրկանքի ու
փոխհատուցման.

Աննախանձ առատաձեռնութիւն,

Որ ճոխացնում ես հողանիւթս անարգ քո
ամենասքանչ փառաւորութեամբ.

Պայծառութեո՛ւն անստուեր,

Որ բարձր ու վսեմ ճառագայթներով
պարածածկելով թշուառիս՝ դարձնում ես կրկին
բարգաւան.

Քաւի՛չ մեղքերի ամենատեսակ,

Որ փրկութիւնից մերժուածիս նախկին
պայծառութեամբ նորոգելով՝ դարձնում ես վերստին
վայելուչ.

Մեծակարո՛ղ դիրահաս,

Որ բոլոր անբաւ բարձրութիւններիցառաջ ես
անցնում.

Ապահո՛վ ճամփա՝ դէպի խոստացուած վայելքներ
տանող.

Անձկալի՛ երանութիւն,
Որի համար հաճելի է թողնել շունչս
կենդանութեան, որպէսզի գտնեմ քեզ, մի՛շտ
կենդանի.

Կամք անփոխելի, գովեա՛լ գորաւոր՝ քաւելու
գերուս.

Կեանքի անսխալ դեղ-սպեղանի,
Որ իսպառ եղծուած մեռելներին իսկ կեանքի եւ
կոչում սքանչելապէս.

Աներկբայելի՛ դու ամենաստեղծ,
Որ հրով կիզուածին, հողմով հոսածին եւ
գազանների ժանիքներով հոշոտուածին

Մի ակնթարթում միեւնոյն մարմնով անպակաս
դարձեալ կկենդանացնես.

Անգուգակա՛ն համարձակութիւն,

Որի համար աստուածանուէր պարծանքով
պարծենալն է իրաւացի:

Գ

Չուարթ քաղցրութեամբ նայիր ինձ վրայ
երկնքիցդ, Տէ՛ր,

Ինձ, որ նեղուած եմ ամենակործան վտանգների
մէջ,

Եւ հանգստացրո՛ւ սիրտս դիւրապէս՝ իր
բազմատագնապ հեծութիւններից:

Վրաս յարձակուող սատակիչներին՝

Դիւսկան դժնեայ հնարքներով սպառազինուած
թշնամիներ լինեն նրանք,

Թէ տգեղագոյն եւ քեզ ատելի այլանդակ մեղքեր,
Եւ կամ սպառիչ ու կորստաբեր ցաւ ու փստերի
հետքեր մնացորդ, -

Մերժե՛ն, դուրս հանես, կտրես, խափանես,
հալածես հեռու,

Վռնդես իսպառ եւ անդառնալի կերպով

կորստեան մատնես վերստին.

Եւ կառուցես, կանգնես դու կեանքի որպէս
նպատակ ամուր մահարձան՝

Նշանը խաչիդ քեզ ապաւինածիս, ո՛վ փրկութիւն.

Դ

Եւ ահաւոր քո մեծութեան այս անպարտելի եւ
անպատիր եւ անհերքելի հրաշքների շնորհիւ

Թող քանդուեն բոլոր սատանայական
որոգայթները գաղտնածածուկ.

Մեքենայութիւնները մերկացուեն եւ չքուեն
գայթակոյութիւնք,

Թակարդ լարողները խայտառակուեն,

Թող երեւան գան խայծերն ու ծուղակները

նենգաւորի,

Վերանան ցանցի ծածկոյթները, որոմների ծիւերը
վառուեն,

Եւ թո՛ղ նգովուեն չարաբանութիւնները բռնաւորի,

Թող կտրուի լարը խաբեութեան ի մահ որսացողի,

Թող կորչեն բանսարկութիւնները պատրողի,

Թող պակասեն զէնքերը զրպարտչի,

Թող ընկնեն սրերը մահաբերների ձեռքից,

Թող սուգուեն սարքերը սադրողի,

Թող արձակուեն պարանները տագնապեցնողի:

Թող այլայլուի կերպարանքը սուտ՝ կեղծաւորի,

Թող սանձահարուեն խիստ յարձակումները

խրոխտների,

Թող ցրուեն միաբանութիւններն ուտիչների,

Թող տրոհուեն տոհմերն աւագակների,

Թող քայքայուեն բոյլերը բարբարոսների,

Թող քանդուեն ամրոցներն ապստամբների,

Թող արգելակուեն ամպրոպներն հանդուգնների,

Թող փարատուեն անձրեւները փորձողի,

Թող հալուի եւ ցամաքի եղեամն աղանդաւորի:

Թող խորտակուի եղջիւրը գոռոզի,
 Թող մանրուէն ձողափայտերը կուռքերի
 դրոշների,
 Թող փշրուէն ամբարիսաւանդութիւններն
 հպարտացողների,
 Թող նահանջէն գրոհները ճակատողների,
 Թող քանդուի՝ միաբանութիւնը Բելիարի թէ՛
 անմարմին եւ թէ՛ մարմնաւոր զօրքերի,
 Մի արահետով եկողները թող եօթ
 ճամփաներով փախչեն շուարած.
 Այն գուրը, որ ինձ համար փորեցին, իրե՛նք թող
 ընկնեն:
 Թող ձանձրացողի ձմեռներն ամառուան
 փոխուէն,
 Թող կտրուի կցորդիչ կապը մշտաջան աւագակի,
 Շողոքորթի համբոյրն իմ ճակատին թուայ թող
 նողկալի,
 Թող ընդհատուէն եւ հեռանան
 նետածգութիւնները նեղչի,
 Թող սասանման մէջ մնայ խարդախի նաւը
 մշտապէս
 Եւ խաժանողի ատամները թող արմատից
 քաշուէն:

Ե

Շնորհիւ օրհնեալ քո կենաց փայտի, որին
 պրկուեցիր, Աստուածդ անբռնելի,
 Բեւեռներիդ յիշատակով, որոնցով մահուան
 գործիքի վրայ գամուեցիր, արարի՛չդ երկնի եւ երկրի,
 Արեամբդ տէրունական, որով որսացիր հսկայ
 վիշապին, կարթելով նրան,
 Դառն լեղիով, որը խմելով՝ ի դուրս թափեցիր
 կորուսչի տուած թոյնը մահաբեր,
 Քո սարսափելի չարչարանքների բաղձալի

պատմութեամբ,

Որով լրբութիւնն հակառակորդի լռեցնելով՝
ամաչեցրիր նրան,

Ամենկնէրուդ ըստ ամենայնի անհասկանալի
անունով,

Որից դողում են ու դատապարտում՝ սոսկալով
սաստիկ սարսափումով

Երեւելի եւ աներեւոյթ էութիւններն ամէն, -
Շնորհիդ պարգեւներն այս բոլոր խոստովանողիս
համար

Պաշտպանութիւն, բժշկութիւն եւ քաւութի՛ւն
լինեն:

Իսկ մահաբեր ու դառնաթոյն այն օձի համար,
Որի միջոցով տեղի ունեցաւ չարութիւնը
տիեզերադա՛ւ`

Սատակման պատճառ թող լինեն նրանք.

Նոյն ինքը դրանցով՝ կորուստի եւ անբուժելի
հարուածի

Տանջանքներին մատնուի թող, կապուի եւ բռնուի:

Ստեղծողիդ ողորմութիւնն ինձ հետ թող լինի,

Եւ շունչն իմ ոգու միանայ քեզ հետ անբաժանօրէն
ամրապինդ կերպով:

2

Եւ ով որ կարդա այս աղերսածայն մաղթանքների
աղօթքները ինդրողական,

Ծեր թէ երեխայ, կոյս թէ երիտասարդ եւ կամ
աղախին,

Ամէն ոք, ով որ աստուածասիրաբար ի քեզ
պաղատի,

Թող որ անխտիր, հաւասարապէս երանութեան
մա՛սը ընդունեն քեզնից,

Եւ ազատուելով իրենց պարտքերից, արատներից
զերծ՝

Վերահաստատուեն նոր մաքրութեան մէջ.
Իրենց հոգու մէջ անփոփոխ կերպով նկարելով քո
պատկերը դարձեալ:
Ուստի, տիրապէս՝ կարող, գորաւոր, անպատում,
անհաս, անիմանալի,
Տե՛ս ահա, լսիր հառաչանքներն իմ այս հեծեճագին
եւ աղերսաձայն,
Որոնք բոլորի շուրթերից քեզ են ընծայաբերում՝
Ի սէր բարերար երկնաւոր քո Հօր եւ քո սուրբ
Հոգու
Կենդանատուիդ եւ փառակցին քո,
Աստուածածնի բարեխօսութեամբ եւ աղաչանքով
բոլոր սրբերի:
Քանզի բոլորին դո՛ւ ստեղծեցիր եւ ամենայն ինչ
քեզանով եղաւ,
Եւ ամէն ինչի դու ինքդ ես տիրում:
Եւ քեզ, որ մէկն ես անժամանակ
Երրորդութեան իսկութիւնից,
Հաւասարապէս փառաւորուած ընդմիշտ,
Փանք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆՂԱՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՅ ԽՈՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

Տէ՛ր, Տէ՛ր գթութեանց եւ Աստուած
ողորմութեանց,
Անուն մեծատառ, ձայն ահեղալուր, կոչումն
ահաւոր,
Համբաւ անպարփակ, բարբառ սոսկալի, հնչումն
հիասքանչ,
Յուսադրութիւն բարերար, ամենողորմ
քաղցրութիւն.

Որից վախեցած սասանւում են ողջ արարածները:
Ահիդ պակուցիչ սպառնալիքից՝
Սաւառնում են սերովբեները ու քերովբեները
թւամփոփւում,
Պարուրում են պարերը լուսակերպների,
Երկնային բոլոր պետութիւնները երկնչում
հիագարհուր,
Ու ցնծում են ողջ երկիւղած դողով՝ նաւակատիքի
բերկրութեամբ:
Չարհուրում դէւերն ու ընկրկում են գնդերը չարի,
Չքում ոգիները խաւարասէր,
Անդունդ գլորում հրեշտակներն օտարի,
Իսաչի նշանով խարխափում են յարձակումները
ընդդիմամարտի,
Փակւում են քինօտ ամաղեկացիք բանտի
խորքերում,
Անլուծանելի հանգուցումներով պաշարւում
խմբերն հակառակորդի,
Մահազէներէի գումարտակները արգելափակւում
գնդանում անգերծ,
Դէւերը պրկւում ահեղ հրամանիդ մետաղների
մէջ՝
Ընդդիմախօսներն ամենայն լռում, պապանձւում
անձայն,
Աներեւոյթների բազմութիւնները պարաւանդւում
են կորստեան հիւծմամբ,
Ու նեղւում անլոյծ շղթաների մէջ առաքելութիւնք
սուտ-քրիստոսների:

Բ

Մթին գիշերուայ այս ժամին ահա ձեռքիս
մատներով
Նշանիդ տեսառնագրութիւնը քեզ եմ կարկառում.
Քեզ, որ ոչ միայն չես մթնում անգիտութեան

խաւարով, ո՛վ ամենատես,

Այլեւ անմատոյց լոյսի մէջ ես բնակւում ու
հանգստանում:

Աղաչում եմ քեզ գոհաբանութեամբ, ընդունի՛ր դու
ինձ,

Ա՛ռ վշտահարիս հօր թելերիդ պաշտպանութեան
տակ,

Փրկի՛ր դրսից եկող պղտոր ցնորքներից,

Մաքրի՛ր սրտիս աչքերի տեսողութեան
զգայարանքը դու,

Կենաց փայտովդ ինձ ամրապնդի՛ր տխուր
անուրջների դէմ,

Արիւնովդ սրսկիր բնակարանիս շուրջ-բոլորը,

Կողքիդ կենարար արեան կաթիլով գծագրի՛ր
ճամփան իմ ելումուտի,

Քառաթելիդ ձեւակերպումը թող պահպանարան
լինի երդիկիս,

Ու խորհրդանիշն ամենափրկիչ քո տանջանքների,

Թող որ դէպի վեր նայող աչքերիս հանդէպ լինի
միշտ,

Չարչարանքներիդ գործիքը թող իմ տան դռան
ճակատին դրոշմուի,

Հաւատքն իմ յոյսի թող որ օրհնութեան ծառից
կախուի քո:

Կաշկանդի՛ր դու, Տէ՛ր, այդ նշանովդ հոգիների
սատակչին,

Եւ թող ներս մտնի առանց արգելքի պաշտպանը
լոյսի,

Ցաւերիս սաստիկ ծանրութեան հետ մեղքերիս
բեռն էլ թելթեւացրու.

Մահճում, մտամփոփ լռարանիս մէջ,

Մտաբերելով յուսահատութեան պտուղները
դառնահամ,

Խոստովանում եմ ամենագէտիդ բոլոր անօրէն
գործերը իմ չար:

Գ

Հանգստացրո՛ւ վաստակեալիս իմ բազմածուփ
աշխատանքից,

Կործանուած ոգուս տարակոյսների տազնապը
ցրի՛ր,

Դառնութիւնը վշտերի հետ եւ հեծութիւնը ցաւերի
հետ,

Անձկութիւնը թշուառութիւնների հետ,

Հառաչանքները խորտակումների հետ,

Սրտաբեկութիւնը ապշութիւնների հետ,

Թմրութիւնը շուարման հետ,

Արբեցութիւնը յիմարութիւնների հետ,

Սառելը սիրոյ եւ հրաբորբոք ջերմութիւնը

ցոփ-ցանկական ախտի հետ,

Օժանդակ եղի՛ր՝ ամենատխուր տարտամութեամբ
տկարացածիս.

Բարեգործ աջով քո շնորհատու, ձեռքովդ
նորոգող, մատովդ կենսաբաշխ,

Մշտափայլ փառքովդ, անեղծ մշտակայութեամբդ,
երեսովդ զուարթ,

Պաշտելի Էիդ իսկութեամբ եւ բարձրութեամբ
երկրպագելի

Կտրի՛ր խեղդուողիս վշտալից հեծեճանքները,

Չարի հնարքը նոր եւ բանասարկուի խարդաւանքը
հին,

Օտար դրդումներն ի մահ մղողի,

Անպատշաճ դէպքերն ամէնօրեայ եղեռնագործի,

Աչքակապ ճարակութիւնները դաժան դելի,

Փաղաքշական բոցաշնչութիւնը գրաւող
կախարդի:

Պահպանի՛ր դու ինձ այս մահահանգոյն
հանգստեան վայրում՝

Թաքուն մտքերից, մասնաւոր սխալանքներից,

Մեծագոյն մոլորանքներից, փոքրագոյն
սայթաքումներից

Եւ չար խարուսիկ ճանճրութիւններից:
Հեռացրո՛ւ յանցաւոր ծառայիս զգայութիւններից
Խորհուրդներ անդէպ, կրքեր բասրելի, վարք
անարգելի,
Դէպքեր անպատկառ, վրիպելի հետքեր,
պատրանքներ ծաղրելի,
Խոհեր անգոսնելի եւ անելորդաբանութիւններ
արհամարհելի:

Դ

Քեզ ապաւինածիս զինի՛ր անսխալ հոգով եւ
մարտիր մարմնով՝
Հողմերի շնչից, բուռն հարուածներից,
Փոթորիկների բախումից, մրրիկների պռոթկումից
Եւ գազանների հարուածներից զերծ մնալու
համար:
Երբ փակեմ աչքերս՝ սրտիս նայուածքը թող
չստուերանայ,
Այլ գուարթանայ, պայծառանայ ու վայելչանայ,
Փայլի թող քեզ հետ, Տէր Յիսուս Քրիստոս,
յուսաւոր վառմամբ անշիջանելի:
Խօսքովդ մաքրիր իմ ննջատեղին՝
Խորամանկութիւններից, երկիւղներից,
Քեզ ատելի յիշողութիւններից,
Աստուածամարտ մտածումներից,
Յանցաւոր խենթութիւններից,
Տիրանենգ անշնորհքութիւններից
Եւ աստուածընդդէմ պառակտումներից:
Խնամակալ լինես ինձ երկնային քո գնդերով,
պետութիւններով
Եւ իշխանութիւններով զօրաւոր ու անյաղթելի,
Որոնք մաքուր մատակարարներ են սուրբ
Աստուածութեանդ.
Առաքեալներն՝ անտեսաց անտարանով,

Մարգարէներն իրենց կտակարաններով,
Եւ վերջին օրը երջանիկների քեզ ընծայուող
մաղթանքներով:

Այնժամ երկիւղով եւ քեզ հաճելի տրտմութեամբ
եւ պիտի նիրհեմ

Եւ քո շնորհիւ բուռն ուրախութեամբ արթնանամ
կրկին:

Եթէ վիատութեամբ ննջեմ նոյնիսկ,
Հոգեւոր բերկրութեամբ պիտի յարութիւն առնեմ
դարձեալ,

Եթէ մինչեւ իսկ մեղքով ընկողմանեմ,
Պիտի կանգնեմ կրկին՝ մաքուր խղճով եւ անաղտ
անբծութեամբ:

Ե

Լսի՛ր խնդրանքներն իմ հառաչալից եւ հեծեճագին,
միա՛կ բարեգութ,

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնիդ
Եւ արդարների բոլոր ու ընտրեալ նահատակների:
Բոլոր կողմերից, քո բարձունքն ի վեր, իմ ձայնով
փառք եմ առաքում եւ քեզ,

Միշտ սուրբ եւ անմահ զուարթունների միջոցով՝
Ի գովեստ քո Հօր եւ մեր Աստծոյ,
Եւ ամէն ինչի ստեղծիչ եւ նորոգող սուրբ Հոգուդ,
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

**ԲԱՆ ՂԲ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՈՍՔ
ԱՍՏՈՅ ՀԵՏ**

Ա

**ԺԱՄԱՀԱՐ ԿԱՄԿՈՉՆԱԿ Ի ՓԱՅՏՆ
ԵՐՉԱՆԻԿ ԲԱՐԵՔԱՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՀԱՐԻՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ, ԱՂԱԶԱՆՍ ԵԴԵԱԼ ԸՆԴ
ԿԵՐՊԱՐԱՆՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ
Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽԱԲՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ**

Գոհունակութիւնս եմ յայտնում քեզ, բարեգութ,
Միակ մարդասէր, երկնքի ու երկրի արարող,
Կենդանի Աստուծոյ Որդի,
Չարթնամ քո յիշատակի սիրոյ անձկութեամբ
Փայտիդ հրաւերով,
Որ հնչեցրիր մեր ականջներին.
Եւ սթափուեցինք, ելանք մահակերպ թմրութեան
միջից,
Կարծես սփոփիչ խօսքի կոչումով՝
Պաշտամունքի եւ օրհնութեան ժամին
Հանդիպելու քեզ ցնծութեամբ
Այս հատուցման բեմի առջեւ:

Բ

Փանք քեզ, ահա, անուն անսահման
Եւ զօրութիւնդ անընդգրկելի,
Որ փրկութիւնն իմ հոգացիր
Հնարներով բազմաքանակ.
Գոհաբանուած անեղծ իսկութիւն,
Որ այստեղ հրաշքով կերպարանեցիր
Նմանութիւնը գալոց օրերի,
Որ վայելչական խաղաղ գործիքով այս փայտե
Որոտացիր սաստիկ, երբ քնամ էի անկանգնելի,

Կարծես ծուլութեան դանդաղութեանը
Խառնեցիր խրատիդ յանդիմանանքը,
Հայրական սիրուդ հեզութեանը
Ճայթման ուժգնութիւն միացրիր.
Երկու միջնորդի ընդոստ հարուածին
Քաղցր անձրեւեցիր մարդասիրաբար,
Փափուկ վանկերի մեղմ նիրհի մէջ չընկղմեցիր,
Եւ կամ անխնայ ահաւորութեամբ
Տառապած հոգիս չզարհուրեցրիր:
Երկրպագութիւն ծնրադրական
Բոլորի ստեղծչիդ,
Որ յստակօրէն՝ ցուցադրեցիր արդէն իսկ հիմա
Յայտնութեան մեծ օրուայ ահեղ գոչումը,
Կենդանացրիր դժոխային անբանութիւնից,
Որոնելով կանչեցիր պակասամիտներին
Ուրախութեան գինուդ.
Սրան դարձրիր անարատ հարսին հանդերձաւորող
Փեսայիդ սիրոյն.
Վախ ներշնչեցիր այս փոքր խթանով
Վիթխարահսկայ սպերասանին,
Կրթիչ ստուար լուծ դարձրիր այս իրը
Ստամբակի ուսին.
Չարախօսի կզակին զսպող սանձ դրեցիր:
Մեծդ Աստծոյ անբաւ բարձրութիւնը
Փառաբանեալ է յաւէտ,
Որ փայտի պարտքերը փոխարկեցիր
Կեանքի շնորհիդ ազատութեան,
Դարձեալ, վերստին իմաստնացրիր
Յնդած յիմարիս՝
Հոգեւոր քո հանճարով,
Կարկառ կրճտումով
Օձի հարուածի անբուժելիութիւնը
Առանց մոռացման բացատրեցիր,
Երրորդութեանդ կերպարանքի հետ
Ինձ վնասողի կապը դարձնում ես եռակի ամուր
Աշխարհի վերջին:

Գ

Ամենախնամ, խունկերի բուրմամբ
Ներբողեան գովք եմ վերառաքում քեզ,
Որ բազմաստուածեան ստապատիր կուռքերից
առաելօրէն
Մեղսական հոգիս՝ դարձրիր քո
երկրպագութեանը:
Խորխտ, ահարկու, նուիրական այս փայտով
Քարոզեցիր ճմարտութիւնը,
Այս պատշաճութեամբ մեծացրիր նոր աւետմանդ
պատիւը:
Հէնց սա զինավառութեանդ բարձրագոյ աղաղակն
է,
Կայսրերի երկրի արքայ, Տէր Քրիստոս:
Քո մարտի աւարտի ուրախ հանդէսի նշանը,
Յիսուս,
Երբ կապկպուեց փարաւոնը իմանալի.
Տաշած այս շերտը գոռոզացած չարագործի գլխի
կատարի
Մշտական նեղիչն է:
Սրանով են Սիոնի որդիները խմբւում
պատերազմում
Ընդդէմ խաւարի աշխարհակալին:
Այս հինօրեայ օծուած արձանը աստուածային
հրահանգների մի տուն է,
Որ չի հնանում եւ անխափան է,
Որ հեռուից եկող նշանն է գալիք հատուցման
Ժամանակի -
Ազգակից ու համանման կենաց փայտին,
Որ Աստոյ դրախտում է.
Կոչման վայր է շտապ ու բարուօք հաւաքումի,
Օրհնութեան վայր է.
Գիտութեան տունկի պատկերակիցը՝
Չարի ու բարու ընտրութեան ունակ,
Եւ մեծ յիշեցում խաչիդ նշանով տեառնագրուելու

Սուրբ Հոգու շնորհով,
Աւետող նախասացութիւն
Սուրբ Թագաւորիդ գալստեան յուսով սպասող
դշխոյին.

Մաքուրների խմբի խրախնանութեան
գոտեպնդող յորդոր.

Անապական սիրարկու անձնահամբոյր միացման
Շքեղաշուք քողագարդ ամենաձին կոյս
Թագուհուն.

Յարդարիչը ծածուկ պննանքի,

Որ հոգու վայելչութիւնն է.

Եւ նման է Սինայի պատգամին,

Որ դուրս էր յորդում Տիրոջից.

Անարատ որդիների մայր,

Պանծալի ու անշաղախ օրիորդը փառագարդուում
էր սրանով:

Դ

Երիքովի եղջերափողից առաւել այս [գործիքով]

Գետնամած տապալեցիր Բելիարի բռնութիւնը.

Փայտէ այս պարսով քար արձակեցիր

Գողիաթի վրայ,

Նորոգ գայիսուն կառուցեցիր

Իբրեւ վկայ սատանայի ահեղ կործանման

Մեղքի խոր անամ արմատները այս գործիքով

խլեցիր,

Իմ մոռացուած յանցապարտ գործերը սրա

երախտիքով ինձ վերադարձրիր:

Թէ այն Բան Աստծուդ գալուստը յայտնող այլ
ձայն անուանեմ`

Չեմ սխալուի, այլ իրաւ կլինեմ

Հոգեկիր նիւթի տկար ամանըս,

Իսկ Յիսուսիդ մեծագործութիւնները
պատմուելով`

Կհռչակուեն առաւելապէս:
Վերուստ պարգւելուած բիւր օգնութիւններ,
Որ դու ես տալիս,
Այս անպատսպար ապաւինութիւնից
Ի գարմացումն՝ երկրայիններին տրամադրեցիր:

Ե

Հանրաճանաչ է բարեխնամ մարդասիրութեանդ
Անունն անքննելի,
Սրբամասն խորհրդով խնկարկուած,
Լոյսի կերպարանք անգծագրելի,
Որ այս կրկնաձիր նշանով
Արձակեցիր հեռաձիգ նետեր՝
Ձայնատրական եւ օդագնայ եւ յարմարընթաց,
Կենդանի հոգի իրենց մէջ կրող,
Որոնցով անսխալ դիպուկութեամբ
Խաւարի աղեղնաւորի գաղտնի նպատակը
Յաւետ կործանմամբ մերժեցիր:
Իբրեւ բարձրամուր պատնէշ բերդամարտութեան,
Կանգուն ու անխորտակելի,
Այստեղից այնտեղ, ուղարկեցիր թշնամու դէմ
Այս փայտի զարկի հունչերը
Իբրեւ կամարար սուրհանդակներ:
Մեծ ակնարկութեամբ քո հրամանի,
Արեանդ խառնուած օծութեան շնորհով,
Հեսանելով սրեցիր մոլի գոռոզի խեթիչ եղջիւրն այս,
Ինչպէս խաչդ փրկական:
Եւ մեծ ազդումից այս աղաղակի,
Երկնայինների ճայնից ակելի
Քանդուեց, վերացաւ ամուր դրանդին
Կարճամիտների անվայելուչ, երկչոտ
վատասարտութիւնը,
Հրէական պատկերացումների
Եւ ստուերական տան կործանման հետ:

Վերընծայում եմ փառաբանութիւն,
 Քեզ՝ անմահ թագաւոր,
 Որ ստեղծեցիր, հաստատեցիր
 Աջով քո հօօր,
 Աղաչում եմ քեզ, կրկին կատարիր:
 Մրանով անցկացրիր
 Մեզնից հերքելով
 Բանասարկուի խորամանկութեան դժնի վտանգը,
 Մեղքի տապը տաժանական,
 Եւ դառն հողմը խաբողի շնչման,
 Մահուան երկիւղի տարրն արկածների:
 Օղի ցնդման վնասակար տխրեցուցիչ
 հետեւանքները,
 Թալկացնող դիւական հեծութիւնները:
 Այս հեծանով, որ քո զէնքն է,
 Նշանիդ թելերի օժանդակութեամբ
 Յրիր վերստին հրաժին ամպերը,
 Եւ կարկտաբեր որոտները,
 Բազմոտանի վիշապի փչումի
 Հրախաւար կեղծաւորութեան ցաւագին ցումունքը,
 Սատակիչ սուրը, յարձակողական մարտը,
 Վայրենի մտքերով գրոհող դեւերի պարերը:
 Այս փոքրիկ իրից զարհուրում են [դրանք]
 Ու մեծ դողումով տեղի են տալիս,
 Հին ծանօթութեամբ յայտնապէս գիտնալով,
 Որ այսպիսի ճայնից է Տէրն ելնում դատելու
 Եւ հոգեպէս խրախուսւում են արիութեամբ
 Ամրապէս կզինուեն Հոգու սուսերով՝
 Մարտիկները բոլոր աստուածարեալ.
 Այս յիշատակի կանոնով,
 Որ անպատմելի գոչմամբ
 Բոլոր ազգերին կազդարարի
 Երջանկաբար նահատակուելու օրինաւոր ասպարեզում
 Ամէն ինչ փորձող հրի դատաստանը:

Է

Ահա հնչեց աւագ փողը,
Որով համբարձաւ Աստուած օրհնութեամբ,
Պատմուեց սրանով ամէն մի երկրի,
Հնչեց ասկանջին աշխարհասփիւռ հեթանոսների,
Մեծ [Սիոնի] պահապանների ձայնը բարձրացաւ՝
Եսայիի խօսքի համաձայն,
Եւ նոյն բարբառով կցնծանք բոլորս:
Սրանով խաչի թշնամիները ցնդեցին ջրի առակի
նման
Անպատուուեց առաջին փայտի պտղի ճաշակումը,
Խորհրդաւոր նիւթն այս տօնուեց՝ կոշուելով
կեանքի [փայտ],
Անարգուեց երկաթը պատերազմական,
Ինչպէս Տիրոջ սրբութիւն
Ձիու սանձի վրայ
Մեծ նշանի կենսաձայն փայտն այս
յարմարեցուեց.
Երկնային հովուի այս օծուած ցուպով
Պատեան դրուեց մարդկային ձեռքի
իշխանութեան սուրբ:
Տաճարի վեմին քարտաշի մուրճ չգործեց
Իսկ աստուածակերտ խորանների մէջ
Փայտն այս նուիրական
Սլանալով խաչի թելերով՝ զօրաւոր է:
Ոչ թէ ամսագլխին,
Կամ եօթն անգամ եօթ յոբելեաններին
Մի անկիւնում խափանուելով է փողհարում,
Այլ տիեզերքի չորս ծագերում
Եւ ծիրերում եզերքների,
Ծովերի անտակ ջրերի ծոցում ու կղզիներում,
Մեծ սաստկութեամբ,
Ինչ-որ աստուածային անարգել ճայթումով
Աւետելով հնչում է:
Այս փայտի յայտնութեամբ

Կոտորուեցին աստակողի սուսերները,
Մեզ համար անօգտակարությունից
Ձեւափոխուելով խոփերի ու մանգաղների:

Ը

Չհնչեց արձագանք խոր անձաներից
Եւ ոչ օդը վիրաւորելով դժնդակապէս՝
Ըստ օտար մի իմաստակի,
Ոչ անախորժ սրութեամբ ականջ մտնելով
Եւ ոչ ուղեղի ամանը չար տհաճութեամբ
թնդացնելով,
Ոչ մարմնին ոսկոր խրտնեցնող փուշ բուսցնելով,
Եւ ոչ միտք այլայլող ապշութիւն առաջացնելով,
Ոչ պղնձանիւթ զանգ հնչեցնելով,
Եւ ոչ քարը սալարկի հետ տհաճ զարկուելով:
Նոր այս Միոնի անխորտակ պարիսպ՝
Սա արարչաւանդ գլխաւոր սպասքներից է,
Որ քրիստոնէայ եկեղեցականները
Դեւտացիների հետ խնամում են զգուշօրէն
կրելով,
Հրեշտակի ձայնի օրինակով,
Որ առակողի խօսքը այսպէս տպաւորեց
Հաւքի կանչի նմանութեամբ:
Աւետման նոր շնորհալի նուագարան՝
Աստծոյ հոգին առ մեզ արթնացնող,
Քան թէ Սաղմոսարանի օրհնութիւնը Եղիսէի
վրայ.
Նախընթաց սկզբնապարող է նա
Բարետաւիդ ողբերգութեանց յարմարալար
ջութակների,
Բամբռի բառացի բարառնութեանց բարքը
պատկերող.
Մի այլ տեսակի նոր սրինգ տրուած մեզ
Հնի փոխարէն,

Ոչ թե հեթանոս ուրվաձայն հնչման,
Կամ հրեական խակամտութեամբ,
Որ Տիրոջ ազդմամբ մերժեց մարգարեն՝
"Հեռացրո՛ւ ինձնից",
Այլ սիրեց սա ու կրկին պատուեց մաքուր հոգալով
Իրբեւ ահարկու դեւերին ու չար պատահարներին:

Թ

Եւ արդ, ստացայ օրհնաբանութեամբ,
Յարգանքով գովեցի սրբութեան այս տուրքը՝
Ինձ պահպանութիւն, փառատրութիւն քեզ,
Քեզ պաշտամունք եւ ինձ գոհութիւն,
Անթերի կերտուածք արարչական բարձր փառքիդ:
Աստուածարեալ այդ ձայնը թող մտնի
Յօղերս շաղկապող պատուաստի մէջ,
Հանելու հոգուցս դեւերի խաբէութիւնը,
Ստացած անէծքներն ու գազիր մեղքերը:
Այս իմաստաւոր առարկան դարձրու
Չահավառ ջնար, անջրելի նամակ,
Անխափան ջատագով քո տէրունի
սնօրինութիւնների:
Ահա սրանով պարգեւիր, բարեգութ,
Աղաչում եմ, հօօր,
Մեզ կրկին շնորհիր պահպանութիւն
Աներեւոյթ ու երեւելի թշնամիներից:
Ամենալի ձեռք, տուր մեզ,
Որ բաց ես անում եւ մատուցում ես սիրով
բաշխելով
Այլեւայլ բաներ,
Օղի քաղցրութիւն եւ անձրեւների
օգտակարութիւն:
Ըստ Քո հրամանի սրա բարբառով թող
պակասեն՝
Տապախառն հողմ, ցաւաբեր փշում,

Գրոհները չար, խարդախ հէների,
 Խափանուէն սրանով բոլոր
 հակամարտութիւնները
 Դժնի մատնիչի զօրքերի,
 Հալչեն, վերջանան, մեռնեն
 Երջանիկ օծեալ այս փայտից որդ եւ ուտիճ
 Եւ բոլոր նմանները,
 Որ զօրանալով մեր մեղքերից՝
 Կռոււմ են մեր դէմ:
 Սրանով յոյսիդ երանութեան տունկն
 արմատացրու
 Մեզ պաշտպանելու, ստեղծիչ բոլորի,
 Արարածոց Տէր, Մաքելի ծառն այս,
 Որի ոստերից կախուած է, Քրիստոս, քեզանով
 ծաղկած
 Նոր սուրբ աւանդը արդի փրկութեան,
 Պտուղը կեանքի անվախճանական:
 Այս փառատրելի փայտի բարեհունչ
 ձայնարձակումով
 Խորին խաւարի անհուն հեռուները փախչեն
 Խարդաւանող բազմաձեռք ստապատիր
 ստորնականների
 Ներհակ չարքերը:
 Հերքուէն սրանով մեր սահմանների
 Ստորադրուած, ընտիր-պտղաւետ
 անդաստաններից
 Եւ քո մշակուած կենդանի երկրից՝
 Վատնիչ վերքերն ու մորմոքեցնող
 [միջատի] հոյլերը,
 Սրանով հատուէն յաւելուած պատահարները՝
 Կրկնատգեղ կամ վայելուչ,
 Որ գալիս են մեզ չարի հնարներից.
 Իսկապէս վտարուէն սրանով,
 Այն ինքնաստեղծ բաները, որ երկակ մեր
 բնութեան մէջ
 Վերերեւում են իբրեւ մերձաւոր դաւաճան,

Մէկին վրիպակ, օտարոտի մտածումներ,
Միւսի մէջ՝ ապականող կեղտոտ գեռումների
Գարշ գոյացումներ.
Փրկիր, Տէր Յիսուս, աղաչում եմ քեզ,
Փրկիր, բարերար, ինձ մեկնիր աջդ ամէնքից
գովուած,
Օգնելով սրանով՝
Ազատիր բոլոր թշնամիներից:

Ժ

Հրամանդ թող խառնուի, միանայ սրան,
Հիմարացած ադամանդէ սիրոս փոխարկելու
Դէպի քո խօսքի արդիւնատրութիւն:
Քո սքանչելիքի հրաշքի նեցուկն այս
Խփես, մխրճես ծորած սրտերն ու լքուած
հոգիները,
Ամրապէս կազմելով հաստատես
Ուղիդ, անասանելի լինելութեան,
Իսկ անշարժին կակղեցնես, որ գարթնի
Եւ զգաստ լինի հեզ հոգով
Քո աստուածութեան պատուիրանի հանդէպ,
Պօղոսի ու Մատթէոսի նման:
Մարդասէր, յիշեցրու այս պատուեալ փայտով
Երախտիքները քո խաչի,
Որով անճառ գործեր կատարեցիր,
Իմ միջից հանիր, ապրեցնող, մեղապարտութեան
վտանգը
Նոր տապանակիդ պանծալի լծակներով:
Հօր, քո կամքով բացուի կեանքի այս ճայնին
Սրտի ականջը յամառողների,
Խուլ ականջները լսեն ականարկութիւնդ մեծ այս
բարութեամբ,
Սրա միջոցով պարգուի լեզուն համրացածների,
Լուսաւորուի տեսողութիւնը աչքերի՝

Մաքրապէս նայելու քեզ անայլայլ պշուրեամբ,
Կազդուրուի, գղջայ, դարձի գայ կամքը
ձանձրացածների:

Տէր, տազնապածիս ընձեռելով տուր
Արցունքի անձրեւ:

Սա քեզնով լինի մեզ ցնծութեան լուր,
Ուրախութեան ձայն, բերկրանքի բարբառ,
Հանգստեան նուագ, երանութեան նիւթ,
Փրկութեան պատճառ, քառութեան առիթ,
Վշտերի հերքում, խեղդումի խզում,
Եւ արձակութիւն նեղութիւնների,
Կրճատում խեթման, հերքում հեծութեան,
Թառանչումի թերեւացում, կարիքից
սպահովութիւն,
Կրքի կարգաւորում, վիատումի սփոփութիւն,
Բժշկութիւն ցաւերի, հեղգութեան մէջ
համբերութիւն
Եւ ուշադրութիւն անտես բաներին:

ԺԱ

Անխտտոր ու անխտտորնակ այս ցանկալի
կամրջով

Եւ վերնաշաւիղ բարձր սրբագնա երկնաչու
սանդուղքով

Քո օրհնաբանուած, ահեղ անունով

Հօր մօտը տանես

Բարեբար, Հոգուդ առաջնորդութեամբ

Միանալու քեզ անբաժանելի,

Որով եւ սուրբ մէկ ու միակ,

Միասնական տէրութեանդ

Եւ անեղծ արարչութեանդ ստեղծած

Կենդանիներից ու անշունչներից, վայելուչ
գոհութեամբ՝ Փառք եւ իշխանութիւն

Յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԲԱՆ ՂԳ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Ա ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՂՕԹՔ ՄԵՌՈՆԻ ՍՐԲԱԼՈՅՍ ԻԻՂԻ ՄԱՍԻՆ

Սուրբ եւ սեւաւոր անուն անպատում, բարձրեալ,
Միշտ ախորժելի, անձկալի փափագ,
Սրբերգու փառատրոդներից միշտ սրբաբանուած,
Որ բնակուում եւ սուրբ վայրում,
Լի ամենագեղ բարութեամբ,
Առատաձեռն աննուագելի,
Լոյս բարի եւ ծագումն գովելի,
Երկրպագուած փառաւորութիւն,
Ահեղ եւ անգննելի, ամէն եւ ամէն ինչի մէջ:
Դաշն յոյսի այս խօսքով
Քեզ միանալու ուխտ եմ անում,
Հօր, այո, ամէն, պելուիա,
Հանուրի գովեալ թագաւոր,
Բոլորի Աստուած, գոյերի ստեղծիչ եւ կամարար
սէր,
Միակ առիթոյ պատճառուածների,
Փրկիչ եւ օճեալ մշտապաշտելի:

Բ

Ուստի մեկնութեամբ պարգաբանելով մեզ համար
Անվախճան այս գանձը ու անփոխադրելի
հարստութիւնը,
Յիսուս Զրիստոս, երկնային արքա, որին մեծ
դողով սպասարկում են
Ահեղ անմահների լուսաբերան
բոցաշնչութիւնները,

Խոնարհուելով կամայօժար, անխտոր մտքով,
Գոհությամբ ծունր եմ դնում, ստեղծող
Էութիւնների,

Որ կան տեսանելի եւ ծածուկ:

Որ ես եւ էիր միակ բովանդակը՝ անպակասելի
ամենեւին,

Մեր [պատկերն] առատ, իսկապէս համայն,
Որպէսզի քո լրութիւնից լրացնես,
Օրհնեալ եւ բարեբանեալ, յաւէտ ճանաչուած,
Միշտ անքննելի ողորմութեամբ՝ մեր փրկութեան
համար,

Ի փառս եւ գովեստ անճառ բարձրութեանը

Ահաւոր բարերարիդ:

Սկզբնաձիրդ մեր օժման շնորհի

Մեծախորհուրդ հրաշագարդութեան,

Քանզի քո լոյսը ճանաչեցինք,

Անհաս ճառագայթ, անսահման ծագում,

Հաւասարասփիւռ արեգակ,

Երկակշիռ տարրերի սահմանագատ աստղ,

Ոտքի ճրագ եւ ընթացքի լոյս,

Որով այս խօսքիս յարմարութեան տեսութեամբ

Տօնում ենք հրեշտակական պարերգութեամբ,

Յստակ մտքով, փրկչավայելուչ կնդրուկով

խնկելով

Ամենիմաստիդ առատ պարգեւաբաշխումը,

Անբիծ դաւանման գուարթ իւղով:

Քանզի հէնց սկզբից կողոպտուեց իբրեւ

շնորհուած

Բարձրագոյն շնորհից,

Ողորմելի տխրութեամբ,

Սկզբնաստեղծ հայրն իմ,

Գերի մեղքերի՝ մահուան մատնուեց,

Անզերծ հանգոյցով կապուեց մերժելի

սպականութեան,

Ծառի պատճառով՝ անկումն անդարձ
ամենակործան գլորման,

Լոյսից մերժուելով՝ մատնուեց այս խաւար
վայրին:

Իսկ դու, գթած տէր ողորմութեան,
Աւելի քան նա ճանաչեցիր նրան, որ ստեղծեցիր,
Չեղածի ակնկալութեամբ չմնաց այնտեղ,
Ուր էր նախապէս,
Դառնալով անկարող տեսնելու լոյսը
Անսահմանելիիդ վերին անմատչելի
գերակայութեան,
Ոչ թէ մշտափայլ յարատեւ վառմամբ
Տարածեցիր [լոյսն] անադօտ,
Այլ գիշերի մթութեան մէջ, որ սայթաքում են
ոտքերը,
Ձեռք բերիր ձեթն ու պատրոյգի նիւթին հիւսելով՝
Օրինակ տուիր անախտ միութեամբ մեզ
միանալուդ,
Մարդասիրաբար հիւսելով կազմեցիր.
Որպէսզի կանխակորուստ ծառի պատճառով
Մահու ստուերով տարագրուածներս,
Նրա ազգակից պտղի պատճառով
Չահաւորուելով հաւատի վառմամբ
Վերստին դառնանք նոյն խնկարկութեան,
Ինչպէս որ մահուան փայտին կապուեցիր,
Մեզ նոյնպէս նրա մօտ տարար կապեցիր,
Մեծ խորհրդի օրինակով միաւորուելով կենաց
փայտի հետ:

Գ

Արդ, ինչպէս օրը թերի է առանց գիշերի,
Նոյնպէս է տնտեսութիւնն առանց հարկ եղած
ձէթի,
Քանզի ինչպէս սովորական, ոչ նուիրական
Իւղն է լուսաւորում մարմնական անջրի
տեսողութիւնը,

Նոյնպէս անհմանալի կերպով
Քոյինաշունչ շնորհի ընտրութեամբ մաքրուածը
Աներեւոյթ հոգիները միաւորում է մեզ
Հրաշափառապէս պայծառացնելով:
Եւ ինչպէս իջնելով սուրբ աւագանի լուսարանը,
Մարմինը լուանալով՝ հաւատում ենք, թէ
սրբութիւն ենք ստանում,
Այդպէս իւրի օծումով յուսավառուում ենք,
Սրանով կարծում ենք անտարակուսելիօրէն
Հոգու զօրութիւն ստացած:
Եւ ինչպէս օրհնաբանելի տէրունական հրամանդ
Նախավճռում էր մեղքերի քաւումն
ախտացեալների,
Իսկ դրան չհաւատացողների հանդէպ
Հրաշալի բժշկութիւն անելով՝
Մարմնական աչքով տեսանելի,
Հաստատում էիր վստահելի վկա,
Այսպէսեւ այս իւրը՝ կատարեալ փրկութեան
լոյսով,
Լցուելով մեզ վրայ՝ օծում է մեր խորանն
արտաքին,
Իսկ ներքին մարդու մէջ մտնելով ոչ ակնյայտ, այլ
ծածկապէս՝
Նոր կենդանութիւն է հաղորդում:

Գ

Նիւթի զանգուածն այս երկնի արարչիդ
Պատկերն է պանծալի.
Քանի որ ովքեր իւրի օգուտն ստացան,
Ստացան եւ ողորմութիւն,
Եւ ի զովեստ քեզ դու սահմանեցիր սա՝
"Ողորմած եմ ես, Տէր",
Որովհետեւ ինչպէս սիրոյ հետ նոյնացնում ես
Աստուած անունդ

Նոյնպէսեւ մասամբ կոչուում ես սրանով,
Մեզ պարգէնուածով
Ճարպան այս վեհագոյն մեծութեան խորհուրդն է
կերպատրում
Թանձր երկրային հողանիւթ գոյացութեամբ:
Որովհետեւ կենդանու այս մասը ուտել չէր
թոյլատրում,
Ըստ հին Օրէնքի,
Այլ արարչութեանդ [արժանի] պտուղ էր
համարում,
Նոյնպէս եւ այստեղ,
Որպէս Տիրոջը մատչելի գորութիւն,
Վայելչապէս նուիրում է Աստուած Էփդ,
Հանութեան աւանդն այս՝
Հոգուս հարագատ զուգաշաւիդ,
Ուխտով պահուած է Արարողիդ:
Քանզի իմ հոգու օրինակն ու կարողութիւնը՝
Անշունչ արիւնը եւ զուարթութեան ճենճերը
[Մատաղի] մսի հատուածների հետ չեն ոչնչանա,
Այլ վերին արքայութեանդ են ձօնուում ճաշակման,
Այդպէս՝ այս նիւթը ջահաւորական
Մշտարորբոք ու անաղարտելի:

Ե

Անդրանիկն արու չէր կարող լինել
Դատաքննութեանը՝ նախագահող՝
Առանց օծումով դրոշմուած լինելու,
Եւ չէր կարող անկոխելի տեղը մտնել
քահանայութեան,
Եթէ սրանով կատարեալ չլինէր:
Օծումով կնքելով քարը,
Որ խորհրդանիշն էր ընտրութեան խորանի
Յակոբը երագում տեսաւ յարմար սանդուղքը,
Որով իջնելը անճառ բարձրեալիդ

Եւ իմ ելնելը խորհրդանշուեց.
Նա վէմ կանգնեցրեց եւ օծեց իւղով
Ի ցոյց, յիշատակ գալոց օրերի:
Ահարոնի քահանայութեան պայծառութիւնը
Մեծոյ Աստծոյ հրամանով օծմամբ էր նոխանում,
Որով գլխից դէպ մորուքն իջնող գերափառ իւղը,
Ըստ Սաղմոսողի զարմանազան
նկարագրութեան,
Նախահօր փառքի վերադարձն էր
Եւ կեանք բաժանող քո սուրբ շնորհի
Գիրկընդխառնումը մեր բնութեան հետ:
Թագաւորութիւնը պանծալի չէր քո ստեղծած
պատկերով,
Թէ իւղի եղջիւրով չձեռնադրվեր
Պճնութեան թագ ու պսակով,
Յանուն քո, Քրիստոս,
Վեր չբարձրանար:
Եւ ինչպէս մոռացա վեհերից առաջինին,
Մեծութեանդ ծառային եւ անպարագրելիիդ
պատկերին,
Մելքիսեդեկը չէ՞ր՝ ահաւոր ճշմարտութեանդ
օրինակ,
Զիթենեաց լեռան վրայ,
Ուր յետոյ կանգնեցին
Մարմնացած Աստծուդ ոտքերը,
Այն վերին հրեշտակների ձեռքով
Այստեղի պտուղներից օծուեց,
Ուստիեւ նախահօր շիրմի պաշտպան նստեց՝
Քեզնից եպիսկոպոսական արքայապատիւ
նոխութիւն ստանալով,
Մինչեւ յայտնուեցիր իբրեւ կատարեալ իսկութիւն՝
Ունակ Ադամին կենագործելու:

Արդ, որովհետև քոնն է շնորհը
 Եւ քեզ է վայել գոհաբանութիւն,
 Ո՛վ օրհնաբանուած Որդի Աստծու,
 Դու յարմարեցրու իմ բարենշմար աղաչանքները՝
 Իւղաւոր, խնկապատար ու գմռալիք
 Քեզ պատճառ փառքի,
 Ինձ՝ մեղապարտիս, բուժուելու առիթ:
 Տէր Յիսուս, աներեւոյթ վերքիս մօտեցրու
 Ձէթն այս լուսանիւթ
 Եւ մահացու խոցի այս խարանին դիր
 Իւղիդ օրհնեալ կաթիլներ,
 Քո սիրոյ անապակ փրկարար գինով,
 Արարչական միութեամբդ
 Խնամքի պատանքով պատսպարելով,
 Որ մաղթական խօսքի մեկնողական շարադրանքս
 Մի վայելուչ յարմարութեամբ քո Հոգու թելերով
 Իր կարգը գտնի:
 Բարձրեալ, քո հոգին Դաւիթի վրայ իջաւ այն օրը,
 Երբ որ օծումով նուիրագործուեց.
 Սաւուղն այլ մարդ դարձաւ
 Եւ մարգարէների շարքը դասուեց,
 Երբ իր գագաթին օծում ստացաւ.
 Ատրեստանցոց արքայութիւնը
 Օծմամբ գրաւուած՝ կցորդուեց տանն Իսրայէլի.
 Կայսրեր մի քանի՝
 Նշանաւոր, վեհ ու երեւելի,
 Խուժիկ, բարբարոս ազգուցեղերից,
 Կենսացնցուղ ցողով անձրեւած այս իւղը
 Որաց, ինչպէս կարթով, ընտանի դարձրեց
 Մեծիդ Աստծոյ հպատակութեան:
 Երկնային պատուասիրութեան՝
 Կիրոսին ուղղուած խօսքից
 Օծեալ հորջորջումը մեծ համարուեց

Եւ Սաղմոսողը մարգարէութիւնից նախընտրեց
Օծեալ կոչումը՝ տարբերակեց ու
սահմանագատեց,

"Մի՛ դիպչէք նրանց եւ մի՛ մեղանչէք":

Քորերում Եղիային Աստծուց առաքելութիւն
շնորհուեց՝

Օծելու Հեռին ու Ագայելին,

Որ նշանակում էր հրաժարեցնել

Բահադի պաշտամունքից:

"Փեսայիդ անունը թափուած իւղ է" հոգելից

խօսքով

Վերավկայել է իմաստունը,

Նախապէս գրուեց

Հոգին, որ Աստծոյ ճիշտ պատկերն ու նմանակն է,

Քեզնով փոքրի մէջ մեծդ է պատկերուած,

Շնորհդ ստանալով միանանք քեզ հետ:

Է

Այլեւս ինչու յոյժ երկար ու մանուածապատ,

Հեռու, գծագրական եւ այլաբան շարադրեմ

Վերինիդ ու ահաւորիդ առջեւ

Աղոթական բանաստեղծութիւն:

Տէրդ եւ կենդանարարդ,

Արարիչդ երկնի եւ երկրի,

Օծումից յետոյ սկսեցիր քարոզել արքայութեան

Աւետարանը,

Այն օրերից վկայուելով Յովհաննէսի միջոցով

Իբրեւ օծեալ գառն Աստծու

Եւ վերացնող աշխարհի մեղքերի:

Թէպէտ քո օծմանը Հոգին էր բովանդակ

էութեամբ,

Խառնուած աստուածութեանը ամբողջապէս,

Այդ [օծեալ] անունը պաշտում է իբրեւ

խորհրդանիշ

Սրբերի մէջ հրաշափառօրէն ազդող շնորհի,
Որպէսզի ադամական մարմինը ստրկացած
Պատրաստ դարձնես այս հորջորջումով
Միանգամայն բարձրանալու:
Բանալով Եսայիի մարգարէութեան
այլաբանութիւնը
Դու ինքդ՝ մարդացած աստուածութիւնդ
կարդացիր
Հաւաստելու քո ծառաների խօսքը, Տէր,
Եւ երբ օծութեամբ նանաչեցիր խօսքը, թէ
"Տիրոջ Հոգին ինձ վրայ է, որով հէնց ինձ օծեց",
Յետոյ փակեցիր
Որոշեցիր երկու հաւասարափառ օծեալների
որբանութիւնը,
Խտրոցով նշեցիր սահմանի ընդարձակ
հեռաւորութիւնը
Եւ կնքեցիր,
Մերը միայն մի կաթիլով շնորհագարդելով,
Իսկ քունը բացատրեցիր Հօր եւ Հոգու հետ
Կատարեալ հաւասարութեամբ:
Մեր կերպարանքով երբ յայտնուեցիր՝
Օծեալ կոչումով, գովեստով իբրեւ,
Փառաբանիչ հրեշտակները
Երկրային արարածներին ծանուցեցին,
Որ մարգարէն նախապէս գուշակեց
Յորդանանում եւ ընտրեալ լեռ Թաբորում
Հօր ձայնի գալուստը, թէ
"Մարդկանց շրջանում պատմում է իր օծեալի
մասին":
Որ եւ Սաղմոսի ձայնն է պատմում կանխաւ.
Հգօրիդ այս փառքն ու պատիւը՝
Տրուած ձեռնադրութեամբ ստացածդ մարմնի.
"Օծեց քեզ, Աստուած, քո Աստուածը
Իւղով ուրախութեան":

Ը

Մարգարեի "Մեր հոգու շունչը" խօսքը,
Տեր Քրիստոս,
Որ իսկական օծեալ կոչումն է,
Որով կենդանության շունչ ներարկեցիր
Լոյս բարերարութեամբդ՝ ի դէմս մեր.
Մի երջանիկ իմաստուն խոստովանելի
մարդասիրութեամբ
Մէկին ասել է, թէ Տիրոջ օծեալի առջեւ վկայեց.
Նորից ակետեց "Անգամ կոշիկ չվերցրի բոլոր
մարմնէղէններից":
Երգերի երգը սուրբ եկեղեցի հարսին գովելու
համար
Աստծոյ ցոյց տուած խորհուրդը լուսաբանում է
Համեմատելով իւղեփողական գինու հետ՝
Չմուռն առաքինութեան, առաջին իւղով
հանդերձ,
Եւ գմուռս ու կնդրուկ մաքուր վարքի՝
Ամէն տեսակ անուշաքոյր փոշիներով ու
Իւղով շաղախած,
Առաջ բերեց այնժամ ու ածմ եւս:
Քրիստոս, երկնքի թագաւոր,
Դանիելը կենսատու մահոյ յստակ գուշակեց,
Քեզ անուանադրեց գերագանց բառով,
Եւ յորջորջեց քեզ օծեալ առաջնորդ.
"Օծեալը կապանուի վաթսունինը եօթներեակ
յետոյ":
Բարեքի որդի Ադովեան Չաքարիայի ճրագակիր
աշտանակին
Իւղի բարերաշխութեամբ վառուող եօթնմասնեայ
գնդերից
Քո լրութեան մասին՝ յանուն մեր փրկութեան եւ
օծութեան
Նախապատմեցիր գերբնականօրէն:
Ըստ հին օրէնքի գուշակելիս,

Տաճարի մէջ, խորանի առջեւ
Ամենընտելութեամբ սովորոյթ էր մատուցելու
Բաղարջարիլիթներ, իւրով խառնած շարմաղալիւր,
Իւրով օժած մատաղ եգներ,
Որ կոչուում են տիրոջական,
Եւ որոշ հաւքեր՝ թաթախած Ճարպին ազգակից
արեան մէջ:

[Այդ ամէնը] սրա խորհրդի յայտնի նշան են,
Որ յարմար են քեզ,
Մեծ Աստծոյ Միածին ծնունդդ օրհնաբանեալ,
Միայն դու ես օծուած նոր ու զարմանալի՝
Ինքնութեամբ, ամբողջ էութեամբ,
Իսկապէս լրմամբ
Եւ ամէն ինչով անպակասելի:

Թ

Եւ ի՞նչ կարիք կայ բազմապատկելու
Անհասանելի այս մեծ խորհրդի գուգակշիռներ
Եւ չճաշակել քեզ, ո՛վ քաղցրութիւն,
Քեզնով իմանալ, թէ ինչ է իւրն այս,
Որ մեղքի փայտից եկած տխրութիւնը
Նրանով ես բուժում, գուարթացնում, ըստ
Սաղմոսողին
Կամ պարարումը, որով մոռանում ենք մահացու
կերը,
Կամ օծութիւնը, որով մոխիրի թշուառ տեսքը
Սրա միջով պիտի փոխարկենք
Յաւերժ ինդութեան պայծառութեանը:
Եւ փրկուելով քո անուամբ, գորութեան Հոգով
Պիտի որդեգրուենք Հօրը:
Եւ մարգարէի հոգեւոր ըղձականութիւնը,
Եւ բաղձանքը ամենատենչ
Իր ծերութիւնը պարուրուի ձեթով,
Կամ գլխի կատարը օժանել իւրով:

Հին խարդախութիւնը սաստիկ սուգի,
 Մահի ու կործանման,
 Կեանքի այս դեղով չկենագործուի՝
 Պատսպարելով պիտ օժանդակես.
 Եւ ո՞րն է ճրագի լուսաւորելուն շնորհակալիքը,
 Եթէ ոչ մեղքի անհասութեան մէգի եւ
 կռապաշտութեան խաւարի մէջ
 Կերպակցելով միաւորեցիր ինձ հետ իբրեւ
 Էմմանուել:
 Եւ կամ ինչո՞ւ մարգարէն, որ աստուածաբանում է
 Սփոփիչ ու գուարթարար օրհներգութեամբ,
 Յստակ ու վայելուչ աւետում է ոմանց,
 Թէ "Կօծուեն իւղով՝ մրուրից մաքրած":
 Կամ իմաստունը հարսի անունից ասում է
 օրհորդներին.
 "Ինձ իւղով զօրացրէք եւ ծածկեցէք
 Գեղեցկազարդ խնձորով",
 Եւ "Ձիթենեաց պարտէզ տանելով գրկեցէք",
 Թէ ահաւասիկ այս ընտիր նիւթով, քո Հոգով
 լցուած չլինէր,
 Այս լոյսով կտեսնէինք, գովեալ, անիմանալի քո
 բարձրութիւնը,
 Եւ այժմ քեզ, միակ խնամակալ,
 Բոլոր ստեղծուածների բարի պատճառդ,
 Ձեռք եմ կարկառում ես բազկատարած,
 Գործակցութեամբ երիկամներիս, սրտիս
 հեծութեամբ,
 Լեզուիս ու շրթունքներիս ձայնարկումով.
 Լսի՛ր ողորմութեամբ, տէր,
 Քեզ ուղղուած խնդրանքս պաղատական:
 Պարզեւներով այս շնորհուած
 Իմ գոհութիւնն եմ քեզ վերառաքում,
 Հօր, ահաւոր, բարձրեալ, անքնին,
 Եւ միշտ համբուրում անտակ փափագով,
 Սուրբ, սուրբ եւ միակդ միշտ սուրբ,
 Մշտապէս օրհնեալ՝ յաւերժ, անդադար

երգեցողութեամբ:

Իսպառ վրիպածիս ընձեռիր առաւել
բարերարութիւն,

Քաղցրութեան յոյս տուր, որ քո լոյսից մի մասին
Անարժան եմ եղել,

Քեզնով ընդլայնուել, բարի,

Ծածուկ խորհրդի նրբութիւնը,

Աղերսանքիս գոհութիւն խառնել,

Դաւթի հետ ասել՝ Աստուած,

Ստացանք ողորմութիւնդ

Եւ գաղտնիքների ծածուկ մասերը

Քո իմաստութեամբ յայտնի դարձիր:

Ժ

Արդ, մեծութիւն քեզ, [ով] ամենակալ,

Աննուազելի առատաձեռն,

Գթութեան գործում [միշտ] ամենափոյթ,

Մշտայօժար բժշկութեանը,

Որ միացրիր, մերձաւորին խառնեցիր,

Դիւրագիւտ, ընտանի նիւթիս անճառ հրաշքը

Քո սքանչելիքի ահաւորութեան:

Որովհետեւ ամէն բարձրութեան երկինքը

Երկրի յայնութեամբ եւ ներքին անդունդների

խորութեամբ

Ծովերի բազմութեամբ չի կարող տանել,

Այլ իբրեւ չնչինը բարի մեծից

Փոքր գոյիս մէջ տեսակաւորեցիր զօրութեամբ

Սահմանելով ճշմարտօրէն անհրապուրելի,

Որ ինչ-որ նոր երեւալով այլ էութիւնից

Հարեւանցի կասկած յարուցի

Վիրաւորելու, քան բժշկելու,

Առանց խորութեան մտքի, կարծիքի:

Օրհներգուած Որդի Աստծու,

Ինչպէս մարմինդ ցորենի հացից ես հանդերձում՝

Ուղիղ իմաստով եւ ոչ այլաբան,
Եւ խաղողի արիւնը՝ կայլակ քո կողից,
Իսկ ջրերի առատութիւնը՝
Հոգեւոր ծննդի ու կեանքի արգանդ,
Նոյնպէսեւ անմահիդ փչմամբ մեզ տրուած հոգին
Սրանով, սրա մէջ արդիւնատրեցիր կեանքի
երկունք,

Որից առաջացած կերպարանքը չի ձեւափոխուի
Անգամ հեթանոսութեամբ,
Ինչպէս չի երկրորդուի տեսնագրութիւնը
Խաչափայտի:
Տէր, խաւար երկրում նստածներիս
Քոյանման լոյս ծագեցրիր:
Որովհետեւ շնորհի այս կերպաւորումով
Աշխարհին ցոյց տուիր
Անհասիդ անպակասելի լրիւութիւնը
Եւ լուսաւորեցիր, որպէսզի տնանկը կարօտ չմնա
Եւ ոչ հարուստը մեծամտանայ,
Ինչպէս որ օդն է հաւասար բաշխում,
Կամ արեգակի լոյսն է տարածում,
Եւ կամ հոսում են վտակներ ջրի,
Որ երկրածիններին տալիս եւ հաւասարաբար
Մանանայի զուգամասնութեամբ՝
Փոքրերին աւելի, քան մեծամեծին:

ԺԱ

Իսկ այս նիւթի խորին խորհրդի տեսանկյունքիւնը
Բնականօրէն եւ հրաշապէս է բացատրում,
Որ ոչ թէ երկմիտ հապշտապութեամբ
Անհաստատապէս իր տեղն է փոխում
Եւ ոչ նենգելով լքում է իր պահարանը,
Քանի որ ոչ օճառով է իսպառ հերքում,
Եւ ոչ ինչ-որ ընդդիմակցից ողողուելով դուրս է
ելնում:

Որովհետեւ ինչպէս պատահած գոյնը
 Անհրաժեշտ բան է մարմնի էութեան համար,
 Որ լինելով գոյացնում է, չլինելով սպականում,
 Այդպիսի մի յարմարութեամբ այս իւրի
 զօրութիւնը,
 Որը իր յատկութեան բերումով
 Չբաղեցրած տեղից անբաժան է,
 Դու կցորդեցիր մեզ հետ միասնաբար,
 Տէր Յիսուս Զրիստոս,
 Եղած իրի հետ միաւորեցիր եւ օրինակը՝
 Որովհետեւ աչքի տեսութեան եւ մտքին, ըղձին
 անհմանալին
 Առաջ բերելով կերպաւորեցիր,
 Երկրի պտուղներից ճգնելով ու քամելով,
 Չարմանալի հրաշագործութեամբ
 Պատրաստեցիր մեզ մատակարարելու:
 Մանաւանդ որ ոչ թէ բազում եւ զանազան
 ծաղկանց
 Խառնումով ու խմբակցութիւնով
 Եւ բազմաբոյր այլայլումով՝
 Օձման այս իւրը հրահանգեցիր՝
 Ըստ հին ու ստուերական օրէնքի,
 Այլ դա օրինակ համարելով
 Եւ ինքդ խառնուեցիր
 Վերնալոյս ձեթի այս մաքրութեանը:
 Ու թէպէտ անճառելի են քո անուշ
 համեղութիւնները,
 Եւ համեմատելի չեն այլ օրինակների հետ,
 Այլ դաշտի ծաղիկը, հովտի շուշանը,
 Ընտիր նարդոսը, եղեգնախունկը՝
 Հալվելով խառնած,
 Քրքումի հանելի բոյրով,
 Փթթած ողկոյզի եւ ազնիւ գինու,
 Ոչ սոսկ իւրի միութեամբ,
 Պատշաճօրէն պատկերացար,
 Փառաւորեալ եւ անքնին անուն,

Որ ամէն ինչ լիացնում ես
Եւ որեւէ բանի բնաւ չես կարօտում:
Ուստի ոչ թէ հակառակ առարկաների
Բռնօրէն խառնում,
Որ օրինակն է բաժան կամքերի,
Այլ յօժար սիրով մեր կողմից պարարում ես
Դու աստուածապէս.
Մեզ համար ըստ մեզ պատկերանում ես
Կատարեալ վայելչութեամբ,
Եւ բարի լոյս, ջերմացնող հուր
Եւ սիրոյ տապ,
Առանց անգութ ցրտի շնչման,
Տեսնում են մաքուր մտքերը եւ ճանաչում
Ձեթի նիւթեղէն կաթիլների մէջ,
Որով հնարաւոր է իրօք Աստծուն միանալ:
Օծուած եւ Աստծուն որդեգրուած Սողոմոնի հետ
Հարսի բերանով երգում եմ երկնային փեսայիդ
Բարեբան գոհութիւն,
Մտքի ըղձանքով համբուրելով քո իւղերի հոտը,
Աւելի քան բոլոր խունկերը,
Եւ որպէս յաւիտենական կեանքի խօսք ունեցողի
Իմաստուն եւ աստուածաբան Աւետարանչի
Հոգելից խօսքի համաձայն,
Իւղերիդ բոյրով քո հետքով պիտի ընթանանք
Երեսներս լուսնալով կեանքի ջրերով,
Որ վեր է քան այս օդի երկինքը,
Եւ գլուխս օձելով երկնային անապական իւղով՝
Ուրախութեամբ քեզ ընդառաջ կգամ,
Զուարթօրէն եւ ոչ տխրութեամբ:

ԺԲ

Խնկելի իւղն այս,
Պաշտելի ու երանելի,
Սոսկ ուղեղի պահանգը

Կամ գագաթի վարսերը օժեղով օգուտ չի տայ,
 Եթէ տէրունի կենսատու խաչովդ չտեսառնագրուի
 Չարմանահրաշ օրհնալոյս իւղն այս
 Հրեային ու խուժին, հնդիկին ու բարբարոսին,
 Սկիւթացուն ու հելլենին,
 Դժնի դուժին ու արհավրատեսիլ
 Սոսկավիթիսար շնագլխին,
 Ազատ տիրոջն ու ծառայածին ստրուկին
 Քրիստոսեան դարձնելով՝
 Քո անուամբ է կնքում, ընծայում Սուրբ Հոգուդ
 Եւ երկնային Հօրդ հարագատ որդի հաստատում:
 Բազմատեսակ են սրա հրաշալիքները
 Նախ՝ յարմարուած նիւթին, ապա՝ զօրութեանը:
 Որովհետեւ ինչպէս փայտեղէն անօթը
 Քանի չի օծուել,
 Հեշտութեամբ ջարդում է ու դառնում անպէտք,
 Արժէզրկում է,
 Նոյնպէսեւ մարդը՝ չօծուած սրանով,
 Հեշտութեամբ խորտակւում է
 Եւ քեզնից հեռու լինելով՝ չի լուսաւորում:
 Յիսուս, սա քո մատն է, որով
 Չարմանագործում ես հրաշալիքներ,
 Որովհետեւ նրա անգծելի կազմութեամբ
 Ու կարծր պահպանութեամբ պաշտպանելով
 Ամենապատրաստ շրջաբերութեամբ
 Ծածկում է այլեւայլ եկամուտ բաներից,
 Այնպէս որ սրա մաքրութեամբ օծուածը
 Արեամբ չի ներկուի
 Եւ չի այլայլուի տխուր գոյներով:
 Եւ մանաւանդ իր թափանցել-խառնուելու
 յատկութեամբ
 Հոգեպէս մտնում է մեր թանձր մարմինը,
 Ու եթէ Սաղմոսողի անէծքը ձէթի պէս
 Չարի բոլոր ոսկորներին է հասնում,
 Որչափ առաւել Հոգիդ
 Լոյսի սոյն ճարպով կեանք տալով ողջացնում է

Ներքին վերքերը անտեսանելի,
Եւ այն խորքերից ազդումն է տալիս
Հագագի շունչին,
Ներգործելով ծայրանդամների վերջը,
Մոռացնել տալիս մարմնի մահուան արկածները,
Որովհետեւ, միշտ ահաւոր, տեր Յիսուս
Քրիստոս,
Քո կենսարար գորութիւնը խառնուած է սրան,
Եւ բնակւում է նրա հետ:

ԺԳ

Այս օծումը բարեւեսիլ
Բռնամարտիկ, մերկամրցման ըմբիշները եւս
ունեն:

Իբրեւ ճգնական հնարանքների գորաւոր խթան,
Անբռնելի՝ հակառակորդի համար
Պաշտում է օրէնքով,
Հօր եւ ահարկու է դելերի եւ հիւանդութեան դէմ:
Չի Եզեկիէլի բազմապանծոյն պճնած խօսքով,
Որ հեզնում էր իմանալի փարաւոնին
այլաբանօրէն,
Ողբական երանգներով.
"Երբ ստեղծուեցիր, ասում է,
Օծեալ քերովքէի դէմ կռուելու պատրաստուեցիր,
Ուր հրեղէն քարեր էին հաստատուած":
Օրհնարանուած ահաւորութիւն,
Որ ձեռքդ հասնում է ամէն տեղ,
Խօսքով անճառելի եւ քննութիւնից վեր,
Մշտապէս խնկւում ես աւետարանով,
Իբրեւ օծեալ նորածին՝ Դաւթի քաղաքի մէջ,
Եւ քահանայապետի հարցին՝ թէ
"Դո՞ւ ես Օծեալը՝ օրհնեալի Որդին"
Պետրոսի երանելի դաւանութիւնն էր՝
"Միակ օծեալը՝ կենդանի Աստծոյ որդին"

Իսկ թերահաւատ քննողները հարցնում են՝
"Դո՞ւ ես օժեպը, ասա համարձակ"
Նաեւ քո կանոններից հաւատում ենք
Օժեպ ուսուցչիդ եւ բոլորի Տիրոջդ:
Սրանից առաջ Հերովդեսը օժեպ անունով
Քեզ էր փնտրում յայտնապէս
"Ի՞նչպէս ես գրում, – ասացիր ինքդ, -
Աստծոյ օժեպը եւ տէրը Դաւիթի, որդին անսկիզբ,
Որդի՝ ժամանակով":
Այսպէս ըմբռնեցինք վայելչաբար
Այս բացատրութիւնը, որ մեզ տալիս է
Խորհրդաւոր կոչման լրումը,
Որ նախապատիւ է [դարձնում] քրիստոնէաների
վիճակը:

ԺԳ

Այնքան ահաւոր, միաժամանակ այնքան սուրբ է
Իւղի սուկայի, ինկաւոր "օծութիւն" անունը,
Այնպէս որ, ոչ ոք երկրայիններիցս չի
համարձակուի
Աստուած կոչուել, այլ՝ լոկ աստուածային,
Նոյնպէս չի կարող մարմնաւոր մէկը
Իրեն Քրիստոս համարել, այլ՝ լոկ քրիստոնէայ,
Դա անհնար էր եւ առաջին մեծ մկրտչին՝
Ջրերով Հոգուն հրաւիրողին,
Որովհետեւ, ասում է, ես օժեպը չեմ,
Այլ ուղարկուած եմ նրա առջեւից:
Ինչպէս Մարկոս Աւետարանչի խօսքն է՝
Սրանով էին շրջում առաքելական լծակիցները,
Իբրեւ Աստծոյ ձեռք, օգտուելով սրանից,
Քո անուամբ բուժում էին, առանց մարդկային
դեղամիջոցի:
Քանի որ ինչպէս խաւարը լոյսից,
Հիւանդութիւնը առողջութիւնից,

Գիշերն օրուանից ու մահը կեանքից,
Այդպէս եւ այս տիրապարգեւ նիւթից
Մերժոււմ են չարի բոլոր հանգամանքները,
Խտփանոււմ են եւ իսպառ վերանոււմ:
Քանզի ինչպէս որ զագիր ճանճերը,
Սարդեր, զեռունները ականջամուտ,
Իբրեւ թոյնից՝ սպառոււմ, պակասոււմ են այս
նիւթից,

Այդպէս այս իւրը երբ զօրանոււմ է
Օրհնութեան շնորհիւ՝ ե՛ւ դեւերին է հալածոււմ,
Ե՛ւ չարքի մուրհակներն է ոչնչացնոււմ,
Եւ մահավճիռն է պատռոււմ:
Աւազանը կատարեալ է լոկ օծման օգնութեամբ:
Թէ՛ աւազակներից մահացու խոցուած
Առաջին մարդուն տրուեց փրկութեան այս դեղը,
Թէ՛ Յակոբոսի եւ Իսրայելի անբոյժ վերքերին
[Իբրեւ դեղ] այս պատուական իրը յիշուեց:
Այս իւրն էր փափագոււմ Դաւիթը յարակայ յոյսով
Իբրեւ պտղաւետ ձիթենի Աստծոյ տան մէջ,
Այնժամ մերժելով թլփատութիւնը՝
Գուշակեց շնորհը մկրտութեան:
Եւ ինչո՞ւ եմ ես ճառոււմ սրանից,
Կարծելով՝ կարող եմ սպառել նիւթը,
Մինչդեռ վերիններն իսկ ի գօրու չեն
Մասնակիօրէն բացայայտել այս խորհուրդը,
Եւ կամ՝ էապէս:

ԺԵ

Փառք քեզ միշտ եւ ամէն ինչոււմ, անմահ
թագաւոր,

Այժմ իմ երգած օրհնաբանութեամբ,
Որ արեցիր, կատարեցիր ինձ համար,
Բարեխնամ, գլխած եւ ներողամիտ,
Հարուստ եւ առատ, ամենայաղթող,

Հայրերից սկսած՝ օրինակ տուիր,
Լրման հասցրիր իսկութիւնը ճշմարտապէս:
Դու՝ բնութեամբ՝ լոյս ես եւ արեգակ
մշտապայծառ,

Եւ աշակերտներիդ դասը լոյս անուանեցիր,
Որով երկրի բոլոր արարածներին
Նրանց երջանիկ շնորհի շողերով լցրիր:
Մէկից անուշ իւղ ստացար ոտքերիդ՝
Նշան, որ ընդունելի են քեզ ուղղուած
խնդրանքները,

Եւ մի այլ պոռնկից՝ գլխիդ,
Նշանակ մեր հանդէպ գթառատ սիրոյդ:
Անսահմանելիդ մշտափափագ բաղձանքով
հոտոտեց իւղն այս,

Հաստատուն ուխտով սահմանածդ մշտակայ
օրէնք օրինաբանելի՝

Կեանքի պատգամներ քոյսհրաման
Քարոզելու աշխարհով մէկ
Արժանաւորութիւնը համեստ իւղի՝
Ի գարմանս հրաշքը լսողների,
Ի յուսադրութիւն գալիք սերնդի:
Դուք սրբից ունէք օծութիւնը՝
Ասաց երջանիկն առաքեալներից,
Մեկնաբանելով օծման խորհուրդը,
Որ տալիս ես մեզ կենդանարարիդ
Անպակաս էութեան առաւելութիւնից:
Ուստի գերազանցօրէն քեզ նմանատիպ եւ
յարմարաւոր

Լոյսիդ եւ Մուրբ Հոգուդ,
Օրհնութեան կաթեցումն այս, որ սրսկւում է մեզ
վրայ անսպառ,

Նաեւ Լոյս է կոչւում,
Իբրեւ ստեղծուածներից առաջինը
Եւ արաչութեանդ պատկերակից,
Որով հալածում ես մեղքի խաւարը:
Իսկ Հուր է կոչւում, որովհետեւ

Ամէն տեսակ տարրերի հետ
Հաւասարապէս զուգաւորում է՝
Բաշխուած յայտնապէս, թէ ծածուկ,
Լուռ, թէ հռչակուած,
Ու թէ չբախուի հակառակորդի՝
Չի բաղձա բորբոքուել ինքնասաստ կամքով:
Նաեւ՝ Օծումն, որ արքայաբար
Որդեգրելով, քեզ հետ միասին՝
Մատուցես Հօրդ ի ժառանգութիւն,
Ողորմութեանդ [այս] ազգակիցը
Մեր մէջ նկատուի անեղծանելի,
Որպէսզի փայլենք գալիք փառքի մէջ:
Կոչում է Հոգի,
Որպէսզի խաբեութեան հետքը մաքրելով,
Որ բանասարկուի ներգործութեամբ էր,
Նոր փոփոխուելով
Երկնային Հօրդ երկրպագենք
Հոգով եւ ճմարտութեամբ
Յոյսի հաւատքով քեզ հետ բեւեռուած,
Ամենապարգեւ:

ԺԶ

Ահա արդարեւ ճմարտագունեղ
Այս լուսապատար, խնկալից իւղը
Վերնայնիդ սիրոյ արտացոլումն է,
Որի համար եւ Պօղոսը պատշաճ դատեց
Գոհաբանական ճառի մէջ ասել յայտնապէս.
Ով մեզ օժեց ձեզ հետ միասին ի Քրիստոս Յիսուս՝
Աստուած է, որ եւ կնքեց մեզ եւ մեր սրտերին
Հոգու առհաւատչեան տուեց
Ու նաեւ ասաց. Մի՛ տրտմեցնէք
Աստծոյ սուրբ Հոգին,
Որով կնքուելու էք փրկութեան օրը
Պատկառելի եւ անուանելի է

Այս օծութիւն հորջորջումը
 Ինչպէս հին օրէնքում,
 Առաւել եւ նորում:
 Տիրական տնօրինութիւններիդ ու չարչարանքիդ
 Անցած խորհուրդն է ակնյայտ դարձնում
 Դաւթեան սաղմոսի այն ասոյթը, թէ՛
 Տիրոջ եւ իր Օծեալին դէմ
 Հաւաքուեցին, կուտակուեցին
 Իշխանները ժողովուրդների:
 Մեծ մարգարէութիւնն էր ակնարկում
 Մոլեգնաչար հրեաների խմբի՝
 Անջնջելի արեանդ մեղքի տակ մտնելը,
 Երբ հանդգնեցին տէրութեանդ դէմ.
 Ո՞վ է, որ ձեռք պիտի մէկնէ Տիրոջ օծեալին
 Եւ քաւութիւն գտնի:
 Որովհետեւ թէպէտ Սաւուղը
 Իր ազգակցի ձեռքով սպանուեց,
 Օտար ազգերի ամօթն ու նախաստինքը
 Իսպառ չմերժեց [նրանց],
 Մինչեւ որ Աստծոյ արեանդ հաղորդուեցին:
 Ապագայի մեծ յիշողութեան գրաւական են
 Աղօթանուէր աղերսանքներն այն,
 Որ ասում էր իր սաղմոսով.
 Յանուն քո սիրելի Դաւթի
 Երես մի՛ դարձրու քո օծեալից:
 Ու դարձեալ. նայիր եւ տես քո օծեալի երեսը,
 Եւ Ողորմութիւն արա օծեալիդ:

ԺԷ

Քրիստոս, երկրպագելի պարգեւն է ձեռքիդ
 Լուսակիր հիւթն այս,
 Եւ արքայական իր ճոխութեան մէջ
 Չի տեսնում ուրիշ բարձրութիւն մի մեծ,
 Քան քո անունից ասուած քո խօսքը.

Գտայ իմ ծառա Դաթին
Եւ իմ սուրբ իւղով օծեցի նրան:
Ըստ սովորութեան յիշելով եւ համբուրելով
Քո լուսեղէն օծութիւնը,
Տէր Յիսուս Բրիստոս,
Քեզ ճանաչում ենք՝
Անփոփոխելի մշտնջենութիւն,
Դու ես ամէնը, ամէն ինչի մէջ,
Միակ թագաւոր թագաւորութեանց,
Եւ իւղուածների նշմարիտ օծեալ,
Երեկ եւ այսօր
Փառաբանուածդ երկրպագութեամբ:
Ինչպէս պատրոյզը ճարպի մէջ թրջուած
Նշողում չունի՝ մինչեւ չվառուի,
Այդպէս եւ լոյսի այս օծութիւնը՝ թափուած մեզ
վրայ,
Ապագայում է լուսավառուելու:
Սա [օծման] մէկին բացատրութիւնն է՝
Նախնիներից մինչեւ օրս,
Բարենշան օրինակով մի յարմարած,
Հրաշապայծառ գոյնով ներկած:

ԺԸ

Արդ, պատճառը ապրեցուցիչ վեհագոյն մասանց,
Աստուածային արարչութեանդ հարազատների,
Առանց որի հնարաւոր չէ քրիստոնէայ լինել,
Եւ կամ անուանուել Նագովրեցի,
Կամ յիշատակուել Յուդայի որդի,
Խրախոյս կարդալ յանուն Յակոբի Աստծու,
Այս ձեռքի հիւթը, որի մէջ
Միաւորուում է սուրբ Երրորդութիւնդ,
Շնորհքի ճառագայթ, շուքը մեր դէմքի,
Նկարագիրը մեր երեսների, բարեձեւութիւնը
պատահմունքի,

Աչքերի լոյսը, բիբերի տեսոնագրութիւնը,
Այտերի վայելչութիւնը, կերպարանքի զարդը,
Ծրթունքների պահպանարանը,
Հանդերձիչը կրօնների,
Վարքի յարմարիչ, հաւաքման շաղկապ,
Անձանց զօրութիւն, ընդդիմացող ուժ,
Հուռութ խափանող, հմայանք քակտող,
Ձեռնածուների հալածիչ, կախարդների
խայտառակիչ,
Աղանդները բացայայտող, դէւերին յաղթող,
Ցաւեր փարատող, կնքուածներին սրբագործող,
Նորադարձների տենչանք, անհմանալի՝
իմաստուններին
Ապշութիւնը հեթանոսների, անհաւատների
նախանձը շարժող,
Գաղտնիքները բացայայտող,
Յարգանք՝ նուաստներին, փառք՝ ստրուկներին,
Պճնումն կանանց, աճումն մանկանց,
Ծերերի հրճուանք, նուիրուածների
ձեռնադրութիւն,
Չգուշացում մաքուրներին, պսակ թագաւորներին,
Ճոխութիւնն արքաների եւ կայսրերի
մտադրութիւն,
Քանի որ կնքուած ամանը ցոյց է տալիս
Պարունակութեան մեծագնութիւնը,
Նաեւ մեզ տրուած շնորհի բարձրութիւնը՝
Սրանով ծածկուած քո անուամբ,
Աստուած տէր Յիսուս Քրիստոս,
Վայելուչ ինչ-որ համեմատութեամբ
Դառնում է ճանաչ:
Իսկ նրա անունը նոյն հորջորջումով,
Ըստ հոգելից իմաստունների,
Դեռ եզիպտացիներից սկսած
Բացայայտում է իրի պատկերը՝
Ահեղ խորհրդի կերպարանքը:

ԺԹ

Չէ՞ որ միւռոնը այս օրհնաբանուած,
Որ մարգարէն նախապէս աղերսելով
Աչքի լոյս էր խնդրում,
Քերթողական խօսքով բացատրած՝
Հոմերոնը թարգմանուում է "իմ մայր",
Այսինքն, որ մեր բնութիւնը ուժգնօրէն ձգող,
Եւ կայունացնող չքնաղ փոփոխմամբ
Հոսուն ջրերը լուսաւոր աւազանի,
Եւ կաթ մածուցող մակարդի նման
Իր մէջ է հաստատել վայրենութիւնս
Եւ հեղեղը աղբիւրների մշտահոս:
Իսկ մառնամուտը նոյնպէս միւռոն է նշանակում,
Մի այլ բառով արտայայտուած,
Այսինքն՝ մթին, որ խաւարչուտ է
Եւ ծածկուած է, անտեսանելի:
Օտարացեղ չէ այս դիմառնական կոչումը բառիս,
Քանի որ իրօք անուն է դրում իրին համաձայն
Եւ անքննելի է խորութիւնը այս,
Քան թէ ամէն մի սրբութիւն սրբոց:
Քանի որ ոչ թէ ջրի նման է աղտը լուանում,
Կամ սիրտն ամբացնում հացի բնութեամբ,
Այլ նորոգ ինչ-որ մի յարմարութեամբ
Տնօրինապէս տեսնագրում է զգայարաններին,
Սակայն վերնական անհատութեամբ
Ունի անուն անքննելի:
Եւ ինչպէս ասում է՝ Աստուած անմատոյց
Լոյսերի մէջ է, իսկ անսահման փառաւորութեամբ
Անբաւ խաւարում ծածկուած է անտես:
Արտաքրուտ փակուած՝ հասու չենք նրան:
Նոյն կերպ է եւ այս ծորումը լոյսի
Որոշ ճարտար լեզուներից
Պատշաճ ասութեամբ անուանագրուած՝
Մռայլ է կոչում,
Քանի որ անհնար է

Երկրածին բնութեամբ իսկութիւնն զգալ:
Իսկ իր մէջ հարստաբար ու տիրականապէս
Երկու աստծոյ անուն է կրում:
Եւ բարձրեալի անուանը նմանուելով
Կրկնակի է մեծանում այս իւրը՝
Նուիրագործուած ամենաբուրեան ազնիւ
կնդրուկով,
Չի Աստուածը մեր սպառիչ կրակ է ըստ Մովսէսի,
Ու նաեւ յոյս է, ըստ Յովհաննէսի,
Ուստի Եսային ճշմարտօրէն է սրան ակնարկում՝
Լոյսն Իսրայէլի հուր պիտի դառնա:

Ի

Դարձեալ նոր ձեւով ներկայացնեմ՝
Իրը յայտնելու նոր մի պատկերով,
Զմոռանալով իմ նողկութիւնը,
Որը քաղցրացաւ գթութեամբ մեծիդ՝
Նորից ու նորից գովեստով օրհնել:
Մեռայ՝ դառնութիւն է նշանակում,
Տաժանելի կիրք եւ չարչարանքներ:
Միւռոն՝ մեր լեզվով թէ ստուգաբանենք,
Պիտի թարգմանենք մահ-մեռելութիւն:
Որովհետեւ այս հոգեւոր օծմամբ
Մենք կտրուում ենք սնոտիասէր,
Մահակերպարան, տաղտուկ ու զազիր
Հեշտութիւններից հակառակուողի,
Որ օդախոնաւ մեղկութիւններով,
Ինչ-որ ջրացիր մի խոնաւութեամբ
Աղաւաղում են հունչը քնարի իմ լսողութեան,
Թմբուկ-թաղանթի ներդաշնութիւնը
Ուժգին հնչումով մի անվայելուչ
Ներքեւ է ձգում, մատնում կորստեան
Հեռանկարը մարդու գոյութեան:
Դարձեալ, վերստին յուսով ենք կապուում

Քո իսպի անճառ խորհրդին, Քրիստոս,
Դու, որ միշտ ողջ ես՝ մահով մկրտուած,
Աստուած, եւ հաղորդ քո խրախոյսով՝
Սրանով ենք մենք հաղորդուում կեանքիդ,
Եւ՝ բոլորովին անբաժանելի:

ԻԱ

Յիսուս, չորս կողմից դրոշմած այս իւրը
Բարձրեալիդ իսպի պէս հաստատուում է
Կեցուցչիդ զուգափառ եւ նմանատիպ արեան
շնորհը,
Եւ մեծարում է՝
Նոյն անմերժելի փառքով պսակուած:
Ծառն այդ կոչուում է օրհնեալ իւրի փայտ,
Ըստ մարգարէի կանխասացութեան,
Դա սովորական անտառի տունկից կազմուածը
Հօր մի ուժով փրկում է չարի նենգ արկածներից
Եւ օտարոտի մտածումներից,
Վերադարձնում է քեզ՝ ստեղծողիդ,
Հասցնում նրան կեանքի նոյն նիւթին:
Եւ մեր մտքի պատուհանը մշտաբաց ու
դիւրաթափանց
Տեսնազգրում ենք յանուն ահաւոր մեծիդ
գօրութեան,
Որ զգայարանքս խոհականօրէն զգաստանան
քեզնով,
Իբրեւ ըղձական օթեւան Հոգուդ,
Եւ խաւարահողմ խարդախող չարի
Խաբեութեան դէմ անհաղորդ մնան:
Չսպուած այս լոյսով՝ կենտրոնանում ենք,
Երեկոյան պաշտամունքի
Գոհաբանական նուագերգութեան,
Ասողերի հետ, որ նշանն են
Մեր մէջ վառուող քո շնորհի:

Սրանով են եւ փրկութեան բարի յուշարկումները
Տնկում մեր սրտում ու պտղաբերում,
Քո մեծ գալստեան վերջին գիշերի
Ընթրիքի համար
Այս լոյս ճրագն ենք, ահա՛ կիրառում:

ԻԲ

Իսկ այժմ տառաթուերի գումարով դիտենք.
Թէ քսանը չորսով մենք բազմապատկենք,
Եւ գտնենք տառը քսաներկուերորդ՝
Կբացատրենք խորին իմաստը [սրբալոյս] իւղի,
Որ թարգմանում է ճաշակ հեշտալի,
Եւ պատրաստում ենք այն ընկալելումենք
ամբողջապէս:

Երբ ութսուն նշող գրի փոխարէն դնենք չորս
հարիւրը,

Ստուգարանենք՝
Ձէթի անուան հետ նիւթ է ստացում,
Որ կերպարանքն է թթու խմորի:
Սա զանգուածն իրեն ենթարկել գիտէ,
Որ ոչ թէ քիչն է շատի ընդերքում,
Այն ամէն ինչը իր կողմն է ձգում՝ անցնելով,
Ինչպէս ասում է անտարանը:

ԻԳ

Այս համեստ իւղը միշտօրինակն ու նմանութիւնն
է

Համբարձման եւ խոնարհութեան:
Երբեմն իբրեւ կակուղ պատառ է տրւում,
ընկալում,

Համակշիռ ու յարմար խօսքի պէս,
Երբեմն, սակայն, գերափառ է նա,

Բոլոր լուծական, հոսանուտ, ծորող նիւթերի վրայ
Շրջում է իբրեւ

Այն հրաշափառ խորհրդի պատկեր:
Երբ որ լցում է կաշուէ պարկի մէջ՝
Ոչ թէ գինու կամ ջրի պէս թրջում,
Այլ պահպանում է հին պատշաճ ձեւը:
Այսպէս ստանալով առաւելական
Այս բարիքը քո,
Որդիդ կենդանի Աստծու,
Սրբանուէր այս օճելութիւնը
Մեր ճակատին ենք գրում քո արեամբ,
Ու քո Հոգով տպաւորում ենք մեր սրտում,
Եւ հաւատում ենք խորապէս,
Որ նա մի օր թէ յայտնուի
Բազմանճանչ շառայներով՝
Տարածուելու բազմատեսիլ,
Չարմանահրաշ ընդլայնումով,
Լոյս կրնձայէ գալիք օր ու սերունդներին:
Երջանիկ ու վերնանշոյլ ճարպն հոգեւոր
Թող իմ դէմքին քո նշանով լուսավառուի:

ԻԳ

Եւ կարծես անհաս, անըմբռնելի
Մեծ գօրութիւնն այս
Մտքի սլացքի թեթեւ թելերով,
Որ շատ, շատ վեր է մեր ըմբռումից,
Անկանգ շարժումով, անհետ փախստեամբ
Ու լայն տարածքով տարաբաժանուած,
Թաքնուեց ինձնից եւ չօրինակուեց,
Կամ զուգորդաբար չնմանակուեց,
Կամ սահմանումով չձեւակերպուեց,
Եւ չկշռուեց զուգակցի չափով,
Այլ աստուածային իսաչի նշանիդ
հաւասարութեամբ

Եւ, կեցուցիչ, քո արեան հետ միայն
 Հոգեւորապէս գերազանց եղաւ:
 Եւ հիմա օրհնիր մեզ, տէր, սրանով:
 Նաեւ ահաւոր, լուսեղ, երկնային եւ զարմանալի
 Քո անունը, Տէր, թող փառաբանուի,
 Մաքրակրօնների բուրվառով խնկուած,
 Սուրբ, սուրբ անքնին, անպատում, բարձրեալ,
 Ողորմած, երգուած, ճշմարիտ,
 Բարերար եւ սուրբ,
 Սրանով փրկագործիր, եւ քաւութիւն տուր,
 Բժշկութիւն պարգեւիր, շնորհով օժտիր,
 Առատաձեռնիր, ով երանութիւն:
 Օծուելով երկնանձրեւ լոյսի այս ձէթով՝
 Անարատ լինեմ,
 Իւղուած բանաւոր այս յենքի մէջ թող
 Մեղքի բիծն անգամ չտխրեցնէ,
 Որ հոգուս կերպը մնայ անարատ:
 Եւ թող բոլորը, որ կմօտենան օծուելու սրանով՝
 Հարսնապանոյն վեհութիւնով գեղազարդ,
 Սուրբ վայելչութեամբ ու երջանկօրէն
 Հոգով զարդարուեն:
 Թող այս լուսափառ եւ աստուածատուր
 Կրակը իրեն մօտեցողներին լինի կրկնեռաց
 Եւ բարեփափագ ջերմութեանու յօրինուածքի
 երկաթ,
 Որով ամբողջովին, ամենապատրաստ
 պնդութեամբ
 Քո կարծր վեմի վրայ յարակայ
 Միշտ արձանանում,
 Աներկբայօրէն քեզ որդեգրուած:
 Ով Սրանով զինուի՝
 Նշանակ լինի երկնամրցանակ այս մեծ պարգեւին.
 Ո՛չ ջրով թրջուի, ոչ այրուի հրով, ոչ ցրտահարուի,
 Ո՛չ վնասաբեր հողմն իրեն մարէ,
 Ո՛չ աղտեղանայ ինչ-որ ուրուական
 պղծութիւններից,

Եւ պահուածները չարին չմատնէ,
Ո՛չ աշխարհից հեռանալիս անմտաբար
Դուրս նետել կեանքի գանձերն ամբարուած,
Եւ քո թելերի օգնութիւնից գուրկ չմնալ
[հանկարծ],

Մեր մէջ էացած [սուրբ] օծութիւնից
Անմաքրութեամբ չմերկանալ:
Այլ քո հանութեամբ կիզուենք նրանով,
Պարարուենք իրմով եւ լուսաւորուենք,
Նրանով ազատուած եւ արդարացուած,
Պսակուած ու թագաւորած:
Եւ քեզ, միակիդ, միակ օծեալիդ
Բոլորի երգը օրհնաբանական,
Եւ լեզուների փառատրութիւնը,
Հնչումնք ձայների, հանդիսաւոր գովք,
Եւ շրթունքների բարեբանութիւն,
Սրբաբանութիւնը սաղմոսների
Հօր եւ սուրբ Հոգու հետ
Յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՂԴ ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Ա

ՍՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏՈՅ ՀԵՏ

Աստուած յաւիտենական, բարերար եւ
ամենակալ,

Ստեղծող լոյսի եւ յօրինող գիշերի,
Դու կեանք՝ մահուան մէջ եւ լոյս՝ խաւարում,
Յոյս՝ սպասողների եւ համբերութիւն
տարակուսեալների.

Որ ամենարուեստ քո իմաստութեամբ ստուերը
մահուան փոխում եւ այգի,

Աննուազ ծագում եւ անմայրամուտ արեգակ,

Չի գիշերուայ մութն անգոր է իսպառ քողարկել
փառքը քո տերունական,

Որին ծնրադրում են արարածներն ու
երկրպագում՝

Երկնաւորներն ու երկրաւորներն եւ
սանդարամետականները բոլոր:

Դու լսում ես հեծեծանքները կապեալների,
ունկնդրում խոնարհների աղօթքին

Եւ ընդունում ես նրանց խնդրանքները,
Աստուած իմ եւ թագաւոր իմ, կեանք իմ եւ
սպաւէն իմ,

Յոյս իմ եւ վստահութիւն իմ,

Տէ՛ր Յիսուս Զրիստոս, Աստուած բոլորի,

Սրբերի սրտում հանգչող սո՛ւրբդ դու,

Մխիթարութիւն վշտերի եւ քաւարան

մեղաւորների,

Որ գիտես ամէն ինչ՝ նրանց լինելուց առաջ:

Ուղարկի՛ր պաշտպան գորութիւնն աջիդ

Եւ գիշերային երկիւղից ու չար դեւից ինձ փրկիր,

Որպէսզի յիշատակը սոսկալի եւ սուրբ քո անուան

Միշտ համբուրելով հոգուս շուրթերով՝

Ըղձական շնչով ապրեմ պահպանուած բոլոր

նրանց հետ,

Որոնք անդադար ի բոլոր սրտէ քեզ են կանչում,
Տէ՛ր:

Բ

Եւ դրոշմից խաչի քո նշանի,

Որ աստուածային արեամբդ ներկելով դու
նորոգեցիր,

Եւ մկրտելով մեզ որդեգրեցիր,

Եւ նկարեցիր ու յօրինեցիր պատկերիդ փառքով, -

Պարզեւնէրով այդ աստուածային թող

ամօթահար լինի աստանան,

Մեքենայութիւնները քանդուեն թող ու

որոգայթները վերացունեն,

Մարտնչողները պարտունեն թող որ, եւ թող չլինեն
զէնքեր սայրասուր,

Մշուշը ցնդի, մութը փարատուի, մառախուղն
անցնի:

Բագուկդ հովանի լինի թող եւ աջդ կնքի.

Քանզի գթած ես դու եւ ողորմած,

Եւ քո անունով են կոչուում ծառաներդ

Եւ քեզ՝ Հօր ու սուրբ Հոգուդ հետ յաւերժ փառք,
իշխանութիւն:

ԲԱՆ ՂԵ

Ա

ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ ԽՕՍՔ ԱՍՏԾՈՅ ՀԵՏ

Արեգա՛կ արդար, օրհնեալ ճառագայթ, պատկեր
յուսեղէն,

Փափագ անձկալի, անքնին բարձրեալ, անպատում
զօրեղ,

Բարու բերկրութիւն, յուսատու տեսիլ, գովեալ
երկնաւոր,

Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ,
խոստովանեալ կեանք,

Եղկելու բազմավիւեալ եւ սխալներով լի այս
շարադրանքի

Պակասները դո՛ւ լրացրու խօսքով քո ամենագօր
Եւ այն մատուցիր որպէս հանելի աղերս բարձրեալ
Հօրդ:

Դու ինձ համար անէծքների փորձութեան
ենթարկուեցիր՝

Կերպարանքովդ նմանուելով ինձ, կենաց
օրհնութիւն,

Բարեխնամ տեսուչ երկնայինների եւ ողջ
երկրայնոց:

Չի թէ յանձն առար մեռնել ինձ համար,
Աստուած բոլորի,
Ո՛րքան անելի պիտի ուզենաս կարեկցել եւ այժմ
ինձ, տառապալից տազնապահարիս,
Ազգակցիդ մեզ՝ մեզնից մարմնացեալ,
Մեղապարտիս հետ միշտ աղօթելով
Հօրդ համապատիւ:

Բ

Եւ պատուական արեանդ միջնորդութեամբ,
Որ մատուցում է միշտ առաքչիդ կամքին ի
հանութիւն՝
Թող վերացունեն վտանգները մեղաւոր
դատապարտեալիս,
Պարտքերը զիջունեն, ամօթը փարատուի,
Մոռացունեն խայտառակութիւններն ու
դատավճիռն ի բարին փոխուի,
Սատակեն որդերն, ու լացը վերանայ,
Դադարի կրճտումն ատամների թող,
Ողբերն սպառունեն,
Արտասուքները ցամաքեն թող որ, սուգը
հեռանայ,
Խաւարն հալածուի, ու հուրը սաստիկ մարի,
մոխրանայ,
Եւ բազմապիսի տանջարաններն ի բաց մերժունեն:

Գ

Եւ թող բոլորին կեանք կամեցողիդ ու
պարգեւողիդ գթութիւնը գայ,
Թող լոյսդ ծագի, փրկութիւնդ փութայ,
օգնութիւնդ հասնի,
Այցելութիւնդ ժամանի, եւ ողորմութեանդ ցողը

Կանխահաս

Թող որ շտապի՝ յոյժ թշուառութեամբ մահուան
վիհն ընկած

Իմ ոսկորների պապակ անդաստանը ոռոգելու:

Կենարար արեանդ բաժակն երկնաւոր, որ
պատարագւում է միշտ, անսպառ

Յանունն անջեցեալների հոգու փրկութեան եւ
կենաց,

Թող ծաղկեցնի եւ պտղաբերի լուսաւոր օրուանդ
համար մշակուած դաշտն իմ մարմնեղէն,

Որպէսզի նրա մեղքով իսպառ մահացած հոգիս,

Քո շնորհիւ, գթած, քո մէջ գորացած,

Եւ մեղքերից ազատ, անմահ կենդանութեամբ

Նորոգուեմ արդարների յարութեան օրը՝

Հօրիցդ օրհնուած,

Որի հետ փառք քեզ եւ քո սուրբ Հոգուն

Եւ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ,

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: